ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

Սույն ստեղծագործությունը հասանելի է Հայաստանի ազգային գրադարանի թվային շտեմարաններում՝ համաձայն դրա իրավատիրոջ հետ կնքած Համագործակցության պայմանագրի, և կարող է օգտագործվել բացառապես օրենքով նախատեսված կարգով՝ պահպանելով հեղինակի և իրավատիրոջ հեղինակային իրավունքները

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՔՍՈՐՎԱԾ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՔՍՈՐՎԱԾ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

(ուղեգրություն, ազգագրություն, բանահյուսություն, բառարան)

ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2025

ՀՏԴ 39(=19)+81՝28+94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+82.3(5Հ)+81.025.7+63.3(5Հ)
Վ 301

Գիրքը հրատարկվել է զավակներիս՝
Գագիկ և Գոհար Վարդանյանների
աջակցությամբ

Վարդանյան Ս.
Վ 301 Աքսորված համշենահայերի հետքերով / Ս. Վարդանյան.- Եր.: Լուսակն, 2025.- 432 էջ:

80 տարի առաջ՝ 1944 թ., **Աջարիայի** սահմանամերձ գյուղերից, այլ ազգերի հետ, **Ղազախստան** և **Ղրղզստան** աքսորվեցին նաև կրոնափոխ համշենահայերը: Այդ մասին մամուլում և գիտական գրականության մեջ տարիներ շարունակ ոչինչ չէր տպագրվում: Միայն 40 տարի անց ՝1984 թ., **Սերգեյ Վարդանյանին** հաջողվեց Կենտրոնական Ասիայում գտնել նրանց, բացահայտել կրոնափոխ համշենահայերի անցյալի անհայտ էջերը, գրի առնել ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական եզակի նյութեր:

Գիրքը նախատեսված է բանասերների, պատմաբանների, ազգագրագետների, բանագետների, բարբառագետների, մշակութաբանների, դասախոսների, ուսանողների և թեմայով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 39(=19)+81՝28+94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+82.3(5Հ)+81.025.7+63.3(5Հ)

ISBN 978-9939-979-02-1 © Սերգեյ Վարդանյան, 2025



ՆԱԽԱԲԱՆ

Կրոնափոխ համշենցիների հետքերով 1984 թ. **Ուզբեկստան**, **Կիրգիզիա** (1990–ից՝ **Ղրղզստան**) և **Ղազախստան**[1] իմ առաջին ուղևորության մասին պատմող այս նյութերը գրի եմ առել չորս տասնամյակ առաջ: Վերադառնալուց հետո արագ–արագ արձանագրեցի տեսած–լսածս, մի կողմ դրեցի, որ հետո վրան աշխատեմ, և շարունակեցի գրել «**Հայոց մայրաքաղաքները**» գիրքը, որը «Սովետական գրող» հրատարակչությունը նախատեսել էր 20 հազար տպաքանակով լույս ընծայել 1985 թ.[2]: Այն թվականներին մարդիկ տարիներով սպասում էին, թե պետական հրատարակչություն հանձնած իրենց գիրքը ե՞րբ լույս կտեսնի, կամ երբևէ լույս կտեսնի՞, իսկ ինձ բախտ էր վիճակվել 1983 թ. «**Պիոներ**» ամսագրում (որի պատասխանատու

---

[1] Ուղեգրության ավելի կարճ, թերթային տարբերակը՝ «Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984 թ.» վերնագրով տպագրվել է «**Ձայն համշենական**» ամսաթերթում, 2016, № 1-2, 3-4, 5-6, 7-8, 9-10: ԽՍՀՄ տարիներին Ուզբեկստանը, Կիրգիզիան, Տաջիկստանը և Թուրքմենստանը միասին կոչվում էին Միջին Ասիա: Այդ տարածաշրջանի մասին խոսելիս հաճախ անհրաժեշտ էր լինում հիշատակել նաև Ղազախստանը, ուստի համարյա միշտ ասվում էր. «Միջին Ասիայում և Ղազախստանում»: 1992 թ. Միջին Ասիայի երկրների համաժողովում վճռվեց՝ այսուհետև Ղազախստանը ևս ընդգրկելով, տարածաշրջանն անվանել **Կենտրոնական Ասիա**:

Քանի որ նոր և միջին սերնդին Կիրգիզիան հայտնի է **Ղրղզստան** անունով, ուստի ուղեգրության մեջ գործածվում է 1990 թ. ի վեր՝ երեք տասնամյակից ավելի շրջանառվող պաշտոնական անվանումը:

[2] **Սերգեյ Վարդանյան**, Հայոց մայրաքաղաքները (դպրոցական բարձր տարիքի համար), Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985 (- 168 էջ, 130 լուսանկար):

քարտուղարն էի) տպագրված հայոց 12 մայրաքաղաքներին նվիրված իմ հոդվածաշարի հիման վրա գիրք գրելու առաջարկ ստանալ:

Սակայն միայն այդ չէր իմ հոգսը, տարբեր հեղինակների նյութերն էի խմբագրում, ինքս էի գրում, իսկ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի համշենահայերի մասին 1982 թ. «**Գարուն**» ամսագրում իմ «**Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ**» ուղեգրության հրապարակումից հետո[3], որը շատ մեծ արձագանք ունեցավ[4], զբաղվում էի համշե-

---

[3] **Սերգեյ Վարդանյան**, Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1982, № 11, էջ 60 -73: Նույնը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, 7-8: **Սերգէյ Վարդանեան**, Համշէնցիները՝ ծանօթ եւ անծանօթ, ուղեգրական նօթեր, «**Յառաջ**», օրաթերթ, Փարիզ, 1983, փետրուարի 12-13,15,16: **Սերգէյ Վարդանեան**, Ուղեգրական նոթեր՝ «Ներքին» սփիւռքէն. Համշենցիները՝ ծանօթ եւ անծանօթ, «**Զարթօնք**», օրաթերթ, Բէյրութ, 1983, մարտի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11: Ուղեգրության շարունակությունը տե՛ս **Ս. Վարդանյան**, Մայկոպյան խճանկար, «**Սովետական գրականություն**», ամսագիր, Երևան, 1983, № 5, էջ 88-95, արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2012, № 9-10, հեղինակի «Որոշ պարզաբանումներ» առաջաբանով: Տե՛ս նաև **Ս. Վարդանյան**, Մի անձրևոտ օր Տուբիում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2004, № 4-5, էջ 21-23: Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի Տուբի գյուղ 1981 թ. այցելության մասին է: **Նույնի**՝ Երկու երգ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2005, № 1-2, էջ 7: 1981 թ. Սոչիի Ջուբովա Շչել գյուղ այցելության մասին է: Տպագրվել է նաև Համշենի բարբառով Ս. Վարդանյանի գրառած երկու երգ՝ «Գազոնկի երկը» և «Չոբնին երկը», նաև բառարան:

[4] Արձագանքում են «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածին, «**Գարուն**», 1983, № 9, էջ 24, 25: Արձագանքում են մեր տպագրածին. «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ», «**Գարուն**», 1984, № 6, էջ 42-43: **Վաչէ Բրուտեան**, Պարբերական ակնարկ խորհրդահայ մամուլի, հոկտեմբեր-դեկտեմբեր, Խորհրդահայ մամուլը 1982ի աշնան (Բ մաս), «**Ազդակ**», օրաթերթ, Բէյրութ, 1983, Յուլիս 19: Նույնը տե՛ս նաև՝

նահայերին վերաբերող զանազան հարցերով՝ հայկական դպրոցներում պակասող դասագրքեր ճարել–ուղարկելուց մինչև այնտեղից եկած ուսանողներին տարաբնույթ օգնություն ցուցաբերելով:

Միաժամանակ, Հայաստանի կույրերի միավորման Երևանի մշակույթի տանը (Նիկողայոս Տիգրանյան փ., 15) մասնակցում էի Հայաստանում բնակվող քրիստոնյա համշենահայերի ամենշաբաթյա հավաքներին, որոնց ընթացքում մարդիկ հայրենակիցների մասին նորություններ էին փոխանակում, դիտում էին ինչպես է «Համշեն» պարախումբը քեմենչեի նվագի տակ փորձեր անում, նաև հաճախ զրուցում էին բարբառով, իսկ ես լսում ու սովորում էի: Հնարավորության սահմաններում աջակցում էի 1984 թ. մայիսին Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի (համալսարանի) կազմակերպած ազգագրական համույթների փառատոնին Աղըղեական ԻՄ–ից «Ջենիկ» և

«**Ազատ օր**», օրաթերթ, Աթենք, 1983, յուլիսի 27, «**Հայրենիք**», օրաթերթ, Բոստոն, 1983, օգոստոսի 16, **Վ. Բրուտեան**, Երկիրը Արտերկրէն (Յօդուածներու ժողովածու), Երեւան, Լուսակն, 2021 (- 392 էջ), էջ 175-178: **Արայ Գալայճեան**, «Պարզունակ թիւրիմացութեան պատճառով», «Հիմա բոլորովին մոռացել են իրենց...», «Չկան մանկավարժներ, չկան աշակերտներ», «**Պայքար**», շաբաթաթերթ, Բոստոն, 1984, նոյեմբերի 17: **Սերո Խանզադյան**, Հայը, «**Գրական թերթ**», 1984, սեպտեմբերի 7, պատմվածքի սյուժեն քաղվել է մանկավարժ Վարսենիկ Հայրապետյանի (Կրասնոդարի երկրամաս, ք. Նովոռոսիյսկ) նամակից, «**Գարուն**», 1984, № 6, էջ 43:

«Թրթռուկ», Աբխազիայից «Հըմշեծիկ» պարախմբերի մասնակցությանը[5]:

1984 թ. հուլիսին մեկնեցի Կրասնոդարի երկրամաս՝ այնտեղ վերաբնակված կրոնափոխ համշենցիների հետ ծանոթանալու, շրջագայեցի Աղըղեական ԻՄ–ի և Աբխազիայի քրիստոնյա համշենահայերի գյուղերով, դեկտեմբերին էլ հյուրընկալեցի Ղազախստանից եկած համշենցիների և նրանց հետ այցելեցի տարբեր վայրեր: 1985–1986 թթ. Հայաստանի ժողովրդական ստեղծագործության և կուլտլուսաշխատանքի հանրապետական գիտամեթոդական կենտրոնի և Սուխումի «Համշեն» մշակութային միավորման հետ նախապատրաստում էինք 1986 թ. մայիսի 18–ին Երևանի «Հաղթանակ» զբոսայգում անցկացվելիք «Համշեն–86» ազգագրական տոնահանդեսը[6], և քանի որ ես բնակվում էի անմիջապես «Հաղթանակ» զբոսայգու հարևանությամբ, ուստի Կրասնոդարի երկրամասից, Աղըղեական ԻՄ–ից և Աբխազիայից հյուրերի պակաս չէր լինում:

1987 թ. կրկին մեկնեցի Ղրղզստան, Ուզբեկստան և Ղազախստան: Այդ և հաջորդ տարիներին ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում կայացած գիտաժողովներում Կենտրոնական Ասիայի համշենցիների մա-

---

[5] **Ս. Վարդանյան**, Ավանդույթի հեղինակը ուսանողներն են, «**Հայաստանի աշխատավորուհի**», ամսագիր, Երևան, 1984, № 7, էջ 31, 32, շապիկի 4-րդ էջ:

[6] «Համշեն-86» ազգագրական տոնահանդեսի ազդագիրը տե՛ս **Մուսայել Գալոյան**, ՀՀ վաստակավոր արտիստ, Մեր համշենահայ եղբայրների հետ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2006, № 1-2, էջ 1:

սին զեկուցումներ կարդացի[7], 1989 թ. «**Ձայն համշենա-կան**» ժողովածուի 3–րդ հատորում հրատարակեցի կրոնափոխ համշենցիներից գրառածս բանահյուսական նյութերի մի մասը՝ 29 նոտագրված խաղիկներ և երգեր, 9 հեքիաթ և 245 բառից կազմված բառարան[8]:

Իսկ մինչ այդ, արցախյան հզոր շարժումը շատերիս համար դարձավ կյանքի բաժանարար գիծ: Բնականաբար, մի շարք հոդվածներ գրեցի այդ թեմայով[9]: Հետո՝

---

[7] **Նույնի**՝ Համշենցի հայերի լարային նվագարանները // ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1988 թ. ապրիլի 19-21 կազմակերպված «Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր (մշակույթ և լեզու)», երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1988 (- 100 էջ), էջ 86-87: **Նույնի**՝ Համշենահայերի բնակարանային համալիրը և կրած փոփոխությունները // ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտական նստաշրջան, 1986-1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, 1990, էջ 64-67, տե՛ս նաև **Ս. Վարդանյան**, Համշենահայ փայտաշեն կառույցը. հայկական ժողովրդական ճարտարապետության նս մեկ տարբերակ, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**», հանդես, Երևան, 1985, № 3, էջ 6-11: Հոդվածը նվիրված է Տրապիզոնի նահանգում, Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում համշենահայերի կառուցած փայտաշեն տներին և տնտեսական կառույցներին: Տպագրվել են նաև Ղրղզստանի կրոնափոխ համշենցիների մի տան փայտյա դարպասի և Ղազախստանի Չիրկինո գյուղի տներից մեկի լուսանկարները:

[8] Ձայն համշենական, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, գիրք 3, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց **Սերգեյ Վարդանյանը**, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (- 252 էջ), էջ 199-246:

[9] **Ս. Վարդանյան**, Հանելուկ, որը լուծում է պահանջում, «**Ավանգարդ**», երկօրյա թերթ, Երևան, 1988, հուլիսի 15, № 87, էջ 2: **Նույնի**՝ Մենք պարտավոր ենք, «**Սովետական Հայաստան**», օրաթերթ, 1989, փետր-

բռնագաղթվածներ, ահավոր երկրաշարժ, էլեկտրականության համախակի անջատումներ, պատերազմ...

Այդ տարիներին աշխատեցի «**Մշակույթ**» ամսագրի գիտական խմբագիր, գիտաշխատող՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1991 թ. մայիսին նշանակվեցի ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի (ՀՀ կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետական խորհուրդ) նախագահի տեղակալ և խրվեցի աշխատանքի մեջ:

1991 թ. նոյեմբերին Սոչիի «Սևան» մշակութային կենտրոնի խնդրանքով մտավորականների մի փոքր խմբով Երևանում սկսեցինք հրատարակել «**Լույս համշենյաց**» (երկրորդ համարից՝ «**Լույս Համշենի**») պարբերաթերթը, որի երկու հազար տպաքանակը առաքում էինք Ադլեր՝ անվ-

վարի 9, № 35, էջ 2, 3, արտատպությունները տե՛ս «**Հորիզոն**», շաբաթաթերթ, Մոնրեալ, 1989, Մարտի 6, թիւ 41, էջ 7, 8, 10, 12, հոդվածի կրճատումներով ռուսերեն թարգմանությունը՝ Кто, если не мы?, «**Комсомолец**», թերթ, Երևան, 1989, սեպտեմբերի 12, № 109, էջ 3: **Նույնի**՝ Կեղծիքների շրջապտույտ, «**Խորհրդային Հայաստան**», 1989, օգոստոսի 22, № 199, էջ 3: **Նույնի**՝ Առեղծվա՞ծ, ո՛չ, զավթված հողեր, «**Խորհրդային Հայաստան**», 1989, հոկտեմբերի 18, № 244, էջ 3, արտատպությունները տե՛ս «**Զարթոնք**», օրաթերթ, Պէյրութ, 1989, Նոյեմբեր 18, թիւ 46, էջ 2, Նոյեմբեր 19, թիւ 47, էջ 7, 8: **Նույնը**՝«**Ազգ**», շաբաթաթերթ, Երևան, 2021, հունիսի 25, № 24, էջ 8, 9: **Նույնը**՝ «**Ազդակ**», օրաթերթ, Պէյրութ, 2024, Յունիս 26, թիւ 83, էջ 5, 6: **С. Варданян**, Размышления над картой о «перекройке границ», «территориальных притязаниях» и одной арифметической головоломке…, «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 25 ноября, № 140, с. 2, «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. հոկտեմբերի 18-ի համարում տպագրված «Առեղծվա՞ծ, ո՛չ, զավթված հողեր» հոդվածի կրճատ տարբերակն է:

ճար տարածելու համար: Մինչ այդ՝ 1989 թ. նոյեմբերին, Սոչիի Լազարևսկոյե ավանում մասնակցել էի «Սևան» կենտրոնի հիմնադիր համաժողովին (կոնֆերանս), որին հրավիրված էին բազմաթիվ հյուրեր, և Սև ծովի հյուսիսային առափնյա գոտու համշենահայության մասին ընդարձակ ելույթ էի ունեցել[10]:

Թերթի առաջին համարի համար իմ առաջարկությամբ **Սերո Խանզադյանը** գրեց ողջույնի խոսք. «Օ՜, Համշեն, երկիր Հայոց, քո ձայնը նորից հասավ սրտիս: Քո մղկտացող ձայնը: Բայց ոչ հուսահատ:

...Տառապեցիք նաև ձեր այս նոր «Խորհրդային» կոչված տանը: Ձեր զավակները սիբիրներ քշվեցին անողոք բոլշևիկյան սրերով: Բաթումի մոտի համշենահայերդ աքսորվեցիք Ղազախստան ու Ղրղըզիա: Հիմա տառապում եք օտարության մեջ:

...Ուրախ եմ, որ դուք, պաշտելի համշենցիներ, այսօր ստեղծում եք ձեր ազգային փրկության զորակայան: Ստեղծում եք նաև թերթ՝ «Լույս Համշենյաց»: Ողջունում եմ»[11]:

Իմ խնդրանքով **Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը** 1991 թ. դեկտեմբերի 25-ին գրեց «**Հայրապետական խօսք օրհնութեան**», որը տպագրվեց «**Լույս Համշենի**» թերթում. «Ամենայն Հայոց Սուրբ հաւատի կեդրոն Աստո-

---

[10] **Ֆ[ելիքս] Ենգիբարյան** (Արմենպրեսի հատուկ թղթ.), Միաբանության և ազգապահպանության մտահոգությամբ, «**Խորհրդային Ղարաբաղ**», օրաթերթ, Ստեփանակերտ, 1989, նոյեմբերի 29:

[11] **Սերո Խանզադյան**, Ողջույն, «**Լույս համշենյաց**», պարբերաթերթ, Երևան, 1991, նոյեմբերի 23, թիվ 1, էջ 1:

ւածակառոյց Սուրբ Էջմիածնից այսու Մեր զրով Նոր Տար-ւոյ և Քրիստոսի Սուրբ ծննդեան տօների առթիւ յղում ենք Մեր հայրական ողջոյնը և օրհնութիւնը համայն համշէնա-հայ մեր հարազատ զաւակներին, աղօթքով ջերմագին որ Տէրը նրանց բոլորին պահի պահպանի քաջառողջ ու բա-րօր, իրենց ընտանիքների յարկի տակ երջանիկ ու խաղաղ:

Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ:

Սիրով և օրհնութեամբ՝ Վազգեն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»[12]:

1992 թ. ապրիլի 5–ին Երևանում հայաստանաբնակ համշենահայերի «**Համշեն**» հայրենակցական միության հիմնադիր համագումարում[13] ես, թեև ծագումով վանեցի եմ, ընտրվեցի փոխնախագահ, և արդեն մի քանի ամիս անց, միության անդամների հետ սկսեցի զբաղվել վրաց–աբխազական պատերազմի (1992–1993 թթ.) ընթացքում Հայաստանում ապաստանած շուրջ 200–300 աբխազահայ փախստականներին տեղավորելու, մարդասիրական օգ-նություն հասցնելու և այլ հարցերով[14]: Կարելի է թվարկու-

---

[12] **Վազգեն Ա.**, **Կաթողիկոս ամենայն հայոց**, Հայրապետական խօսք օրհնութեան, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 1, № 1(3), էջ 1:

[13] «Համշեն» հայրենակցական միության հիմնադիր համագումարը, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, ապրիլ-մայիս, № 5-6, էջ 2:

[14] **Ս. Վարդանյան**, Աբխազահայ փախստականներ Հայաստանում. ինչպե՞ս են ապրում, ո՞վ է հոգում նրանց մասին, «**Ազգ**», թերթ, 1992 թ., նոյեմբերի 10: **Նույնի**՝ Աբխազահայեր. մոռացյալ բեկորներ, «**Ազգ**»,

մը շարունակել: Մի խոսքով, ցուրտ ու մութ տարիներին ուղեգրությունը մնաց կիսատ, սևագիր վիճակում: Այդ, անշուշտ, չէր նշանակում, որ կրոնափոխ համշենցիների մասին իսպառ չէի գրում[15], անշուշտ, գրում էի, նույնիսկ 1992 թ. մայիսին ինձ հաջողվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում, Հայր Պողոս վրդ. Մեհերյանի (1729–1814) անտիպ հուշագրության մեջ (ձեռ. № 560) 1776 թ. Համշենի Խնակ գյուղ իր այցելության մասին պատմող հատվածում գտնել կրոնափոխ համշենահայերի մասին հայերեն ամենահին վկայությունը[16]:

1993, մարտի 24: Նշված հոդվածների արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, № 7-8:

[15] **Սերգեյ Վարդանյան**, Համշենի մուսուլման հայերը, «**Փյունիկ**», պարբերաթերթ, Երևան, 1991, հունվարի 25, № 1 (09), էջ 3, 4: **Նույնի՝** Համշենի մուսուլման հայերը «**Իրան-Նամէ**», հանդես, Երևան, 1993, թիվ 4, էջ 3, 4: **Նույնի՝** Նախկին Խորհրդային Միութիւնում բնակուող մահմետական հայերը, «**Բազմավէպ**», Վենետիկ, 1996, № 1-4, էջ 189-200: **Նույնի՝** Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «**Իրան-Նամէ**», Երևան, 1998, № 1-2-3, էջ 2-11: **Sergueï Vartanian**, Des Arméniens oubliés, "**Azad magazine**", Grenoble, France, 1999, № 87, p. 16, 17. **Նույնի՝** Des Arméniens oubliés (Deuxième partie), Au sujet des Arméniens convertis à L'Islam, "**Azad magazine**", Grenoble, France, 1999, № 88, p. 16, 17. **Նույնի՝** Des Arméniens oubliés (suits et fin). Au sujet des Arméniens convertis a L'Islam, "**Azad magazine**", Grenoble, France, 2000, № 89, p. 16, 17. **Ս. Վարդանյան**, Բռնի կրոնափոխված համշենահայերի ուսումնասիրության պատմությունից, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2008, № 9-10, 11-12, 2009, № 1-2, 5-6, 7-8, 11-12: **Նույնի՝** Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրության պատմությունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «**Տեղեկագիր**» հանդես, Երևան, 2008, № 22, էջ 20-44:

[16] **Ս. Վարդանյան**, Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «**Պատմա-բանասիրական հանդես**», Երևան, 2004, № 3, էջ 159-170: **С. Варданян**, Свидетельство 1776 г. об исламизированных

Կենտրոնական Ասիայի համշենցիների յուրօրինակ խոսվածքի (համշեցնակ) բառերը ևս սփռված էին իմ նոթատետրերում:

Հավաքածս բարբառագիտական և բանահյուսական նյութը կարողացա կարգի բերել և հրատարակել միայն 25 տարի անց՝ 2009 թ. տպագրված իմ «**Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)**» գրքում[17], բայց Ուզբեկստանում, Ղրղզստանում և Ղազախստանում արված գրառումներս այդպես էլ խառնիխուռն մնացին իմ արխիվում: Երբեմն, ինչ–որ թղթեր փնտրելիս դուրս էին գալիս, բայց հասկանալով, որ վրան աշխատելու շատ գործ կա, նորից տեղն էի դնում: Միշտ ժամանակ չկար:

Երբ հերթական անգամ դրանք ձեռքս ընկան, կրկին ուզում էի հետ դնել, այն հույսով, որ մի օր՝ հետագայում, կլրացնեմ, կխմբագրեմ, հանկարծ պարզորոշ հասկացա,

армянах Амшена, «**Еркрамас**», ежемесячная газета, Краснодар, 2005, № 10: Տե՛ս նաև՝ **Sergey Vardanyan**, 1776 yılına ait Müslüman Hemşinli Ermeniler hakkındaki önemli bir şehadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri)**, Ermenistan Cumhuriyeti Bilimler Ulusal Akademisi Tarih Ensititüsü, Yerevan, «Name », 2007 (- 306 s.), s. 278-286. **Sergey Vardanyan**, An Important Source of Information about Islamized Armenians, «**Armenian Folia Anglistika**», International Journal of English studies, Yerevan, 2009, № 1-2 (6), pp. 251-261: Տպագրվել է Հ. Պողոս վրդ. Մեհերյանի (1729-1814) հուշագրության կրոնափոխ համշենահայերի մասին առաջին հիշատակության հատվածը:

[17] **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ + 12 էջ սև-սպիտակ, 12 էջ գունավոր լուսանկարներ):

որ վաղուց երիտասարդ չեմ և չեմ կարող անվերջ հետաձգել:

Վերցրեցի, կարդացի: Ճիշտ է, կային անչափ կարևոր փաստեր, վկայություններ, որոնք տարիներ անց վավերագրի արժեք ունեին, բայց խոհերի, տպավորությունների, զգացությունների, զգացմունքների, հույզերի այն տարափը, որ ուղեկցում էր ինձ ճանապարհորդության ողջ ընթացքում, չէր արտացոլվել գրառումներում: Բայց ի՞նչ արած, եղածը դա էր:

Կյանքում լինում են պահեր, երբ զգացմունքները ներս ես զցում, շատ բան ասելու փոխարեն կարկամում, մնում ես: Ես էլ՝ 32 տարեկան մի երիտասարդ, շտապ-շտապ, ոտքի վրա գրի էի առել տեսած-լսածս, բայց հոգուս փոթորիկը պահել էի ներսումս՝ իմ սրտում:

Ի վերջո, որոշեցի հրապարակել ուղեգրությունս, ավելացնելով մի շարք ծանոթագրություններ, քանի որ չորս տասնամյակի ընթացքում շատ բան էր փոխվել՝ երկրների անուններից մինչև մարզերի, քաղաքների ու գյուղերի անունները:

Ղրղզստանում

1981 թ. Կրասնոդարի երկրամասի համշենահայերի պատմության, ազգագրության և բանահյուսության, հայկական դպրոցների վիճակի մասին նյութեր հավաքելու նպատակով նրանց գյուղերով շրջագայելիս, երբեմն որևէ մեկն ասում էր, որ իր ծանոթները Ապշերոնսկում կամ Բելորեչենսկում՝ շուկայում, ավտոկայանում կամ ավտոբուսում պատահաբար զրուցել են Ղրղզստանից և Ղա-

զախստանից վերջերս տեղափոխված կրոնափոխ համշենցիների հետ, բայց որտե՞ղ են նրանք հաստատվել, ո՞ր գյուղերում, նաև Ղրղզստանի և Ղազախստանի ո՞ր շրջաններից են եկել, չգիտի:

Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի իմ ծանոթ համշենահայերին խնդրել էի՝ որևէ տեղեկություն իմանալու դեպքում ինձ հայտնեն: Եվ, ահա, 1984 թ. ապրիլին, նրանցից մեկը՝ Սուխումի զբոսայգում լուսանկարիչ աշխատող Վովա Յայլյանը, եկավ մեր տուն և ասաց, որ կրոնափոխ համշենցիների է անակնկալ հանդիպել Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի շրջանում, մի քառասուն ընտանիք կլինեն, նոր են տեղափոխվել: Նրանցից իմացել է, որ 1944 թ. աքսորված համշենցիների մի մասը բնակվում է Ղրղզստանի Օշի մարզի[18] Կըզըլ–Կիյա քաղաքում[19]:

Վովան տարեկան մեկ–երկու անգամ տարբեր գործերով լինում էր Երևանում: Պատահում էր, որ երեկոյան ուշ ժամերին գալիս էր, ասում, որ հյուրանոցներում տեղ չի եղել, ուստի պիտի գիշերի մեր տանը: Այն տարիներին ոչ միայն Հայաստանում, ամբողջ ԽՍՀՄ–ում հյուրանոցներում ազատ համար գտնելը դժվար էր: Թեև ես երեխաներիս հետ ապրում էի ծնողներիս մոտ՝ երեք սենյականոց բնակարանում, և նեղվածք էր, բայց մարդուն դրսում թողնել չէինք կարող:

Վովան միակը չէր. Աբխազիայից ու Կրասնոդարի երկրամասից այլ համշենահայեր էլ էին գալիս, մի քանի օր

---

[18] Ղրղզ.՝ Ош облусу, ռուս.՝ Ошская область.

[19] Ղրղզ.՝ Кызыл-Кыя, ռուս.՝ Кызыл-Кия, լատինատառ՝ Kyzyl-Kiya.

մնում: Բնական է, որևէ մեկը նրանց ծանոթացրած էր լինում: Վովային էլ մեր տուն էր բերել Աղլերում բնակվող երկարամյա մանկավարժ, համշենահայերի հոգսերով ապրող մտավորական, գրող Անդրանիկ Զեյթունյանը[20]: Նա նույնպես երբեմն օրերով հյուրընկալվում էր մեր ընտանիքում: (Վովան ինձնից տասներկու տարի մեծ էր, ծնվել էր 1940 թ., 1972 թ. ավարտել էր Կիրովականի (Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը: Մի ժամանակ ֆիզիկա էր դասավանդել Աբխազիայի Գուլրիփշի շրջանի գյուղական դպրոցներից մեկում, մի տհաճ պատմության պատճառով հեռացրել էին աշխատանքից և նախարարության որոշմամբ արգելել մանկավարժությամբ զբաղվել, նա էլ Սուխումի կենտրոնական զբոսայգում այցելուներին լուսանկարելով էր իր ապրուստը հոգում: Ամուսնալուծված էր և մոր հետ բնակվում էր Սուխումի մոտակա գյուղերից մեկում):

Վովայի հայտնած տեղեկությունն ինձ այնքան ոգևորեց, որ որոշեցի մի երկու օրից ճանապարհ ընկնել: Ճշտեցի, թե ինչպես կարելի է Կըզըլ–Կիյա հասնել: Վովան էլ

[20] **Անդրանիկ Զեյթունյան** (1916, Սոչի, Լազարևսկի շրջ., գ. Վերխնեե Բուու -1986, Աղլեր), գրող, բանահավաք, հասարակական գործիչ, Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում աշխատել է մանկավարժ, հայկական դպրոցների տնօրեն, ժողկրթբաժնի տեսուչ: Կազմել է «**Ձայն համշենական**» ժողովածուի երկրորդ հատորը (Երևան, 1979), որին նվիրված գրախոսությունները տե՛ս **Ս. Վարդանյան**, Համշենի ձայնը, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1979, նոյեմբերի 15, № 11, էջ 5: **Նույնի**՝ «Ձայն համշենական», «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1980, № 6, էջ 93, 94: Տե՛ս նաև **նույնի**՝ Անդրանիկ Զեյթունյան-90, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, № 11-12, էջ 2:

ուզեց հետս գալ, բայց ասաց՝ գումար չունի: Իմ վիճակն էլ մի բան չէր, աշխատում էի մանկապատանեկան «Պիոներ» ամսագրի խմբագրությունում: Իմ միջոցներով ևս մեկ հոգու հեռավոր ճանապարհորդության ծախսերը հոգալը դժվար էր, բայց չկարողացա մերժել: Եվ 1984 թ. ապրիլի 24–ի երեկոյան միասին մեկնեցինք Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդ: Ցավոք, արդեն Տաշքենդ–Կըզըլ–Կիյայի ինքնաթիռից ուշացել էինք, օրական մեկ չվերթ էր կատարվում: Միակ ելքը Ուզբեկստանի Ֆերգանա քաղաք հասնելն էր, այնտեղից Կըզըլ–Կիյա մի 35 կմ էր:

Խորհրդային տարիներին բնորոշ հրմշտոցներով հերթում ժամերով կանգնելով, մեծ դժվարությամբ տոմս եմ ձեռք բերում: Ինքնաթիռում զրուցում ենք Ֆերգանայում բնակվող մի հայ երիտասարդի հետ, դիլիջանցի է, ծագումով՝ կիրովաբադցի, աշխատում է սպորտկոմիտեում: Նա շատ է ուզում մեզ գոնե մեկ օր պահել Ֆերգանայում, որը 195 հազար բնակչություն ունեցող քաղաք է: Խոստանում է տանել «Արծիվ» հանրահայտ գիշերային բարը, այնտեղ էլ ծանոթացնել տեղի հայերի հետ: Մեկ ուրիշ անգամ հաստատ կուզեի գրել նրանց, նաև հայ նշանավոր պարուհի, երգչուհի և բալետմայստեր Թամարա Խանումի[21] մասին,

---

[21] **Թամարա Խանում (Թամար Պետրոսյան)**, (1906, Ֆերգանա - 1991, Տաշքենդ), ուզբեկական երաժշտադրամատիկական թատրոնի կազմակերպիչներից և բալետի հիմնադիրներից է: Աշխարհի 62 լեզուներով երգել է շուրջ 600 երգ, պարել է տարբեր ազգերի պարեր, նաև ինքն է բեմադրել: 1941 թ. արժանացել է ԽՍՀՄ Պետ. մրցանակի, 1956 թ.՝ ԽՍՀՄ ժող. արտիստի կոչման:

որը 1906 թ. ծնվել էր այս քաղաքում: Բայց հիմա մենք շտապում ենք: Առջևում ամեն ինչ անորոշ ու անհայտ է:

Ֆերգանայի ավտոկայանից տաքսի ենք վարձում և շուտով հատելով Ղրղզստանի սահմանը, հասնում ենք Օշի մարզի Կըզըլ–Կիյա քաղաք: Օշի մարզի հարավում Տաջիկստանն ու Լեռնային Բադաշխանի Ինքնավար մարզն են, Չինաստանի հյուսիս–արևմտյան սահմանի մի հատվածը՝ այն գտնվում է Տյան Շանի և Պամիրի լեռների գրկում: Անունը մարզ է, բայց կրկնակի մեծ է Հայաստանի Հանրապետությունից, 65.6 հազ. քառ. կմ է, բնակչությունը՝ 1.7 միլիոն մարդ[22]: Եվ այդ հսկա տարածքում պիտի որոնենք, գտնենք աքսորված համշենցիներին:

Սկսում ենք Կըզըլ–Կիյայից[23]: Թարգմանաբար նշանակում է «Կարմիր արահետ»: Բնապատկերը հայկական է, այդպիսի լեռներ Հայաստանում շատ են հանդիպում, հատկապես Տավուշում: Առաջին հայացքից ոչնչով աչքի չընկնող ածխահատների այս քաղաքը շուրջ 30 հազար բնակիչ ունի: Հիմնականում մեկ–երկու հարկանի տներ են, հարյուր անգամ տեսած գործկոմի նմանատիպ շենք, փոքրիկ փոստ–հեռագրատուն, երկհարկ հանրախանութ, տարբեր վաճառանոցներ, ավտոկայան: Նաև նոր բնակելի

---

[22] Օշի մարզը (ղրղզ.՝ Ош облусу, ռուս.՝ Ошская область) բաժանվել է 3 մարզի, 1959 թ. Օշի մարզին միացված Ջալալ-Աբադի մարզը 1990 թ. վերականգնվել է որպես առանձին մարզ (ղրղզ.՝ Жалал-Абад облусу, ռուս. ՝ Джалал-Абадская область), 1999 թ. Օշի մարզից առանձնացված շրջաններից կազմավորվել է Բատկենի մարզը (ղրղզ.՝ Баткен облусу, ռուս.՝ Баткенская область):

[23] Մարզերի բաժանումից հետո Կըզըլ-Կիյա քաղաքը Բատկենի մարզի կազմում է:

թաղամաս՝ նույնատիպ շենքերով ու առանձին առևտրի կենտրոնով: Այսինքն՝ որ կողմը նայում եմ, ծանոթ են թվում թե՛ բնապատկերը, թե՛ փողոցներն ու նորակառույց շինությունները, միայն թե ինչ-որ բան Հայաստանում եմ տեսել, որոշ բաներ՝ այլ հանրապետություններում:

Եվ զարմանալի էր, որ տուրիստական երթուղիներից հեռու այս քաղաքի հյուրանոցում տեղ չկար: Ադմինիստրատոր կինը ցույց տվեց սպասասրահում նստած մի քանի մարդկանց և ասաց.

– Նրանք ձեզանից շուտ են եկել, բայց տեսնո՞ւմ եք, սպասում են, տեղեր չկան:

Բայց իմ կենսափորձը, որ չկա մի հյուրանոց, որտեղ ազատ սենյակ չլինի, ինձ հուշեց շարունակել համոզել ադմինիստրատորին. նրան ցույց տվեցի ԽՍՀՄ Ժուռնալիստների միության անդամատոմսս, իրազեկեցի, որ կարևոր հոդված պիտի գրեմ: Ի վերջո, նա շիկնելով շշնջաց, որ մեզ կտեղավորի:

Տեղավորեց: Բայց երկու-երեք օր հետո Վովան անակնկալ ասաց, որ շտապ պիտի վերադառնա Երևան, վերցնի նորոգելու տված լուսանկարչական սարքը և իսկույն մեկնի Սուխում, քանի որ մայիսի 1-ն է գալիս և չի կարող նախատոնական ու տոնական օրերին զբոսայգի այցելողներին չլուսանկարել, իր վրա կխոսեն: Նրա համար ինքնաթիռի հետդարձի տոմս գնեցի և ճանապարհ դրեցի Տաշքենդ:

Բայց դա երկու-երեք օր հետո, իսկ առաջին օրն իրերը հյուրանոցում թողնելով դուրս ենք գալիս փողոց, համոզ-

ված, որ հեշտությամբ կգտնենք արտաքինով տեղացինե-րից տարբերվող համշենցիներին:

Առաջին պատահած երթուղային տաքսու վարորդին հարցնում ենք համշենցիների մասին: Ասում է, որ այստեղ նրանց **խեմշիլ** են ասում, քանի որ անձնագրերում ազ-գությունը նշված է «խեմշիլ»: Իր ընկերը՝ Կարաիբրաhի-մով Օսմանը, խեմշիլ է, տաքսու վարորդ է, ավտոկայա-նում է լինում: Երթուղայինով գնում ենք այնտեղ, միայն մեկ տաքսի կա կանգնած:

– Ահա և Օսմանը,– ասում է վարորդը և կանչում Օս-մանին,– բարեկամներդ են եկել Կովկասից:

Կապույտ աչքերով, խարտյաշ մարդ է Օսմանը, անընդ-հատ ժպտում է, հեռավոր նմանություն ունի ֆրանսիացի նշանավոր երգիչ և կատակերգակ դերասան Բուռվիլի[24] հետ: Հետաքրքիր է, կրոնափոխ հայ՝ Ղրղզստանում, Բուռ-վիլի արտաքինով: Բացատրում եմ[25] ով ենք և ինչու ենք ե-կել:

---

[24] **Անդրե Բուռվիլ** (1917-1970), ֆրանսիացի նշանավոր դերասան և երգիչ:

[25] Ճանապարհորդության ընթացքում կրոնափոխ համշենցիների հետ զրուցում էի ռուսերենի ու Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի քրիստոնյա համշենցիներից որոշ չափով սովորած Համշենի բարբառի խառնուրդով: Խեմշիլները նույնպես ինձ հետ խոսում էին ռուսերենի և Համշենի բարբառի իրենց յուրահատուկ, զգալիորեն տարբեր խոս-վածքի խառնուրդով: Այդ պատճառով տեղանունները, մարդկանց անուն-ազգանունները մեծ մասամբ ասվում էին ռուսերեն կամ ռու-սերենի ազդեցությամբ, ուստի ուղեգրության մեջ էլ է այդ հիմնակա-նում պահպանվել:

Օսմանի տրամադրությունը բարձրանում է, մեզ նստացնում է իր տաքսին ու քշում դեպի մոտակա մթերային խանութ:

– Հիմա մի երկու շիշ օղի առնեմ և գնանք ինձ մոտ, նշենք մեր հանդիպումը:

Իսկույն առարկում եմ, ասում, որ օղի Երևանում էլ շատ կա, այսքան ճանապարհ ենք կտրել ոչ թե խմելու, այլ մեր հայրենակիցներին տեսնելու համար:

Օսմանին չեմ կարողանում համոզել, բայց, բարեբախտաբար, արդեն երեկոյան 7–ն է, իսկ այդ ժամին Խորհրդային Միության բոլոր խանութները փակվում են:

- Էրթաք Կարաբաջակօղլիին դունէ, ան ցէզի բիդանա զու (Գնանք Կարաբաջակօղլիի տուն, նա ձեզ օգտակար կլինի),– ասում է Օսմանը և Կըզըլ–Կիյայի փողոցներով փոշի բարձրացնելով սլանում է Կարաբաջակօղլիի տուն:

Կանգ ենք առնում Սպորտիվնայա փողոցի № 92 տան մոտ: Օսմանը բացում է բարձր դարպասները և ասում.

- Թուք նաս օնցէք, յէս արաբին թուրէ խաչնիմ, քամ (-Դուք ներս անցեք, ես ավտոմեքենայի դուռը փակեմ, գամ):

Մտնում ենք մի ոչ մեծ բակ, մի քանի աստիճան բարձրանում ենք և հայտնվում ընդարձակ պատշգամբում, որտեղ հատակին փռված ներքնակներին նստած Կարաբաջակօղլին թեյ է խմում: Գլխին բաց կապույտ գլխանոց է, հագին՝ հաստ, սև տաբատ և նեղ, երկարաճիտ կոշիկներ: Իմանալով, որ Հայաստանից եմ, խառնվում է իրար, կանչում է կնոջը.

- Սուլթա՛ն, Սուլթա՛ն…

Շտապ հայտնվում են բարձեր ու սփռոցներ, թեյի լայնաբերան գավաթներ՝ պիալաներ: Կարաբաջակօղլին խնդրում է, որ ավելի հարմար տեղավորվենք:

- Էլ այսօր նա չի քնի,– ասում է կինը,– Հայաստանից մարդ է եկել, նրա աչքերից քունը կփախչի, առանց այն էլ ճնշում ունի...

Իսկապես որ, մեր անսպասելի հայտնվելուց Կարաբաջակօղլին շատ է հուզվում: Օսմանն անընդհատ ժպտում է և մատով ցույց տալիս.

- Նա՛ է, նա՛ է ձեզ պետք, հիմա ամեն ինչ կպատմի...

Եվ Կարաբաջակօղլին սկսում է իր պատմությունը: Ես հազիվ եմ հասցնում գրառել: Ազգանունը, անունը, հայրանունը՝ Կարաբաջակով (Քարաբաջաքօղլի) Դուրսուն Աբդուլլահի:

Ինքը հենց սկզբում ծանոթանալիս կատակում է.

- Հայերեն ես Կարապետյան եմ:

Նա մի ոտք չունի, չգիտեմ ինչ պատճառով փտախտ է սկսվել, բժիշկները մաս–մաս կտրել են, ամբողջ ոտքը հեռացրել, բայց վիճակը մնացել է անհույս: Եվ Կարաբաջակօղլին ինքն իրեն դեղաբույսերով բուժել է: Իր նախնիներից սովորած ժողովրդական բուժամիջոցներով նա կարողացել է կասեցնել փտախտը: Դրա համար էլ նրան անվանում են Ալթուն բաջաք (Ոսկեազդր) Դուրսուն:

Դուրսունը որպես պատվիրակ Հայաստան է եկել դեռ 1968 թվականի հունիսին: Բայց այդ մասին քիչ հետո: Առայժմ նա, իմ խնդրանքով սկսում է պատմել սկզբից: Ծնվել է 1905 թ. Թուրքիային սահմանամերձ Աջարիայի

Գոնիո գյուղում: Այս անունը նա կրկնում է երանության ու կարոտի զգացումով, ամեն անգամ մի նոր երանգով արտասանում Գո՛–նի–ո՛: Ես նրան հարցնում եմ, թե արդյոք հիշո՞ւմ է Մեծ եղեռնը և թուրքերն ինչպե՞ս էին վերաբերվում իրենց, չէ՞ որ իրենք մի անհասկանալի վիճակում էին, իսլամ էին՝ թուրք չէին, հայ էին՝ քրիստոնյա չէին:

Եվ Դուրսունը տեղում անհանգիստ շարժումներ անելով, սկսում է պատմել և շատ է նեղվում, որ չի կարողանում բառերով արտահայտել իր ապրածն ու տեսածը, հուզախառն ձայնով ասում է. «Ցուգին գասին թա. «Ինչի՞ խաբրէ չէս», ան ա գասա թա. «Փիյանիս չուր գօ, ինչբէ՞ս խաբրիմ» («Ձկանն ասում են. «Ինչո՞ւ չես խոսում», նա էլ ասում է թե՝ «Բերանս ջուր կա, ինչպե՞ս խոսեմ»):

Ուրեմն այսպես, երբ սկսվել է Առաջին համաշխարհայինը, Դուրսունը 9 տարեկան է եղել: Սև ծովի հարավային ափերը ևս պատերազմի թատերաբեմ էին դարձել: Բոլորը փախչում էին, բոլորն իրար կոտորում էին, բոլորն իրար թշնամի էին: Այդ զարհուրելի օրերին իրենց ընտանիքը տեղափոխվում է Չանչախանա[26], ուր ապրում էին մորեղբայրները՝ Թաթարօղլիները: Այստեղից էլ գնում են Զալոնա[27] : Շուտով հետ են գալիս Գոնիո: Բայց որտե՞ղ հանգստություն կար, և 1917–18 թթ. նրանք կրկին գաղթում են և հասնում մինչև Տրապիզոնի նահանգի Թերմեի գավառա-

[26] **Չանչախանա** (այժմ՝ Չամուռլու), համշենցիների գյուղ Արդվինի նահանգի Խոփայի գավառի Քեմալփաշայի գյուղախմբում:
[27] **Զալոնա** (այժմ՝ Քոյունջուլար), համշենցիների գյուղ Արդվինի նահանգի Խոփայի գավառում:

կի Գոջաման–բաշի[28] գյուղ: Գյուղում մարդ չկար, քրիստոնյա համշենահայերին աքսորել ու կոտորել էին: Բայց մի գիշեր, հանկարծ իրենց տուն են գալիս 4 հայեր: Նրանք ասում են, որ գյուղացիների մի մասը պատսպարվել է սարերում և խնդրում են մի կով տան, մեծ կաթսա, դանակ, ուտելիք տան, որ տանեն սարերում թաքնվածների համար, որոնք սովամահ են լինում:

- Հայրս լաց եղավ,– ասում է Դուրսունը և ինքն էլ է հուզվում,– հայրս նրանց մի կով տվեց, լազութ (եգիպտացորեն) տվեց, իսկ նրանք հաջորդ օրը վերադարձան և մեզ բերեցին կովի կաշին: Նրանց հետ կային մեկ կին և 10–12 տարեկան երկու երեխաներ, խնդրեցին, որ մեզ հետ մնան:

Հայերի տները, արտերն ու այգիները լիքը բերք էր, և հայրս մի օր ցույց տվեց պտուղներով ծանրաբեռնված ծառերն ու ասաց.

- Եթե այս բերքուբարիքը տերերը չկերան, եթե հայը այստեղ չխնդաց, մենք ո՞նց ապրենք այս գյուղում,– և բոլորիս հավաքեց, հեռացանք այնտեղից: Հետ եկանք մեր տները: Հետո իմացանք, որ թուրքերը այդ գյուղում մնացած հայ կնոջն ու երեխաներին էլ են սպանել:

Թուրքերը մեզ էլ շատ վնաս հասցրեցին, քանի որ մեր լեզուն հայերեն էր: Լսում էին, որ հայերեն ենք խոսում,

[28] **Գոջաման-բաշի** գյուղը գտնվում էր Տրապիզոնի նահանգի Սամսոնի գավառի Թերմեի գավառակում: Ուներ 65 տուն բնակիչ, 6-ամյա դպրոց, 1846 թ. կառուցված Ս. Հակոբ անունով եկեղեցի, տե՛ս **Բ. Թոռլաքյան**, Համշենահայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 13, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 89:

հարձակվում էին մեզ վրա: Այսօրվա պես հիշում եմ, Չան-չախանայում ապրող Օսման Մուսլօղլի անունով մեր ազ-գականը 1915 թ. իր ընտանիքով նստել էր նավ, որպեսզի ծովով հասնի Կոստանդնուպոլիս, բայց հայերեն խոսելու համար նավի վրա նրա ընտանիքը մորթել էին և լցրել ծո-վը: Ես այն ժամանակ փոքր էի և շատ բան չէի հասկա-նում, բայց մեծ թե փոքր գիտեինք, որ հայ ենք և հայերեն խոսելը մահվան սպառնալիք է, բայց ուրիշ լեզու չգի-տեինք: Այնպես որ, շատ անգամ մենք էլ քրիստոնյա հայե-րի հետ կոտորվում էինք, բայց դե մեզ զոնե չէին աքսո-րում, և մեր քաշածն անհամեմատ թեթև էր:

- Պատերազմի ավարտից հետո,– իր պատմությունն է շարունակում Կարաբաջակօղլին,– Խորհրդային Միության սահմանի այս կողմում՝ Աջարիայում, մնացին համշենցի-ների մի քանի գյուղեր՝ Կանլը դերեն, որ հենց սահմանի վրա էր և 10–15 տուն էր, միայն համշենցիներ էին, Գորիա-թը (Կվարիաթի)՝ 20–30 տուն, Գոնիոն՝ 25 տուն[29], Ավգյան,

---

[29] Ըստ Է. Լիոզենի 1906 թ. հրապարակած վիճակագրության, Գոնիե գյուղում կար 16 տուն (52 տղամարդ, 44 կին) աջար, Խվարիյաթում՝ 6 տուն (11 տղամարդ, 7 կին) խիմշիլ, Կանլի-դարայում՝ 5 տուն (13 տղամարդ, 10 կին) խիմշիլ: Այս տվյալները նրան տվել է սահմանային պահակազորի կապիտան Լեոնիդ Լիսենկոն, տե՛ս **Э. Лиозен**. Берег Русского Лазистана.- **Известия Кавказского отдела Императорского Русского географического общества**, т. 18, 1905-1906, Тифлис, 1906, с. 160: Ավելի վաղ՝ 1887 թ. Վ. Լիսովսկին Գոնիայի բնակչությունը ա-ռանց ազգությունը նշելու հաշվել էր 38 տուն (74 տղամարդ և 81 կին), տե՛ս **Чорохский край (военно-статистический очерк),** Приложение, выпуск 1, Составил Генерального Штаба полковник В. Я. Лисовский, Тифлис, 1887, с. 3. Համանաբար, այս երկու հեղինակների տվյալները լրացուցիչ ճշտման կարիք ունեն, օրինակ՝ Լիոզենի ցուցակում Գոնիե

որ կարելի է համարել Կըզըլ թոփրաքի[30] մի թաղամասը՝ 15–20 տուն, Ճառնալը (Ճառնալի)՝ 25–30 տուն և Բոլոքոն՝ 10 տուն, որտեղ համշենցիների հետ աջարներ էլ կային: Կանլը դերեում ապրում էին թուրցևանցիներ[31] Կարաիբրահիմովները, Գորիաթում նույնպես թուրցևանցիներ էին՝ Սալեհօղլիներ, Քոշամեդօղլիներ (Քոշանիձեներ), Թանթօղլիներ, Թաթարօղլիներ, Բեշիրօղլիներ, Գոնիոյում՝ Կարաբաջակօղլիներ, Կարաիբրահիմօղլիներ, Մարաշօղլիներ, Շաբանօղլիներ, մեկ ընտանիք Կարաբեքիրօղլի և մեկ ընտանիք Մեմիշօղլի: Ավգյայում բնակվում էին Աքբույու-

գյուղում աջարների յուրաքանչյուր տուն ունի միջինը 6 բնակիչ, իսկ Խվարիյաթ գյուղում խեմշիլներինը՝ 3, ինչը բազմազավակությամբ հայտնի խեմշիլների համար շատ փոքր թիվ է:

[30] **Կըզըլ թոփրաքը** այժմ կոչվում է **Ախալսոփելի**:

[31] Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառների կրոնափոխ համշենցիները խոսում են Համշենի բարբառի յուրահատուկ խոսվածքով՝ **համշեցնակ**: Այն գիտական գրականության մեջ անվանում ենք Խոփայի խոսվածք: Ունի երկու ենթախոսվածք՝ **արդալացիների** և **թուրցևանցիների**, տե՛ս **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերին պատմա-ազգագրորեն ներկայացնելու փորձ // ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1987 թ. մայիսի 18-20 կազմակերպված հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987 (-124 էջ), էջ 97: Արդալացիների ենթախոսվածքով խոսում են Արդալայի և ևս 4 գյուղերի բնակիչները, իսկ թուրցևանցիների (դրսեցիների) ենթախոսվածքով՝ մյուս շուրջ երկու տասնյակ գյուղերի բնակիչները, տե՛ս **Ս. Վարդանյան**, Թուրքիայում բնակվող համշենահայերի արդի լեզվավիճակը // «**Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ**» միջազգային գիտաժողովի (2014 թ., հոկտեմբերի 8-9) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014 (- 226 էջ), էջ 211-222:

քօղլիներ, Սարիոշօղլիներ, Սքեմիշօղլիներ, Ճառնալում՝ Կարակչիօղլիներ, Ալիօղլիներ, Քյոսօղլիներ, Դավիթօղլիներ, Օսմանօղլիներ, Թաքոզօղլիներ, Իսմայիլօղլիներ, Մեմիշօղլիներ, Աբուօղլիներ, Ֆեյզօղլիներ: Բոլորքոյում՝ Օսմանօղլիներ, Մօլլահասանօղլիներ, Շեֆքիօղլիներ:

Հարցնում եմ այն համշենցիների մասին, որոնք հայտնի են «համշենցի քուրդ»[32] անունով:

---

[32] 1878 թ. Բաթումի հետ Ռուսական կայսրությանն անցան նաև համշենցիներով բնակեցված Գոնիոյի և Մաքրիյալի գյուղախմբերը: Նորանված Ճորոխ գետի ավազանի ուսումնասիրողներից զնդապետ Վ. Լիսովսկին սխալմամբ կարծում է, որ համշենցիները, որոնց ռուսերեն «h» տառի բացակայության պատճառով «եմշիլ» է անվանում, քուրդ են: 1887 թ. նա գրում է. «Երկիրը բնակեցնող մյուս ազգություններին են պատկանում քոչվորական կյանք վարող քրդերը. նրանք բաժանվում են Կախաբերիի դաշտում ձմռանը ապրող բուն քրդերի և եմշիլների, որոնք բնակվում են Գոնիյայի բերդի մոտ, նաև Արդվինի, Արտանուչի, Գոնիյայի և Շավշեթի տեղամասերի շատ վայրերում: Երկու քրդական ցեղերը ամռանը վերաքոչում են Արսյաց լեռնաշղթայի գագաթները և նրա լեռնաճյուղերը, որտեղ արածացնում են իրենց հոտերը», տե՛ս **В. Я. Лисовский. Указ. раб., с. 53.** Մյուս ուսումնասիրողը՝ Է. Լիոզենը Ռուսական կայսրությանն անցած տարածքում բնակվող համշենցիներին անվանում է **խոփե-խիմշիլ**: 1905 թ. նա գրում է. «Մյուս խումբը, որը հայտնի է խոփե-խիմշիլ անունով, ապրում է Խոփեի վերնի լեռներում, մինչև Ճորոխի գետաբերանը տարածքում: … Ձմռանը նրանք ապրում են Պոնտական լեռնաշղթայի ողջ երկայնքում, իրարից առանձին-առանձին հյուղակներում, որոնք բառի նեղ իմաստով գյուղեր չեն կազմում, այդ ժողովրդի յուրաքանչյուր ձմեռանոց կոչվում է Խեմշին: Ամռան սկզբին բոլորն իրենց հոտերով ճամփա են ընկնում դեպի Արսյաց լեռները: Նրանց կենսակերպը նույնն է ինչպես և քրդերինը: Տղամարդիկ հագնվում են աջարների պես և կրում են բաշլիկ՝ փաթաթված գլխի շուրջը՝ ինչպես գլխի վրա չալմա, նրանց կանայք հագուստի հարցում ոչնչով չեն տարբերվում քրդերինից: Ասենք, որ ողջ Արդվինի օկրուգում նրանց քրդերի տեղ են դնում և միայն զարմա-

- Համշենցի քրդերը գյուղ չունեին, ձմռանը փող էին տալիս, տներ վարձում, ամռանը գնում էին: Մի մասը գիտեր Համշենի բարբառը: Նրանց էլ են աքսորել: Այստեղ է ապրում համշենցի քուրդ Բեշլիօղլի Յուսուֆը,– ասում է Դուրսունը:

- Քանի որ մեր յայլաները գտնվում էին սահմանից այն կողմ, ապա անցագրով ազատորեն գնում էինք լեռները, արոտավայրերը, բայց 1930–ական թթ. սահմանի փակվե-

---

նում են, որ նրանք խոսում են հայերեն: Իսկապես, ի հակադրություն մուսուլման **բաշ-խիմշիլների**, նրանք պահպանել են լեզուն իրենց նախնիների, որոնցից չեն հրաժարվում: Նրանք ինձ պատմում էին, որ մի ժամանակ քրիստոնյաներ են եղել, ինչի մասին նրանց մոտ պահպանվել է ավանդազրույց», տե՛ս **Э. Лиозен. Указ.** раб., с. 168-169. Հավանաբար այս շփոթի պատճառն այն է, որ 1878 թ. Բեռլինի տրակտատով Ռուսական կայսրությանը միացված տարածքներում՝ Բաթումի և Արդվինի օկրուգներում բնակվող համշենցի հայերը մուսուլման էին և նրանց մեջ կար մի հատված, որին քրդերի նման անասնապահությամբ զբաղվելու պատճառով, ասում էին «**համշենցի քուրդ**»: **Է. Լիոզենը,** Գոնիեյի գյուղական համայնքում նշում է ձմեռող 20 տուն (70 տղամարդ և 60 կին) քուրդ, որոնք, նրա և **Վ. Լիտովսկու** հողվածներից դատելով, քրդերի տեղ դրվող **համշենցիներ** էին, տե՛ս **Э. Лиозен. Указ. раб.**, с. 160:

Ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների, Աջարիայում ապրում էր 3295 քուրդ: Այդ քրդերից 524 հոգի (273 արական և 249 իգական) քրդերենը, վրացերենը կամ ռուսերենը մայրենի լեզու չի համարել: Թե որն է նրանց մայրենի լեզուն, հարցման աղյուսակում չի նշված: Այս քուրդ համարվող, բայց քրդերեն չիմացող և քրդերենը մայրենի լեզու չհամարող տղամարդկանց և կանանց թվի համամասնությունից դատելով, գործ ունենք մեկ համայնքի հետ: Կարծում ենք, որ այս թվերը վերաբերում են «**համշենցի քուրդ**» կոչվողներին, որոնք նախկինում հայախոս էին, հետագայում դարձել էին թուրքախոս, տե՛ս **Всесоюзная перепись населения 1926 г., т. XIV, ЗСФСР (Отдел ССР Грузия), Москва, 1929, с. 26**.

լուց հետո համշենցիների մի մասը մնաց այն կողմում, մյուս մասը՝ այս[33]:

1921 թ. Գոնիոյում և համշենցիների բնակված մյուս գյուղերում բացվում են վրացական դպրոցներ: Դուրսունը երեք տարի դպրոց հաճախելուց հետո սովորում է Բաթումում, այնուհետև մեկ տարի ուսանում է անասնաբուժություն: Վերադառնում է Գոնիո և անասնաբույժ աշխատում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Խորհրդային Միությունն ու Թուրքիան հայտնվեցին տարբեր ճամբարներում, ավելի ծանրացավ սահմանամերձ գյուղերում ապրող համշենցիների կյանքը: Որպեսզի Թուրքիայի հետ ռազմական բախման դեպքում Աջարիայի համշենցիները, պաշտոնական անվանումով՝ խեմշինները, քրդերն ու թուրքերը չաջակցեն սահմանի մյուս կողմի իրենց ազգակիցներին ու հավատակիցներին, Լ. Բերիան 1944 թ. հուլիսի 24–ի գրությամբ Ստալինին առաջարկում է «ԽՍՀՄ պետական սահմանի Վրացական ԽՍՀ հատվածի պահպանության պայմանների բարելավման նպատակներով» Թուրքիային սահմանակից շրջանների խեմշիններին, քրդերին և թուրքերին գաղթեցնել[34]:

---

[33] Ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների, Աջարիայում բնակվող 10.476 հայերից բացի, գյուղական վայրերում ապրում էր 625 (329 արական և 296 իգական) հայախոս «խեմշին» և 19 (12 արական և 7 իգական) օտարախպատակ «խեմշին»: Ազգությունների լեզուների բաժնում նրանք իրենց մայրենի լեզուն համարել են հայերենը, տե՛ս **Всесоюзная перепись населения 1926 г., т. XIV, ЗСФСР (отдел ССР Грузия), Москва, 1929, с. 16, 21, 26, 28, 39**.

[34] **Бугай Николай, Гонов Аскарби**, Кавказ: Народы в эшелонах (20-60-е годы), Москва, изд. Инсан, 1998 (- 368 с.), с. 212, 213.

1944թ. հուլիսի 31–ին Ի. Ստալինի ստորագրած թիվ 6279 խիստ գաղտնի որոշմամբ հրահանգվում է՝ Վրացական ԽՍՀ պետական սահմանի պահպանության պայմանների բարելավման նպատակով Վրացական ԽՍՀ սահմանամերձ գոտուց՝ Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի, Ախալքալաքի, Բոգդանովկայի շրջաններից և Աջարական ԻԽՍՀ–ից 86 հազար թուրքերի, քրդերի և խեմշինների (խեմշիլների) վերաբնակեցնել, այդ թվում՝ Ղազախստանում՝ 40 հազար, Ուզբեկստանում՝ 30 հազար և Կիրգիզիայում 16 հազար մարդ:

Որոշումն ունի 14 կետ և մի շարք ենթակետեր[35]:

1944 թ. նոյեմբերի 28–ին Լ. Բերիան Ի. Ստալինին գրած զեկուցագրով տեղեկացնում է, որ Ադիգենի, Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններից աքսորն իրականացվել է նոյեմբերի 15–18–ին, իսկ Աջարիայից՝ նոյեմբերի 25–26–ին: Նախատեսված 86 հազարի փոխարեն տեղահանվել է 91.095 մարդ[36], որոնց թվում՝ Աջարիայից 1385 խեմշիլներ[37]:

Հավաքվելու համար մարդկանց տրվել է ընդամենը 2 ժամ[38]: Դուրսունը պատմում է եղբոր՝ Ռեֆիքի մասին: Երբ շուտափույթ իրերն էին կապում, նա դեռ շարունակում էր

---

[35] **Сталинские депортации, 1928-1953.** Под общей редакцией академика **А. Н. Яковлева.** Составители: **Н. Л. Поболь, П. М. Полян,** Россия, XX век, документы, Международный фонд «Демократия», Москва, Издательство «Материк», 2005 (-904 с), с. 525-528.
[36] **Сталинские депортации, 1928-1953**. 2005, с. 534.
[37] **Николай Бугай, Аскарби Гонов,** Кавказ: Народы в эшелонах (20-60-е годы). 1998, с. 213.
[38] **Николай Бугай, Аскарби Гонов,** Кавказ: Народы в эшелонах (20-60-е годы). 1998, с. 215.

տան վրա աշխատել, ցանկապատն էր նորոգում, պատի քարն էր ամրացնում, կիսատ–պռատը սարքում: Հարազատները մի կերպ նրան կտրում են գործից: Գնացքում Ռեֆիքը գժվում է և շուտով հոգին ավանդում:

Դժվարին է եղել ճանապարհը, մոտ 22 օրում են ապրանքատար գնացքները Վրաստանից աքսորվածներին հասցրել Տաշքենդ և նշանակված այլ վայրերը[39]: Դուրսունն ասում է, որ այդ ընթացքում սովից ու հիվանդություններից շատերը մահացան:

Համշենցիներին բնակեցնում են տարբեր գյուղերում՝ 10–15 տուն այստեղ, 10–15 տուն՝ այնտեղ: Ղրղզստանի գյուղերը չափազանց աղքատ էին, պատերազմը դեռ չէր ավարտվել: Նրանց տալիս են հողե, գետնափոր տներ: Շատերն էլ սովի ու ցրտի զոհ են դառնում:

Թե որքան շատ են եղել կորուստները, վկայում է այն, որ աքսորից 9 տարի անց՝ 1953 թ. հունվարի 1–ի դրությամբ «հատուկ բնակավայրերում» ապրող համշենցիների (խեմշիլների) թիվը 1397 էր (Ղրղզստանում՝ 973, Ղազախստանում՝ 422, Ուզբեկստանում՝ 2)[40], այսինքն՝ աճը կազմել էր ընդամենը 12 հոգի, այն դեպքում, երբ խեմշիլները հայտնի էին բազմազավակ ընտանիքներով:

Ուշագրավ է, որ մինչև բռնագաղթը պաշտոնական գրություններում և մարդահամարների ժամանակ կրոնափոխ համշենցիները նշվում էին «խեմշին», որն ավելի մոտ

---

[39] **Николай Бугай, Аскарби Гонов,** Кавказ: Народы в эшелонах (20-60-е годы). 1998, с. 217.

[40] **Земсков В.**, Спецпоселенцы в СССР, 1930-1960, РАН институт российской истории, Москва, изд. «Наука», 2005 (- 312 с.), с. 213, 214.

էր նրանց ինքնանվանմանը, քան հետագայում նույնպիսի փաստաթղթերում օգտագործվող «խեմշիլ» անվանումը:

Աքսորից 40 տարի անց՝ 1984 թ., Դուրսուն Կարաբաջակօղլիի և ընտանիքի անդամների հետ փորձում եմ ճշտել, թե համշենցիները Ղրղզստանի ո՞ր քաղաքներում ու գյուղերում են բնակվում և մոտավորապես որքա՞ն է նրանց թիվը: Պարզվում է, որ համշենցիներն ապրում են հիմնականում Օշի մարզում՝ Օշ քաղաքում – 5 տուն, Կըզըլ–Կիյա քաղաքում – 30 տուն, մոտակա երկու գյուղերում՝ Ուչ–Կորգոնում[41] – 49 տուն, Կարավանում[42] – 20 տուն, Էսկի–Նոոկատում[43] – 10 տուն, Նոոկատի շրջանի[44] Յանգի–Նոոկատ գյուղում (Մաղանիյաթ կոլտնտեսություն) – 65 տուն, Գյուլստան գյուղում[45] – 20 տուն, Սուզակի

---

[41] Ուչ-Կորգոնը 12 գյուղերից կազմված համանուն գյուղախմբի (ենթաշրջանի) կենտրոնն է: Այն գտնվում է Բատկենի մարզի Կադամժայի շրջանում (մինչև 1991 թ. կոչվում էր Ֆրունզեի շրջան): Ըստ 2009 թ. մարդահամարի տվյալների՝ Կադամժայի շրջանում բնակվում էին 232 խեմշիլ և 318 թուրք, ենթադրաբար, թուրքերի մի մասը ևս խեմշիլ է, պարզապես անձնագրերում գրանցվել են թուրք:

[42] Կարավան գյուղը Աք-Բուլաքի գյուղախմբի (ենթաշրջանի) կենտրոնն է և մտնում է Բատկենի մարզի Կըզըլ-Կիյա քաղաքի վարչական շրջանի մեջ:

[43] Էսկի-Նոոկատը (ռուս.՝ Эски-Наукат) Նոոկատի շրջանի (ղրղզ.՝ Ноокат району) կենտրոնն է (Օշի մարզ), 2003 թ. ստացել է քաղաքի կարգավիճակ և անվանափոխվել Նոոկատ, բնակչ. թիվը՝ 14.4 հազ. (2009 թ.):

[44] Նոոկատի շրջանում (Օշի մարզ) 2009 թ. մարդահամարի տվյալներով բնակվում էր 276 խեմշիլ և 267 թուրք:

[45] Գյուլստանը (Гюльстан) Նոոկատի շրջանում է (Օշի մարզ):

շրջանի Բեկ–Աբադ գյուղում[46] – 40 տուն, Լենինյան շրջանի[47] Լենին–Ջոլ[48] գյուղում – 15 տուն, Ղրղզստանի մայրաքաղաք Ֆրունզեում[49] – 16 տուն: Ընդհանուրը՝ շուրջ 270–300 տուն են: Եթե ընտանիքը միջինը հաշվենք 6 անձ, ապա կլինեն մոտավորապես 1620–1800 հոգի, եթե համարենք 7 անձ, ապա մոտավորապես 1890–2100 հոգի[50]:

Կարաբաջակօղլին պատմում է իր կյանքի ոդիսականը: 1929 թ. ամուսնացել է մի լազ[51] կնոջ հետ, նրանից երեք ե-

---

[46] Սուզակի շրջանի (ղրղզ.՝ Сузак району, ռուս.՝ район Сузак) Բեկ-Աբադ գյուղը Սայպիդին-Աթաբեկովսկի գյուղախմբի (Сайпидин-Атабековский аильный округ) կենտրոնն է (Ջալալ-Աբադի մարզ, ղրղզ.՝ Жалал-Абад облусу, ռուս.՝ Джалал-Абадская область): Սուզակի շրջանում 2009 թ. բնակվում էր 254 խեմշիլ, իսկ ողջ Ջալալ-Աբադի մարզում՝ 352 խեմշիլ:

[47] Լենինյան շրջանը (ռուս. Ленинский район) 1992 թ. վերանվանվել է Նոոկենի շրջան (ղրղզ.՝ Ноокен району, ռուս.՝ Ноокенский район), գտնվում է Ջալալ-Աբադի մարզում:

[48] Լենին-Ջոլը (նոր անունը՝ Մասսը, ղրղզ.՝ Масы, համանուն գյուղախմբի կենտրոնն է) գտնվում է Նոոկենի շրջանում (Ջալալ-Աբադի մարզ):

[49] 1991 թ. Ֆրունզեն անվանափոխվել է Բիշքեկ:

[50] 1990 թ. Օշի մարզում ուզբեկների և ղրղզների արյունալի բախումների հետևանքով սրվեցին ազգամիջյան հարաբերությունները և շատ համշենցիներ՝ խեմշիլներ, արտագաղթեցին: Ըստ 1999 թ. Մարդահամարի տվյալների, Օշի մարզում, նրանից առանձնացված Բատկենի և Ջալալ-Աբադի մարզերում և Օշ քաղաքում, որը հանրապետական նշանակության քաղաք էր, բնակվում էր 1201 խեմշիլ, իսկ 2009 թ. մարդահամարի տվյալներով՝ 1006 խեմշիլ: Հիշեցնեմ, որ խեմշիլներից շատերի անձնագրերում ազգությունը նշված է «թուրք», ուստի նրանք հաշվառվել են որպես թուրք:

[51] **Լազ**-Սև ծովի հարավ-արևելյան ափերին՝ Լազիստանում (հայերեն Ճենք, վրացերեն՝ Ճանեթ) ապրող ժողովուրդ: Լազերենը (ճաներենը)

րեխա ունեցել, բայց կինը մահացել է: Երկրորդ կնոջից՝ Ֆաթիմայից, նույնպես ունեցել է երեք երեխա, բայց բաժանվել են: Եվ, վերջապես, 1960 թ. ամուսնացել է Սուլթանի հետ, որը պարգևել է չորս զավակ:

Դուրսունը կոլտնտեսությունում անասնաբույժ է աշխատել, ապա կոշկակարություն է արել:

Մինչև Ստալինի մահը խեմշիլները գտնվում էին պարետատան հսկողության տակ: Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո նրանք փորձում են վերադառնալ Աջարիա՝ իրենց գյուղերը, բայց թույլտվություն չեն ստանում, մանավանդ որ նրանց տները հատկացվել էին աջարներին: Ոմանք 1956 թ. տեղափոխվում են Հյուսիսային Օսիա՝ Օրջոնիկիձե, Վրաստան՝ Գուրիա՝ Լաչխութի շրջան, որը մոտ էր Աջարիային, 4 տարի ապրելուց հետո նրանց հարկադրում են վերադառնալ Կիրգիզիա (Ղրղզստան): 1969 թ. գնում են Կաբարդինա–Բալկարիա՝ Նալչիկ, բայց 1972 թ. կրկին ստիպում են հետ գնալ:

- Միևնույն է, մի օր էլ այստեղից են քշելու,– ասում է Կարաբաջակօղլին:

Տարիների ընթացքում չի խամրել նրանց կարոտը, այն փոխանցվել է սերնդե–սերունդ: Եվ հետաքրքիր է, որ Կարաբաջակօղլիի փոքր տղան՝ Ալիբակը, որը նույնպես կոշկակար է, անցյալ տարի Կըզըլ–Կիյայում բացել է դիսկոտեկա (երեկոյան ժամը 9–12–ը) և անվանել «Գոնիո»:

իբերա-կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական խմբի լեզու է: Համշենցիները նրանց անվանում են ջան, ջօն, վրացիները՝ ճան:

Կարաբաջակօղլին պատմում է նաև, որ իրենք նամակ են գրել Անաստաս Միկոյանին[52], խնդրել իրենց վերադարձնել Աջարիայի հայրենի գյուղեր, բայց աջակցություն չեն ստացել:

- Գնացի Մոսկվա, այնտեղից ուղարկեցին Վրաստան, հետո՝ Աջարիա, որտեղ ինձանից պահանջեցին փաստաթղթեր, որ մենք իսկապես հայ ենք: Եկա Երևան: Գիտությունների Ակադեմիայում ինձ տվեցին հայերեն գրված թղթեր: Տարա նորից Աջարիա, ասացին՝ դրանք թողեք, մենք թարգմանիչ կգտնենք: Ասացին նաև, որ եթե ձեզ վերադարձնենք, ապա չեչեններին ու մյուս աքսորվածներին էլ պիտի վերադարձնենք:

Երբ Երևանում էի, ինձ հորդորում էին՝ եկեք Հայաստանում ապրեք, տուն կտանք, ամեն մեկիդ էլ 50 ռուբլի[53] ճանապարհածախս կտանք: Գնացի նաև Էջմիածին. Վազգեն

---

[52] **Անաստաս Միկոյան** (1895, գ. Սանահին-1978, Մոսկվա), 1937-46 թթ. եղել է ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1941-45 թթ.՝ բանակի մթերա-իրային մատակարարման կոմիտեի նախագահ, ԽՍՀՄ պաշտ. պետկոմիտեի անդամ, 1946-55 թթ.՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, 1955-64 թթ.՝ առաջին տեղակալ, 1964-65 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, 1965-74 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անդամ:

[53] Գրառումների թղթերիս մեջ պահպանվել են իմ տոմսերը, ինչի շնորհիվ կարող եմ ճշտորեն նշել, որ Երևան-Տաշքենդ չվերթի ինքնաթիռի տոմսն արժեր 47 ռուբլի 50 կոպեկ, Տաշքենդ-Ֆերգանա տոմսը՝ 12 ռուբլի 50 կոպեկ, ուստի 50 ռուբլով Կիրգիզիայից (Ղրղզստանից) մեկ անձը ինքնաթիռով, այն էլ բեռով-բարձով չէր կարող Հայաստան հասնել: Չեմ կարծում, որ 1968 թ. և 1984 թ. տոմսերի գների միջև մեծ տարբերություն է եղել: Գնացքով ավելի էժան էր, բայց ուղևորությունն օրեր էր տևում:

Առաջինն արտաասահման էր մեկնել, մի եպիսկոպոսի հետ զրուցեցի, հավաստիացրեց, եթե Էջմիածնին հարցնեն, իրենք համաձայն կլինեն, որ զաք Հայաստանում ապրեք:

Հետ եկա Ղրղզստան, բայց ժողովուրդը մերժեց իմ առաջարկը, ասացին՝ ուզում են Գոնիո գնալ:

- Բոի ա՛րջ են, ա՛րջ,– զայրացած հիշում է Դուրսունը,– մեկ է, Աջարիա էլ գնանք, աջարները պետք է մեր հացն ուտեն, հետո էլի քշեն, ավելի լավ չէ՞ Հայաստան գնանք:

Դուրսունն ասում է, որ Երևանում իրեն օգնել է մի հայտնի գրող: Մեր անակնկալ այցից նա շփոթվել է ու դժվարությամբ է արտաբերում նրա ազգանունը: Պարզվում է՝ խոսքը Սերո Խանզադյանի[54] մասին է: Ես զարմանում եմ ու ասում, որ ծանոթ եմ Ս. Խանզադյանին, բայց Ղրղզստանի կրոնափոխ համշենցիների մասին նա ոչինչ չի գրել կամ պատմել:

Մինչև ուշ երեկո զրուցեցի Դուրսունի հետ: Ես բազմաթիվ հարցերի պատասխաններ էի ուզում ստանալ, օրինակ՝ իրենց գյուղերում խմորի վրա խաչ անո՞ւմ էին: Նա պատասխանում է.

- Այո՛, երբ խմորը գնդում էին, ապա բոլորի վրա օդում խաչ էին անում, իսկ մեկի վրա՝ ոչ, դա շան բաժինն էր:

- Իսկ իսլամ համշենցիների շրջանում բազմակնություն կա՞ր:

---

[54] **Սերո Խանզադյան** (1915, Գորիս-1998, Երևան), նշանավոր արձակագիր, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ (1972), Պետական մրցանակի դափնեկիր (1977), ԽՍՀՄ Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984), Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր (1980-85, 1985-90), ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր (1989-1991):

- Եթե որևէ մեկի կինը երեխա չէր ունենում, ապա կնոջ համաձայնությամբ ամուսինը կարող էր երկրորդ կին բերել,– ասում է Դուրսունը:

Հրաժեշտ ենք տալիս Դուրսունին, արդեն շատ ուշ է: Կինը՝ Սուլթանն անընդհատ կրկնում է.

- Էլ մի շաբաթ չի քնի, Հայաստանից մարդ է եկել, էլ Դուրսունը մի շաբաթ չի քնի (ալ քուն մէղնու չի)[55]:

Մեքենայում Օսմանի հետ մտորում ենք հաջորդ օրվա անելիքների մասին: Նա ասում է.

- Ես գիտեմ ձեզ ով է պետք,– և մեքենան քշում է քաղաքի Առաջին միկրոշրջան: Այնտեղ՝ № 25 շենքի առաջ կանգ է առնում:

- Գնամ տեսնեմ Հաբիբը տա՞նն է: Նա և՛ մեքենա ունի, և՛ շատ ազատ ժամանակ:

Մի քանի րոպեից իջնում է Հաբիբի հետ: Հաբիբը սև աչք–ունքով երիտասարդ է: Բացատրում եմ մեր գալու նպատակը՝ ցանկանում ենք ծանոթանալ համշենցիների հետ:

- Ձեզ իմ պապն է պետք՝ մոլլա Հաքին,– ասում է Հաբիբը և պայմանավորվում ենք հաջորդ օրն իսկ հանդիպել:

Առավոտյան Հաբիբն իր մեքենայով գալիս է հյուրանոց: Գնում ենք Կըզըլ–Կիյայի մոտ գտնվող Ուչ–Կորգոն գյուղ: Ընդամենը մի քանի կմ է հեռու: Ճանապարհին զրուցում եմ Հաբիբի հետ: Հարցուփորձ եմ անում: 31 տարեկան է, էլեկտրամեխանիկական գործարանում մատակարարման բաժնի վարիչ է աշխատել: 1980 թ. աշխատանքի բե-

[55] Դուրսուն Կարաբաջակովը մահացել է 1989 թ. փետրվարի 2-ին:

րումով մեկնել է Տաշքենդ և այնտեղ ավտովթարի են- թարկվել: Երեքը զոհվել են, ինքը 22 օր անգիտակից պառկել է հիվանդանոցում: Նույն օրը՝ լուրը հասնելուն պես, Ղազախստանից ու Ղրղզստանից իր հայրենակիցները՝ 12 մեքենայով եկել են Տաշքենդ՝ իր մոտ: Ահա այսպիսի ամուր թելերով են բոլորն իրար կապված: Այժմ հաշմանդամության թոշակ է ստանում: Գիտի մի քանի լեզու, իր բարբառից բացի նաև ռուսերեն, թուրքերեն, տաջիկերեն, ղրղզերեն և այլն: Հետագայում ես դրանում քանիցս համոզվեցի, քանի որ տարածաշրջանը բազմազգ է և Հաբիբն անընդհատ տարբեր լեզուներով խոսելու առիթներ էր ունենում:

Շուտով հասնում ենք Ուչ–Կորգոն: Հիմնականում հողե պարիսպներով շրջափակված մեկ հարկանի տներ են, բակերի կողմում ունեն փայտե սյուներով, կապույտ ներկված պատշգամբներ: Մոլլա Հաքի Քոշանիձեն (Քոշամեդօղլի) ծառերի ստվերում դրված մեծ թախտին՝ սավքիին[56] ծալապատիկ նստած՝ թզբեհի հատիկներն է քաշում: Ունի ամուր կազմվածք, փոքր, սպիտակ մորուք, դրել է ղրղզական թասակ: Ուրախանում է հյուրերի համար: Իսկույն հարսը՝ ոսկեմազ մի աղջիկ, բարձեր ու

[56] ա) Սավքին ուղղանկյուն կամ քառանկյուն, 30-40 սմ բարձրություն ունեցող ճաղաշար եզրերով փայտե կամ մետաղե թախտ է, որը գետնից բարձր է 50-60 սմ: Շատ տարածված է Ղազախստանի, Ուզբեկստանի և Ղրղզստանի համշենցիների կենցաղում: Դրանք դրվում են բակում և հաճախ հյուրերին հենց այդ թախտի վրա էլ նստացնում և հյուրասիրում են: բ) Սենյակի պատի երկարությամբ քարաշեն կամ տախտակաշեն բարձրություն: գ) Սենյակի հատակի մեկ քայլ՝ մեկ աստիճան, բարձրությամբ հատված:

ներքնակներ է բերում: Մոլլա Հաքին 84 տարեկան է: Զբաղվել է հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, ծխախոտ ու խաղող է մշակել, իսկ «մոլլա» են ասում համշենցիներին ոչ պաշտոնապես կրոնական ծառայություններ մատուցելու, արաբերեն գրել–կարդալ իմանալու համար: Արաբական տառերը սովորել է Թուրքիայում՝ Զուրբիջիում[57] և Խոփայում, որտեղ մինչև 1914 թ. դպրոց է հաճախել: Այս գիտելիքների շնորհիվ նա բացառիկ հարգանք է վայելում նաև կիրգիզների (դրդզների) և մահմեդական մյուս ազգերի մոտ:

Հարցնում եմ նրա որպիսությունը, զրուցում դեսից–դենից, օրինակ՝ ի՞նչ ազգ են իրենց համարում: Պատասխանում է.

- Հօմշէցի (համշենցի):

Ասում եմ, ախր համշենցին ազգություն չէ, ինչպես օրինակ՝ իմ պապն ու տատը վանեցի են, մյուսինը՝ մշեցի, մյուսինը՝ տրապիզոնցի կամ բաթումցի, դրանք տեղի անուն են և ոչ թե ազգության անուն, դուք ծագումով Համշենից եք, դրա համար էլ կոչվում եք համշենցի: Հաքին խորամանկորեն ժպտում է.

- Էրմենի իք, համա մուսլիման էրմենի:

Հարցնում եմ, այդ ինչպե՞ս է պատահել, որ էրմենի եք ու մուսլիման: Խնդրում եմ պատմի: Հաքին ցուցամատը վեր է տնկում ու երկար ձայնարկում.

---

[57] Զուրբիջի (այժմ՝ Յոլդերե) գյուղը գտնվում է Արդվինի նահանգի Խոփայի գավառում:

- Ո՛ւ,– հետո բազմանշանակ ավելացնում է,– Անի շահարան իք (Անի քաղաքից ենք):

Իմ զարմանքը նկատելով, Հաքին մի տեսակ հաճույք է զգում, ու հայացքով կարծես ասում է, թե դեռ ինչե՛ր կան, որ դու չգիտես:

- Անի շահարը գիտե՞ս, ո՛ւ, 680 տարի առաջ Անի քաղաքում երկրաշարժ եղավ, ո՛ւ, 8000 ընտանիք կար Անի քաղաքում: Երկրաշարժը որ եղավ, ո՛ւ, մնացին միայն որբերը, որն ընկավ թուրքի մեջ՝ թուրք դարձավ, որը՝ հայի մեջ, հայ մնաց: Մեր պապերն էլ ընկան թուրքի մեջ, բայց քանի որ մի քանի հոգի էին, լեզուն պահեցին, բայց մուսուլման դարձան:

Հարցնում եմ Եղեռնի մասին:

- Ուրեմն, որ կռիվը սկսվեց, թուրքերը սկսեցին հայերին մորթել: Հայի թագավորը թուրքի թագավորին ասաց, որ Աթինա քաղաքից այս կողմ իմ լեզվով են խոսում՝ Կարաիբրահիմօղլիները, Քյոսօղլիները, Կարաբաջակօղլիները,– և նա թվարկում է համշենցիների ազգանունները,– իմ լեզվով են խոսում, իմն են, ես պիտի առնեմ: Թուրքի թագավորն էլ ամեն գյուղ 100 ասքյար ուղարկեց և ասաց, որ սրանից հետո ով Համշենի լեզվով խոսի, պիտի կախենք: Թուրքերը թաքուն գալիս էին մեր գյուղերը, ականջ դնում, եթե լսեին, որ մեկը կանչեր «Քա՛, այէ հօգա, գօվը փէ, ավարա ինչի՞ բէղէղէ գուս» (Քա[58], արի այստեղ, կովը բեր, ինչո՞ւ ես պարապ–սարապ ման գալիս), հարձակվում էին, մորթում:

---

[58] **Քա**- դիմելաձև իգական սեռին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Հաքին իր 300 ոչխարների մի մասը նվիրել է բանակին:

Հաքիի փոքրիկ թոռները՝ ոսկեմազիկ Դաուդն ու Սուսաննան, գալիս են պապի մոտ, բարձրանում թախտի վրա: Պարզվում է, որ Հաքին 60 տարեկանում երկրորդ կնոջից, որը լազ է, տղա է ունեցել, այդ տղայի երեխաներն են: Ես ցանկանում եմ լուսանկարել, Հաքին չի թողնում, իր երիտասարդ հարսին, որը նույնպես լազ է, ասում է՝ օծանելիքը բերի, որ լուսանկարվելուց առաջ ցանի իր վրա: Անուշահոտ ջուրը ցողելուց հետո նրան նկարում եմ հարսի և թոռների հետ:

Հաբիբն ասում է, որ ինքն առաջին կնոջ թոռն է, հոր մայրը բաշ–համշենցի էր Աջարիայի Մախո[59] գյուղից:

Այդ ընթացքում բակ է մտնում մի պատանի: Հարևանի տղան է, ծանոթանում ենք՝ Թաթարօղլի Համիդ: Իններորդ դասարանցի է, հետը տետրեր է բերել, եկել է Հաքիից արաբերեն տառերը սովորելու, ասում է՝ մի լեզու ավելի իմանալը վնաս չի: Հարցնում եմ, եթե հայերենի ինքնուսույց ուղարկեմ, կսովորի՞: Խոստանում է:

Մոլլա Հաքիին խնդրում եմ, որ խաղիկներ ասի, գրի առնեմ: Սիրով համաձայնվում է և հինգ խաղիկ է երգում[60], որոնցից մեկի փոփոխակները շատ տարածված են եղել Հայաստանի տարբեր գավառներում.

---

[59] **Մախո** գյուղում 1887 թ. կար 15 տուն (44 տղամարդ և 39 կին) բնակչություն, տե՛ս **В. Лисовский, Указ. раб., Приложение, с. 8**:

[60] Այդ խաղիկները տե՛ս **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009, էջ 270, № 43-47 խաղիկները:

Զէնդիղը[61] պարցէ կյաղ ա,
(Զենդիղը բարձր գյուղ է),
Չուը հիվանդի տաղ ա,
(Ջուրը հիվանդի դեղ է),
Սէվդան սէվդային դալ չին,
(Սիրածը սիրածին չեն տալիս),
Աս ինչբէ՞ս անդէր կյաղ ա:
(Այս ի՞նչ անտեր գյուղ է):

Այս խաղիկի մի տարբերակը դեռևս 1860 թ. «**Կռունկ հայոց աշխարհին**» ամսագրում հրատարակել է 22–23–ամյա Պերճ Պռոշյանն իր «Սոս և Վարդիթեր» վեպում, նաև նույն թվականին Թիֆլիսում լույս տեսած գրքում:

Աշտարակ բարձր տեղ ա – ջուրը հիւանդին դեղ ա,
Սիրածը սիրածին չեն տալ – էս ի՞նչ անիրաւ գեղ ա[62]:

Եթե 1860 թ. տպագրված տարբերակում գովերգվում է հեղինակի հայրենի Աշտարակը, ապա 1887 թ. Երևանում լույս ընծայված գրքում՝ Պ. Պռոշյանի պաշտելի Խ. Աբովյանի ծննդավայր Քանաքեռը: Ինչպես հայտնի է, նա «**Սոս և Վարդիթերը**» գրել է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» (1858) վեպի ազդեցությամբ:

Քանաքեռ բարձր տեղ ա – ջուրը հիւանդին դեղ ա,

---

[61] Զենդիղ (1956-ից՝ Բալըքքոյ), գյուղ Արդվինի նահանգի Խոփայի գավառում:

[62] **Պ. Պռօշեանց**, Սօս և Վարդիթեր, «**Կռունկ հայոց աշխարհին**», ամսագիր, Թիֆլիս, 1860, թիւ Ե, մայիս, էջ 367: **Պերճ Ստեփաննոսեան Պռօշեանց Աշտարակեցի**, Սօս եւ Վարդիթեր, Թիֆլիզ, Ի հայ տպարանի Գաբրիէլի Մելքումեանց եւ Համբարձումայ Էնֆիաճեանց, 1860 (12+228 = 240 էջ), էջ 74:

Սիրած սիրածին չեն տալ – էս ի՞նչ անիրաւ զեղ ա[63]:

Հաքին մեզ շռայլորեն հյուրասիրում է: Մեծ, քառանկյուն թախտի՝ սավքիի կենտրոնում դրվում է կարճ ոտքերով կլոր սեղան՝ դեփուր, որի վրա հայտնվում են թխվածքներ, թեյ, մուրաբաներ, կաթի սերուցք, մածուն և ջրալի ճաշ՝ շորվա:

Այնուհետև Հաբիբի հետ գնում ենք նրա հոր տուն: Մի քիչ այն կողմ է՝ գետակի ափին: Հայրը՝ Աբդուլլահը, բահն առած մարգերն է փխրեցնում: Վարորդ է, սև աչք–ունքով, դեմքի խիստ արտահայտությամբ: Բակում մի քանի կանայք ու երեխաներ են նստած: Կանայք ամոթխածորեն երեսները գլխաշորով ծածկում են, բայց շուտով խոսքի են բռնվում: Հարցնում եմ՝ ի՞նչ երգեր գիտեն, ծիծաղում են, կրկին երեսները գլխաշորով ծածկում: Հարցնում են՝ ինչո՞ւ եմ հետաքրքրվում: Բացատրում եմ: Ամաչում են երգել: Խնդրում եմ գոնե մի քանի խաղիկների բառերն ասեն: Քաշվելով, իրար լրացնելով ու կիսատ թողնելով երգի բառերն են ասում: Գրում եմ: Նրանցից Շուշե Թանթօղլին ի վերջո համարձակություն է առնում ու մի խաղիկ է երգում:

Հայդէ էրթօք ինձի հէդ
Լօբիի հօմա մօլա,
Թուն թա ինձի արնուս օչ,

[63] **Պերճ Պռօշեանց**, Սօս եւ Վարդիթեր, երկրորդ տպագրութիւն, [Երեւան], Էմին Տէր-Գրիգորեանցի տպարանում, 1887 (- 340 էջ), էջ 105: Տե՛ս նաև **Պերճ Պռոշյան**, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր առաջին, Երևան, Հայպետհրատ., 1953 (- 652 էջ), էջ 100, **Պերճ Պռոշյան**, Երկերի ժողովածու յոթ հատորով, հ. 1, Երևան, Հայպետհրատ, 1962 (- 464 էջ), էջ 143-144:

Ասպած ա քէզի կօլա:

Նա 1928 թ. ծնվել է Գոնիոյում, չորս տարի սովորել է վրացական դպրոցում, 16 տարեկանում աքսորվել է Ղրղզստան:

Հետս տարել էի հայկական ժողովրդական մեղեդիների, հայ երգիչ–երգչուհիների ձայնասկավառակներ, Հայաստանի մասին ռուսերեն գրքեր ու գրքույկներ, տեսարժան վայրերի պատկերներով գունավոր բացիկներ, այն ամենը, ինչ այն տարիներին հնարավոր էր գտնել խանութներում: Երբ ես զրուցում էի նրանց հետ, Վովան ջանասիրաբար օգնում էր ինձ, նա այդ հուշանվերների վրա ռուսերեն մակագրում էր՝ նվեր Վովա Յայլյանից, նշում էր ամսաթիվը, ստորագրում էր ու բաժանում մեր շուրջը հավաքված գյուղացիներին: Երեխաները բացիկները ձեռքներին աշխույժ թռչկոտում էին, վազվզում, համեմատում ումն է ավելի լավը:

Շուտով գալիս է Հաբիբի եղբայրը՝ Գյուլփաշան: Համակրելի երիտասարդ է: Նույնպես վարորդ է, հետաքրքրվում է Հայաստանով: Նրան հայկական բացիկներ եմ տալիս: Շատ է ոգևորվում: Հայրը, որ մի քանի քայլ այն կողմում մարգերն է ջրում, ասում է.

- Եթե Հայաստանում լավ լիներ, չէին փախչի այս կողմերը, ինչքա՜ն խոպանչիներ են գալիս…

Ես փորձում եմ բացատրել, բայց ի՞նչ ասեմ: Գյուլփաշան խնդրում է, որ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գրքեր ուղարկեմ: Խոստանում եմ:

Նա իոր մասին այսպիսի դեպք է պատմում: Մի անգամ, Գյուլփաշան մեքենայով տուն գալիս, իրենց տնից մի

հարյուր մետր այն կողմ, տեսնում է ընկերները նստել են ծառի հովին, խմում են: Շատ են համոզում, և մի բաժակ էլ ինքն է խմում: Հայրը հեռվից նկատում է, և երբ նա տուն է հասնում, հայրը վերցնում է վարորդական իրավունքն ու 6 ամիս չի վերադարձնում:

* * *

Հաջորդ օրը Կըզըլ–Կիյայում գնում ենք Զութի Թոքուզօղլիի տուն՝ Սպորտիվնայա 132: Քեմենչե[64] նվագել գիտի: Բարեբախտաբար տանն է: Հետաքրքրական է, որ սրինգի կամ պարկապզուկի նման, քեմենչե նվագելուն էլ ասում են փչել՝ «փէչուշ»: Ասում էին նաև «դաուլ թէվուշ»՝ դհոլ խփել, «քէմէնչէ թէվուշ»՝ քեմենչե խփել, երևի աղեղով լարերին դիպչելը նկատի ունենալով: Քրիստոնյա համշենահայերն ասում են «չալուշ» (նվագել):

Ինչպես ամենուր, իսկույն մեծ թախտի՝ սավքիի վրա տարբեր ուտեստներ են հայտնվում, և, անպայման՝ թեյ: Զութին ծնվել է 1929 թ. Աջարիայում՝ Ճառնալի գյուղում, մսագործ է աշխատում մսի կոմբինատում: Քեմենչե նվագել նոր է սովորել՝ 2–3 տարի առաջ, Կարավան գյուղում ապրող Թաթարօղլի Հասանից: Քեմենչեն պատրաստել է

[64] Քեմենչեն լարային-աղեղնային փայտյա նվազարան է, որը կազմված է նավի նմանվող ոչ լայն, երկարավուն իրանից, կարճ վզից և գլխիկից: Ունենում է 3 լար և աղեղ: Նվագում են ծնկին հենած կամ կանգնած՝ առջևում պահած: Իսկ քեմոնան (քամանի) ավելի մեծ է, ավելի լայն, ունի 4 լար: Չշփոթել Հայաստանում տարածված գնդաձև իրան և երկար, բարակ վիզ ունեցող քյամանչայի (քամանչա) հետ: Տե՛ս նաև՝ **Անդրանիկ Զեյթունյան**, Համշենահայերի նվագարանները, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**», ամսագիր, Երևան, 1985, № 8, էջ 18-25:

Ջեմալ Շիշմանօղլին: Ցանկանում եմ ձայնագրել, չի համաձայնվում, առաջարկում է, որ իր վարպետին՝ Հասանին էլ ձայնագրեմ, խոստանում եմ, և նա սկսում է նվագել՝ Քըզ մենդիլ, Շալախո, Իքի այաղ, Ուչ այաղ, Գոնչուշի քայդա...

Տան մի անկյունում նստած է Զութիի մայրը: Երևի հարյուր տարեկան կլինի: Զութին հպարտանում է, որ մայրը՝ Ֆաթիմեն, 1926 թ. միանգամից երեք տղա (մօնչ) է բերել, ցավոք, երկուսը փոքր հասակում մահացել են:

Զութիին խնդրում եմ մի քանի խաղիկներ (ինչպես իրենք են ասում՝ **խաղ**) երգի: Նա մի երկուսն ասում է և կանչում կնոջը՝ Հաթիջեին, որ նա հիշեցնի, բայց ամոթխած կինն անընդհատ խուսափում է: Զութին ձեռք չի քաշում: Երևում է, որ կինը շատ խաղիկներ գիտի, բայց օտար տղամարդկանց մոտ սիրային այդ քառյակները չի կարող արտասանել: Զութին թելադրում է իր իմացածը.

Հարսը ցախուղէ մէդավ,
(Հարսը անտառ մտավ),
Միյօղն էլավ, էրգէնցավ,
(Բաղեղը ելավ, երկարեց),
Թուն իմ մօյը հարս էլէդ,
(Դու իմ մորը հարս լինեիր),
Արնէ, էրթա արդն ի վէ:
(Առնեի, գնայի արտն ի վեր)[65]:

---

[65] Այս խաղիկի բնագրի և թարգմանության մասին տե՛ս **Ս. Վարդանյան**, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբա-**

Հինգերորդ դասարանցի տղան՝ Ալբերտը, հորը տեսնելով դպրոցականի նման շփոթված, ծիծաղից թուլանում է, իսկ Զութին, ամաչելով, ձեռքերը տարածում է և կրկնում.

- Է՛, ի՞նչ էնիմ, – և կրկին կանչում է կնոջը:

Այնուհետև հիշում է, որ իրենց հարևանուհին՝ Սոֆի տատը, շատ խաղիկներ գիտի: Հորդառատ անձրև է գալիս: Գնում, բերում են շորերի մեջ փաթաթված Սոֆիին: 80–նն անց կլինի, ունի մեծ, կապույտ աչքեր: Խնդրում եմ երգի: Նա նորահարսի պես ամաչում է, երկու ափով ծածկում է դեմքն ու աչքերը, ապա երգում:

Քա՛, ի՞նչ աղավ քէզիգի,
Կուլաս, իժէէ կուլաս,
Մէզ նըշանլու մէ ունիս,
Մէմալ ինչի՞ ման կուկաս:

* * *

Այէ՛, Խաուլա, այէ՛,
Լօբիան աջէրէցի,
Յէս լօբիա ուղէ չիմ,
Լէրէնցի իմ, լէրէնցի:

Երգելուց հետո ձեռքերը իջեցնում է և գլուխը կախ, ամաչելով նստում: Միացնում եմ ձայնագրությունը: Նա իր ձայնը լսելով ծիծաղում է մանրիկ–մանրիկ ծիծաղով: Հետո խնդրում եմ, որ էլի երգի: Կրկին ափերով ծածկում է

նասիրական հանդես», 2016, № 3, էջ 83-85, նաև սույն գրքում տպագրված Ս. Վարդանյանի «Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի կրոնափոխ համշենահայերի երգերի մի քանի բառերի մասին» հոդվածը:

դեմքն ու աչքերը և երգում, բայց այս անգամ՝ թուրքերեն: Հավաքված տնեցիներն ու հարևանները չորս կողմից վրա են տալիս խեղճ կնոջը, թե՝

- Թուրքչա չվիդի՛, հոմշէցնա՛կ զօնչա:

Նա շփոթվում է, ամաչում, անհարմարությունից չգիտի ինչ անի: Նրան միահամուռ բացատրում են, որ թուրքերեն պետք չի, **հոմշեցնակ**, այսինքն՝ Համշենի բարբառով երգիր: Նա գլխով է անում և կրկին դեմքը ծածկելով՝ պատրաստվում երգել:

Բոլորս իրար լռեցնում ենք, զգուշացնում, որ ձայնագրության պահին ոչ ոք չխոսի և Սոֆին սկսում է իր բարակ, աղջկական զիլ ձայնով երգել: Այստեղ կրկին իրար ենք խառնվում, աղմկում.

- Թուրքչա չվիդի՛, հոմշէցնա՛կ զօնչա:

Այսպես մի քանի անգամ: Ի վերջո, Սոֆին ամաչելով հայտնում է, որ այս թուրքերեն երգն ինքն է հորինել, երբ ամուսինը մեկնել է ռազմաճակատ, նրա մասին է: Ցանկանում է, որ այդ երգն էլ ձայնագրեմ: Ձայնագրում եմ:

Այնտեղ է նաև նրա թոռը՝ Բենալի Ալօղլին: Նա բուժակ է: Պատմում է, որ բանակում ծառայել է Հյուսիսային Օսիայի Մոզդոկ քաղաքում, իրենց զորամասում հայ զինվորներ շատ կային: Մի անգամ վեճ է ծագում և ինքը հասկանում է, թե հայերն իրար հետ ինչ են խոսում: Բոլորը զարմանում են: Բենալին ասում է, որ հայերին հասկանում էր, բայց նրանց նման չէր կարողանում խոսել: Հետները մտերմանում է, եղբոր պես են լինում:

* * *

Ջութիի խնդրանքով նույն օրը՝ երեկոյան, Հաբիբի հետ գնում ենք Կարավան գյուղ՝ Հասան Թաթարօղլիի տուն: Նա շատ է տարակուսում, թե ինչպես եմ Հայաստանից եկել, իրեն գտել: Ծանոթանալիս ինձ է մեկնում աշխատանքից կոշտացած ափը և կատակով ասում.

- Թաթարյա՛ն:

Նա չի կարողանում ըմբռնել, թե ինչո՞ւ եմ ցանկանում իրեն ձայնագրել.

- Ի՞նչ է, Հայաստանում քեմենչե նվագող չկա՞:

Հասանը ծնվել է 1930 թ. Աջարիայի Կվարիաթի (Կորիաթ, Գորիաթ) գյուղում: Մինչև 5–րդ դասարանը սովորել է տեղի վրացական դպրոցում: 18 տարեկանից քեմենչե է նվագում: Բայց ամեն կերպ աշխատում է իր նվագը փնովել, ապացուցել, որ այն արժանի չէ ձայնագրման: Վերջապես, երկար համոզելուց հետո, նա հուզմունքով վերցնում է քեմենչեն: Ես միացնում եմ ձայնագրիչը, բայց ժապավենը չի պտտվում: Շփոթվում եմ: Նորից եմ փորձում: Հասանի շունչը տեղն է ընկնում, կատակում է.

- Քյօր ջիուն քյօր նալօղ բիդի (բառացի թարգմ.՝ «Կույր ձիուն կույր պայտող է պետք», հավանաբար ասվում է հետևյալ իմաստներով. «Կույր ձիուն կույր պայտող է սազում, հասնում, բաժին ընկնում, վիճակվում»):

Բոլորս ծիծաղում ենք: Հավաքվել են Հասանի ընտանիքի անդամները և դռնից ծիկրակում են: Նա չի ցանկանում, որ իր հուզմունքը կինն ու երեխաները տեսնեն:

Վերջապես ձայնագրիչն աշխատում է: Նա հերթով, հանդիսավոր հայտարարում է պարերի անվանումները.

- Լիթիթի՛:

Այնուհետև՝ Դիվ–դիվ դանա, Ուչ այաղ, Իքի այաղ, Թիթրեմե (Թրթռուկ), Շալախո, Համշենի քրդի պար (նույնն է մեր Վեր–վերի պարի հետ), Լեզգինկա, Քըզ մենդիլ: Հասանը նվագում է նաև «Պեպոյի երգը» հանրահայտ «Պեպո» ֆիլմից: Այնքան ժողովրդական է, որ նա չի էլ ենթադրում, որ այն Արամ Խաչատրյանն է հորինել[66]: Զրուցում ենք համշենցի հայերի ու համշենցի քրդերի մասին, ասում է, որ համշենցի հայերի ու համշենցի քրդերի պարեղանակներն ու պարերը նույնն են:

Հասանի խնդրանքով իր երկու տղաներին, որոնք ակորդեոն և դհոլ են նվագում, նույնպես ձայնագրում եմ:

Մենյակի երևացող տեղերում աչքի են զարնում զարդարված, գույնզգույն թաշկինակները: Ղրղզստանի համշենցիների դեռ չամուսնացած աղջիկները սիրում են ուլունքներով, տարբեր գույնի փոքր, փայլփլուն, ձկան թեփուկի նման բարակ, այսպես ասած՝ փայլաթեփուկներով, ժանյակներով զարդարել թաշկինակի չափ կտորների եզրերը: Դրանք սովորաբար շրջազգեստ կարելու կամ այլ

---

[66] Հ. Բեկնազարյանի «Պեպո» (1935 թ.) ֆիլմում, ուռկանով ձուկ որսալու դրվագում հնչող Պեպոյի երգը Ա. Խաչատրյանի ստեղծագործությունն է: Երբ ոմանք, չիմանալով, կարծել են թե ժողովրդական երգ է, Ա. Խաչատրյանն այդ համարել է ստեղծագործողի համար ամենամեծ գնահատականը, ամենամեծ պարգևը, տե՛ս **В. Юзефович,** Арам Хачатурян, Москва, 1990, с. 74-75, տե՛ս **Арам Хачатурян,** киномузыка, автор текста М. Рухкян, Ереван, 2005, с. 13.

կտորեղենից մնացած ավելորդ մասեր են: Այդ թաշկինակները դրվում են հյուրասենյակների պատվավոր տեղերում և ցուցադրում են աղջիկների ճաշակն ու ձեռքի շնորհքը: Դրանք նրանք ընծայում են սիրած տղային: Մի քանի նմուշ եմ խնդրում Համշենին և համշենցիներին նվիրվելիք ապագա թանգարանի համար: Սիրով տալիս են:

* * *

Առավոտյան Հաբիբի հետ գնում ենք Էսկի–Նոոկատ: Ցանկանում է ծանոթացնել շրջանային հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալ Աիմեդ Բեքթաշի Կարաիբրահիմովի հետ: Աիմեդը ոչ բարձրահասակ, ամրակազմ, թխահեր մարդ է: Ծնվել է 1939 թ. Գոնիոյում, 1944 թ. աքսորից հետո իրենց ընտանիքը բնակվել է Ջալալ–Աբադի Լենինյան շրջանի Լենինսկոյե գյուղում, ասում է, որ այժմ այնտեղ 20–30 տուն համշենցիներ կան: 1945–46 թթ. հորեղբայրը բերել է Էսկի–Նոոկատ: 1957 թ. ավարտել է Կըզըլ–Կիյայի ռուսական դպրոցը, այնուհետև՝ Ջալալ–Աբադի բժշկական ուսումնարանը, 1959–ից Ալաբուկայի շրջանում[67] բուժակ է աշխատել, այնուհետև՝ գնացել բանակ:

1969 թ. ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) Բժշկական ինստիտուտը (համալսարանը): Որպես թերապևտ ուղարկել են Օշի մարզ: Քանի որ բժիշկների խիստ պակաս կար, իսկ շրջանում մոլեգնում էին տարբեր համաճարակներն

---

[67] Ալաբուկայի շրջան (ղրղզ.՝ Алабука районy), վարչական շրջան Ղրղզստանի Ջալալ-Աբադի մարզում, կենտրոնը՝ Ալա-Բուկա գյուղն է:

ու հիվանդությունները, Աhմեդը եղել է և՛ համաճարակաբան, և՛ մանկաբարձ և այլն: 1974–1980 թթ. աշխատել է գլխավոր բժիշկ, այնուհետև՝ գլխավոր բժշկի տեղակալ: 1971 թ. ամուսնացել է, ունի 3 երեխա, երկուսը խոսում են Համշենի բարբառով, թեև կնոջ հայրը թուրք է, մայրը՝ աջար: Աhմեդ Կարաիբրահիմովը Ղրղզստանի համշենցիների առաջին մտավորականներից է, նրա երազանքներից է, որ շատ համշենցիներ բարձրագույն կրթություն ստանան: Առայժմ այդպիսիք քիչ են: Նա մեկ առ մեկ թվարկում է բոլորին: Ասում է, որ Կարակչիօղլի Ջումբերը եղել է Ղրղզստանի ծանրամարտի չեմպիոն, սպորտի վարպետ է, ավարտել է Ֆիզկուլտուրայի ինստիտուտը, այժմ մարզիչ է Ֆրունզեում: Նրա եղբայրը՝ Բեhլուլը, ավարտել է Պոլիտեխնիկը, ավտոկայանի տնօրեն է: Կարակչին Իսհաքը գլխավոր ինժեներ է Կարաբալտա քաղաքում, Հաբիբը վիրաբույժ է, Մարաշօղլի Շուքրին Լենինգրադում ասպիրանտուրան ավարտելուց հետո Օշի Մանկավարժական ինստիտուտում անգլերեն է դասավանդում, Կարակչիօղլի Գյուլնարան աշխատում է Ֆրունզեում՝ Կիրգիզ–պրոեկտ նախագծային ինստիտուտում, Ջելալ Կարաիբրահիմովը Ֆրունզեում Պոլիտեխնիկականն ավարտելուց հետո ուսուցիչ է Ղազախստանի Չիրկինո գյուղում, Կարաիբրահիմով Շուքրին ավտոբազայի գլխավոր ինժեներ է Նոոկատում, Կարաիբրահիմով Սուլեյմանը ֆիզկուլտուրայի ուսուցիչ է Նոոկատում, Քյոսօղլի Ասիյան աշխատում է Կըզըլ–Կիյայի կոմերիտմիության շրջկոմում, Քյոսօղլի Մահմադը Նոոկատում անասնա-

բույժ է, Կարաբաջակով Հըզըրը Բեկ–Աբադում դպրոցի տնօրեն է, Մարաշն Ջամալը ապրում է Բաքվում, սպորտդպրոցի տնօրեն է և այլն:

Նոռկատում՝ փողոցում, ծանոթանում ենք մի ուրիշ համշենցու՝ Հուսեյին Քյոսօղլիի հետ նա:

- Հօյիվ իմ (հովիվ եմ),– ասում է նա:

Զարմանում եմ, որ կրոնափոխ համշենցիների խոսվածքում պահպանվել է «հօյիվ» բառը, քրիստոնյա համշենցիներն ասում են «չօբօն»: Հուսեյինը 35 տարի է հովիվ է, արժանացել է «Լենինի» և «Կարմիր աստղի» շքանշանների, մի շարք մեդալների, ապրում է Գյուլստան գյուղում, աշխատում է Ֆրունզեի անվան կոլտնտեսությունում[68]: Իրենց գյուղում մի 20 տուն համշենցիներ կան՝ Քյոսօղլիներ, Կարակչիօղլիներ և Շաբանօղլիներ: 7 երեխա ունի, մեծը 29 տարեկան է, փոքրը՝ 9: Ինքը 1930 թ. ծնվել է Ճառնալում, 3 տարի սովորել է վրացական դպրոցում: Ասում է, որ հայրը՝ Քադըրը, շատ լավ դավալ՝ մեծ սրինգ է նվագում, երբեմն–երբեմն ձեռքն է առնում, փչում:

Հրաժեշտ ենք տալիս Հուսեյինին և զբոսնում Էսկի–Նոռկատում: Բնակչության մեծամասնությունը ուզբեկ է, կիրգիզները (ղրղզներ) ավելի քիչ են: Գլխավոր փողոցում Հաբիբը բազմաթիվ անցորդների միջից կանչում է իր հայրենակիցներին: Մի 10–15 րոպեի ընթացքում մեր շուրջն են հավաքվում մի քանի համշենցիներ:

---

[68] Գյուլստանի գյուղախումբը կամ ենթաշրջանը (Гюльстанский аульный округ) գտնվում է Նոռկատի շրջանում:

Դիմացից գալիս է մարզիկի կազմվածքով, խիտ, սպիտակ մազերով մի տղամարդ: Հաբիբը ձեռքով է անում, բժիշկ Աիմեդի եղբայրն է՝ Սուլեյմանը՝ Սուլիկոն, որը ֆիզկուլտուրայի ուսուցիչ է: Մեզ է մոտենում նաև մի աղջիկ, ծանոթանում ենք՝ Էմինե Քյոսօղլի, 23 տարեկան է, մթերումների գրասենյակում տնտեսագետ է, այնուհետև գալիս է Հասան Շաբանովը (Շաբանօղլի) կնոջ՝ Մնյուդայի հետ: Զրուցում ենք, փողոցում լուսանկարվում: Հասանի աղջիկը՝ Գյուլթենը, սովորում է 4–րդ դասարանում, սեղանի թենիսի շրջանային մրցումներում առաջին տեղն է գրավել, տղան՝ Սելիմը, 3–րդ դասարանցի է, զբաղվում է ըմբշամարտով: Լուսանկարվելուց հետո բոլոր լուսանկարվածների անունները գրում եմ: Այդ պահին մեզ է մոտենում բանից անտեղյակ մի համշենցի, որը փողոցով անցնելիս տեսնելով, որ անուններ եմ գրում, ասում է.

- Իմ անունն էլ գրիր:

Թելադրում է իր անունը և ուշադիր հետևում ինձ, համոզվում, որ գրում եմ:

Այնուհետև Սուլեյմանն առաջարկում է գնալ Կալինինի փողոց՝ իրենց տուն, մոտիկ է: Նա ծնվել է 1936 թ., Բաթումում, կինը ռուս է, ունի մեկ տղա, անունը՝ Էրիկ, սովորում է 9–րդ դասարանում: Սուլեյմանը ապրում է բնակելի շենքում, ժամանակակից կահավորմամբ մաքուր բնակարան է:

1978 թ. ամռանը եղել է Թուրքիայում՝ Արդվինի նահանգի Խոփայի գավառի Չավուշլու գյուղում ապրող իր ազգականների մոտ: Նրանք՝ Հաֆիզօղլուները, Ալթունքա-

յաները, Գյումիշքայաները, Դումանօղլուները և մյուսները Սուլեյմանին շատ ջերմորեն են ընդունել: Ասում է, որ ծերունիները Համշենի բարբառով են խոսում, երիտասարդները նույնպես, բայց մի քանիսը ցույց են տալիս, թե իբր չգիտեն, իսկ երեխաները, թեև հասկանում են, բայց արդեն սկսել են թուրքերեն խոսել:

- Ես նրանց հարցրեցի, թե ի՞նչ ազգ են իրենց համարում,– պատմում է Սուլեյմանը,– ոմանք ասում էին, որ թուրք են, ապրել են հայերի մեջ և լեզուն սովորել, մի մասն էլ ասում էր՝ հիմարություն է, մենք հայ ենք, ուղղակի կրոնն ենք փոխել: Իսկ ինձ հանդիպած թուրքերն ասում էին, որ համշենցիները հայ են: Շրջակա բոլոր գյուղերում նույնպես համշենցիներ են բնակվում: Այնտեղ տնից դուրս ես գալիս, բոլորը համշենցի են, այստեղ տնից դուրս ես գալիս, բոլորը ուզբեկ են: Երեք ամիս Թուրքիայում ապրեցի: Եթե համշենցիները քաղաք չգնան, երբեք լեզուն չեն կորցնի: Ես ասում էի, որ Հայաստան կա, նրանք շատ էին հետաքրքրվում Հայաստանով, բայց բացարձակապես ոչ մի կապ չունեին:

Սուլեյմանն այնտեղ ձայնագրել է 1930–ական թթ. սահմանի փակումից հետո Չավուշլուում մնացածների խոսքն ուղղված Ղրղզստան և Ղազախստան աքսորված իրենց ազգականներին, որոնց չէին տեսել 40 տարուց ավելի:

Ձայնարկիչի միջից լսվում են կանանց և տղամարդկանց հուզախառն ձայներ, որոնք երբեմն խզվում են, ընդհատվում:

- Յէս էմինէն իմ, օրթի՛, Իլյասին էմինէն իմ, քէզի մադաղ էլլիմ իմ Շաբան օրթի, հօքութ մադաղ էլլիմ, օրթի՛,– լացակումած ասում է մի տարեց կին,– քէզի յէսիր էլլիմ, օրթի՛, բիթունիդ ալ այրի–այրի մադաղ էլլիմ, Աբդուլլայի՛ն ալ, Շաբանի՛ն ալ, օղլուշաղին թումայի, ցէզի յէսիր էլլիմ, օրթի՛, այրի–այրի մէնացաք, օրթի՛, բասմալում[69] էգէր ու քէնացէր, ալ էգօղ չէ՞ս թա, օրթի՛,– ծեր կինը հեծկլտալով ինչ–որ բաներ է ասում, հավանաբար հարազատների անուններն է թվարկում, հետո շարունակում,– իմ դաղան սէլամ գէնա, Մէմէդը սէլամ գէնա, Շաբանօղլի Մէմէդը՝ Էմինէին դաղան: Իմ թօրէ ասքէր քէնաց, օրթի՛, էգու օմիս գէլլի ասքէր ա, օրթի՛... (Ես Էմինեն եմ, որդի՛, Իլյասի Էմինեն եմ, քեզ մատաղ լինեմ իմ Շաբան որդի, հոգուդ մատաղ լինեմ, որդի՛, Աստծու կամքով եկար ու գնացիր, էլ չե՞ս գալու, որդի՛, քեզ գերի լինեմ, որդի՛, բոլորիդ էլ առանձին–առանձին մատաղ լինեմ, որդի՛, Աբդուլլայի՛ն էլ, Շաբանի՛ն էլ, ամբողջ ընտանիքին, ձեզ գերի լինեմ, որդի՛, բաժան–բաժան մնացինք, որդի՛, իմ տղան բարևում է, Մեմեդը բարևում է, Շաբանօղլի Մեմեդը՝ Էմինեի տղան: Իմ թոռը բանակ գնաց, որդի՛, երկու ամիս կլինի զինվոր է, որդի՛...):

Լսվում են լացի ձայներ:

- Լա՛ մի, խարբա՛, նօ՞ր կուլաս (Մի՛ լացիր, խոսի՛ր, ո՞ւր ես լացում),– ասում են կողքից:

Մեկը հարցնում է.

---

[69] Հավանաբար «բասմալում» բառը արաբերեն «բիսմիլլահ» բառի աղավաղված տարբերակն է, այն արաբերեն նշանակում է «Աստծու անունով», «Ալլահի անունով», տվյալ դեպքում օգտագործվել է «Աստծու կամքով», «Ալլահի կամքով» իմաստով:

- Հօքուը սա՞ղ ա թա, դաղն ալ սա՞ղ ա թա (Հորաքույրը ո՞ղջ է, հայրն էլ ո՞ղջ է):

- Թէվօուն բաչ գէնիմ (Ձեռքերը համբուրում եմ),– ասում է մի տղամարդ:

- Յէս Քիբարալի Աբդուլլային թօրն իմ՝ Ջէմալին ախչիգը, Գյօնուլէ ա օնունս, շադ մէձ սէլամ գէնիք գէնօչը, մօը, դադին: Հօքույն ալ, բիթունէս ալ այրի–այրի վարէցաք: Գուշիին ա շադ մէձ սէլամ գէնիմ, Գուշին իմ դադին հօքույն ա, Ջէմալին ախչիգն իմ յէս, բիթունին այրի–այրի սէլամ գէնիմ, բիթունէս այրի–այրի վարէցաք (Ես Քիբարալի Աբդուլլայի թոռն եմ՝ Ջեմալի աղջիկը, անունս Գյոնուլե է, շատ մեծ բարև եմ անում կնոջը, մորը, հորը: Հորաքույրն էլ, բոլորս էլ առանձին–առանձին վառվեցինք: Գուշիին էլ շատ մեծ բարևում եմ, Գուշին իմ հոր հորաքույրն է, ես Ջեմալի աղջիկն եմ, բոլորին առանձին–առանձին բարևում եմ, բոլորս առանձին–առանձին վառվեցինք...):

- Յէս Օսմանին բիձի հարսն իմ... (Ես Օսմանի փոքր հարսն եմ...):

- Աստէ՛ք, բիթուն աստէ՛ք, քէրվի գու[70], խաբրէցէ՛ք (Ասե՛ք, ամեն ինչ ասեք, ձայնագրվում է, խոսե՛ք),– ասում է Սուլեյմանը:

Մարդիկ հերթով փորձում են իրենց սրտից բխածն ասել հեռու–հեռավոր Ղրղզստան քշված իրենց արյունակիցներին: Այնուհետև նրանք «Մէձ լէր»[71] կոչվող յայլայի

---

[70] **Քէրվի գու** նշանակում է «գրվում է», այստեղ՝ ձայնագրվում է:

[71] «**Մէձ լէր**», «լէր» համշեցնակ նշանակում է յայլա, սարատեղի, «Մէձ լէր»՝ Մեծ յայլա, գտնվում է Շավշաթում:

ճանապարհին Սուլեյմանի համար սազի նվագակցությամբ խաղիկներ են երգում, ու նաև՝ մի հրաշալի երգ.

Յունէ էյէվ, փըրնէց չամին դալինէ,
(Ձյունը եկավ, ծածկեց սոճու ճյուղը),
Էրօնդ ախչիգ դէսա լէրնան քալինէ,
(Սիրուն աղջիկ տեսա յայլայից գալիս),
Ալի քաուն քուկա, թօրխ ընօղ չէ՞ս թա,
(Էլի գարուն կգա, թորխ չե՞ս անելու),
Փէրգը ափթ արնօղ ու զօր քալօղ չէ՞ս թա:
(Բրիչը ձեռքդ առնելու ու կոռի չե՞ս գնալու):
Ինձի ալ քօլէցէր, թուն ալ աէցար,
(Ինձ էլ վառեցիր, դու էլ այրվեցիր),
Ջօմէին օղնինէ լալօվ նէն օնցար:
(Մզկիթի բլուրով լալով այն կողմ անցար):
Ասա՛, բիձի՛գ, ասա՛, քօ դարղէթ շադ ա,
(Ասա՛, փոքրի՛կ, ասա՛, քո դարդը շատ է),
Բազի բիր քալէս կու արդն ի վէր՝ փադա[72]:
(Երբեմն գնում ես արտն ի վեր՝ փայտի):

---

[72] **Ս. Վարդանյան**, Համշենի մուսուլման հայերը, «**Փյունիկ**», պարբերաթերթ, Երևան, 1991, հունվարի 25, № 1 (09), էջ 3, 4: 1944 թ. Աջարիայից Կենտրոնական Ասիա աքսորված կրոնափոխ համշենահայերի հետ հանդիպման մասին է: Հրատարակվել են «**Յունէ էյէվ, փէռնէց չամին դալինէ**» երգն ու 21 բառից կազմված բառարան: **Նույնի**՝ Համշենի մուսուլման հայերը, «**Իրան-Նամէ**», հանդես, Երևան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 12, 13: Տպագրվել է «**Յունէ էյէվ, փէռնէց չամին դալինէ**» երգը և 21 բառից կազմված բառարան: **Նույնի**՝ Մեկ երգի հինգ տարբերակ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2008, № 7-8, էջ 7: Երգը «**Ասա՛, բիձիգ, ասա՛**» (Ասա՛, փոքրիկ, ասա՛) վերնագրով և նոտաներով հրատարակել եմ իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքում, էջ 205-210:

Հետաքրքիր է, որ կրոնափոխ համշենցիների խոսվածքում պահպանվել է կոռ (զօր) բառը, որը նախկինում եղել է հարկատեսակ՝ սեփական գործիքներով, սայլով, գութանով հողատիրոջ համար պարտադիր աշխատանք, իսկ այժմ նշանակում է համագյուղացիների կամավոր փոխօգնություն, որի ժամանակ նաև երգում են, կատակում, զրուցում, տղա–աղջիկ ավելի մոտիկից ծանոթանալու հնարավորություն ունենում[73]:

Ամբողջ ձայնագրությունը լսելու ժամանակ չկա, մանավանդ որ պետք է քանիցս հետ ու առաջ տալ, որպեսզի հասկացվի ինչ են ասում, ինչ են երգում, հատ–հատ գրվեն բառերը, որոնք աղմուկի պատճառով լավ չեն լսվում: Սուլեյմանը ձայներիզն ինձ համար կրկնօրինակելու հնարավորություն չունի, ուստի խնդրում եմ ինձ տա՝ Երևանում ձայնագրեմ և փոստով ուղարկեմ իրեն: Համաձայնվում է:

* * *

Հաբիբը հրավիրում է իր տուն: Կինը վերադարձել է Ֆրունզեից, ուր մեկնել էր մանկավարժների մեկամյա վերապատրաստման: Հաբիբի կինը՝ Թամարան, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի է 5–րդ դպրոցում: Ավարտել է Ֆրունզեի Ղրղզական պետական համալսարանի ռուսական բանասիրական ֆակուլտետը: Նա էս-

[73] Երգի թարգմանության մասին տե՛ս Ս. **Վարդանյան**, Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու**, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2016 (- 398 էջ), էջ 353-366: Արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», 2017, № 1-2, էջ 4-6:

կի–Նոռկատից է (ծնվ. է 1956 թ.), մայրը՝ Զեյնաբ (Անյա) Իսրայիլովան, չեչեն է: Երեք քույր են՝ ինքը, Այսան և Նադեժդան: Քույրերից մեկն աշխատում է կոմերիտմիության քաղկոմում: Օրիորդական ազգանունը Փոցքարովա (Փոցքյորօղլի) է: Նրա աշակերտների մեջ էլ շատ համշենցիներ կան, ասում է.

- Շատ խելացի երեխաներ են, բնականից խիստ զարգացած ընդունակություններով, բայց ծնողներն աղջիկներին չեն թողնում, որ ուսումը շարունակեն: Սա ունի պաշտպանական նշանակություն, ծնողները վախենում են, որ աղջիկներն այլ տեղ գնալով կամուսնանան օտարների հետ: Բայց ինձ այլ բան է անհանգստացնում՝ վերջին շրջանում տղաների ծնունդը խիստ պակասել է և ինձ թվում է, որ մեկ տղային նույնիսկ 6–7 աղջիկ է ընկնում, սա լավ է երևում հարսանիքների ժամանակ, երբ ժողովուրդ է հավաքված լինում:

Ես Ֆրունզեում մի դասախոս ունեի՝ Զինկով ազգանունով, ռուս գրականություն էր դասավանդում,– շարունակում է Թամարան,– մի անգամ ինձ հարցրեց, թե ի՞նչ ազգ եմ: Ասացի.

- Համշենկա:

Նա զարմացավ.

- Մի՞թե այդպիսի ազգ կա: Անձնագրումդ ի՞նչ է գրված:

- Ասացի՝ խեմշիլ: Մի շաբաթ հետո եկավ և ասաց, որ դուք ոչ թե խեմշիլ եք, այլ հայ եք, 18–րդ դարում կրոնափոխվել եք: Խորհրդային Մեծ հանրագիտարանում է

կարդացել[74]: Ես եկա և սկսեցի բոլորին պատմել, որ հայ ենք: Դա 1973 թվականին էր: Մինչ այդ ես չգիտեի, որ մենք հայ ենք, ես կարծում էի, որ մենք հայերի հետ միայն լեզվի նմանություն ունենք, մանավանդ որ հայերի հանդիպել էի, բայց հենց իմանում էին, որ մահմեդական ենք, ասում էին՝ դուք հայ չեք: Օրինակ՝ Ղրիմում՝ Սիմֆերոպոլում, մի մայր ու աղջիկ էին հանգստանում, հայ էին, նրանք խոսում էին և շատ էին զարմանում, որ իրենց հասկանում եմ: Ֆրունզեում ուսանելիս մի հայ կին դասախոս ունեինք, քաղտնտեսություն էր դասավանդում, Ջելալ Կարաիբրահիմովի հետ, որ հիմա Չիրկինոյում դպրոցում է աշխատում, խոսում էի, ասացի, որ վախենում եմ քննությունից, իսկ դասախոսը մեզ լսեց և հայերեն ասաց.

- Մի՛ վախի:

---

[74] «Хемшины (хамшенлы)» - немногочисленная группа армян в Турции, принявшая в начале 18 в. мусульманство. Часть Х. живёт в СССР. В Турции Х. компактными массами живут по берегам реки Фыртыны и в долине реки Карадере («Чёрное ущелье»). Эти Х. называются «баш-Х.». Вторая группа Х. живёт в горах недалеко от города Хопы и в районе реки Чорух. Эта группа Х. именуется «хопе-Х.». Занимаются в основном скотоводством (гл. обр. овцы, козы), изготовляют сыр, масло, обрабатывают кожи; выделывают грубое сукно; сеют в небольшом количестве кукурузу. Занимаются также пчеловодством. Часть Х. зимой уезжает в большие города на заработки.

Материальная культура Х. близка к «лазской» (см. Лазы), особенно у «хопе-Х.». Одежда у мужчин лазского покроя: короткая куртка, запахивающаяся слева направо, широкие шаровары турецко-лазского типа с карманами на высоте груди для ружейных патронов. Цвет одежды чаще тёмный. Женщины носят длинные халаты или рубашки, на голове невысокую феску, украшенную золочёными, серебряными или фальшивыми монетами, спускающимися на лоб и уши» // **Большая Советская энциклопедия**, т. 46, Москва, 1957, с. 118.

Հետո նրա հետ երկար զրուցեցինք, նա հարցնում էր թե մեր լեզվով ի՞նչ ենք ասում հացին, ասում էի՝ հաց, ջրին ի՞նչ ենք ասում, ասում էի՝ չուր, հարցնում էր՝ մեկին ի՞նչ ենք ասում, երկուսին, երեքին և այլն, ասում էի՝ մէգ, էգու, իյէք և այլն: Նա ասաց, որ մեր լեզուները նման են, բայց, քանի որ մահմեդական եք, ուրեմն հայ չեք:

Իսկ ես միշտ էլ գիտեի, որ հայ ենք,– ասում է Հաբիբը,– նույնիսկ դպրոցում իմ անվան դիմաց ազգության բաժնում իմ պահանջով գրում էին «հայ»:

Հաբիբը հուզված շարունակում է.

- Ազգությամբ ու արյունով հայ եմ, բայց անձնագրումս գրված է «խեմշիլ», մահմեդական եմ, անունս արաբական է, ազգանունս՝ վրացական, ծնվել եմ Ղրղզստանում, սովորել ռուսական դպրոցում, ազատ խոսում եմ ղրղզների, ուզբեկների ու ղազախների հետ,– և ձեռքով իմ կողմը ցույց տալով շարունակում է,– բայց հայաստանցի հայի հետ չեմ կարողանում խոսել: Այս ի՛նչ աշխարհ է, ի՛նչ ազգ ենք, ի՛նչ ճակատագիր է:

Ես ու Թամարան գլխով ենք անում, հաստատում նրա ասածները:

- Գիտե՞ք ինչ լավ կլինի, եթե Դուք այբբենարաններ ուղարկեք, հայերենի ինքնուսույցներ, այլապես մենք հայերեն տառերը չգիտենք,– ասում է Թամարան,– ես շատ եմ ուզում հայերեն գրել սովորել, ես կսովորեմ և երեխաներին էլ կսովորեցնեմ, չէ՞ որ մենք մի ժողովուրդ ենք:

Ես Թամարային հարցնում եմ, թե երիտասարդներն ինչպե՞ս են վերաբերվում կրոնին: Պարզաբանում է.

- Մզկիթ գնում են միայն ծերունիները, իսկ շատ տեղերում նույնիսկ մզկիթներ չկան:

Հարցնում եմ, թե ի՞նչ գիտեն Հայաստանի մասին, ասում է, որ հիմնականում հեռուստատեսության միջոցով են տեղեկանում:

- Մեր տանը մի հայերեն ձայնապնակ կար, հայրս շատ էր սիրում «Լուսնյակ գիշեր, զով գիշեր» երգը, անընդհատ լսում էր: Ես ինքս շատ եմ սիրում Սիլվա Կապուտիկյանի պոեզիան, նրա ռուսերեն գրքերից ունեմ: Պետք է շտապել հայ ժողովրդի մասին գրքեր ուղարկել, մերոնց բացատրել, որ նրանք հայ են: Արդեն Ջալալ-Աբադի համշենցիներն ամուսնանում են ղրղզների և ուզբեկների հետ, խոսում են ղրղզերեն, թեև երեխաները գիտեն Համշենի բարբառը, բայց ամեն ինչ գնում է նրան, որ շուտով կձուլվեն:

Ֆրունզեում համշենցի ուսանողներով հավաքվում էինք, տղաներն ասում էին, որ ինչ լավ կլիներ, եթե ստեղծեինք մեր երաժշտական խումբը, լավ երգողներ շատ ունենք, ափսոս նվագողներ չունենք,- պատմում է Թամարան,- Կարաիբրահիմով Յաշկան՝ Յաշարը, որ հիմա ապրում է Կրասնոդարի երկրամասում՝ Բելորեչենսկում, ասում էր. «Թամարա՛, դու դասատու ես, ի՞նչ կարող ես անել քո ժողովրդի համար»: Բայց ի՞նչ կարող էի անել: Ցանկանում էինք ազգագրական խումբ կազմել, գրի առնել ժողովրդի բանահյուսությունը, բայց ի՞նչ տառերով: Որոշեցինք այբուբեն ստեղծել, որ մեր լեզուն չկորչի: Հավաքվում էինք, փորձում նոր տառեր գծագրել, բայց այդ ամենից բան չստացվեց, ամեն մեկն ուսումն ավարտելուց հետո

մեկնեց, վերադարձավ իր տուն: Մինչև հիմա հիշում եմ այն օրերին մեր հորինած խաղիկներից մեկը:

Խնդրում եմ, որ արտասանի: Թամարան ծիծաղելով ասում է, որ կատակով են հորինել, ուսանող հարսների մասին է.

Յէ՛ մալիլա՛[75], դո՞ւնն էս թա,
(Մայրիկ, տա՞նն ես),
Գարթօղ հարս մէ ունի՞ս թա,
(Մի ուսանող հարս ունե՞ս),
Վարդիք գայէ չի գաա,
(Վարտիք կարել չի կարող),
Չօրբօ մէ էնէ չի գաա:
(Չորբա[76] եփել չի կարող):

Թամարան պատմում է, որ համշենցի ուսանողները շատ խաղիկներ են հորինել, հատկապես Ջելալ Կարահիբրահիմովը: Ասում եմ, եթե Ղազախստան գնամ, Ջելալից անպայման գրի կառնեմ:

* * *

Նույն օրը՝ երեկոյան, հարսանիքի եմ մասնակցում: Այստեղ գարնանից մինչև աշուն հարսանիքներն անում են բացօթյա և տևում են մինչև առավոտ: Գալիս են առանց հրավերի, քանի որ բոլորը գիտեն, որ այսինչ օրը այսինչը

---

[75] **Յէ**- տարիքով ավագին դիմելու հարգալից ձև, մալիլա-մորը դիմելու մտերմիկ ձև:

[76] **Չորբա**- մսով, բրնձով, կարտոֆիլով, սոխարածով, երբեմն նաև վերմիշելով ջրալի ճաշ:

հարսանիք է անում: Գալիս են ոչ միայն համշենցիները, այլև՝ այլազգիները:

Հսկայական ուղղանկյան ձևով շարված են սեղաններն ու իշոտնուկները: Ուղղանկյան երեք կողմերում նստում են հյուրերը, իսկ հանդիպակաց մասում նվագողների տեղն է: Երաժիշտներն աքսորված տարբեր ազգերի ներկայացուցիչներ են: Նվագում են ակորդեոն, էլեկտրական կիթառ և այլն: Սեղաններին միայն կոնֆետեղեն և քաղցրավենիք է, շատ քիչ քանակի օղի, նաև շորվա՝ ապուր: Թամարան ճիշտ էր ասում, որ հարսանիքներում հիմնականում կանայք են և երիտասարդ աղջիկներ:

Հարսն ու փեսան իրար թև մտած անցնում են, իսկ նրանց առջևից և հետևից երկուական տղա–աղջիկ նրանց գլխավերևում ամպհովանու նման ձեռքերով բարձր պահել են մի նախշազարդ կտոր: Խումբը մոտենում է ուղղանկյան գլխամասին՝ հարս ու փեսայի համար նախատեսված սեղանին, որի վրա զցում են այդ նախշազարդ կտորը որպես սփռոց, իսկ նրանց հետևում գորգ է կախված:

Սկսվում է հարսանիքը: Բաժակաճառերը շատ քիչ են: Իրար են հաջորդում համշենցիների պարերը, հսկա շրջագիծ կազմած, 100–150 կին ու աղջիկ ձեռք–ձեռքի բռնած պարում են: Երբեմն մեծ շրջանի մեջ ստեղծվում է փոքր շրջան, պարողների թիվը հասնում է 200–ի: Լիթիթի պարի ժամանակ նրանց է միանում նաև հարսը, որը Ղազախստանի Չիրկինո գյուղից է: Համշենի մեղեդիներից հետո նվագում են Հեյ ջան ղափամա, Սայաթ–Նովա, Պեպոյի երգը, Աման Թելո, Շալախո և այլն: Միկրոֆոնով երգում են նաև համշենցի աղջիկները, անզուգական ձայն ունեն: Կրկին հիշում եմ Թամարայի խոսքերը: Այստեղ

ծանոթանում եմ մի քանի երիտասարդների հետ: Կողքս է նստում Դուրսուն Կարաբաջակովի տղան՝ Ալիկը, որը «Գոնիո» անունով դիսկոտեկա էր բացել:

Ինձ է մոտենում մի երիտասարդ, ծանոթանում ենք՝ Քյազիմ Սալեհօղլի, ասում է, որ 1979 թ. գնացել է Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի շրջանի Պշեխսկայա գյուղ, մեկ տարի մնացել է և վերադարձել, քանի որ ծնողները չէին եկել, ցանկացել էին համոզվել, թե արժի՞ տեղափոխվել:

- Ցէս համշէցի էրմէնի իմ,– ասում է Քյազիմը,– ալի Բէլորէչէնսկ էրթօղ ում (Ես համշենցի հայ եմ, էլի եմ Բելորեչենսկ գնալու):

Հարսանիքը տևում է մինչև լուսաբաց ու մինչև լուսաբաց իրար են հաջորդում համշենցիների շուրջպարերը[77]:

* * *

Ուրբաթ օրը Հաբիբն ասում է, որ հալևորները (հալիվօրնիյէ, հալիվօյնիյէ)[78] մզկիթ են գնացել: Շտապում ենք այնտեղ: Շուտով բացվում է մզկիթի հսկա դուռը և հավատացյալները դուրս են հորդում: Անընդհատ գալիս են մորուքներով ու թասակներով դրդզները, հագներին սև, երկար կապաներ, ոտքերին՝ երկարաճիտ կոշիկներ: Գալիս են ու գալիս: Ես այդ հոսանքի դեմ կանգնելու ոչ մի տեղ չեմ գտնում, հետ–հետ եմ գնում, իսկ նրանք գալիս են ու գալիս:

---

[77] Կենտրոնական Ասիայի կրոնափոխ համշենահայերի հարսանիքի ավելի մանրամասն նկարագրությունը տե՛ս նույն գրքում՝ «Ղրղզստանի և Ղազախստանի կրոնափոխ համշենահայերի հարսանիքը» հոդվածում:

[78] Հալևոր-ալևոր, ծերունի, ճերմակած մազեր ունեցող:

Ես ու Հաբիբը քիչ է մնում իրար կորցնենք, մեզ արդեն բաժանել են: Մոտակայքում մի խոշոր քար կա, բարձրանում եմ վրան: Հաբիբը բազմության միջից առանձնացնում է համշենցիներին, հետո կանչում է, վազում, մյուսին բերում: Նրանցից մի քանիսն էլ են դրդզական թասակներ դրել, մեծ մասը մորուք ունի:

Ահա, դրդզներով շրջապատված, հանդիսավոր գալիս է Հաբիբի պապը՝ մոլլա Հաքին, նրա երկու թևերն են մտել երկու դրդզներ, հարգանքով ուղեկցում են: Հաբիբը պապին նույնպես հրավիրում է մեզ մոտ: Այսպես հավաքվում է 10 հոգի: Երբ վերջապես դրդզների հոսքն ավարտվում է, շունչ ենք քաշում:

Ներկայանում եմ, ասում եմ գալուս նպատակը և ցանկանում եմ նրանց հետ խոսել, ավելի մոտիկից ծանոթանալ: Սալեհօղլի Սուլեյմանը, որը խիստ հայացքով, տիրական և անկախ կեցվածքով մի ամրակազմ տղամարդ է, երեկոյան 8–ին հրավիրում է իրենց տուն՝ Տաժիկ–Կըշտակ[79] գյուղ, որտեղ 22 տուն համշենցիներ են ապրում, Կըզըլ–Կիյայից հեռու չէ:

Երեկոյան, ըստ պայմանավորվածության, առանց ավելորդ աղմուկի հավաքվում ենք Սուլեյման Դուրսունի Սալեհօղլիի տանը: Ես հասկանում եմ անմեղ տեղն աքսորված մարդկանց զգուշավորությունը: Զրուցում եմ տանտիրոջ հետ: Ծնվել է 1907 թ. (թեև անձնագրում գրված է 1903 թ.) Աջարիայի սահմանամերձ Կվարիաթի (Գորիաթ) գյուղում: Մանկուց հովվություն է արել, ինչպես ինքն է ասում՝

[79] Տաժիկ-Կըշտակը (դրդզ.՝ Тажик-Кыштак) Ուչ-Կորգոն գյուղախմբի 12 գյուղերից մեկն է (Կադամժայի շրջան, Բատկենի մարզ):

դպրոց չի տեսել, ոչխար է տեսել: Ամեն ինչից երևում է, որ նա մեծ նշանակություն է տվել այս հանդիպմանը: Տան ամենաընդարձակ սենյակի հատակին գորգեր ու ներքնակներ են փռված, պատերից գորգեր են կախված, պատերի տակ հսկա բարձեր են շարված:

Կամաց-կամաց հավաքվում են հայնորները, շեմքին կոշիկները հանում են, ներս են մտնում, ձեռքները տանում են կրծքներին, մի փոքր խոնարհվում են, բոլորը վեր են կենում, փոխադարձ խոնարհվում են և կրկին նստելով հատակի գորգերին, հենվում են բարձերին:

Մինչ հյուրերը տեղավորվում են, տանտերը գնում է կողքի սենյակ: Կիսաբաց դռնից երևում է, թե ինչպես է նա հսկա թախտի վրա նամազ անում: Մոտս նստած երիտասարդներին հարցնում եմ՝ իսկ իրենք նամազ անո՞ւմ են: Ժպտալով պատասխանում են, որ թոշակի անցնելուց հետո կանեն:

Գալիս է տանտիրոջ կրտսեր եղբայրը՝ Հայդարը, 70 տարեկան է, եղբոր նման ամրակազմ է, նրա նման հովիվ է Պամիրում՝ Չինաստանի սահմանի մոտ: Տարվա մեծ մասը սարերում է: Գալիս են Կարաիբրահիմով Մուստաֆան, 1917 թ. ծնվել է Կանլը դերեում, մինչև 7-րդ դասարան սովորել է մոտակա Սարփի գյուղի վրացական դպրոցում, հովիվների բրիգադիրն է, նրա տղան՝ Մույդինը, ծնվել է 1942 թ., նույնպես Կանլը դերեում, Սալեհօղլի Փաշալին ծնվել է 1911 թ. Գորիաթում (Կվարիաթիում), Կարաիբրահիմով Սաֆարը, ծնվել է 1915 թ. Կանլը դերեում, մինչև 4-րդ դասարան սովորել է Սարփի գյուղի վրացական դպրոցում, վարորդ է: Ներկա են տանտիրոջ տղաները՝ Մահմուդը (ծնվ. 1949 թ.) և Դուրսունը (ծնվ.

1957 թ.): Գալիս են Թանթօղլի Հասանը (ծնվ. 1961 թ., վարորդ է), Քյոսօղլի Ալիմը (ծնվ. 1955 թ.), որն ավարտել է Ֆերգանայի Պոլիտեխնիկական ինստիտուտը (համալսարանը) և մեխանիկ է աշխատում, ասում է, որ ծնողներն արդեն երկու տարի է, ինչ տեղափոխվել են Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջան, ապրում են Կիմ գյուղում, մի քանի ամսից ինքն էլ է գնալու:

Տանտերը վերադառնում է, ստեպ–ստեպ հանում է շղթայով ժամացույցը, անհանգստանում՝ ինչո՞ւ են հյուրերն ուշանում: Ներս է մտնում մի երիտասարդ: Ծանոթացնում է՝ Դուրսունն Բեշլիօղլի, համշենցի քուրդ է, առաջ համշենցի հայ են եղել, հետո քրդացել են, բայց խոսում են թուրքերեն: Ինքը՝ Բեշլիօղլի Դուրսունն էլ է հաստատում, որ իր մեծերից լսել է, որ իրենց պապերը հայերեն են խոսել:

Այնուհետև խոսք է գնում բաշ–համշենցիների[80] մասին: Բացատրում են, որ բաշ–համշենցիները ոչ միայն կրոնն են փոխել, այլև՝ լեզուն: Մուստաֆա Կարաիբրահիմովն ասում է, որ բաշ–համշենցիներ էին ապրում Բաթումի շրջանի Մախո գյուղում, նրանց էլ 1944 թ. աքսորեցին: Այժմ բաշ–համշենցիներ կան Նոռկատի շրջանում՝ Կոկ–Ժար գյուղում, նրանք ունեն մի հայտնի գուսան և քե-

---

[80] **Է. Լիոզենը** բաշ-համշենցիներին "баш-химшил" է անվանում: Նա 1905 թ. գրում է. «Խիմշիլներին կարելի է բաժանել իրարից խիստ տարբերվող երկու խմբի՝ բաշ-խիմշիլների և խոփե-խիմշիլների: Բաշ-խիմշիլներն ապրում են Թուրքիայում՝ Կարա-դերեի գետահովտում և Ֆուռտունա գետի ափերին՝ Խեմշին գյուղում: Կարա-դերեի և Խուրշումլուի միջև ընկած տարածքում բնակվող խեմշիլները դեռ քրիստոնյա են և խոսում են հին շատ ձևեր և արտահայտություններ պարունակող բարբառով: Կարա-դերեից արևելք նրանք մուսուլման են և մոռացել են իրենց նախնիների լեզուն», տե՛ս **Э. Лиозен, Указ. раб., с. 168**:

մենչև նվազող՝ Ղազօղլի Հալիլը, Կաղամժայի շրջանում՝ Վալակըշ[81] գյուղում էլ բաշ–համշենցիներ կան, Չաուվա-յում[82] էլ:

Հարցնում եմ, իսկ ջարդի ժամանակ իրենց թուրքերը վնաս տվե՞լ են: Մուստաֆան ասում է.

- Ես իմ հորից լսել եմ, որ ջարդի ժամանակ մենք փախել ենք, որ թուրքերը մեզ չկոտորեն:

Տանտերը համշենցի քրդերի մասին ասում է.

– Մենք, որ մի տեղում շատ էինք, մեր լեզուն պահեցինք, նրանք որ քանակով քիչ էին, լեզուն կորցրեցին, թուրքերեն են խոսում:

Կարաիբրաhիմով Սաֆարը իսկույն կյանքից օրինակ է բերում.

- Լենին–Ջոլում համշենցիները ուզբեկերեն են խոսում, որովհետև կտրված են մեզանից, համշենցի քրդերն էլ նույնկերպ մոռացել են լեզուն:

Ներկաներից մեկը լրացնում է.

- Եթե ոչխարների հոտը մի կողմ գնա, մի ոչխարը՝ ուրիշ կողմ, նրան գայլը կուտի:

- Գօրսէվա՛ձ իք, գօրսէվա՛ձ (Կորսվա՛ծ ենք, կորսվա՛ծ),– ասում են չորս կողմից:

Սուլեյման Սալեհօղլին թվարկում է Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառի համշենցիների գյուղերն

81 Վալակըշը (Валакыш) գտնվում է Կաղամժայի շրջանում (Բատկենի մարզ:

82 Չաուվայը (Чаувай) գտնվում է Կաղամժայի շրջանում (Բատկենի մարզ):

ու եզրակացնում, քանի որ սրանք իրար մոտ են եղել՝ լեզուն պահել են:

Նորանոր մարդիկ են գալիս: Սենյակի բոլոր անկյունները զբաղեցնում են: Երբ հյուրերը նստելու տեղ են փնտրում, հալևորներից մեկը կատակում է.

- Դավան կըդաձ դաղը բարգի գու (Ուղտը գտած տեղն է պառկում):

Հետս Հայաստանի պատկերներով բացիկներ էի տարել, ցույց եմ տալիս ու մի անասելի աշխուժություն է տիրում, իրար են փոխանցում: Ծաղկաձորի անտառախիտ սարերի տեսարանները նրանց շատ են դուր գալիս, բացականչում են.

- Ա՜յ, բնությո՜ւն…

Հետո Եղեռնի հուշարձանի բացիկին նայելով հետաքրքրվում են, թե որտե՞ղ է: Բացատրում եմ:

- Հայրս ինձ պատմել է,– ասում է տանտիրոջ տղան:

Բնականաբար, խոսակցությունը պտտվում է Հայաստանի շուրջը: Նրանք շատ են ուզում, որ իրենց զավակները բարձրագույն կրթություն ստանան: Ասում եմ՝ ուղարկեք Հայաստան՝ սովորելու, բերում եմ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի համշենահայերի օրինակը, ցույց եմ տալիս 1982 թ. «Գարուն» ամսագրում տպագրված իմ «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ»[83] հոդվածը, պատմում, որ այն քննարկվել է Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության նախարարություններում և որոշվել 1983–1984 ուստարվանից Աբխա-

[83] «Գարուն», 1982, № 11, էջ 60-73:

զիայի և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցնե-րի շրջանավարտներին Հայաստանի մանկավարժական բուհերում 30–ից ավելի արտամրցութային տեղեր հատկացվեն[84]: Գուցե Հայաստանում սովորել ցանկացող խեմշիլների համա՞ր էլ նման մի բան մտածենք:

Տանտերը խնդրում է՝ հոդվածից և պաշտոնական պատասխանից որոշ հատվածներ կարդամ: Բարձրաձայն ընթերցում եմ, նա անընդհատ գլխով հավանության նշաններ է անում:

- Մեր երեխաներին որ ուղարկենք այնտեղ, պիտի մտահոգվենք: Ավելի լավ է, մենք մի տասը հոգով գանք, նայենք, տեսնենք, եթե հավանենք, գուցե մենք էլ տեղափոխվենք Հայաստանում ապրենք, մինչև ե՞րբ պիտի օտար հողում մնանք,– ասում է Սուլեյման Սալեհօղլին,– մեզ համար աշխատանքի խտրություն չկա, հովիվ էլ ենք, հողագործ էլ, այգեգործ էլ: Երբ այստեղ եկանք, սեղանի տակ կատու չունեինք, որ մլավեր, հիմա ամեն ինչ ունենք: Հայաստանում եթե ապրենք, այս հասակում էլ ինչ գործ լինի, կանենք: Մերոնց մի մասը՝ մի 40 տուն, գնացել է Բելորեչենսկ: Ի՞նչ կարիք կա, որ մենք էլ գնանք: Եթե գնալ է, ավելի լավ է Հայաստան գնանք: Մենք ծեր մարդիկ ենք, գուցե էգուց մեռնենք, մեզ համար մեկ է որտեղ կմեռնենք, բայց թող մեր երեխաները գան Հայաստան, սովորեն, մարդու շարքն անցնեն: Եթե գանք, մեկ տարի պետությունը մեզ օգնի, դրանից հետո մենք ոտքի կկանգնենք:

---

[84] **Լյուդվիգ Ղարիբջանյան**, Պաշտոնական պատասխան, «**Գարուն**», 1983, № 9, էջ 25:

- Մենք տե՛ր չունենք, տե՛ր, ո՛չ ռուսների կողմը կարող ենք լինել, ո՛չ ուզբեկների, ո՛չ ղրղզների, ո՛չ էլ հայերն են տիրություն անում: Այնինչ մենք ու հայերը մեկ թավայի ձուկ ենք («Մէզ թավայի ծուգ իք»),– շարունակում է նա,– Թևոսյանը[85] մեզ փրկեց:

Երկար քննարկումներից հետո, վերջապես որոշվում է, որ տանտերը մայիսին կգնա Բելորեչենսկ և Ապշերոնսկ, եղբորը կվերցնի, կգա Երևան: Նախնական պայմանավորվում ենք հունիսի 5–10–ը Երևանում հանդիպել: Հրաժեշտին տանտիրոջ կրտսեր եղբայրը՝ Հայդարը, հուզված ասում է.

- Ես քառասուն տարի է այստեղ եմ աշխատում, 40 տարի ցերեկը, 40 տարի էլ գիշերը, կանի 80 տարի: Ինչո՞ւ պիտի Հայաստանում չաշխատեմ: Մեզ այստեղ ասում են, եթե դուք լավը լինեիք, ձեզ չէին աքսորի,– հետո հաստատակամ ավելացնում է,– չնայած տո՛ւն էլ ունենք, տե՛ղ էլ ունենք, բայց մեր տունը Հայաստա՛նն է:

---

[85] Թե ինչպես է Թևոսյանը նրանց փրկել, ցավոք, այդ խոսքուզրույցի աղմուկի մեջ չկարողացա ճշտել: Հավանաբար, խոսքը Հովհաննես (Իվան) Թևոսյանի (1902, Շուշի -1958, Մոսկվա) մասին էր, որը 1940-48 թթ. եղել է ԽՍՀՄ սև մետալուրգիայի, 1948-49 թթ.՝ մետալուրգիական արդյունաբերության նախարար, 1949-56 թթ.՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ: Նրա քույրը 1933-1938 թթ. Ղազախստանի Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Լևոն Միրզոյանի (1897, Արցախ, գ. Աշան-1939) կինն էր:

Վատիկան, 27.05.1992թ.Նորին Սրբությանն եմ նվիրում Գոշավանքի 13-րդ դարի նշանավոր խաչքարի պղնձե փոքր կրկնօրինակը, որը նա շատ հավանեց: Նա ասաց.
«Ես ամեն օր աղոթում եմ հայ ժողովրդի համար»: Արցախյան հերոսամարտի ծանր օրերն էին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի և Ռումինիայի ուղղափառ եկեղեցու պատրիարքի հետ

,,L,OSSERVATORE ROMANO,, թերթը 1992թ. մայիսի 28-ի համարում հրապարակել է հանդիպման լուսանկարը

L'OSSERVATORE ROMANO

GIORNALE QUOTIDIANO POLITICO RELIGIOSO

UNICUIQUE SUUM NON PRAEVALEBUNT

CITTÀ DEL VATICANO

dle, USS Thomas S. Gates, USS Comte de Grasse, Com Des Ron 24 and the Com Cru Des Cru 8.

Aus der Bundesrepublik Deutschland: Pilgergruppen aus den Pfarrgemeinden Heilig Kreuz, Detmold; St. Theresia vom

München. Sozialwerk der Deutschen Bundesbahnen, Augsburg; Senioren der Deutschen Bundespost, Augsburg; Bundeswehr-Sozialwerk, Bonn; Kreislandfrauenverband Cloppenburg; Gartenbau— und Verschönerungsverein, Erftstadt; Studiengruppe aus Karlsruhe; Ge-

Il Papa saluta l'Ordinario per gli Armeni Cattolici dell'Europa Orientale, P. Nerses Der Nersessian, presente all'udienza con i due Vice Presidenti del Consiglio di Stato per gli Affari Religiosi dell'Armenia

Շարլ Ազնավուրի հետ

ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆ. Սարգսյանի և
Ռումինիայի Գիտ. ակադեմիայի նախագահի հետ

Ձայն հանող ժայռը,
Թուրքիա

Իսհակ Կարաիբրաիիմովը (ծնվ. 1888թ.), գ. Չիրկինո, 1984թ.

Կըզըլ Կիյա քաղաքի մի խումբ համշենցիներ

Դուրսուն Կարաբաջակով,
ք. Կըզըլ Կիյա

Խաուլա Կարաիբրաիիմովան
(ծնվ. 1898թ.)՝ թոռների հետ,
գ. Չիրկինո, 1984թ.

Խաուլա Կարաիբրաիիմովան
որդու՝ Փաշայի հետ,
գ. Չիրկինո, Ղազախստան, 1984թ.

Հաբիբ Քոշանիձեն, Ս. Վարդանյանը,
Դուրսուն Կարաբաջակովը, նրա կինը և
դուստրը, ք. Կըզըլ Կիյա, 1984թ.

Ռիզեի նահանգի Էքսանոց (Ստենոզ) գավառի համշենցի Քեմալ Նաբի Ունալի հետ Արդվինի նահանգի Խոփա քաղաքում, 2011թ.

Ձեմիլ Աքսուի հետ, Խոփա, 2015թ.

Չայելիի գավառում երգիչ Հիքմեթ Աքչիչեքի և Քեմալ Նաբի Ունալի հետ

Նշանավոր ռեժիսոր Էոզջան Ալփերի հոր հետ, ձեռքին ,«Չայն համշենական», թերթի այն համարն է, որում հոդված կա իր տղայի մասին

Չամլըհեմշինում, համշենցի հայրենագետ Ուղուր Բիրյոլի հետ

Պատմում ենք«Համշենական զրուցարան» հաղորդաշարի
նոր թողարկման մասին

Հիքմեթ Յաղջիին եմ տալիս ,«Ձայն համշենական», թերթի 2012թ. 1-2
համարները, որոնցում տպագրել եմ նրանից գրառածս
բանահյուսության նմուշները

Համշենցի երգչուհի Այշենուր Քոլիվարի հետ երգում ենք 1984թ. ,
ԵրևանՂազախստանի իսլամ համշենցիներից իմ գրառած երգերից

Երևան, գրքի շնորհանդես

Համշեն ավան մուտքը

Եղնովիտի Խաչիվանքի
ավերակի քարերը,
ամեն ինչ ավերված ու ոչնչացված է

Արդվինի նահանգի Քեմալփաշա
գյուղախմբի Շանա գյուղի
համշենցիների հետ

Եղնովիտի Խաչիվանքի ավերակների մոտ

Համշենի լեռներում

Գիթո յայլայում, Չամլըհեմշին

Խիգո (Բաշոբա) գյուղի կամուրջը

105 տարեկան Սուլեյման Ձինքայայի հետ զրուցում ենք
համշենցիների անցյալի մասին

Եղնովիտ գյուղի
թուրքախոս համշենցիներ

Թուրքիայի համշենցիների հետ,
2015թ., Խոփայի
նախկին քաղաքապետ
Յըլմազ Թոփալօղլուի հետ

Մզկիթի վերածված
Խոտորջրի եկեղեցին

Թուրքիայի Խոփա քաղաքի
համշենցիների հետ, 2015թ.

Խոփա քաղաքում

Խոփա քաղաքում

Ղազախստանում

Մյուս օրը Հաբիբը, Կարաբաջակօղլիի տղաներն ու մի քանի երիտասարդներ ինձ ուղեկցում են օդանավակայան: Պիտի մեկնեմ Ուզբեկստան՝ Տաշքենդ: Նրանք այս օրերի ընթացքում այնպիսի ջերմությամբ էին ինձ շրջապատել, որ բաժանվում ենք որպես հին ընկերներ:

Փոքրիկ, շատ փոքրիկ օդանավակայան է՝ մեկ հարկանի շինություն է՝ իր ծաղկանոցով: Ընդամենը 20 ուղևոր ենք: Նրանց մեջ մի հայ կա, անունը՝ Հակոբ: Պատմում է, որ Պարսկաստանից են Հայաստան գաղթել 1960–ական թվականներին, ծնողներն ապրում են Աշտարակում, ինքը մի քանի տարի է, տեղափոխվել է Տաշքենդ, այնտեղ ամուսնացել է մի հրեա աղջկա հետ: Իսկ այս կողմերում կոշկակարություն է անում:

Տաշքենդում տաքսի եմ վարձում և գնում եմ Ղազախստան՝ Չիմքենդ[86], 120 կմ է: Այն 340 հազար բնակչություն ունեցող քաղաք է: Չիմքենդից Չիրկինո[87] գյուղ՝ 25 կմ է:

---

[86] Չիմքենդը համանուն մարզի կենտրոնն էր: Մարզը գտնվում էր Թուրանի դաշտավայրի արևելյան մասի և Տյան Շանի արևմտյան ճյուղավորումների սահմաններում: Նրա հարավ-արևելքում Կզըլկումի ավազուտներն են: 1992 թ. Չիմքենդ քաղաքը վերանվանվեց Շըմքենտ (ղազ. Шымкент), իսկ մարզը՝ Հարավ-Ղազախստանյան մարզ (Южно-Казахстанская область), ունի 117, 249 հազ. քառ. կմ տարածք:

[87] Չիրկինոն Սայրամի շրջանի (ղազ. Сайрам ауданы, ռուս. Сайрамский район) Կայնարբուլակի գյուղախմբի (Кайнарбулакский сельский округ) գյուղերից է, Սայրամի շրջկենտրոնից՝ Աքսուքենտ (նախկին Բելիե Վոդի, Белые Воды) ավանից 15 կմ արևմուտք: Չիրկինոյի բազմազգ բնակչության թիվն ըստ 1999 թ. մարդահամարի եղել է 1499 մարդ (724

Մեքենան կանգ է առնում շատ լայն և երկար՝ շուրջ 2 կմ ասֆալտապատ փողոցում, որի երկու կողմերում մեկ հարկանի սպիտակ տներ են: Հարցնելով գտնում եմ Ջելալ Կարաիբրահիմովի տունը: Ինձ դիմավորում է միջահասակ, նիհար, խարտյաշ և խաժակն մի երիտասարդ: Ներկայանում եմ և հայտնում գալուս նպատակը: Ջելալը շատ է զարմանում, թե որտեղի՞ց գիտեմ իր մասին և, ընդհանրապես, որտեղի՞ց գիտեմ համշենցիների մասին:

Ասում եմ, որ Թամարան ու Հաբիբն են ինձ խորհուրդ տվել իրեն գտնել: Պատմում եմ Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերի գյուղերով իմ ճանապարհորդությունների, Ղրղզստանում անցկացրածս օրերի մասին: Ջելալը սիրով ներս է հրավիրում, ասում, որ իր հյուրը կլինեմ, ամեն ինչով ինձ կօգնի: Երկուսս էլ անթիվ հարցեր ունենք իրար տալու:

Ջելալը Ղազախստանի այն քիչ համշենցիներից է, որ բարձրագույն կրթություն է ստացել: Ծնվել է 1955 թ., 1977 թ. ավարտել է Ֆրունզեի Պետական համալսարանի մեխմաթ. ֆակուլտետը, այնուհետև կրտսեր գիտաշխատող է աշխատել Ֆրունզեի Պոլիտեխնիկական ինստիտուտում (համալսարան), 1979–ից ավագ ինժեներ՝ Չիմքենդի Հաշվողական կենտրոնում, իսկ 1981 թվականից ֆիզիկա և մաթեմատիկա է դասավանդում հայրենի գյուղի 3–րդ Ինտերնացիոնալի անվան ութամյա դպրոցում, տնօրենի

արական, 775 իգական), իսկ ըստ 2009 թ. մարդահամարի՝ 1613 մարդ (754 արական, 859 իգական):

պաշտոնակատար է[88]: Ամուսնացած է, ունի 3 տղա՝ Իլյա-սը, Օսմանը և Իզիրը:

– Ես համշենցիների մասին առաջին անգամ կարդացի Խորհրդային Մեծ հանրագիտարանում, 1973 թ. էր,– ասում է նա,– իսկ մինչ այդ, ես ծերերից լսել էի, որ մենք հայ ենք, բայց կրոնափոխ ենք: Որ մեզանից բացի կան քրիստոնյա համշենցիներ, քեզանից իմացա, բայց գիտեի, որ Թուրքիա-յում կան մեզ նման կրոնափոխ համշենցիներ: Մենք մտա-ծում էինք, որ մեր լեզուն իսկական հին հայերենն է:

Հարցնում եմ, թե գյուղում քանի՞ տուն համշենցի կա: Ասում է, որ շուրջ 700 բնակիչ ունեցող Չիրկինոյում ապ-րում են 48 տուն համշենցիներ: Խնդրում եմ՝ տուն առ տուն հաշվի բոլորն իրար հետ քանի՞ հոգի են: Ջելալը մտավորական տղա է, հասկանում է, որ գիտության հա-մար է, չի զլանում, հաշվում է՝ 286 հոգի են: Միջինը՝ մեկ տունը 6 շունչ է: Գյուղի համշենցիների 90 տոկոսի ազգա-նունը Կարաիբրահիմով է, իրենք իրենց Ջերմազցի են ան-վանում, այսինքն՝ Ճերմակյան[89]: Կան նաև Մուսաններ

---

[88] Իմ խնդրանքով Ջելալը 1984-1985 ուստարվա սկզբում ինձ ուղարկեց դպրոցում սովորող համշենցի աշակերտների թիվը՝ 68 (բոլոր աշա-կերտների թիվը՝ 280): 1987 թ. մայիսին Չիրկինոյի դպրոցում ես հաշ-վեցի համշենցի 63 աշակերտ (29 տղա, 34 աղջիկ):

[89] Ի դեպ, Տրապիզոնի գավառի Յոմուրայի շրջանի քրիստոնյա համշե-նահայերի Կալաֆկա գյուղում Մեծ եղեռնից առաջ բնակվում էր 18 տուն Ղուկասցի (այսինքն՝ Ղուկասյան), 16 տուն Երեմցի (Երեմյան), 11 տուն Ճերմակցի (Ճերմակյան) և այլն: Տե՛ս **Բ. Թոռլաքյան**, Համշենա-հայերի ազգագրությունը, Երևան, 1982, էջ 41, տե՛ս նաև **Յովակիմ Յովակիմեան**, Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Բէյրութ, 1967, էջ 382, 390: Կալաֆկայում են ապաստանել Սև գետի (Սյուրմենեի) գա-վառի կրոնափոխության օրերին (XVIII դ.) հերոսաբար նահատակ-

(Մուսօղլի), Սքեմիշներ, Ռահմանօղլիներ, Թաթարօղլիներ, Կարակչիօղլիներ, Սալահօղլիներ:

Հարցնում եմ՝ ձեզ ինչո՞ւ են Ջերմազցի ասում:

- Ես մեծերից լսել եմ, որ մեր պապի պապերը երեք եղբայր են եղել, որոնցից մեկը ճերմակ էր, այսինքն՝ սպիտակամաշկ, խարտյաշ և կապուտաչյա, մյուսը բեղեր է ունեցել, նրանից առաջացել են Ակբույուկօղլիները (աք՝ սպիտակ, բըյըք՝ բեղ), իսկ մյուսը սև էր, նրանից էլ սկիզբ են առել Կարակչիօղլիները: Այսօր Ակբույուկօղլիներ շատ կան Ջալալ–Աբադում, գրվում են Ակբույուկով: Իսկ Կարակչիօղլիներ շատ կան Նոռկատում,– պատասխանում է Ջելալը,– նրանք համարվում են ամենաուժեղները և բարձրահասակները, բայց նրանց ձեռք են առնում, իբր «Կարակչիօղլին աչարէ թաաքն ի վէ քաշա զու»:

Պատմում է, որ մի օր արջառը՝ եզը, սատկելիս է լինում, Կարակչիօղլիները փոխանակ դանակը բերելու, որ մորթեն, եզն են քաշքշում դանակի մոտ, որը վերնում՝ դարակի մեջ է լինում: Մինչև քաշ են տալիս, եզը սատկում է («Մէզ օր մէ աչարին հօքին գէլլէր, թէնազէ պիելուն, սա աչարէ թաաքն ի վէ քաշէցին, մօրթին դէյնա: Ինչազ դային անա, աչարէ սաղզեցավ»):

ված Տեր Կարապետի սերունդները, որոնք երդվել են որդվոց-որդի նույն՝ Տեր Կարապետ անունով քահանայություն անել և տարին մեկ անգամ ծպտյալ այցելել Սև գետում մնացած իրենց կրոնափոխ ազգակիցներին, տե՛ս **Ս. Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր (Տրապիզօնի հայ-մահմետական գիւղերն եւ նրանց աւանդութիւնները), «**Արարատ**», Վաղարշապատ, 1895, № 7, էջ 239, 240, 242, **նույնի**՝ Յուսէփցի ազգատոհմ եւ տարօրինակ աւազակ Աբբիեօմ Տրապիզոնի հայ գիւղերու մէջ, 1795-1840, Վաղարշապատ, 1905, էջ 44-49:

Ես հետագայում այս պատմությունը լսեցի նաև Շաքանօղլիների, Թոքուզօղլիների, ընդհանրապես, արդալացիների մասին:

Ջելալն ասում էր, որ Կարաիբրահիմօղլիները՝ Ջերմըզցիները, ամենասրամիտներն ու քաջերն են, նաև՝ աղմկարարներն ու բարձրաձայն խոսողները: Նրանց մասին կատակում են. «Ջէրմըզցին բարխան ջուգալ քիլա գու» (Ջերմըզցին ժայռից կաթսա է գլորում), այսինքն՝ այնքան աղմուկ են բարձրացնում, ասես ժայռից կաթսա են գլորում: Ջելալը բացատրում է, որ երազում Ջերմըզցի տեսնելը լավ է, գործերը հաջող կլինեն, արդալացի տեսնելը վատ է, քուրդ տեսնելը հիվանդություն է: Տնեցիները կողքից հուշում են, որ եթե երազում ցեխի մեջ ես՝ կհիվանդանաս, միս ուտես՝ ծանր բան կլինի, ցորեն տեսնես՝ շատ փող կունենաս, օձ տեսնես՝ թշնամություն կլինի կամ տղա կծնվի, շուն տեսնես՝ հուքումաթի՝ պետական հիմնարկի կամ ոստիկանության հետ գործ կունենաս, ոչխար տեսնես՝ անձրև կգա, կով տեսնես՝ անձրև չի գա...

Հիշելով Թամարայի պատմածը, ես Ջելալին հարցնում եմ՝ ի՞նչ երգեր ու խաղիկներ է գրել ուսանողական տարիներին: Նա ասում է, որ լուրջ բաներ չեն, կատակով է հորինել: Խնդրում եմ մեկը երգի: Շպարվել սիրող նորահարսի մասին իր երգից մի հատված է դնդնում՝ «Հինգ դայի շահարին յէս» (Հինգ տարի քաղաքում ես).

Հինգ դայի շահարին յէս
(Հինգ տարի քաղաքում ես),
Յէ՛ մա, զարթէցա,
(Մա՛յր, ուսանեցի),

Մէգ էրօնդ ախչիգ մէ յէս
(Մի սիրուն աղջկա ես)
Անդախ ջօնչէցի:
(Այնտեղ ծանոթացա):
Ախչկօնէ շադ հազ այի,
(Աղջկան շատ սիրեցի),
Էլլէ չի սըրդաս,
(Սրտիցս դուրս չի գալիս),
Նօյթուզ էրթօմ անա յէս,
(Ուր էլ որ գնամ ես)
Էլլէ չի մէդնաս:
(Մտքիցս դուրս չի գալիս):
Իսա պօնէս, յէ՛ մա,
(Այս բանը, մա՛յր),
Յէս քէզիզի գասիմ,
(Ես քեզ ասում եմ9,
Օնգլամիշ աղի ինձի՝
(Հասկացիր ինձ՝)
Գարքէվուշ գուզիմ:
(Ամուսնանալ եմ ուզում:)
Ռազի էլլիս օչ, անա,
(Եթե համաձայն չլինես,)
Դօնաս էրթօղ ում,
(Տնից գնալու եմ:)
Ինչ ու ասէս անա թուն,
(Ինչ որ էլ դու ասես,)

Սօղէ առնօղ ում[90]:

(Վերջը առնելու եմ:)

Ջելալին հարցնում եմ՝ ճի՞շտ է, որ ուսանողներով փորձել եք տառեր հորինել:

- Այո՛, 1973 թ. էր, մենք 18 հոգի համշենցի ուսանողներով հավաքվեցինք Ֆրունզեում և քննարկեցինք, թե ո՞վ ենք մենք, ինչո՞ւ ենք մենք հայ, իսկ եթե հայ ենք, ինչո՞ւ ենք մահմեդական: Իսկ եթե հայ չենք, ապա ինչո՞ւ է մեր լեզուն հայերեն, մեր երաժշտությունը, ամեն ինչը հայկական: Մենք գրադարաններում շատ գրքեր կարդացինք, բայց մեր մասին, բացի Խորհրդային Մեծ հանրագիտարանից, ուրիշ ոչինչ չգտանք: Մենք շատ էինք ուզում պահպանել մեր սեփականը, մեր երգը, պարը, ավանդույթները, բանահյուսությունը: Այն, ինչ մենք գիտեինք, ինչ փոխանցվել էր մեր նախնիներից, այդ բոլորը նման էր հայկականին, միայն չգիտեինք, թե Համշենի լեզվով գրականություն եղե՞լ է, թե՞ ոչ: Մենք շատ անգամ ենք հավաքվել, որ ռուսական երգերը թարգմանենք մեր լեզվով, կամ ինքներս էինք համշեցնակ երգեր ու խաղիկներ հորինում, նաև դրանց համար՝ երաժշտություն: Յաշա Կարաիբրահիմովը կիթառ էր նվագում և երաժշտություն էր հարմարեցնում: Մենք ցանկանում էինք մեր տառերն ունենա-

---

[90] Երգն ամբողջությամբ 1987 թ. հունիսին Ջելալ Կարաիբրահիմովի տանը ձայնագրել եմ Նուրիյե Մուհամեդի Կարաիբրահիմովայից, ծնվել է 1965 թ. Ղրղզստանի Կըզըլ-Կիյա քաղաքում, ամուսնանալուց հետո բնակվում էր Չիրկինո գյուղում: Երգը նոտաներով հրատարակել եմ իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (Երևան, 2009) գրքում, էջ 237-241:

յինք, քանի որ այդ երգերը ռուսական տառերով չէին գրվում, իսկ մենք ուզում էինք հավաքեինք մեր ժողովրդի երգերն ու հեքիաթները, ինքներս բանաստեղծություններ գրեինք, երեխաներին սովորեցնեինք, այնպես որ մեր լեզվով գրականություն ստեղծվեր: Բայց մենք ցրվեցինք ու այդպես էլ գործը կիսատ մնաց:

- Իսկ ինչո՞ւ հայկական այբուբենը չէիք օգտագործում:

- Մենք հայերեն տառերը չգիտեինք և սովորեցնող էլ չկար: Երբ արդեն մեր գյուղ էի վերադարձել,– շարունակում է Ջելալը,– ուղարկեցին Չիմքենդի Մանկավարժական ինստիտուտ՝ վերապատրաստման: Այնտեղ մի վահանակի վրա թվարկված էին ԽՍՀՄ–ում ապրող բոլոր ժողովուրդները: Ես մի քանի անգամ ուշադիր կարդացի, բայց մեր անունը չգտա: Ես էլ ինստիտուտի ղեկավարությունից հետաքրքրվեցի, թե ինչո՞ւ մեր անունը չի նշված, ինձ ասացին, որ այդպիսի ազգ չկա: Ես էլ ասացի՝ մեկ ասում եք հայ չեք, խեմշիլ եք, անձնագրում էլ «խեմշիլ» եք գրում, հիմա էլ ասում եք՝ այդպիսի ազգ չկա՞: Բա մենք ի՞նչ ազգ ենք:

Մենք գիտեինք, որ հայ ենք, իհարկե, երբեմն էլ կասկածում էինք, բայց հիմա որ դու եկար, արդեն հաստատ իմացանք, որ հայ ենք: Միշտ ֆուտբոլի ժամանակ մեր հարազատ թիմը «Արարատն» էր: Հայրս հայկական երգեր շատ էր սիրում, հատկապես «Յարն անուշ է, յարն անուշ» երգը:

Հայաստանցի հյուրի հետ ծանոթանալու համար Ջելալի մոտ են հավաքվում մի 10–15 երիտասարդներ:

- Իմ անձնագրում ազգությունս «թուրք» է գրված, – ասում է Սուլեյման Կարաիբրահիմովը (ծնվ. 1953 թ.),– իսկ հորս և մորս անձնագրերում՝ «խեմշիլ»:

Մեկ ուրիշն ասում է, որ իր անձնագրում «խեմշիլ» է գրված, իսկ զինվորական գրքույկում՝ «թուրք»: Վրաստանում իրենց ազգանունը Կարաձե է գրվել:

Յաշար Կարաիբրահիմովը (ծնվ. 1940 թ., Գոնիոյում) պատմում է, որ 1968 թ. գնացել է Գոնիո, ասում է, որ գյուղում լավ քիրվա ունեինք, անցագիր հանեցինք, տեսանք, որ մեր տունը կանգուն է, այնտեղ ապրում է աջար Ահմեդ Դումբաձեն:

Հավաքվածներն իմ հարցերին են պատասխանում:

Ինչպես Ղրղզստանում, Ղազախստանում ևս զրույցների ժամանակ խստորեն պահպանվում էր ավագության կարգը: Խոսելու, կարծիք հայտնելու առաջնային իրավունք ունեին ներկաներից ավագները: Եթե երկու եղբայրների միջև տարիքային տարբերությունը մեծ էլ չէր, միևնույն է, պատասխանում էր ավագը:

- Չիրկինոյում զբաղվում ենք հողագործությամբ և անասնապահությամբ,– պատմում են նրանք,– առաջ ձմեռները շատ ցուրտ էր՝ –30 աստիճան, հիմա՝ – 20–25, իսկ ամռանը + 40–45 էր լինում: Երբեմն 2–3 ամիս անձրև չի գալիս: Պղպեղ, բադրիջան, լոբի, պոմիդոր, խաղող, ցորեն ենք մշակում: Կով, ոչխար, այծ ենք պահում: Տները հում աղյուսից են: Հացի փուռը կառուցում ենք բակում, գետնից բարձր՝ ոտքերի վրա:

- Իսկ հաց թխելիս խմորի վրան խաչ անո՞ւմ եք:

Ասում են, որ նախկինում անում էին, իսկ Ջելալը հիշում է, որ ոչ միայն խմորի գնդերի վրա օդում խաչ էին անում, այլև գնդերը բացելուց, այսինքն՝ գրտնակելուց հետո ձեռքի ափի եզրով վրան խաչ էին դաջում: Բայց այդ ավանդույթը վերացավ, հիմա մարդիկ շուկայից նախշազարդ գլխիկներով հատուկ փայտե մուրճեր են առնում և դրանք խմորին հարվածելով նախշազարդում են, հատկապես տոնական առիթների դեպքում, օրինակ՝ Նոր տարուն, որը նշում են հունվարի 13–16–ին, այդ օրերին իլիկ չեն մանում, լվացք չեն անում, տնից դուրս՝ բակում, փողոցում գործ չեն անում (Նօր դարին իյէք օր մադմօն մանէ չին, լըվացքէ էնէ չին, թէրօնէ թաղէ չին), հարցնում եմ, իսկ շյուղերով գործել կարելի՞ է, ասում են.

- Ձախ կօրձի գուն:

Նոր տարվա այդ օրերին ոչ ոք պարտքով փող չի տալիս, իբր թե առատությունը տնից կգնա (Նօր դարուն ումէք փաա բորչ դա չի, ինչի թա բէրէքէթէ դունան գէրթա):

Նոր տարուն նայում են, թե ով առաջինն իրենց տուն եկավ, նրա ոտքը փորձում են՝ լա՞վ է ոտքը, վա՞տ է ոտքը: Այն տարի լավ լինես, այն մարդու ոտքը լավ եկավ, նա լավ մարդ է (Նօր դարուն մէչէ փութ գէնին թա վօվ բիրինջի նէմէդավ դուննիվա, անու օտքէ սինամիշ գէնին՝ հալա սօ՞յ ա թա օտքէ, չօքո՞ւղ ա թա: Ան դային սօյ էլլիս անա, ան մարթուն օտքէ սօյ էյէվ, ան սօյ մարթ ա):

Հյուրերի գնալուց հետո, երբ մնում են միայն տնեցիները, որոշում եմ շարունակել կրոնափոխ համշենցիների խոսվածքի՝ համշեցնակի, նմուշներ գրառել: Այդ նպատա-

կով հետո վերցրել էի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 1977 թ. հրատարակած «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը», որի 778 առաջադրանքների մի մասն արդեն Ղրղզստանում լրացրել էի: Որպես համշենցիների ավագ սերնդի ներկայացուցչի և խոսվածքի լավ գիտակի մի քանի հարցեր եմ տալիս Ջելալի մորը: Նա ժպիտը հազիվ թաքցնելով է պատասխանում: Շուտով պարզվում է պատճառը. Ջելալի մայրը՝ Բեղրիյե Չուխարօղլին, համշենցի չէ, այլ՝ կրոնափոխ հույն: Այդ մասին նա ասում է.

- Քիդիք թա ուռում իք, իրէզիլի, ուռուման թարցած իք, բաբը աստած ունի՝ ուռուման թարցած իք: Մէք ուռումնօուն հազ գէնիք: Բաբս, դադս ուռումչա սօյ քիդէնի, յէս քիչ մէ մօլիյէցա: Թուրքչա սօյ քիդիմ: Հօմշէցու առի, հիմի հօմշէցնակ քիդիմ:

Ախչիգ է անա հօմշէցնակ չքիդէ, գարքէվէցի, հէղէվնա հօմշէցնակ սօրվէցա: Քարսուն դայի ա հօմշէցի իմ:

Ցէս հազար իննաուր սօնօխտը դարվին ուննված իմ Բաթումին Ախալշէնի կյաղին, հազար իննաուր քարսունուչօրս դարվին մէզի քէշէցին Կազախիստանին Պուշկին կյաղը: Քարսունօխտէ դարվին գարքէվէցա, Պուշկին կյաղին մէչը հօմշէցինէր շադ աբրէ գունի, գարքէվէցա, Կարահիբրահիմօվ Օսմանին առի, հազար իննաուր հիսունհինգ դարվին Չիրկին կյաղնիվա քօչէցաք: Ցէս հօմշէցնակ խաբրուշը քօլայ սօրվէցա:

(– Գիտենք, որ հույն ենք, ռիզեցի[91], հույնից ենք կրոնափոխվել, պապը ասել է՝ հույնից ենք կրոնափոխվել: Մենք հույներին սիրում ենք: Պապս, հայրս հունարեն լավ գիտեին, ես մի քիչ մոռացա: Թուրքերեն լավ գիտեմ: Համշենցու առա, հիմա համշեցնակ գիտեմ:

Երբ աղջիկ էի, համշեցնակ չգիտեի, ամուսնացա, հետո համշեցնակ սովորեցի: Քառասուն տարի է համշենցի եմ:

Ես հազար ինը հարյուր քսանյոթ թվականին եմ ծնվել Բաթումի Ախալշենի գյուղում, հազար ինը հարյուր քառասունչորս թվականին մեզ քշեցին Ղազախստանի Պուշկին գյուղ: Քառասունյոթ թվականին ամուսնացա, Պուշկին գյուղում շատ համշենցիներ էին ապրում, ամուսնացա, Կարաիբրահիմով Օսմանին առա, հազար ինը հարյուր հիսունհինգ թվականին Չիրկինո գյուղ քոչեցինք: Ես համշեցնակ խոսելը հեշտ սովորեցի):

Դեռ իմ զարմանքը չէր փարատվել, պարզվեց, որ Ջելալի կինը՝ Սարիյեն նս կրոնափոխ հույն է: Չիրկինոյում ապրում են երկու ընտանիք իրեզիլիներ՝ այսինքն ռիզեցիներ, որոնք կրոնափոխ հույների սերունդներ են՝ Սալի Չուխարօղլիի (կինը համշենցի է) ընտանիքը և Ռաֆեթ Չուխարօղլիի ընտանիքը, որի դուստրն է Ջելալի կինը: Ասում են՝ առաջ կողքի գյուղ աղջիկ չէին տալիս, հիմա շատ է մեծացել խառնամուսնությունների թիվը:

- Օրինակ՝ Չիրկինոյից 2 համշենցի աղջիկ ամուսնացել է կրոնափոխ հույների հետ, 2 հոգի ղազախ աղջիկ է

---

[91] Ռիզե քաղաքը գտնվում է Սև ծովի հարավային ափին՝ Տրապիզոնից արևելք, այժմ Ռիզեի նահանգի (իլ) կենտրոնն է:

առել, 1 հոգի՝ ջոն (լազ) աղջիկ, 1 հոգի ադրբեջանցի կին է բերել, 1 հոգի քրդի է մարդու գնացել,– մատները ծալելով թվարկում է Ջելալը:

- Քուրդ համշենցի Բեշլիօղլի Ասլանը Բելորեչենսկում ամուսնացել է խեմշիլ աղջկա հետ, Ջամբուլի մարզի համշենցի քրդերը Չիրկինոյից 5 աղջիկ են հարս տարել,– նրան շարունակում է մայրը,– համշենցի քրդերը՝ Բեշլիօղլիները, Զուլուֆօղլիները, Սարիմամեդօղլիները քուրդ չեն, հեմշինլի են՝ խեմշիլ, բայց թուրքերեն են խոսում:

Հարցնում եմ՝ որտե՞ղ են նրանք ապրում: Ասում է՝ Ղազախստանի Ջամբուլի մարզի Ջամբուլի շրջանի Իլյիչ գյուղում, նաև հարևան Ղրղզստանի Տուլուսի մարզի Կիրովի շրջանի Կիրովսկայա գյուղում:

Ջելալն ասում է.

- Ուզբեկստանի 20 հազարանոց Սովետաբադ քաղաքում համշենցիների երեք ընտանիք կա, երկուսի կանայք այլազգի են: Կարաբաջակով Սայիդի կինը՝ Մինիսա Ասկարովան[92] թաթար է, Սայիդը երիտասարդ տարիքում

---

[92] Մինիսա Ասկարովան (Կարաբաջակովա) ծնվել է 1952 թ. Թաթարական Ինքնավար Հանրապետության Ալմետևսկ քաղաքում: Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի է, ազատորեն խոսում է համշեցնակ՝ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով: 1987 թ. հունիսին Ուզբեկստանի Անդիժանի մարզի Սովետաբադ (1991-ից՝ ուզբեկերեն՝ Խոնոբոդ, ռուսերեն՝ Խանաբադ,) քաղաքում նրանից գրառել եմ «Մախքէ» հեքիաթը, որը նա լսել էր սկեսրայրից՝ Աջարիայի Գոնիո գյուղում ծնված Շաբան Սայիդի Կարաբաջակովից (1892-1980 թթ.): «Մախքէ» 1989 թ. տպագրվել է «Ձայն համշենական» 3-րդ ժողովածուում, էջ 229-230, և 2009 թ. իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» գրքում, էջ 190-191:

Թաթարստանից է բերել, Ակբույուքով Յաշարի կինը՝ Եվգենյա Ցիմբալյուկն ուկրաինուհի է…

* * *

Հաջորդ օրն՝ առավոտյան, Ջելալն ասում է՝ գնանք գյուղում շրջենք և իր առաջարկը հիմնավորում է ժողովրդական առածով. «Բէղէօղ թիլքին բարգաձ թիլքիցան քյարլի ա» (Շրջող աղվեսը պառկած աղվեսից ավելի շահող է):

Փողոցում դատարկ դույլերով մի կին մեզ տեսնելով, ընկրկում է, ճանապարհ է տալիս: Ջելալը բացատրում է, որ ըստ իրենց ժողովրդական հավատալիքների՝ դատարկ դույլերով կանայք տղամարդու ճանապարհը չեն հատում, թե չէ տղամարդու գործերն անհաջող կլինեն («Գէնդիքէ բօշ վէդրէնիօվէ մարթա արչէվէ նէնօսնի չին, ինչի թա փօնէ բօշ գէյլի»): Հարցնում եմ, իսկ կատու անցնելի՞ս, ասում է. «Ավալէ թուխ գադուն ջօմփան նէնօսնէր անա, թադուշնիվա էրթա չէնի», առաջներում սև կատուն ճանապարհը հատեր՝ աշխատանքի չէին գնում: Սպիտակի դեպքում գնում էին:

Գնում ենք գյուղի ամենատարեց մարդու՝ Իսհաք Կարաիբրահիմովի մոտ: Ծնվել է 1888 կամ 1889 թ. Գոնիո գյուղում: Նա բարձրահասակ, իր տարիքի համեմատ դեռ կանգուն ծերունի է, ունի սպիտակ, նուրբ մաշկ, կապույտ աչքեր, համաչափ, ուղիղ դիմագծեր և նման է ծեր մտավորականի: Ես նրան հարցնում եմ համշենցիների ծագման մասին: Խոսելիս նա երբեմն դժվարությամբ է բառերն արտաբերում:

- Բաշ–Համշէնն ի վա Վանան էգած ին, հէմ Էրզրուման էգած ին, ավալէ ամօն գաւէնի: Վանը շահար ա: Մէ հալի-վօրնիյէ գաւէնի թա, մէք Վանան էգած իք: Հօմշէցինիյէ բի-թուն Վանան էգած ին, ամօն գաւէնի (Բաշ–Համշեն Վա-նից են եկել, նաև Էրզրումից են եկել, առաջ այդպես էին ասում: Վանը քաղաք է: Մեր ծերերն ասում էին, թե մենք Վանից ենք եկել: Բոլոր համշենցիները Վանից են եկել, այդպես էին ասում):

Հարցնում եմ «քուրդ համշենցիների» մասին:

- Քուրդ հօմշէցինիյէ էրմէնէցան թարցած ին: Ջօնիյէ բի-թուն մէզի «էրմէնի» ցէն գուղանի (Քուրդ համշենցիները հայերից են կրոնափոխվել: Բոլոր լազերը մեզ «Էրմենի» (հայ) էին կանչում):

- Էրմէնինօուն չարթէ գունի անա, թուք անդա՞ղ էքի թա: Թուք անօց էնգիյէ գուքի՞ թա (Հայերին որ ջարդում էին, դուք այնտե՞ղ էիք: Դուք նրանց օգնո՞ւմ էիք),– հարցնում է Ջելալը:

- – Հա՛, մէք անօց հաց գուղաքի, անօց բահա գուքի: Արթվինան շադ էրմէնի փախան: Դասնէութէ հօքի մէ կյա-ղին բահէցի, քանի մէ օր անդաղ բահէցի, անդի հէդեվ ա-նէր քընացին: Անօց հէդէ հաց, բօնիր օմնէցի: Մէզ ախչիզ մէ զար, հիվօնդ էր, 14–15 դաազօն էր, օնունը՝ Վարսէնիկ, դադէ մարթօցէ հէդէ քընաց, ախչէզօնէ իմ մօղըս օբօլ ա-ավ: Յէս ան ախչէզօնէ լէրնիվէ դայի, ան ախչիզէ լէրինէ շիդզէցավ: Հէդէվ ան էրմէնիքը էզին ախչէզօնէ դային (Այո՛, մենք նրանց հաց էինք տալիս, նրանց պահում էինք: Արդվինից շատ հայեր փախան: Տասնութ հոգի մեր գյու-

դում պահեցի, մի քանի օր այնտեղ պահեցի, դրանից հետո նրանք գնացին: Նրանց հետ հաց, պանիր դրեցի[93]: Մի աղջիկ կար, հիվանդ էր, 14–15 տարեկան էր, անունը՝ Վարսենիկ, հայրը մարդկանց հետ գնաց, աղջկան ինձ մոտ թողեց: Ես այն աղջկան յայլա տարա, այն աղջիկը յայլայում առողջացավ: Հետո այն հայերը եկան, աղջկան տարան):

Ես Իսհաքին հարցնում եմ, թե Մեծ եղեռնի տարիներին թուրքերը նրանց հետ ինչպե՞ս էին վարվում: Ասում է, որ կոտորածների ժամանակ թուրքերը հոխորտում էին, թե հայերից հետո ձեզ ենք կոտորելու, չնայած մուսուլման եք, բայց հայ եք:

Հարցնում եմ՝ ինչո՞ւ են իրենց տոհմին Ջերմազցի ասում: Բացատրում է.

- Բաշ–Համշէնան մէզ թուխ մարթ մէ էզաձ ա Խօփայինտուս: Օնունէ Իբրահիմ էր: Բաշ–Համշէնն ու Խօթըչուրէ մօդիզ էնի: Ան Իբրահիմէ ջէրմազ դաղա մէ ունէր, անու Ջէրմազ գասէնի, Ջէրմազցի անդաղան ա (Բաշ–Համշենից մի թուխ մարդ է եկել Խոփա: Անունն Իբրահիմ էր: Բաշ–Համշենն ու Խոտորջուրը մոտիկ էին: Այն Իբրահիմը մի ճերմակ տղա ուներ, անունը Ճերմակ էին ասում, Ճերմակցի այնտեղից է):

Իսհաք Կարաիբրահիմովը պատմում է, որ 1968 թ. գնացել է Թուրքիա՝ բարեկամների մոտ, եղել է Խոփայում, այնտեղի և Բորչքայի գավառի գյուղերը դեռ Համշենի

[93] Բնագրում՝ օմնէցի, «օմնուշ» նշանակում է ամանի, տարայի մեջ լցնել, դնել, որևէ իր փաթաթել, տեղավորել:

լեզվով են խոսում ու նա թվարկում է այդ գյուղերը՝ Գարջի, Զենդիդ, Զալոնա, Արդալա, Զուրբիջի, Խիզո, Չավուշլու, Քյոփրիջի, Ուչ–Քարդաշ, Մաքրիալ, Չանչախանա, Օնճորոխ, Մոլլին օղլուն դերեսի՝ Մոլլին ցոր, Շանա, Բաղլիվոն, 1914 թ. հետո հիմնվել է Սաթիբե[94] գյուղը: Ասում է, որ Ստամբուլի մոտ՝ Աքշեհիրում էլի համշենցիների գյուղեր կան: Նրանք էլ են Համշենի լեզվով խոսում:

- Բաշ–համշենցիների շատ հանդիպեցի, նրանք առաջ հայերեն էին խոսում, հիմա՝ թուրքերեն, եթե բոլոր համշենցիներին հավաքեն, Երևանի չափ կլինեն,– ասում է Իսհաք Կարաիբրահիմովը:

Իսհաքը հոգնում է, ներս է գնում հանգստանալու:

Բակում հավաքված Իսհաքի հեռու ու մոտ ազգականները պատմում են, որ նա եղել է ամենահարուստ համշենցիներից մեկը: 1941 թ. հենց պատերազմը սկսվել է, նա իր հազարից ավելի ոչխարները ծախել է ու ոսկի առել: Նրա հայրն էլ է հարուստ եղել:

Աքսորից հետո Իսհաքը ցնցոտիներ է հագնում, կյանքը վտանգելով, աներևակայելի խոչընդոտներ հաղթահարելով, ծպտված վերադառնում է իրենց գյուղ, ուր իր տանը՝ հատակի տակ, ոսկիներ էր թաքցրել: Գիշերը նոր տանտիրոջը կանչում է դուրս, ատրճանակն ուղղում է վզին, ասում, որ այսինչ տեղում 150 ոսկի կա պահած, գնա բեր: Նա գնում է, գալիս, ասում, որ ընդամենը 50 հատ է: Իսհա-

[94] Հավանաբար նկատի ունի Արդվինի նահանգի Բորչքայի գավառի Մանասթըր (այժմ՝ Եշիլքեոյ) գյուղը, որի վերևի կողմում կա Սաթիբե անունով բլուր:

քը զայրանում է, ասում է՝ տունն էլ կվառեմ, քեզ էլ կսպանեմ, գնա բոլոր ոսկիները բեր, քեզ էլ 30 ոսկի վերցրու, բոլորն իրար հետ 150 ոսկի է: Նոր տանտերն այդպես էլ արել է, գնացել ու բերել է մնացածը:

Իսհաքը 400 ոչխար էլ մի ուրիշ տեղ էր վաճառել, բայց գումարը չէր հասցրել վերցնել, գնացել է այդ գումարի մի մասն էլ է ստացել և նույն դժվարություններով վերադարձել[95]: Այնուհետև Ղազախստանում իր փողով շատերին է օգնել, որովհետև մարդիկ սովից մահանում էին: Ով ունենում էր, հետ էր տալիս, ով չէր ունենում, չէր տալիս, և նա երբեք չէր ուզում:

Ներկաներից Քյազիմ Կարաիբրահիմովն ասում է, որ Իսհաքն Աջարիայում նաև քրիստոնյա հայերի հետ էր ընկերություն անում, նրանցից մեկի անունն Արշակ[96] էր: Իսհաքը մտերմացել էր Հարութ անունով մի մարդու հետ, որի աղջկան ջարդի տարիներին օգնել էր: Հարութը 1948 թ. մեծ

---

[95] Ըստ ԽՍՀՄ Գլխավոր դատախազի զեկուցագրի 1945-1948 թթ. Վրաստանում (այդ թվում՝ Աջարիայում) բացահայտվել են աքսորավայրերից փախած 419 անձինք՝ 149 թուրք, 203 քուրդ, 15 խեմշին, 14 գերմանացի և այլն, տե՛ս Иосиф Сталин-Лаврентию Берии: «Их надо депортировать…»: Документы, факты, комментарии / Вступ. ст., сост., послесл. Н. Бугай.- Москва. Дружба народов, 1992 (- 288 с.), с. 249.

[96] Կարծում եմ՝ խոսքը Բաթումի բնակիչ **Արշակ Ավետիսի Գարամանյանի** մասին է, որը երկար տարիներ ծառայել է սահմանապահ ջոկատում և Գոնիոյի համշենցիների հետ մտերիմ հարաբերություններ ուներ: Նրա մասին տե՛ս **Բաբունակ Թոռլաքյանի** արխիվում պահվող «Հանդիպում մահմեդական համշենահայերի հետ» նյութը, որը հրատարակվում է սույն գրքում, տե՛ս նաև **Ս. Վարդանյան**, Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), Երևան, ՀԱԻ, 2022 (- 352 էջ +16 էջ գունավոր ներդիր), էջ 70:

դժվարություններով եկավ, հասավ Չիրկինո, որն այն ժամանակ դեռ փակ, «հատուկ բնակավայր» էր, որտեղ աքսորվածներն էին ապրում, և ելումուտը պարետի թույլտվությամբ էր: Բայց Իսհաքն այդ ժամանակ Ղրղզստանում՝ Նոռկատում էր: Հարութը շատ լավ քեմենչե էր նվագում, իրենց գյուղացիների համար նվագեց, հետո գնաց Նոռկատ՝ Իսհաքին տեսնելու, բայց այնտեղ մահացավ: Նրա մոտ եղած ամբողջ գումարն Իսհաքն ուղարկեց նրա կնոջը:

Քյազիմը միջահասակ, ամրակազմ, իր ազգականների նման կապուտաչյա մարդ է, ծնվել է 1926 թ. Աջարիայի սահմանամերձ Կանլը դերե (Քանլը դերե, Գօնլի դաա), ինչպես ինքն է ասում՝ Աղունօղ քէղ (Արյունոտ գետ) գյուղում, մինչև 8–րդ դասարանը սովորել է մոտակա Սարփ գյուղի վրացական դպրոցում: Քյազիմը 25 տարի ֆերմայի վարիչ է աշխատել Չիրկինոյի կոլտնտեսությունում, ֆերման ունեցել է 26 հազար գլուխ ոչխար:

Նա հինգ աղջիկ և հինգ տղա ունի, 17 թոռ, հպարտանում է, որ իր տղաներից մեկը՝ Ռայիսը, շրջանի գլխավոր անասնաբույժի տեղակալն է: Բուհում անասնաբուծություն և անասնաբուժություն սովորելու տարիներին Ռայիսի հետ մի այսպիսի միջադեպ է եղել. նա քննությունը գերազանց է հանձնել, քննող դասախոսը հարցրել է՝ ի՞նչ ազգ ես, պատասխանել է՝ խեմշիլ, նա էլ ասել է.

- Խեմշիլին 3–ն էլ հերիք է:

Քյազիմը պատմում է, որ հայրն ասում էր, որ իրենք հայ են, իսկ Համշենը գյուղի կամ քաղաքի անունն է: Աջարիայում փաստաթղթերում իրենց ազգությունը «խեմշին» էին

գրում, բայց Ղազախստանում երևի գյուղի կեսի անձնագրերում «թուրք» գրեցին:

Նա 1968 թ. Սելիմ Կարակչիօղլիի և Հասան Սալեհօղլիի հետ Մոսկվա է գնացել: Դիմում են գրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, խնդրել, որ իրենց թույլատրեն վերադառնալ հայրենի գյուղեր: Նրանց ընդունել է ԳԽ նախագահության քարտուղար Միխայիլ Գեորգաձեն,[97] սակայն հարցը չի լուծվել:

Քյազիմը խոսքաշեն մարդ է, ուստի մեր զրույցը շարունակում ենք իր տանը:

- Իմ հայրը՝ Մոմեդը (Մուհամմեդը) 83 տարի ապրեց, ծնվել էր 1890 թ., նրա հայրը՝ Ասլանը, 73 տարի ապրեց, նրա հոր անունը Հալիթ էր, Հալիթի հոր անունը՝ Իբրահիմ, ահա այդ Իբրահիմից են առաջացել բոլոր Կարաիբրահիմօղլիները:

Քյազիմի և Ջելալի հետ փորձում ենք Կարաիբրահիմօղլիների տոհմածառը կազմել, երեխաների անուններն էլ գրելով 6–7 սերունդ է լինում:

Հետաքրքրվում եմ, թե Աջարիայում ինչո՞վ էին զբաղվում: Քյազիմն ասում է՝ ով հող ուներ՝ հողագործ էր, ով շատ ոչխար ուներ՝ հովիվ էր, մինչև Քութայիսի մոտ տանում էին ոչխարները: Ջելալը հավելում է, որ համշենցիների ոչխարներն արտաքուստ մյուսների ոչխարներից

[97] Միխայիլ Գեորգաձեն (1912-1982), 1953-54 թթ. եղել է Վրացական ԽՍՀ գյուղատնտեսության նախարար, 1954-56 թթ.՝ Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար, 1956-57 թթ.՝ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, 1957-1982 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար:

տարբերվում էին, բայց նկատելով իմ լայն ժպիտը, մի տեսակ արդարանում է՝ այդ մասին մեծերից է լսել: (Տարիներ անց իմացա, որ իսկապես համշենցիները ստեղծել են ոչխարների նոր ցեղատեսակ)[98]:

Քյազիմն ասում է, որ համշենցիները Բաթումում ու Ռուսաստանի այլ քաղաքներում հայտնի հացթուխներ[99] էլ ունեին՝ Ֆուրունջի Իբրահիմը, Ֆուրունջի Ասլանը...

---

[98] Վրացի գիտնական **Մ. Ռչեուլիշվիլին** իր "**К истории овцеводства Грузии**" («Վրաստանի ոչխարաբուծության պատմությունից») գրքում առանձին ենթաբաժին է նվիրել այդ ցեղատեսակին. "Хемшинские овцы. Овци этой породы не местного происхождения. Они завезены переселенцами в Аджарию из районов Хопи и Ризе, находящихся в настоящее время в пределах Турции" (թարգմ.՝ «Խեմշինյան ոչխարներ: Այս ցեղատեսակի ոչխարները տեղական ծագման չեն: Վերաբնակիչները դրանց Աջարիա են բերել ներկայումս Թուրքիայի սահմաններում գտնվող Խոփայի և Ռիզեի շրջաններից»), տե՛ս **М. Д. Рчеулишвили**, К истории овцеводства Грузии, Тбилиси, Государственное издательство ГССР, 1953 (- 220 с.), с. 88. Տե՛ս նաև՝ **В. М. Шамиладзе**, Хозяйственно-культурные и социально-экономические проблемы скотоводства Грузии. Историко-этнографическое исследование, Тбилиси, изд. "Мецниереба", 1979 (- 340 с. + VIII табл. фотографии), с. 74, 282.

[99] 1893 թ. «**Նոր-Դար**» թերթում տպագրված իր հոդվածում Ռուսաստանի քաղաքներում հացթուխությամբ զբաղվող կրոնափոխ համշենցիների մասին կարևոր տվյալներ է հաղորդում «Պիրո» գրչանունով հանդես եկած 24-ամյա լրագրող Արշակ Եղիգարյանը. «Այժմ Ռուսիայի շատ քաղաքներում կան դոյնօրինակ հայեր, որոնք հաց են թխում, կերակուր եփում, և հիւրանոցներ ունին. գլխաւորապէս դրանք գտնւում են Ռոստովում, Թայղանում, Նովոչերկասկում, ապա հարաւային Ռուսիայի քաղաքներում՝ Խարկովում, Օդեսայում, և Վոլգայի վրայ գտնուող քաղաքներում: Այդ իսլամն ընդունած հայերը Հէմշին գաւառամասից են Երիզայի մութասարրըֆլըղից, Տրապիզոնի վիլայէթից», տե՛ս **Պիրո**, Տաճկացած հայեր, «**Նոր- Դար**», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21, № 227, **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 2500 ծածկանուն), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005 (- 788 էջ), էջ 360, 598: Թայղանը ՌԴ Ռոստո-

Ջելալի հայրը Բաթումում մի հայից՝ Անդրոյից, կոշիկ կարել է սովորել, բայց աքսորից հետո գյուղում այդ արհեստը համարյա պետք չի եկել, մարդիկ հողի ու ցեխի մեջ աշխատելիս ռետինե ոտնամաններ ու կրկնակոշիկներ

վի մարզում՝ Ազովի ծովի ափին գտնվող Տագանռոգ քաղաքի հին անունն է, Երիզայի մութասարրըֆլըղը Ռիզեի գավառն է (Ս. Վ.):

Տրապիզոնցի ճանաչված մտավորական և մանկավարժ Հակոբ Մեղավորյանը, որ Լոզանի համալսարանում ուսանել է մանկավարժություն և իրավաբանություն, 1894 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, թուրքական հետապնդումների պատճառով 1901-ից բնակվում էր Բաթումում, 1904 թ. գրում է, որ Բաթումից մինչև Մոսկվա և Բուխարեստից մինչև Աստրախան ամեն քայլի կարելի է հանդիպել օրուգիշեր աշխատող համշենցի (խեմշինլի) հացավաճառների, տե՛ս «Исключительное занятие хамшинли-печение хлеба. От Батума до Москвы и от Бухареста до Астрахани на каждом шагу можно встретить булочников из хамшинли, работающих день и ночь…», **А. П. Мегавориан**, К вопросу об этнографических условиях развития народностей Чорохского бассейна, «**Известия Кавказского отдела Императорского Русского географического общества**», Тифлис, 1904, т. XVII, № 5, с. 366.

1909 թ. Սև ծովի հարավային ափերում՝ ռուսական և թուրքական տիրապետության տակ գտնվող Լազիստանում ուսումնասիրություններ կատարող Նիկողայոս Մառը կրոնափոխ համշենցիների՝ «խեմշին»-ների մասին գրում է, որ նրանք Ռուսաստանի տարբեր քաղաքներում հացթուխությամբ են զբաղվում, տե՛ս **Н. Марр**, Из поездки в Турецкий Лазистан (Впечатления и наблюдения), «**Известия Императорской Академии наук**», С.-Петербург, 1910, с. 618. Կրոնափոխ համշենցիները ոչ միայն Ռուսաստանում, այլև Ստամբուլում էլ նշանավոր հացթուխներ էին: Հակոբ Մնձուրին (1886-1978), որ ինքն էլ Ստամբուլում հացթուխ էր, իր «Սիլա» պատմվածքում գրում է. «Հայերը շատ վերջերը, նախորդ դարու սկիզբները, յունական ապստամբութենէն յետոյ երբ յոյները քաշուեցան, անոնց տեղերը գրաւեցին, ինչպէս հիմա ալ քաղաքին ամբողջ հացագործները Սեւծովցի լազերը, Հեմշինցիներն են», տե՛ս **Յակոբ Մնձուրի**, Մենք (ընտիր պատմուածքներ), կազմող, յառաջաբանի հեղինակ եւ խմբագիր՝ **Երուանդ Տէր-Խաչատուրեան**, Անթիլիաս, 2018 (- 528 էջ), էջ 372:

էին հագնում: Քյազիմը վկայում է, որ լավ արհեստավոր-ները Բաթումի հայերն էին, իրենց գյուղերի տների քարե պատերը շարելու համար Բաթումից էին գալիս հայ վար-պետները, հիշում է՝ մեկի անունը Յուրիկ էր, ցերեկները պատ էր շարում, գիշերները քեմենչե էր նվագում:

Գյուղի համշենցիների նահապետի՝ Իսհաք Կարաիբ-րահիմովի թոռը՝ խարտյաշ մազերով և կապտականաչ աչքերով 27–ամյա Սուլեյմանը, որը աչքի հիվանդության և վատ տեսության պատճառով չէր աշխատում, ասաց, թեև քեմենչէ նվագող չկա, սակայն հանուն գիտության ինքն ինձ համար մի երկու խաղիկ կերգի, որոնցից առա-ջինը Ջելալն է հորինել:

Հէրէվօնցմա յէս էգի,
Յէս ցէզիզի փութ էնուշ,
Աստէ՛ք ալա, ախչգէնէ՛ր,
Թուք քիղէ՞ք տա հաց էփուշ:

* * *

Բարխին դագէ խընձօր(ի) ձառ,
Խընձօր գուցքիմ այէ դար,
Իսա բազարիս խաթէր,
Մէգալ բազար այէ դար:

* * *

Հաջորդ օրը գնում ենք գյուղի մյուս մեծահասակի՝ Խաուլա Իլյասի Կարաիբրահիմովայի մոտ: Ծնվել է 1898 թ. Խոփայի գավառի Չավուշլու գյուղում, օրհորդական ազգա-

նունը Շաբանօղլի է, քույրը՝ Էմինեն, և մյուս ազգականներն ապրում են հայրենի գյուղում: (Հետո, երբ Երևանում ես լսում էի Չավուշլուում Սուլեյման Կարաիբրահիմովի արած ձայնագրությունները, դրանց մեջ էր նաև Խաուլայի քրոջ՝ Էմինեի խոսքն ուղղված աքսորված հարազատներին՝ «Յէս Էմինէն իմ, օրթի՛, Իլյասին Էմինէն իմ...»):

Նա Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում ականատես է եղել, թե ինչպես էին թուրք զինվորները քրիստոնյա հայերին տանում Արտանուջ քաղաքի մոտ գտնվող Ջեհեննեմ դերեի (Դժոխքի ձոր) ժայռից ցած նետելու: Նա պատմում է և ձեռքերը ծնկներին տալով արտասվում, զգացվում է, որ տասնամյակներ առաջ տեսածը խորապես ցնցել է նրան, և նա անընդհատ կրկնում է.

– Էրօնդ–էրօնդ ախչըգէնին կուլանի, էրօնդ–էրօնդ ախչըգէնին … (Սիրուն–սիրուն աղջիկները լաց էին լինում, սիրուն–սիրուն աղջիկները...):

- Ինչբէ՞ս աղաձ ա (Ինչպե՞ս է եղել),– հարցնում է Ջելալը:

- Է՛, ժօղված ունէնի, մէգդաղաձ ունէնի: Էրօնդ–էրօնդ ախչըգէնիյէ, հարսնիյէ, բարվէնիյէ, դաղաքէ, գէնդիքէ գուղնի գումաշ հաքաձ ունէնի, յէլաղնի սըրմալի: Արթվինան ժօղված ունէնի, թափուր–թափուր: Ջէհէննէմ դէրէն ի վա նէլէլէ գունի, ասօրի բես մէղիս ա: Թէվօնգօվ դօնէ գունի: Դընիյէ բօշ մընա գունի, պլուրնիյէ թօրբանիօվէ գիյէ գունի ասքէրնիյէ: Անէր ջէվջէվա գունի, կուլանի: Ջէհէննէմ դէրէ գասէնի, մէձ խէնդաքին բէս, աննիվա լէլէ գունի, քիշէրը լէլէ գունի: Արթվին գասէնի շահարին, անդի ժօղվէ գունի: Էրմէնի մէնաց օչ, բիթուն ժօղվէցին, քէշէցին (Է՛, հա-

վաքել էին, մեկտեղել էին: Սիրուն–սիրուն աղջիկները, հարսները, պառավները, երեխաները, կանայք գծավոր մետաքս էին հագած, ոսկեթելով ասեղնագործած անթև բաճկոնակներ: Արդվինից էին հավաքել խումբ–խումբ, Ջեհեննեմ դերեն (Դժոխքի ձորն) ի վար էին լցնում, այսօրվա պես հիշում եմ: Հրացանով էին տանում: Տները դատարկ էին մնում, զինվորները ալյուրները պարկերով կրում էին: Նրանք ճվճվում էին, լաց էին լինում: Ջեհեննեմ դերե (Դժոխքի ձոր) էին ասում, մեծ խանդակի պես էր, այնտեղ էին լցնում, գիշերն էին լցնում: Արդվին էր քաղաքի անունը, այնտեղից էին հավաքում: Հայ չմնաց, բոլորին հավաքեցին, քշեցին)[100]:

---

[100] Երևան վերադարձից հետո ժամանակի հայկական մամուլում փնտրեցի-գտա այդ ողբերգության մասին որոշ վկայություններ, որոնք ներկայացնում եմ. «Անցած 1914 թւի դեկտեմբերի 17-ին՝ Արդանուշի հայերի գլխին եւս կախված էր Դամօկլեան սուրը և ժողովուրդը ապրում էր օրհասական րօպէներում: Նոյեմբերի 6-ից մինչեւ դեկտ. 17-ը Թիւրքիայից Արդանուշ խուժած չեթաները՝ մասնակցությամբ տեղացի թիւրքերի՝ իրանց գազանային սկզբնական գործողութիւնները - այն է՝ թալանել, կողոպտել եւ այլն, կատարած եւ գլուխ բերած լինելով՝ գործը արդէն հասել էր ջարդի: Կառափնատեղը որոշված էր Արդանուշի հիւսիսային կողմը անդնդախոր ձորի եզերքին գտնվող աւելի քան 200 սաժէն բարձրութիւն ունեցող քարաժայռը, որ զարհուրելի տեսարան է ներկայացնում, գազանները այդտեղ տանելով կոտորվողներին կապկպած եւ սուիններով խոր վէրքեր տալով՝ կիսակենդան վայր էին ձգում:

Արդանուշում սպանված է 136 մարդ, նոյնպէս այնտեղի ժողովրդապետ հ. Մանուել վ. Ճուխունեանը, որով նահատակների թիւը հասնում է 137 հոգու:

Արդանուշում եւ Տանձոտում կոտորածները տեղի են ունեցած միևնոյն օրը եւ միևնոյն գիշերը, եւ դեկտ. 18-ին արդէն ներկված էր Արդանուշի գետը տանձոտցիների և արդանուշցիների դիակներից հոսած արեամբ», տե՛ս Յ. ք. Եսայեան, Արդանուշի հայերի կոտորածի տարե-

- Մէօցն ալ ժօղվէ գունի՞ թա զօօվվի: Մէօցն ալ քէշէ գունի՞ թա (Մերոնց է՞լ էին զոռով հավաքում: Մերոնց է՞լ էին քշում), – հարցնում է Ջելալը:

դարձը, «**Մշակ**», թերթ, Թիֆլիս, 1915, դեկտեմբերի 22, թիւ 283, էջ 3, 4: «Թուրքերը, Արդուին քաղաքին մէջ նախ վեց հոգի կախաղան բարձրացուցած են, Հայ բնակչութեան սարսափ ազդելու համար: Ապա մարդկանցմէ ու կանանցմէ պահանջուած են իրենց բոլոր ոսկեղրամները: Ոսկիները ստանալէ ետք, Թուրքերն սկսած են կողոպտել թէ՛ տները, և թէ՛ խանութները: Կողոպտած ու պղծած են նաեւ տեղւոյն Հայոց եկեղեցիները: Ամբողջ ամիս մը այս խժդժութիւնները շարունակելէ եւ Հայ ժողովուրդը կատարելապէս քամելէ վերջն է, որ կը ձեռնարկուի կանխապէս պատրաստուած ջարդի ծրագրին իրագործմանը: Կը խնայուին միայն երեխայոց ու կանանց, զանոնք կրօնափոխ ընելու նպատակաւ:
…Արտանուշ բերդաքաղաքի ջարդը աւելի սոսկալի եղած է: Թուրքերը տեղւոյն Հայերը նախ լաւ մը կը թալլեն: Յետոյ, անոնցմէ ձեռքերնին անցածները, հաւաքաբար, կը քշեն, կը տանին քաղաքին վերեւի կողմը գտնուող ժայռին ծայրը: Այն տեղ կը մերկացնեն զանոնք, եւ ապա, խումբ խումբ իրարու կապած, կը գլորեն ժայռերէն վար, դէպի խորունկ անդունդ: Գլորուողները, քարէ քար զարնուելով, ջարդուելով ու փշրուելով, կ՚իյնան խորերէն ընթացող Արտանուշ գետակին մէջ, ու դեռ եւս շնչողներն ալ կը խեղդուին, կը լմնան», տե՛ս Ազգային կեանք, «**Կոչնակ**», շաբաթաթերթ, Նիւ Եորք, 1915, Ապրիլ 17, թիւ 16, էջ 379:

«Կանգնած էինք այդ չարագուշակ ձորի այն բարձրութեան վրայ, որտեղից թիւրքերը անդունդն են գլորել 110 հայերի: ... Ճիշտ այստեղից, ուր կանգնած էինք, 65 հոգի թոկերով կապված միմեանց, հրւել են անդունդի խորքը: Դեռ արեան հետքերը նկատելի են...: Անցնում ենք հարաւային կողմը, նոյնպէս մի ահռելի բարձրութիւն, ուսկից գլորել են երկրորդ խումբը թւով 30 հոգի, դարձեալ արեան հետքեր...: Անտանելի զիգզագներով իջնում ենք դէպի ձորը...: Քիչ անցած՝ հանդիպում ենք առաջին խմբի եղբայրական գերեզմանին», տե՛ս **Ս. Բռունեցի**, Դժոխքի ձորը, «**Հորիզոն**», թերթ, Թիֆլիս, 1915, ապրիլի 28, № 91:

2010 թ. հնարավորություն ունեցա այցելել Արտանուջ և տեսնել սարսափազդու ձորը (Ս. Վ.):

- Հա՛, մէօցն ալ թէվօնգնիօվէ քէշէ գունի, հէդէվ անէր յէթ թարնա գունի (Հա՛, մերոնց էլ էին հրացաններով քշում, հետո նրանք հետ էին դառնում):

- Էրմէնինիյէ ինչի մէ աղա՞ձ ունէնի թա (Հայերը ինչ–որ բա՞ն էին արել),– հարցնում է ներկաներից մեկը:

- Չքիդի՛մ, ան ինչի՞ ամա զէնէնի, չքիդի՛մ: Ան վաքիտ յէս ախչիգ է: Յէս իմ մօէ հարցնէ գու՝ անէր ինչի՞ ամօն կուլօն, իմ մաէ ասաց. «Օրթի՛, անօց խախթուշ դօնի գուն»: Արթվին բիթուն էրմէնի էնի, թափուր–թափուր դօնէ գունի (Չգիտե՛մ, ինչի՞ համար էին այն անում, չգիտե՛մ: Այն ժամանակ ես աղջիկ էի[101]: Ես իմ մորը հարցնում էի՝ նրանք ինչո՞ւ են այդպես լաց լինում, իմ մայրն ասաց. «Որդի՛, նրանց խեղդելու են տանում»: Արդվինում բոլորը հայ էին, խումբ–խումբ տանում էին):

Ապա ծեր կինը, ինձ նայելով, Ջելալին հարցրեց.

- Իսէր ուստի՞ թօրէմիշ աղաձ ին (Սրանք որտեղի՞ց են հայտնվել):

- Իսէր հօզա աբրի գուն (Սրանք այստեղ են ապրում, այսինքն՝ ԽՍՀՄ–ում),– պատասխանեց Ջելալը:

- Փախա՞ձ ին թա (Փախե՞լ են),– զարմացավ ծեր կինը[102]:

---

[101] Աղջիկ էի – նշանակում է շատ երիտասարդ էի և դեռ ամուսնացած չէի:

[102] Դժոխքի ձորի մասին Խաուլա Կարաիբրահիմովայի հետ մեր զրույցը տե՛ս նաև **Ս. Վարդանյան**, Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2006, № 3-4, էջ 7: **Նույնի**՝ Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «**Եզերք**», հանդես, Երևան, 2007, № 2, օգոստոս, էջ 40-43: «Մեգ թավայի ծուգ իք» («Մեկ թավայի ձուկ ենք»), զրույցը վարեց Անի Ղարաբաղցյանը, «**Մենք մեր մասին**», հանդես, Երևան, 2007, № 2 (№ 10), էջ 20-23: **Ս. Վարդանյան**, Դժոխային կիրճի արձագանքները, «**Ձայն համշե-**

Նրան խնդրում եմ, որ թվարկի Աջարիայի համշենցիների գյուղերը: Թվարկում է: Նրա որդին՝ 1932 թ. Գոնիոյում ծնված Փաշա Կարաիբրաhիմովը, որին ռուս նշանավոր դերասան Եվգենի Լեոնովի[103] հետ նմանության պատ-

---

նական», 2011, № 3-4, էջ 2, 3: **Սերկէյ Վարդանեան**, Իսլամացուած համշէնցիները թէ զոհեր են եւ թէ վկաներ, "**Agos**", Haftalık gazete,, Istanbul, 2013, Kasım 8, № 914, «**Ակօս**», շաբաթաթերթ, Ստամբուլ, 2013, նոյեմբերի 8, № 914, **Հայերէն ներդիր**, էջ 3: Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) համալսարանում 2013 թ. նոյեմբերի 2-4 տեղի ունեցած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովում իմ կարդացած զեկուցումն է՝ կրճատված և արևմտահայերենի փոխադրված: Նյութի ավելի սեղմված տարբերակը արտատպվել է Աթենքի «**Ազատ օր**» օրաթերթում, 2013 թ., նոյեմբերի 20, թիւ 20205: Իմ զեկուցման համառոտված թուրքերեն տարբերակը լույս է տեսել "**Agos**" թերթի նույն համարում՝ Uygar Gültekin, "Karadeniz'in gizemli halkı", էջ 8: (Թարգմանությունն՝ Ույգար Գյուլթեքին, Սև ծովի խորհրդավոր ժողովուրդը): Զեկուցման ամբողջական թուրքերեն թարգմանությունը տե՛ս գիտաժողովի զեկուցումների ժողովածուում՝ **Sergey Vardanyan,** Müslümanlaştırılmış Hemşinli Ermeniler: Kurbanlar ve Tanıklar, Ermeniceden çeviren Pakrat Estukyan // **Müslümanlaş(tırıl)mış Ermeniler**, Konferans Tebliğleri, Kasım 2013, Istanbul, Hrant Dink Vakfi Yayınları, 2015 (- 470 s.), s. 75-86. **Ս. Վարդանյան**, Դժոխքի ձորը, Կրոնափոխ համշենցիները՝ Մեծ եղեռնի ականատեսներ, «**Անդին**», ամսագիր, Երևան, 2014, № 4, էջ 14-19: **Նույնի**՝ Իսլամացված համշենահայերը Ցեղասպանության ականատեսներ // **Տրապիզոն նահանգ եւ Համշէն**, Printed by: A&V Digital Offset, Publisher: ARS "Roubina" Chapter, Թորոնթօ, Գանատա, 2014 (-166 էջ), էջ 67-76: **Նույնի**՝ Հայոց ցեղասպանության մասին զրառումներ կրոնափոխ համշենահայերից // **Հայ ժողովրդական մշակույթ XVI**, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014 (- 496 էջ), էջ 327-334:

[103] Եվգենի Լեոնով (1926-1994), թատրոնի և կինոյի դերասան, ԽՍՀՄ ժող. արտիստ (1978), ԽՍՀՄ Պետ. մրցանակի (1976) և ՌԴ Պետ. մրցանակի (1992) դափնեկիր:

ճառով համագյուղացիները «Լեռնով» են ասում, այդ գյուղերի մասին մի երգ է երգում.

Լուսնիկա իմ, տիբաձ իմ[104]
(Լուսին եմ, լուսավորել եմ)
Հօմշէցէց կյաղէրն ի վէ,
(Համշենցիների գյուղերն ի վեր),
Գօնլի դաան շադ պարցն ա,
(Կանլը դարան շատ բարձր է),
Գօրիաթէ բարազ ա,
(Կվարիաթը զառիթափ է),
Գյունաէ շադ էրօնդ ա,
(Գոնիոն շատ գեղեցիկ է),
Ավգյաէ փէչօտ կյաղ ա,
(Ավգյան քամոտ գյուղ է),
Ջառնալէ չախօտ կյաղ ա[105]:
(Ճառնալը անձրևոտ գյուղ է):

Այս երգի շնորհիվ նոր բառեր եմ սովորում, պարզվում է՝ կրոնափոխ համշենցիներն անձրևին «չախ» են ասում, այնինչ քրիստոնյա համշենցիները՝ Սամսոնի գավառից եկածները՝ «վրայէգ», Տրապիզոն քաղաքի մերձակա գյուղերից գաղթածները՝ «թաթավ»: «Փէչօտ» նշանակում է

[104] Տիբած իմ- դիպել եմ, ճառագայթներով լուսավորել եմ, ծագել եմ:
[105] Այս երգն իր նոտաներով հրատարակել եմ «**Ձայն համշենական**» 3-րդ ժողովածուում, Երևան, 1989, էջ 210, և իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքում, Երևան, 2009, էջ 244:

«քամոտ», քանի որ թուրցևանցիները քամուն ասում են «փուչ»[106]:

Եվգենի Լեոնովի համշենցի բարեսիրտ նմանակը՝ Փաշա Կարաիբրահիմովը, իմ խնդրանքով մի քանի խաղիկներ էլ է երգում.

Էրզըվայէ բայիր ա,
Դօնէ դազէ չայիր ա,
Ղարա՛թ այէք ախչզընէ՛ր,
Գարքըվուշի դայի ա:

* * *

Գալաթէ թի սաղօնէ,
Քէզի ժըմնիմ օղօնէ,
Քա՛, քէզի վաա գուցքիմ
Չաղիր չուննօղ յօղօնէ:

* * *

Լուսնիկա էրօնդ կիշէր,
Քալա էրթօք աս կիշէր,
Մէրէմ ախչիգ տուռը պաց,
Թէվօնքը բուչխին մէնաց,
Ցէս թէվօնքին վարի չիմ,
Մէրէմը ինձի մէնար:

[106] Երգի թարգմանության մասին տե՛ս **Ս. Վարդանյան**, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2016, № 3, էջ 82-83:

* * *

Ջելալն առաջարկում է՝ գնանք «Էվլիյա ախպօր», այսինքն՝ սուրբ աղբյուր, մի քանի կմ է հեռու, այնտեղ շատ լավ փողոց կա, շրջակա գյուղերի բնակիչները հաճախ են գալիս հանգստանում, քեֆ անում: Փոքր խմբով գնում ենք, անցնում ենք բազմաթիվ հողաթմբեր և բուսականությունից զուրկ բլրակներ, հասնում ենք սուրբ աղբյուրին:

Գետնից բխում է հորդառատ, մաքրամաքուր ջուր: Աղբյուրի ակունքին աճած պլոճենու ճյուղերին տարբեր տեսակների, ձևերի ու չափերի հարյուրավոր գույնզգույն կտորներ են կապկպված, ցանկությունների, երազանքների իրականացման համար են: Միայն պլոճենուն, մյուս ծառատեսակներին չեն կապում: Ասում եմ, որ Հայաստանում էլ այդպիսի սովորություն կա: Հարցնում եմ, իսկ որտե՞ղ է փողոցը: Ցույց են տալիս ջրառատ առուն, թե՝ սա է: Բացատրում եմ, որ փողոցն իրենց գյուղի ասֆալտապատ փողոցն է, որի երկու կողմում իրենց տներն են: Պարզաբանում են՝ դա «ջօմփա» է, իսկ փողոցը մեծ առուն կամ գետակն է: Մտածում եմ, որ հայ ժողովրդից կտրված ապրելն ազդել է այս գյուղի համշենցիների բառապաշարի վրա, նրանք սկսել են շփոթել բառերի իմաստները, բայց տարիներ անց, երբ հնարավորություն ունեցա լինել Թուրքիայում բնակվող համշենցիների գյուղերում, պարզվեց, որ այնտեղ էլ են գետին «քէղ» ասում, իսկ գետակին՝ «փո-

ղօց», ինչը Խոփայի խոսվածքի յուրահատկություններից է[107]:

Կրոնափոխ համշենցիների բարբառի եզակի բառերը թելը կտրված ուլունքաշարի հատիկների պես սփռված են Կենտրոնական Ասիայում, Ռուսաստանում ու Թուրքիայում՝ Արդվինի, Ռիզեի, Էրզրումի, Սաքարյայի ու Դյուզջեի նահանգներում, տարբեր քաղաքներում ու գյուղերում, և այդ բոլորը հատ–հատ պետք է հավաքել և կրկին ուլունքաշար անել: Ե՞րբ և ինչպե՞ս:

Այդ և հաջորդ օրը Խաուլա Կարաիբրահիմովայից և գյուղի մյուս կանանցից գրի եմ առնում համշենցիների հագուստների անվանումները, ճաշատեսակները և այլն, Ջելալն էլ պատմում է երկու հրաշալի հեքիաթ՝ «Փուքարա դաղան» և «Կօղիյէ»:

1940 թ. Աջարիայի Ճառնալի գյուղում ծնված Խաթիջե Կարակչիօղլիից ձայնագրում եմ յոթ խաղիկներ[108], որոնցից մեկը հետագայում դարձավ շատ հանրահայտ[109]:

---

107 **Ս. Վարդանյան**, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2016, № 3, էջ 91, 92:

108 Տե՛ս Ջայն համշենական, գիրք երրորդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ս. Վարդանյանը, Երևան, 1989 (- 252 էջ), էջ 213-216, 239: **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, 2009, էջ 248-251, № 10-16 խաղիկները:

109 Չիրկինո իմ երկրորդ այցելության ժամանակ՝ 1987 թ. հունիսին, կրկին Խաթիջե Կարակչիօղլիից գրի առա երկու խաղիկ.

Նօարս էլլիմ, իշալլա,
Դուն ավէլիմ, իշալլա,
Քու դաղին ու քու մօյը
Կուռբա կօրձիմ, իշալլա:

Չէքէթէս խաղփուլիգ ա,
Մեչուս ալ պօլօր կալ չի,
Իսա կյաղիս դաղաքէ
Ինձի ալ ումիշ կալ չին:

2008 թ. Երևանում ստամբուլաբնակ համշենցիների «Վովա» համույթի համերգից հետո խմբի անդամների հետ մեր տանը հյուրընկալված երգչուհի Այշենուր Քոլիվարը լսելով իմ արած ձայնագրությունները, շատ հավանեց և խնդրեց իրեն ուղարկեմ որոշ խաղիկների լատինատառ տարբերակները: Նա «Նօարս էլլիմ» և «Չէքէթէս խաղփուլիգ ա» սկզբնատողերով խաղիկներին էլի խաղիկներ ավելացնելով, «Նօարս էլլիմ» երգը հնչեցրել է տարբեր երկրների բեմերից, ընդգրկել 2012 թ. Ստամբուլում թողարկված իր խտասկավառակում, տե՛ս **Ayşenur Kolivar,** Bahçeye Hanımeli, Istanbul, Kalan Müzik, 2012. Տե՛ս նաև՝ **Ani Sepetçiyan,** Do ğu Karadeniz'in çokdilli şarkılarına “hanimeli” değdi, “**Agos”,** Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 17, № 827, s.16. (Թարգմանություն՝ Արևելյան Սև ծովի բազմալեզու երգերին «տիկնաթաթիկ» է դիպել): Այշենուր Քոլիվարի հետ հարցազրույցի հայերեն տարբերակը տե՛ս թերթի հաջորդ համարում՝ **Անի Սեփէթճեան,** Ծաղիկ դպաւ երգերուն, **“Agos”** Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 24, № 828, տե՛ս **«Ակօս»,** 2012, փետրուար 24, թիւ 828, Հայերեն ներդիր, էջ 4: **Այշենուր Քոլիվարի** հետ հարցազրույցը նրա «**Bahçeye Hanımeli**» («Պարտէզին այծտերեւուկ», այծտերևուկը կամ տիկնաթաթիկը ծաղկի անուն է) ալբոմի մասին է: Թղթակցի հարցին ի պատասխան նա անդրադառնալով խտասկավառակի «Նօրհարս էլլիմ» երգին, նշում է. **««Նորհարս էլլիմ»** երգը Հօփայէն Ղազախստան գացած, այնտեղէն ալ Երևան վերադարձած եղանակ մըն է: Սերկէյ Վարդանեան, Ստալինի շրջանին Ղազախստան աքսորուած Համշէնցիներէն քաղեր է»: Տե՛ս նաև՝ **Ս. Վարդանյան,** Այշենուր Քոլիվարի հայերեն երգացանկը, **«Ձայն համշենական»,** 2013, №3-4:

Նույն երգը տարբեր բեմերից հնչում է նաև ստամբուլաբնակ իսլամ վրացի երեք քույրերի՝ Դամլա, Յուղում և Թամարա Շահինների «Samida» (Սամիդա-վրացերեն՝ երեք քույր) վոկալ-գործիքային համույթի համերգների ժամանակ, այն ընդգրկվել է 2019 թ. թողարկված նրանց «Alaca» (Istanbul, Kalan Müzik) խտասկավառակում:

Գյուղացիներից լրացնում եմ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» հարցերի մի մասը, և անասելի հոգնում եմ: Բայց ցանկանում եմ գնալ նաև Ջամբուլի մարզ, այնտեղ՝ մարզկենտրոն Ջամբուլի[110] մոտ՝ Սվերդլովի շրջանի Ռովնոյե[111] բնակավայրում մի 40 տուն աքսորված համշենցիներ կան, մարզի այլ գյուղերում ևս[112], սակայն հյուրընկալներս, տեսնելով իմ

---

[110] Ջամբուլի մարզը (1993-ից՝ Ժամբըլի մարզ, ղազ. Жамбыл облысы, ռուս.՝ Жамбылская область) 144 հազ. քառ. կմ է, գտնվում է Ղազախստանի հարավում, կենտրոնը՝ Ջամբուլ (1997-ից՝ Тараз Թարազ) քաղաքը 1936-1938 թթ. կոչվել է Միրզոյան, ի պատիվ Լևոն Միրզոյանի (1897, Արցախ, գ. Աշան-1939, Մոսկվա), որը 1926-1929 թթ. Ադրբեջանի կոմկուսի ԿԿ առաջին քարտուղարն էր, 1933-38 թթ.՝ Ղազախստանի: Նրա օրոք է 1936 թ. Ղազախստանը դարձել միութենական հանրապետություն, հաջորդ տարի ընդունել նրա մշակած Սահմանադրությունը: Նրա կինը Հովհաննես (Իվան) Թևոսյանի քույրն էր:

[111] Սվերդլովի շրջանի Свердловский район (1995 թ. անվանափոխվել է Байзакский район - Բայզակի շրջան) Ровное Ռովնոյե (1997-ից՝ Бурыл Բուռիլ) բնակավայրը (аул աուլ) գտնվում է մարզկենտրոն Թարազից 10 կմ հյուսիս: Անցած տասնամյակների ընթացքում այն մեծացել է, և 2016 թ. տվյալներով այնտեղ ապրում էր 12 631 մարդ, որից 8120 ղազախ, 2530 թուրք-մսխեթցի, 854 ադրբեջանցի, 550 ռուս, 249 հայ (այսինքն՝ խեմշիլ, կրոնափոխ համշենցի), 71 քուրդ, 64 ուկրաինացի, 51 գերմանացի և այլն:

[112] Լենինգրադի Մարդաբանության և ազգագրության թանգարանի Միջին Ասիայի և Ղազախստանի բաժնի ղեկավար, պ.գ.թ., թյուրքագետ Վադիմ Կուրիլյովը (В. А. Прищепова, Вадим Петрович Курылёв (17.12.1928-26.02.2008), «**Этнографическое обозрение**», журнал, Москва, 2009, № 1, с. 188-190.) Ղազախստանի Ջամբուլի մարզում 1989 թ. իր կատարած ուսումնասիրությունների մասին գրել է. «Большой интерес представляет почти неизвестная этническая группа - хемшилы. Во время полевой работы осенью 1989 г. в Джамбулской области я впервые услышал название этой группы из уст информатора - курда Т.М.Тавли-оглы (1923 г.р.). Он сказал, что в 1944 г. были выселены из Батуми и его окрест-

հոգնությունը, համոզում են վերադառնալ Երևան, ասելով՝ «Դավային բարխան վար ցքօղը փուր մէ խօղն ա» («Ուղտին ժայռից ցած գցողը մի բուռ խոտն է», այսինքն՝ ուղտը ժայռի անհասանելի մասում աճած մի բուռ խոտին հասնելու համար այնքան է վիզը երկարում, որ ցած է ընկնում): Խորհուրդն այն է, որ գոհանամ հավաքածս նյութերով և ձեռքս չերկարեմ դժվարահաս գործի: Իսկապես, տպավորությունների տարափը, հեռավոր երկրներում ու վայրերում անծանոթ մարդկանց հետ շփումները, նրանց բարդ բարբառը, հավատալիքները, սովորույթներն ու ավանդույթները, հագուկապն ու նիստուկացը, հեքիաթնե-

---

ностей курды, а вместе с ними - турки (немного) и хемшилы. Язык общения последних - турецкий, но основной, «домашний» язык - армянский. Затем мне удалось встретиться с двумя молодыми хемшилами - Д. Э. Сарымамед-оглы и А.А. Сарымамед-оглы (оба 1960 г.р.). При знакомстве они сначала сказали, что являются турками, и только потом - что по паспорту - хемшилы. Хемшилы - выходцы из Турции, из г. Хемшина, провинции Ризе (Лазистан). В 1944 г. их родителей насильно выселили из Батуми. В настоящее время они живут в отделении Кумрата с. Ровного Свердловского района Джамбулской области. Там находится примерно 40 семей хемшилов, а всего в области – их 300-400. По словам хемшилов, из турецкого Хемшина вышло 5-6 фамилий, потомки которых и составляют в настоящее время данную этническую группу. Это Сарымамед-оглы, Бешли-оглы, Зулуф-оглы, Хаджи Дурсун-оглы (Дурсун в свое время совершил хадж в Мекку), Казаз-оглы, Джордан-оглы (есть такая фимилия и среди курдов). Представители всех указанных фамилий живут в настоящее время также в Турции. Турецкий язык хемшилов отличается от языка турок-месхетинцев. Вообще они мало общаются друг с другом, не обмениваются женами. Можно предполагать, что названные фамилии - семейно-родственные группы. К сожалению, у нас почти нет сведений о хемшалах», В. П. Курылёв, Некоторые малые этнические группы Южного Казахстана (греки, курды, турки, хемшилы). // **Материалы полевых этнографических исследований 1988-1989 гг**., Институт этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая, С. Петербургский филиал, С. Пб, 1992 (-179 с.), с. 29-30.

րը, երգերը, խաղիկներն ու պարերը մի զարմանալի, գույնզգույն գեղադիտակի նման պտտեցնում են գլուխս:

Տուն վերադառնալու ժամանակն է, մանավանդ որ Ղրղզստանում Սուլեյման Սալեհօղլիի հետ պայմանավորվել ենք, որ նա մայիսին կմեկնի Կրասնոդարի երկրամաս՝ Բելորեչենսկ ու Ապշերոնսկ, եղբոր և այլ համշենցիների հետ հունիսի 5–10–ին կգա Երևան: Նրանց պետք է ընդունել, Հայաստանի տարբեր շրջաններ ու գյուղեր տանել, որ իրենց համար բնակության վայր ընտրեն, իսկ ես նույնիսկ ավտոմեքենա չունեմ: Տեր Աստված, ինչպե՞ս եմ այդ ամենը կազմակերպելու…

Ջելալն ու ընկերներն ինձ ուղեկցում են Չիմքենդ, ջերմորեն հրաժեշտ ենք տալիս և ես մեկնում եմ Տաշքենդ, այնտեղից՝ Երևան:

Աստված մի դուռ փակում է, մի դուռ՝ բացում, կամ՝ ընդհակառակը

Երևանում՝ Կույրերի միավորման մշակույթի տանը (Ն. Տիգրանյան փ., 15), համշենահայերի ամենշաբաթյա հավաքների մասնակիցներին պատմում եմ Ղրղզստան և Ղազախստան աքսորված համշենցիների մասին: Հույս ունեմ, որ Աբխազիայից ու Կրասնոդարի երկրամասից Հայաստանում վերաբնակված քրիստոնյա համշենցիները, նաև Եղեռնի տարիներին Տրապիզոնի նահանգից այլ երկրներում ապաստանածների և Հայաստան ներգաղթածների սերունդները, որոնց մեջ շատ են հայրենասեր մարդիկ, ինձ կօգնեն: Նրանց՝ Կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահ Աբել Հակոբյանին, ՀՀ վաստակավոր արտիստ Մայիս Ղարագյոզյանին, զինեգործ գիտնականներ, կենսաբ. գիտ. դոկտոր Միսակ Մելքոնյանին և գյուղ. գիտ. թեկնածու Գեղամ Սնապյանին, ՆԳ պահեստի մայոր Միխայիլ Մինասյանին, սրտաբան, բժշկական գիտ. թեկնածու Ալեքսան Կալայջյանին, Հայկոոպի աշխատակից Գրիգոր Գունդակչյանին, լրագրող Կարլ Ցալանուզյանին, քեմենչեհար Նշան Ֆերմանյանին, մատենագետ Սաթենիկ Գեջյանին, Ջրային պաշարների օգտագործման և պահպանության պետկոմի աշխատակից Ասյա Խաչատրյանին, իրավաբան Անդրանիկ Քեշիշյանին, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Կարապետ Բոստանջյանին, զինվորական, մայոր Անդրանիկ Մաթուլյանին, երգիչ Ավետիս Քյոսեյանին, մյուսներին պատմում եմ

տեսած–լսածս: Քանիցս հավաքվում ենք, քննարկում մեր անելիքը: Ճշտում ենք՝ ովքե՞ր են օդանավակայանում դիմավորելու, ո՞ւր ենք տանելու, որտե՞ղ ենք հյուրասիրելու, որտե՞ղ է մեր համշենցիների պարախումբը նրանց հետ շուրջպար բռնելու և նման բազմաթիվ մեծ ու փոքր հարցեր: Անշուշտ, հյուրերի ներկայությամբ բոլորը պետք է խոսեն Համշենի բարբառով:

Հայաստանում նրանց բնակության վայրերի ընտրության համար տարբեր առաջարկներ են արվում: Ես 1978–1980 թթ. աշխատել էի Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության նախարար Ստեփան Վարդանյանի[113] օգնական, ուստի առաջարկում եմ, որ առաջինը տանենք Կալինինոյի (Տաշիր), Ստեփանավանի, Գուգարքի շրջանների մոլոկանների, ռուսների և ուկրաինացիների բազմազգ գյուղերը, որոնք անասնապահության, պանրագործության և գյուղատնտեսության համար հրաշալի, գեղատեսիլ վայրեր են: Կիրովական (Վանաձոր) քաղաքն էլ, որն ուներ հարյուր հազարից ավելի բնակչություն, շատ մոտիկ էր: Իմ առաջարկն ընդունվում է:

Մի կարևոր հանգամանք էլ կար. Ղրղզստանում և Ղազախստանում համշենցիների մեծ մասի երեխաները ռու-

---

[113] **Ստեփան Վարդանյան** (1923, Արտաշատի շրջ., գ. Ազատավան- 2011, Երևան), 1956-58 թթ. աշխատել է Կալինինոյի շրջկոմի առաջին քարտուղար, 1961-62 թթ.՝ Մթերումների նախարար, 1964-71 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1971-86 թթ.՝ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության նախարար, 1986-90 թթ.՝ Նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ: Հեղինակ է արձակ և չափածո մի քանի գրքերի:

սական դպրոցներ էին հաճախում: Այս գյուղերում նրանք մի քանի տարի իրենց կրթությունը կշարունակեին տեղի ռուսական դպրոցներում, մինչև որ քիչ թե շատ գրական հայերեն խոսել, հայերեն գրել-կարդալ կսովորեին: Նաև Աջարիան այդտեղից ավելի մոտ էր, կարող էին երբեմն այցելել իրենց հայրենի գյուղերը:

Բնակատեղիի ընտրությունից հետո մենք պետք է դիմեինք ՀԿԿ Կենտկոմ և Նախարարների խորհուրդ:

Խնդիրն այն էր, որ Ղրղզստանում և Ղազախստանում ինձ ասում էին, որ իրենք ցանկանում են Հայաստան տեղափոխվել իրենց գյուղական համայնքներով, որպեսզի ծնողներն ու առանձին ընտանիքներ կազմած զավակները, քույրերն ու եղբայրները, ազգականներն իրարից չբաժանվեն: Իսկ այդ դեպքում, այլազգի համագյուղացիները, իմանալով, որ խեմշիլները մեկնում են, շատ ցածր գին կտան նրանց տներին ու գույքին, այգիներին ու ընտանի կենդանիներին: Իսկ այդ ամենը նրանք վաստակել էին 40 տարվա տքնաջան աշխատանքով, անասելի զրկանքների ենթարկվելով: Այլ հարստություն նրանք չունեին, իսկ Հայաստանում նոր տունուտեղ հիմնելու, կենդանիներ ձեռք բերելու համար զգալի գումարներ էին պետք: Ուստի առաջարկում էին, որ Հայաստանի ղեկավարության միջնորդությամբ, Ղրղզստանի և Ղազախստանի իշխանությունները գնեն իրենց տներն ու ունեցվածքը կամ միջպետական պայմանավորվածությամբ իրենք դրանք այնտեղ հանձնեն իշխանություններին, Հայաստանում համարժեքը ստանան, ի վերջո, բոլորն ապրում են մեկ պետության

մեջ՝ ԽՍՀՄ–ում: Մի խոսքով, պետական աջակցություն է պետք:

Մենք պատրաստ սպասում ենք, բայց հյուրերը չկան: Նամակ եմ գրում Սուլեյման Սալեհօղլիին: Պատասխան չկա: Օրերն անցնում են: Զանգահարում եմ Հաբիբին: Տեղեկացնում է, որ Սուլեյման Սալեհօղլին լեռներում է, հենց իջնի, նրանից կիմանա, թե երբ են գալու, ինքն էլ նրանց կմիանա, ինչպես որ պայմանավորվել ենք:

Որոշում եմ այդ ընթացքում ձեռքերս ծալած չնստել: Աղլերում բնակվող գրող, երկարամյա մանկավարժ, թոշակառու Անդրանիկ Զեյթունյանի և Աբխազիայի Լեսելիձե (այժմ՝ Գաչրիպշ) գյուղի հայկական ութամյա դպրոցի տնօրեն Մանաս Դեմիրճյանի[114] հետ, իր մեքենայով հուլիսին ճանապարհվում ենք Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերի մոտ:

Նախորդ ճանապարհորդությունների ընթացքում, տարբեր գյուղերի հայերը, մանավանդ նրանք, որոնք մտահոգ էին իրենց զավակների հայեցի դաստիարակությամբ, ինձ ասում էին, որ եթե պետական աջակցություն լինի, իրենք սիրով կտեղափոխվեն Հայաստան: Հիմա, երբ Ղրղզստանից և Ղազախստանից ներգաղթի հարց պիտի բարձրացվի, մտածում էի՝ լավ կլինի, եթե քրիստոնյա և մահմեդական համշենցիներին միասին բնակեցնենք,

---

[114] Մանաս Դեմիրճյան (1924, Աբխազիա, Գագրայի շրջ., գ. Միկելրիփշ - 2006, Աղլեր), մանկավարժ, տնօրեն է աշխատել Գագրայի շրջանի Լեսելիձե (1992-ից՝ Գաչրիպշ) գյուղի թիվ 2 հայկական ութամյա դպրոցում, բանաստեղծ, գրական անունը՝ Հայ-Նորենց:

նույն բարբառով խոսողների հետ ապրելով, մահմեդական համշենցիները Հայաստանում իրենց խորթ չեն զգա:

Աբխազիայում շրջագայելուց հետո հասնում ենք Սոչիի ու Տուապսեի, Մայկոպի ու Կրասնոդարի շրջակա գյուղերը, վերադառնում ծովի ափ, գնում Նովոռոսիյսկ ու Անապա՝ Հայկաձոր, վերադառնում Ադլեր: Այդ ընթացքում շուրջ 100 ընտանիք ցուցակագրվում է: Եթե ավելի շատ բնակավայրեր այցելեինք, կամ գյուղերում մի քիչ երկար մնայինք, կարող էինք շատ մարդկանց հավաքագրել, բայց սկզբի համար այդքանն էլ բավական էր:

Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում կային մի շարք մեծահարուստ կոլտնտեսություններ, որոնց նախագահներին համոզում ենք, որ իրենց համագյուղացիների համար Հայաստանում հյուրատներ, հանգստյան տներ, պիոներական ճամբարներ կառուցեն, որպեսզի կապը հայրենիքի հետ ամրանա և Հայաստան գալիս հյուրանոցների ու ծանոթների դռները չբախեն, այստեղ սովորող ուսանողներն էլ վարձով չապրեն, այլ իրենց մշտական տեղն ունենան: Առաջարկս շատերն են հավանում, մնում է իրագործել:

Կրասնոդարի երկրամաս էի գնացել նաև մի կարևոր նպատակով՝ ծանոթանալու Ղրղզստանից և Ղազախստանից այնտեղ տեղափոխված համշենցիների հետ, ճշտելու նրանց գյուղերը, իմանալու՝ արդյոք նրա՞նք էլ կցանկանան Հայաստան գալ: Ապշերոնսկի շրջանում պարզում ենք, որ խեմշիլներ են վերաբնակվել Երիկ, Կու-

բանսկայա, Կալինին, Կիմ, Վպերյոդ, Միխայլովկա գյուղերում[115]:

Հուլիսի 15–ին Երիկ գյուղում հյուրընկալվում ենք Քյազիմ Թաթարօղլիի տանը: Թեև շինարարություն է ընթանում, տան պատերի հիմքերի շուրջը քանդել են, բայց տանտերը մեզ սիրով է ընդունում, մանավանդ որ իմանում է՝ ընդամենը 2–3 ամիս առաջ եմ Ղրղզստանում եղել: Ծնվել է 1914 թ. Գոնիոյում, 1944 թ., երբ եղբայրներն ու հորեղբոր տղաները ռազմաճակատում էին, նրանց ընտանիքներն աքսորել են Ղրղզստան՝ Օշի մարզ, Ուչ– Կորգոն գյուղ: Գոնիոյում երկհարկանի տուն ունեին, իրենց ընտանիքը 15 հոգի էր, աքսորի ժամանակ երկուսը մահացան՝ Աբդուլլան՝ 20 տարեկան, և Էմինան՝ 8 տարեկան: Ուչ–Կորգոնում անասնաբուծությամբ է զբաղվել: Այնտեղ էլ է երկհարկանի տուն կառուցել, բայց 1983 թ. մարտին տեղափոխվել է Երիկ գյուղ: Մեծ տուն չի, վեց հազար ռուբլով է գնել, հիմա ընդարձակում է, ամրացնում, 3000 քմ հող ունի: Առաջինը գործը, որ արել է, բակում սավքի է պատրաստել, որի վրա էլ նստում, զրուցում ենք: Ընտանիքը 11 հոգի է: Երեք աղջիկներն ամուսնացել են, գնացել, մեծ տղան՝ Էնվերը, 42 տարեկան է, վարորդ է, 6 երեխա

---

[115] Ըստ 2002 թ. մարդահամարի տվյալների, Կրասնոդարի երկրամասում բնակվում էր 1019 խեմշիլ (այդ թվում 10 խեմշին), տե՛ս **Итоги всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю** (в 13 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство. Официальное издание, Краснодар, 2005 (- 4 с.), с. 11, 16, 20, 446. Իրականում նրանք ավելի շատ են, գուցե կրկնակի շատ, սակայն շատերի անձնագրերում ազգությունը նշված է «թուրք», ուստի նրանք հաշվառված են որպես թուրք:

ունի: Մյուս տղան սովորում է 10–րդ դասարանում: Քյազիմն արդեն թոշակառու է, ասում է. «Աշխարէս մըթնա զու, լուսանա զու, մարթէ հալիվօրնա զու» (Աշխարհը մթնում է, լուսանում է, մարդը ծերանում է): Թեև իրեն հայ է համարում, բայց անձնագրում գրված է «թուրք»: 1978 թ. այցելել է Թուրքիա, Խոփայում շատ ազգականներ ունի:

Պատմում եմ, որ Ուչ–Կորգոնից Սուլեյման Սալեհօղլին պիտի եղբոր հետ Երևան գա: Ասում է, որ ջուրն ընկած մարդը մի բանից պիտի կառչի, ու ձեռքը զցում, բռնում է կողքին դրված գերանը: Նա ճիշտ է, համշենցիներն ալեկոծ ծովն ընկածների նման են, արդյոք կկարողանա՞նք նրանց օգնել: Չենք ուզում Քյազիմին խանգարել, մարդիկ շինարարությամբ են զբաղված, որոշում ենք շարունակել մեր ճանապարհորդությունը: Նա իր փոքրիկ թոռնուհու ձեռքը բռնած մեզ ուղեկցում է փողոց, այնտեղ հրաժեշտ ենք տալիս:

Գնում ենք Կիմ գյուղ: Բիբլիոտեչնայա փողոցում՝ մի տան մոտ, շինանյութ է թափված, բահով ավազ են խառնում: Տանտերը՝ Շուքրի Ֆեյզօղլին, հիսունի մոտ տղամարդ է, Կըզըլ–Կիյայից է, 1982 թ. դեկտեմբերին է տեղափոխվել: Կըզըլ–Կիյայում ապրել է Սպորտիվնայա փողոցում: Նա տասը երեխա ունի, հինգ տղա և հինգ աղջիկ, վեց թոռ: Այս տունը և 2500 քմ հողը ութուկես հազար ռուբլով է գնել: Կիմում ևս 9–10 ընտանիք համշենցիներ կան՝ Կարակչիօղլիներ, Թաթարօղլիներ, Քյոսօղլիներ: Իր անձնագրում «խեմշիլ» է գրված: Հայաստան գալու մասին ասում է՝ շուտ ասեիք, հիմա իրեն այստեղ լավ է զգում:

Բելորեչենսկի շրջանում ևս մի քանի գյուղերում՝ Պշեխսկայայում, Իվանովսկիում, Յուժնիում վերաբնակված խեմշիլներ կան:

Յուժնիում Մահմեդ Կարաիբրահիմովից, որը 1918 թ. ծնվել է Աջարիայի Սարփ (Սարփի) գյուղում, գրառեցի երկու խաղիկ.

Էլլիմ, էլլիմ, ի՞նչ էլլիմ,
Խաղուլիզ փազա էլլիմ,
Թուն ու նօարս էլլիս, անա,
Քու ձօցինէդ յէս էլլիմ:

* * *

Քա՛, քու մօյն ալ ախչօղ ում,
Քու դաղին ալ ախչօղ ում,
Թուն ու ռազի չէլլիս, անա,
Քէզի առնօղ – փախչօղ ում:

Պշեխսկայա ստանիցայում հանդիպում ենք Դուրսուն Բեշլինին (Բեշլիօղլի), արդեն ինը տարի է, ինչ ապրում է այստեղ, Ղազախստանի Ջամբուլի մարզից է:

Ասլան Բեշլիօղլին էլ ծնվել է Աջարիայում՝ Քոբուլեթում, 1944 թ. աքսորվել է: Պատմում եմ, որ Բեշլիօղլիների մասին ասում են, որ «համշենցի քուրդ» են:

– Ես բաշ–համշենցի եմ՝ խեմշիլ եմ, ես քուրդ չեմ,–ասում է նա,– բռնեցին աքսորի ժամանակ «թուրք» գրեցին:

Ղրղզստանում՝ Վալակըշ գյուղում[116] հովիվ է եղել, Ջամբուլի մարզում է ապրել, 1981 թ. եկել է Պշեխսկայա, չորս տղա և չորս աղջիկ ունի: Տունն ինը հազարով է առել: Ջամբուլից էլի երեք ընտանիք իր ազգականներից կան այս գյուղում՝ Մուհամմեդ, Հուսեյին և Իսքանդար Բեշլիօղլիները:

Պշեխսկայա ստանիցայի Սադովայա փողոցում հանդիպում ենք Սարիյե Կարաիբրահիմովային, նաև Չիրկինոյից տեղափոխված մի քանի կնոջ, որոնք ասում են, որ գյուղում էլի Կարաիբրահիմովներ կան, չորս տուն՝ Չիրկինոյից, վեց տուն՝ Ղրղզստանից: Նրանց ցույց եմ տալիս Չիրկինոյում իմ արած լուսանկարները, շատ են հուզվում: Սարիյեն հատ–հատ համբուրում է նկարները, աչքերից արցունք է գալիս: Խնդրում է իրեն տամ: Տալիս եմ:

Պշեխսկայայի խանութում զրուցում ենք վաճառողուհի Ամալյա Չլայյանի հետ: Նա 19 տարեկան է: Հարցնում եմ՝ Մայկոպի խուլ անտառներում գտնվող Տուբի գյուղում բնակվող զուռնաչի Բորիս Չլայյանն իր ի՞նչն է[117]: Զարմանում է, որ ճանաչում եմ, պարզվում է՝ հորեղբայրն է: Ամալյայից հետաքրքրվում եմ, թե ինչպես են իրենք՝ քրիստոնյա համշենցիները, վերաբերվում նոր եկած խեմշիլներին:

[116] Վալակըշ (Валакыш) գյուղը գտնվում է Բատկենի մարզի Կադամժայի շրջանում:

[117] Բորիս Չլայյանի (Չելայյան) հետ ծանոթացել եմ 1981 թ., Կրասնոդարի երկրամասի համշենցիների գյուղերով ճանապարհորդելիս, տե՛ս «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ», «**Գարուն**», ամսագիր, 1982, № 11, էջ 62-73, նրա մասին՝ էջ 72-ում: Նույն ուղեգրությունը տե՛ս նաև «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2012, № 7-8, էջ 5, տպագրվել է նաև Բ. Չելայյանի լուսանկարը:

Ասում է, որ իր ամենամոտիկ ընկերուհին՝ Նիզաֆետ Կարահիբրահիմովան, խեմշիլ է, հիմա կգա խանութ: Եվ իրոք, շուտով գալիս է Նիզաֆետը, որը սովորում է Մայկոպի Թեթև արդյունաբերության տեխնիկումում, դերձակ պիտի դառնա: Ինքն ու Ամալյան շատ են ուզում հայերեն տառերը սովորել, փորձել են, բայց օգնող չկա: Երկուսն էլ երազում են ընդունվել Երևանի ժողտնտեսության ինստիտուտի առևտրի էկոնոմիկայի և ապրանքագիտության ֆակուլտետ: Բայց առանց մեկը մյուսի չեն գա Հայաստան: Տեղում որոշում ենք՝ քանի որ Աղլերում, ընդհանրապես, տարածաշրջանում հայերեն գրամեքենա չկա, ուստի ես Երևանում Անդրանիկ Զեյթունյանի և իմ անունից դիմումներ կգրեմ, կմեքենագրեմ ու կուղարկեմ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լյուդվիգ Ղարիբջանյանին, կխնդրեմ, որ բացառության կարգով աջակցի նրանց, նաև կրոնափոխ համշենցիների այլ երեխաների: (Ես դիմումները գրում եմ, քանիցս գնում–գալիս եմ նախարարություն, սակայն հարցը չի լուծվում այն պատճառաբանությամբ, որ արտամրցութային տեղեր կարող են հատկացվել միայն մանկավարժական բուհերում):

Երևան վերադարձից հետո պարզվում է, որ դեռ Սալեհօղլիից նամակ չկա, զանգահարում եմ Ղրղզստան, ի վերջո ծանոթներիցս տեղեկանում եմ, որ հսկայական խոյն իր ծանր եղջյուրներով ուժեղ հարվածել է Սուլեյման Սալեհօղլիի կրծքավանդակին՝ ջարդել, որից նա մահացել է:

Բոլորս շատ ենք ցավում, հատկապես ես, որ անձամբ ճանաչում էի նրան:

Երբ կորած համշենահայերի հետքերով 1984 թ. ապրիլին մեկնում էի Ղրղզստան և Ղազախստան, չգիտեի, որ Սոչիում բնակվող ազգագրագետ Բարունակ Թոռլաքյանը[118] 1967 թ. դեկտեմբերին Բաթումում հանդիպել է իրենց գյուղերը վերադառնալու հարցով Կենտրոնական Ասիայից եկած համշենցիների: Նրանց հետ պայմանավորվել է, որ Հայաստանում վերաբնակվելու հնարավորություններն ուսումնասիրելու համար ներկայացուցիչ ուղարկեն Երևան: 1968 թ. պատվիրակը՝ Դուրսուն Կարաբաջակովը (Ալթուն բաջաք) եկել է, նշանավոր արձակագիր Սերո Խանզադյանը շատ ջանքեր է գործադրել, բայց այլևայլ պատճառներով խնդիրը չի լուծվել: Այդ ամենի մասին ոչինչ չէր հրապարակվել:

Բարունակ Թոռլաքյանը 1967 թ. Բաթումում հանդիպելով կրոնափոխ համշենահայերին, նրանցից գրի է առել տասնմեկ խաղիկ, որոնցից վեցը հրատարակվել է 1972 թ. «**Բանբեր Երևանի համալսարանի**»[119] հանդեսում, նույնը՝ որոշ շտկումներով, նաև 1986–ին «**Նշխարներ Համշենի և**

[118] **Բարունակ Թոռլաքյան** (1899, Տրապիզոնի գավառ, գ. Կյուշանա - 1987, Սոչի), 1918-ից ապրում էր Սոչի քաղաքում: Եղել է մանկավարժ, ծխախոտագործ և այլն: Գրել է «Համշենահայերի ազգագրությունը» (1982) գիրքը, ժողովել, կազմել և ծանոթագրել է «**Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության**» ժողովածուն (1986): Համշենահայության նվիրված մի շարք արժեքավոր հոդվածների հեղինակ է:

[119] **Բ. Թոռլաքյան**, Պատառիկներ համշենահայերի և Տրապիզոնի ժողովրդական բանահյուսությունից, «**Բանբեր Երևանի համալսարանի**», քառամսյա հանդես, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1972, № 2 (17), էջ 183:

Տրապիզոնի բանահյուսության»[120] ժողովածուում, իսկ դրանցից հինգը և ավելացրած ևս հինգը՝ 1984 թ. «**Սովետական Հայաստան**»[121] ամսագրում:

Սակայն, հավանաբար գրաքննության կամ այլ պատճառներով **երեք հրապարակումներում էլ նա բացարձակապես չի անդրադառնում 1944 թ. Աջարիայից կրոնափոխ համշենցիների Կենտրոնական Ասիա աքսորին**, այնտեղից պատվիրակների Բաթում գալուն և նրանցից խաղիկներ գրառելու հանգամանքներին, այլ խուսափողաբար գրում է «մահմեդական համշենահայեր»[122] կամ «խոփացի համշենահայեր»[123], «գրի է առել Բ. Գ. Թոռլաքյանը 1967 թ. Բաթումում»[124]:

1971 թ. Սերո Խանզադյանն իր կազմած և խմբագրած «Ձայն համշենական» ժողովածուում տպագրված «Համշենցի հայերի մոտ»[125] 53 էջանոց ընդարձակ ուղեգրութ-

---

[120] Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թոռլաքյանը**, Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1986 (- 2 էջ + քարտեզ), էջ 90-92:

[121] **Բարունակ Թոռլաքյան**, Խոփացի համշենահայերը, «**Սովետական Հայաստան**», ամսագիր, Երևան, 1984, № 8, էջ 28, 29:

[122] **Բ. Թոռլաքյան**, Պատառիկներ համշենահայերի և Տրապիզոնի ժողովրդական բանահյուսությունից, «**Բանբեր Երևանի համալսարանի**», էջ 183:

[123] **Բարունակ Թոռլաքյան**, Խոփացի համշենահայերը, «**Սովետական Հայաստան**», էջ 28: Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թոռլաքյանը**, էջ 90, 91, 246:

[124] Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թոռլաքյանը**, Երևան, 1986, էջ 246:

[125] Ձայն համշենական, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանզադյանը, Երևան, 1971 (- 248 էջ), էջ 3-56:

յան մեջ պատմում է 1967 թ. մարտի վերջին և ապրիլի սկզբին Կրասնոդարի երկրամաս և Աբխազիա կատարած ճանապարհորդության մասին, և ընդամենը մեկ պարբերությամբ է անդրադառնում Բաթումի մոտակայքում՝ թուրք– խորհրդային սահմանի մոտ բնակված մահմեդական հայերին. «Մահմեդական հայերի մի մասն էլ, որոնք իրենց թուրք չէին համարում, այլ համշենի, բնակվում էին թուրք–սովետական սահմանից այս կողմ, Բաթումի շրջակա լեռներում: Դրանցից էին Կոնիա, Բերա, Թոփրակ և այլ գյուղերը: Սրանք հմուտ ծխախոտագործներ ու թեյագործներ էին՝ հայկական նիստ ու կացով, հայերեն խոսող, ապրող»[126]: Նա նույն էջում՝ տողատակում ծանոթագրում է. «Նրանց անձնագրերի «ազգություն» հարցի դիմաց գրված է Համշենի»:

Ինչպես համոզվում ենք, ոչինչ չի ասվում 1944 թ. աքսորի մասին: Գուցե պատճառը խորհրդային գրաքննությո՞ւնն էր:

Երեք տարի անց հրատարակված «Հայկական սովետական հանրագիտարանում» Աջարիային նվիրված հոդվածի «Հայերն Աջարիայում» բաժնում կարդում ենք. **«Աջարական Ինքնավար Հանրապետության տերիտորիայում բնակվում են մեծ թվով հայեր, որոնց նախնիները հիմնականում համշենցիներ են**: Նրանք հոծ խմբերով եկել են Սև ծովի Կովկասյան ափերը XVIII դ. սկզբներին, երբ Համշենում սկսվել են բռնություններ իսլամը տարածելու

---

[126] Ձայն համշենական, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանզադյանը, էջ 11:

նպատակով: Համշենահայության հոսքը Ա[ջարիա] ավելի ուժեղացավ 1860–ական թթ. և հատկապես 1877–78–ի ռուս– թուրքական պատերազմից հետո, երբ Սև ծովի Կովկասյան ափերն անցան Ռուսաստանին: Հայերի նոր խմբեր այս վայրերում հաստատվեցին 1–ին համաշխարհային պատերազմի ժամանակ, որոնք գաղթել էին Բիլթլիսից, Մուշից, Տրապիզոնից, Արդվինից»[127]:

Այս հատվածից այդպես էլ չի հասկացվում, թե հեղինակները «համշենցիներ» ասելով նկատի ունեն քրիստոնյաների՞ն, թե՞ իսլամներին: Եթե իսլամներին, ապա հանրագիտարանի հրատարակությունից ուղիղ 30 տարի առաջ նրանք աքսորվել էին, իսկ եթե քրիստոնյաներին, ապա ոչ թե **Աջարիայի** հայերի մեծ մասի, այլ **Աբխազիայի** հայերի մեծ մասի նախնիներն են համշենցիներ:

Աջարիայի կրոնափոխ համշենցիների աքսորի մասին ոչ մի խոսք չկա նաև ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1982 թ. հրատարակած Բարունակ Թոռլաքյանի «Համշենահայերի ազգագրությունը» գրքում, թեև հեղինակը հատ–հատ համառոտ անդրադառնում է նրանց 5 գյուղերին. «Առաջին համաշխարհային պատերազմից ու Ռուսաստանում քաղաքացիական կռիվներից հետո, Սովետական Միության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի համաձայն, Խոփայի շրջանի մահմեդականացած համշենահայերի բնակավայրերի մեծագույն մասը Խոփա կենտրոնով մնաց թուրքական սահ-

---

[127] **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 1, Երևան, 1974 (- 720 էջ), էջ 522:

մանում և միայն մի քանի գյուղեր՝ սովետական սահմանում (Բաթումի շրջան), որոնք հետևյալներն են.

Գըզըլ–թոփրաքը գտնվում է Բաթումից 4 ժամ հեռու, Ճորոխ գետի արևմտյան ծովափնյա երկրամասում: Բնակիչները 20 տուն մահմեդականացած համշենահայեր ու շուրջ 80 տուն քրդեր են:

Չարնալի կամ **Ճառնալը** Գըզըլ–թոփրաքից դեպի հարավ, խիստ լեռնային գյուղ է 30 տուն մահմեդականացած համշենահայեր՝ Գարաքչի–օղլի, Քյոս–օղլի, Ֆեյզ–օղլի, Միլիշ–օղլի, Դավիթ–օղլի և այլ ազգատոհմերից: Գարաք––օղլի Իբրահիմի վկայությամբ, իրենց նախնիները կոչվել են Գարաքյաններ, իսկ Քյոս–օղլիները՝ Քյոսյան, Դավիթօղլիները՝ Դավիթյան և այլն:

Գոնիո: Գըզըլ–թոփրաքից դեպի Խոփա լեռնային մահմեդականացած համշենահայերի գյուղ է, 50 տուն բնակչությամբ, մեծ մասը Գարաբաջաք–օղլի, Մարաշ–օղլի, Գարաիբրահիմ–օղլի ազգատոհմերից:

Գարաիբրահիմ–օղլի Իսակի ու նրա հորեղբայր 80–ամյա Ահմեդի վկայությամբ, նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել ու մինչև այսօր էլ համագյուղացիք նրանց Ճերմակցի են անվանում:

Կորիաթ: Գոնիոյի հարավից սահմանակից գյուղ, ուներ 30 տուն բնակչություն՝ Թաթար–օղլի, Թանթ–օղլի, Սալեհ–օղլի և այլ ազգատոհմերից:

Ավքա: Կորիաթին սահմանակից փոքր գյուղ, 8 տուն բնակչությամբ, Ալբոյուք–օղլի, Սարխոշ–օղլի ազգատոհմերից»[128]:

Ինչպես տեսնում ենք, գյուղերի նկարագրությունը տրված է ներկա ժամանակով և չի նշված, որ 1944 թ. հետո այդ բնակավայրերում պատկերն այլ էր: Տպավորությունն այնպիսին է, թե համշենցիները շարունակում են ապրել այդ գյուղերում: Կրկի՞ն գրաքննությունն է պատճառը: Չգիտեմ, չեմ կարող ասել:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում փնտրում–գտնում եմ հեղինակի ձեռքով 1959–69 թթ. գրված տետրը[129], որտեղ նույն հատվածն է: Բնագրում էլ ոչինչ չի ասված 1944 թ. աքսորի մասին: Գուցե գործել է «ներքին գրաքննությո՞ւնը», ինչը շատ տարածված էր Խորհրդային Միությունում. հեղինակները պարզապես չէին գրում այն, ինչը կարծում էին արգելված է կամ չի տպագրվի:

1958 թ. ԽՍՀՄ ԳԱ Ն.Ն. Միկլուխո–Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի հրատարակած «ԽՍՀՄ ժողովուրդներ» տեղեկատուում ևս չի նշված, որ «хемшин»–ները աքսորվել են, այլ այնպես է ներկայացված, կարծես

---

[128] **Բարունակ Թոռլաքյան**, Համշենահայերի ազգագրությունը // Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 13, Երևան, 1982 (- 156 էջ + IX էջ լուսանկարներ և գծանկարներ), էջ 30:

[129] ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, **Բ. Թոռլաքյան**, Համշենահայերի և պոնտահայերի ազգագրական նյութեր (Խարբերդ և Սեբաստիա), մաս II, 1959-1969 թթ., № 43, ձեռագիր տետր № 182, 37 թերթ, թերթ 54-55:

նրանք դեռ բնակվում են Վրաստանում. «Небольшая компактная группа армян хемшинов живет в западной Грузии»[130] («Հայ խեմշինների ոչ մեծ, հավաք խումբ է ապրում արևմտյան Վրաստանում»):

Ղրղզստանից և Ղազախստանից վերադարձից հետո, երբ պատրաստվում էինք ընդունել հյուրերին, ես խոսեցի Սերո Խանզադյանի հետ, որին ծանոթ էի դեռ 1978 թվականից, երբ աշխատում էի «**Պիոներ կանչում**»[131], նա նույնիսկ 1982 թ. «**Գրական թերթում**»[132] գրախոսել էր իմ «Հրեղեն ձին»[133] բանահյուսական ժողովածուն: Նրան ներկայացրեցի իմ ուղևորության կարևոր մանրամասները: Իսկ Կրասնոդարի երկրամասում ճանապարհորդության ընթացքում Սոչիում այցելեցի Բարունակ Թոռլաքյանին: Նրան էլ պատմեցի Ղրղզստանի և Ղազախստանի համշենցիների հետ պայմանավորվածությունների մասին, ասացի, որ ցանկանում եմ կրոնափոխ համշենցիներին նվիրված ուսումնասիրություն գրել: Իմ խնդրանքով նա, օգտագործելու նպատակով, ինձ տվեց Սերո Խանզադյանին գրած իր նամակների կրկնօրինակները: Այնուհետև,

---

130 Народы СССР. Краткий справочник, Институт этнографии им. Н.Н. Миклухо-Маклая АН СССР, изд. Академии Наук СССР, Ленинград, 1958 (- 44 с.), с. 12.

131 **Սերո Խանզադյան**, Բանահյուսությունը հզոր զանձ է, զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «**Պիոներ կանչ**», 1978, հուլիսի 14, № 56:

132 **Ս. Խանզադյան**, Փրկված մասունքներ, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 1982, փետրվարի 19, № 8, էջ 2:

133 **Հրեղեն ձին**, մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, գիտ. խմբագիր՝ բ.գ.դ. Սարգիս Հարությունյան, խմբագիր՝ Դավիթ Հովհաննես, նկարիչ՝ Նիկոլայ Մանուկյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981 (- 240 էջ):

երբ 1984 թ. դեկտեմբերի 12–ին Ղազախստանից անսպասելի եկան Ջելալ Կարաիբրահիմովն ու Քյազիմ Կարաիբրահիմովը, ես նրանց ծանոթացրեցի Ս. Խանզադյանի հետ և նա մեզ շատ օգնեց: Մանավանդ որ մենք անպատրաստ էինք:

Բայց ամեն ինչ հերթով: Ուրեմն, դեկտեմբերի 12–ի առավոտյան՝ առավոտյան ժամը 6–6.30–ի կողմերը, ինձ զանգահարեց Ջելալը և ասաց, որ Քյազիմի հետ Երևանի օդանավակայանում են: Դժվար է նկարագրել այն ցնցումը, որ ես ապրեցի: Մենք նրանց սպասում էինք գարնանը կամ ամռանը, այս ձյուն ձմեռով, այն էլ 1984–ի բացառիկ ցուրտ ձմռանը նրանց ո՞ւր պիտի տանենք: Շտապ գնում եմ, բերում մեր տուն:

Պարզվում է, որ սուխումցի լուսանկարիչ Վովա Յայլյանը որոշել է ինքնագլուխ զբաղվել Ղրղզստանի և Ղազախստանի համշենցիներին Հայաստանում վերաբնակեցնելու հարցերով: Ինչ–որ մեկը գումար է տվել, և Վովան առանց ինձ կամ հայաստանաբնակ համշենցիների ձևավորված խմբին տեղեկացնելու մեկնել է Կըզըլ–Կիյա: Հաբիբ Քոշանիձեն մերժել է գալ Երևան, ասելով, որ Ջելալի հետ պայմանավորվել են դպրոցականների գարնանային կամ ամառային արձակուրդների օրերին գնալ: Վովան պատճառաբանել է, որ այդ ամիսներին ինքը խիստ զբաղված է, միայն ձմռանն է ազատ: Իմանալով Ջելալի հասցեն, մեկնել է Ղազախստան, Ջելալին ու Քյազիմին, որոնց ծանոթ չէր, ասել, որ Հայաստանում իրենց են սպասում: Գյուղացիներից ստորագրություններ են հավաքել,

եկել են Տաշքենդ, բայց այնտեղ Վովային կորցրել են: Էլ հետ չեն գնացել, թռել են Երևան:

Ինչևէ: Զանգահարեցի Սերո Խանզադյանին: Կանչեց Նորքի իր առանձնատուն, որտեղ քանիցս եղել էի: Զրուցեցինք, հյուրերն ասացին, որ հինգ օրով են եկել: Ս. Խանզադյանը հիշեց, թե ինչպես են տարիներ առաջ կրկին փորձել Ղրղզստանից համշենցիների բերել Հայաստան: Այնուհետև Ջելալին ու Քյազիմին տեղավորեցինք «Անի» հյուրանոցում: Երևանի համշենցիների խմբի հետ երեկոյան հյուրանոցի ռեստորանում կազմակերպեցինք հյուրասիրություն: Վերջապես, ինչպես ասում են, Ջելալի ու Քյազիմի երեսների գույնը բացվեց, նրանք հարազատ, ջերմ միջավայրում էին, որտեղ բոլորը խոսում էին Համշենի բարբառով:

Անակնկալ հայտնվեց Վովան, և պարզվեց, որ նրա և այստեղի համշենահայերի միջև տարիներ տևած հակամարտություն կա: Նրան մեղադրեցին, որ միշտ շրջանցում է իրենց, և այժմ էլ, տուրք տալով փառասիրությանը, փորձել է առաջ ընկնելով, Հայաստան բերել կրոնափոխ համշենցիներին, այնինչ իրենք այդ ամենը նախատեսել են եղանակների տաքանալուց, բնության զարթոնքից հետո: Ասում էին՝ եթե հայրենասեր ես, նախ ինքդ արի, Հայաստանում ապրիր, հետո ուրիշներին առաջարկիր:

Իսկապես, վտանգվել էր կարևոր նախաձեռնությունը, որի մասին ես էի Վովային պատմել մայիսին, երբ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում անցկացվող ազգագրական երգի–պարի փառատոնին բերել էր Մայկոպի

շրջանի Ցվետոչնի գյուղի ջնիկցիների «Ջնիկ» և Պրոլե-տարսկի գյուղավանի տրապիզոնցիների «Թրթռուկ» պա-րախմբերը[134]: Անշուշտ, ցավալի է, որ ազգային կարևոր ծրագրեր իրագործելու ժամանակ ծագում են անձնական մանր ու մեծ խնդիրներ ու շահագրգռություններ, որոնք, ի վերջո, ձախողում են բոլորի համար ցանկալի գործը: Բայց այդ ամենի մասին այստեղ չեմ պատմի:

Հաջորդ օրերին Կույրերի միավորման մշակույթի տան դահլիճում Ջելալին ու Քյազիմին ծանոթացրեցի բազմա-թիվ համշենահայերի հետ, կրկին զրուցեցին բարբառով, դիտեցին մեր պարախմբի շուրջպարերը, եղան Մատենա-դարանում, ժողովրդական երգերի հայտնի գիտակ և կա-տարող Հայրիկ Մուրադյանի տանը, մեր տանը, որտեղ հասցրեցի Ջելալից գրառել մի զվարճալի հեքիաթ՝ «Շաշէ»:

Մշակույթի նախարարության ժողստեղծագործության և կուլտուր–լուսավորական աշխատանքի հանրապետա-կան գիտամեթոդական կենտրոնում 1980 թ. ստեղծվել էր հայաստանաբնակ համշենահայերի «Համշեն» հասարա-կական ակումբը[135], որի ղեկավարը Միխայիլ Մինաս-յանն[136] էր, հանդիպեցին ակումբի անդամների հետ: (Ի

---

[134] **Ս. Վարդանյան**, Ավանդույթի հեղինակը ուսանողներն են, «**Հայաս-տանի աշխատավորուհի**», ամսագիր, Երևան, 1984, № 7, էջ 31, 32, շապիկի 4-րդ էջ:

[135] Ակումբի գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս **Մուսա-յել Գալոյան**, Մեր համշենահայ եղբայրների հետ, «**Ձայն համշե-նական**», ամսաթերթ, Երևան, 2005, № 11-12, էջ 2, 3, 2006, № 1-2, էջ 1, 2:

[136] **Միքայել, Միխայիլ** (**Մկրտիչ**) **Մինասյան** (1913, Տրապիզոնի նահ., Օրդուի գավ. - 1992, Երևան), 1913 թ. ծնողների հետ տեղափոխվել է Աբխազիայի հայկական Ութհարյուր գյուղ: Աշխատել է Գագրայի շրջ-

դեպ, Միխայիլ Մինասյանի նախաձեռնությամբ հայաստանաբնակ համշենահայությունը 1967 թ.–ից տոնական առիթներով՝ մարտի 8–ի և այլն, պարբերաբար հավաքվում էր, խնջույքներին մասնակիցների թիվը հասնում էր մի քանի հարյուրի, գալիս էին նույնիսկ Կրասնոդարի երկրամասից և Աբխազիայից):

Երևանում գտնվելու մի քանի օրերը շատ հագեցած էին, լավ է, որ ես չէի աշխատում և կարող էի հյուրերով զբաղվել: Հայերիս դարավոր փորձառությունը, թե՝ «Չկա չարիք՝ առանց բարիք», կրկին հիշեցնել տվեց: Բանն այն է, որ «Պիոներ» ամսագրի գլխավոր խմբագիր, սովետահայ ճանաչված կին գրող Անահիտ Սահինյանը (1917–2010), երբեմն–երբեմն գործի գալիս ինձ նույն հաճախականությամբ հիշեցնում էր, որ Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի համշենահայերի գյուղեր գնալու պատճառով հուլիս ամսին մեկ շաբաթ բացակայել եմ: Անկեղծ ասած, թեթև աշխատանք էր, 10 հոգով հրատարակում էինք 32 էջանոց մի փոքրիկ ամսագիր, և ազատ ժամանակ շատ ունեինք, բայց պետք է խմբագրությունում գամվեինք և օր մթնացնեինք: Մեկնելուց առաջ, ինչպես միշտ ամսագրի նոր համարը տարել էի Ծաղկաձորի Գրողների հանգստյան տուն, որտեղ ամիսներ շարունակ բնակվում և ստեղծագործում էր Ա. Սահինյանը: Պատրաստածս համարը

խորհրդի նախագահի տեղակալ, ԴՕՍԱԱՖ-ի նախագահ: 1945-ից բնակվել է Երևանում, 1970 թ. կենսաթոշակի է անցել ՆԳ մայորի կոչումով: Համշենահայության մասին մի քանի գիտական հոդվածների հեղինակ է, 1990 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել նրա «**Армяне Причерноморья**» (- 164 с.) ուսումնասիրությունը:

հավանել էր և տպարան ուղարկելու համաձայնություն տվել, բայց արձակուրդ վերցնելու կամ իմ հաշվին մեկ շաբաթ բացակայելու խնդրանքս մերժել էր, ասելով, որ սպասեմ մինչև ինքը Ծաղկաձորից կվերադառնա, իսկ դա շուտ չի լինի: Դե ես էլ չէի կարող մեծ դժվարություններով ձեռք բերված պայմանավորվածություններս խախտել, ուստի մեկնեցի Աղլեր: Եվ երբ այդ մասին նրա անհարկի հիշեցումներն ինձ զայրացրեցին, ես աշխատանքից ազատման դիմում գրեցի, ինչը Ա. Սահինյանի համար շատ անակնկալ էր, ի վերջո համոզվելով, որ որոշումս վերջնական է, 1984 թ. հոկտեմբերի 16–ին ազատվեցի պատասխանատու քարտուղարի պաշտոնից[137]:

Դեռևս նոր աշխատանք չէի գտել և կարող էի հյուրերին օգնել ծանոթանալու Հայաստանի պայմաններին: Ս. Խանզադյանը զանգահարեց մի քանի շրջանների ղեկավարների, որոնք կամ տեղում չէին կամ կրոնափոխ համշենցիների մասին երբեք չէին լսել և հարցը պետք է վերադասի հետ համաձայնեցնեին:

Այդ օրերին Մեղրու կուսշրջկոմի առաջին քարտուղար Ալբերտ Վարդանյանը Երևանում էր: Նա առաջարկեց մեկնել Մեղրու Վահրավար գյուղ, որը շատ հարմար էր գյուղատնտեսության և անասնապահության համար, բայց, ցավոք, դատարկվում էր: Մեքենայի հարցն արագ լուծվեց: Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների

[137] Այս միջադեպը հիշատակվում է նաև «**Պիոների**» (1991-ից՝ «**Աղբյուր**») խմբագրությունում աշխատելու տարիների մասին Շուշան Ղազարյանի «Երջանիկ օրեր էին, անցան, գնացին…» հոդվածում, «**Աղբյուր**», ամսագրի 100-ամյակին նվիրված համար, Երևան, 2023, էջ 9:

պետական կոմիտեի նախագահ Ստեփան Պողոսյանը մեզ տրամադրեց «ՌԱՖ» փոքր ավտոբուս:

Երևանից Մեղրի ճանապարհը շուրջ 370 կմ էր, համեմատաբար կարճ՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքով՝ շուրջ 260 կմ էր, բայց այնտեղով գնալու համար անհրաժեշտ էր հրավեր կամ գործուղման փաստաթուղթ ունենալ, որ բնակության վայրի ՆԳ բաժինը անցաթուղթ տար:

Ալբերտ Վարդանյանի միջնորդությամբ Նախիջևանի սահմանին զինվորականներից անցագիր ստանալով գնացինք մինչև Մեղրու սահման, այնտեղ էլ անցաթուղթ ստացանք: Այս կարգը հյուրերին դուր չեկավ, նաև այն, որ ճանապարհը տեղ–տեղ անցնում էր սահմանամերձ գոտով և երևում էին փշալարերն ու սահմանապահների դիտաշտարակները:

Մեղրիում հանգրվանեցինք հյուրանոցում և անմիջապես գնացինք Վահրավար, որը 6 կմ հյուսիս–արևմուտքում էր: Հին, գեղեցիկ գյուղ էր, հիշատակվում էր դեռևս 14–րդ դարում, կային 16–րդ դարի տապանաքարեր, 17–րդ դարի եկեղեցի, մի խոսքով, ավանդական հայկական գյուղ էր, որի բնակիչները, ցավոք, տեղափոխվում էին Ագարակ, Մեղրի, այլ քաղաքներ:

Կոլտնտեսության նախագահ Սարգիս Առաքելյանը մեզ էր սպասում: Համարյա տարեկիցներ էինք, մեկ տարի էր փոքր, ծնվել էր 1953 թ.: Հիշեցնում է, որ Երևանում, ուսանողական տարիներին ինչ–որ առիթով ծանոթացել ենք: 1976 թ.–ից նախագահ է: Վահրավարում մի քանի

տասնյակ մարդ է մնացել, ընդամենը երկու երիտասարդ կա, մեկը ինքն է, մյուսը՝ վարորդը, երեք երեխա կա, երկուսը իրենն են, մեկը՝ վարորդինը: Իր մեծն էլ Ագարակում է մանկապարտեզ գնում:

Ջելալն ու Քյազիմն ասում են, որ իրենք գյուղը շատ հավանեցին, բայց, կարծում են, որ իրենց հայրենակիցները չեն ցանկանա Իրանի սահմանին այդքան մոտ ապրել:

Հաջորդ օրը զբոսնում ենք Մեղրիում: Երևանում ցուրտ ձմեռ է, բայց այստեղ ձյուն չկա, արև է: Գեղեցիկ բերդապարիսպներով ու եկեղեցիներով, նախորդ դարերի խնամքով ու ճաշակով կառուցված առանձնատներով զարդարված այս քաղաքը, որը շուրջ 4 հազար բնակիչ ունի, հյուրերս շատ են հավանում, մանավանդ որ այն ծովի մակերևույթից ընդամենը 605 մետր է բարձր և թուզ, նուռ ու արքայանարինջ (կորոլյոկ) է աճում:

Գնում ենք Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի Մեղրու մասնաճյուղ, որը մեկ տարի առաջ է բացվել: Տնօրենը՝ Ավագ Հայրապետյանը, իմ ընկերներից է, նկարիչ–դիզայներ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, կնոջ՝ նկարչուհի Աղել Հայրապետյանի հետ Երևանից եկել են և արդեն բավականին գործ են արել, 200 երեխա են հավաքել, որոնք սովորում են նկարչության, քանդակի, ասեղնագործության, կարպետագործության, հայկական ժողովրդական նվագարանների, պարի, թատերական և այլ խմբերում: Ջելալն ու Քյազիմն ասում են՝ ի՜նչ լավ կլիներ, որ իրենց երեխաներն էլ այսպիսի կենտրոնում ուսանեին: Ցավոք, տնօրենը, կինը, նաև

թատերական խմբի ղեկավարը՝ Մանկավարժական համալսարանի իմ ուսանողական ընկերներից, բեմադրիչ Գոռ Տալյանը (հետագայում՝ Տեր Կյուրեղ քահանա Տալյան) տեղում չեն, գործով կանչել են Երևան, բայց Ավագ Հայրապետյանի մայրը՝ տիկին Նինան, Երևանում ապրող իր դուստր Թամարայից և փեսայից՝ չեխերենի թարգմանիչ Չեխ Հովիկից (Հովհաննես Հարությունյան), ովքեր մեր ընտանիքի ամենամոտ բարեկամներից են, իմանալով, որ հյուրերի հետ Մեղրիում եմ, տուն է հրավիրում և մեզ առատորեն հյուրասիրում:

Ջելալն ու Քյազիմը շատ զգացված են հայկական հյուրասիրությունից, նաև տպավորված են, որ Հայաստանում իրենց հարազատի պես են ընդունում և կրոնափոխության մասին չեն հիշեցնում:

Վերադառնում ենք Երևան: Սերո Խանզադյանն ասում է, որ Հայաստանում վերաբնակվելու խնդրանքով Չիրկինոյի 57 ընտանիքների ներկայացուցիչների ստորագրություններով դիմումը, որ Ջելալն ու Քյազիմն են իրենց հետ բերել, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորի իր միջնորդագրով պետք է հանձնենք Նախարարների խորհրդին: Առաջարկում է հետը գնամ, եթե կարիք լինի, մանրամասներ պատմեմ, հարցերի պատասխանեմ:

Կառավարության շենքի առաջին հարկում հանդերձապահ կանայք Սերո Խանզադյանի վերարկուն ու մորթե գլխարկը վերցնելով, աշխուժանում են, ասում են.

– Ընկեր Խանզադյան, երեկ Ձեզ հեռուստացույցով տեսանք:

Նա էլ գործիսեցու իր առոգանությամբ, ժողովրդական ասացվածքով պատասխանում է.

– Իգիթի անունը լսի, իրան մի տես:

Այսինքն՝ քաջ կտրիճի արտաքինի մասին պատկերացումները միշտ ավելին են, քան իրականությունն է: Բոլորս ծիծաղում ենք, ու նա բարձրանում է Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի[138] մոտ, որի հետ մտերիմ է: Ես սպասում եմ առաջին հարկում: Որոշ ժամանակ անց ինձ կանչում են ագրոարդյունաբերության բաժնի վարիչ Հենրիկ Մկրտչյանի մոտ, որտեղ է նաև Ս. Խանզադյանը: Հ. Մկրտչյանը շատ հարցեր է տալիս, հետաքրքրվում է՝ Բաղրամյանի շրջանում եղե՞լ ենք:

Հաջորդ օրը Ս. Խանզադյանի հետ պատրաստվում ենք գնալ Բաղրամյանի շրջան: Նա մի պաշտոնյայից մեքենա է խնդրել և սև «Վոլգան» առավոտյան սպասում է «Անի» հյուրանոցի դիմաց:

Բաղրամյանի շրջանում նորակառույց բնակավայրեր ու ազատ տներ կան: Շրջանը մեկ տարի առաջ էր կազմավորվել Թալինի և Հոկտեմբերյանի շրջաններից առանձնացված տարածքներից, դեռ շատ անբարեկարգ էր, ճանապարհների, ջրի, գազի, էլեկտրականության հետ կապված բազմաթիվ խնդիրներ կային, իսկ ձյունածածկ սա-

---

[138] **Վլադիմիր Մովսիսյան** (1933, Սպիտակի շրջ., գ. Շենավան - 2014, Երևան), 1978-84 թթ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, 1984-90 թթ.՝ առաջին տեղակալ,1988-1990 թթ.՝ զաղթվածների գործերի հանրապետական հանձնաժողովի նախագահ, 1991-96 թթ.՝ փախստականների հարցերով պետական վարչության պետ և այլն:

րերն ու ձորերն առավել անհրապույր էին դարձնում իրականությունը: Հյուրերը Տալվորիկում, որն ընդամենը մեկ ամիս առաջ էր անվանակոչվել, տեսան նորակառույց տները, բայց դեռ գյուղ դառնալու համար շատ գործ կար: Կիրակի էր և շրջանի ղեկավարությունից ոչ ոք չկար: Ջելալն ու Քյազիմն ասացին, որ գուցե իրենցից մի քանի ընտանիք կգա այս գյուղում բնակվելու, բայց սկզբում պետք է իրենց ունեցվածքի փոխհատուցման հարցը սկզբունքորեն լուծվի, որից հետո իրենք կրկին կգան և շրջագայելու համար ավելի շատ ժամանակ կունենան:

Արդեն վերջին օրն էր, նրանք պետք է մեկնեին: Այդպես էլ չենք հասցնում գնալ Կալինինո (Տաշիր), Ստեփանավան և Գուգարք: Ժամանակ չկա: Բացի այդ, ես ցանկանում եմ, որ այնտեղի գյուղերում լինենք բնության զարթոնքի շրջանում, տաք եղանակներին: Իսկ Բաղրամյանի շրջանում ոտքի տեղ անելուց հետո, գուցե, ավելի հեշտ կլինի Հայաստանի ներսում տեղափոխություններ կատարելը:

Հյուրերը մեկնում են: Ես Ջելալի հետ նամակագրական կապ եմ պահպանում, Սերո Խանզադյանի հետ էլ հաճախ եմ հեռախոսով խոսում: Համշենցիների ցավը մեզ երկուսիս հանգիստ չի տալիս:

Օրերի տաքանալուն պես խնդրում եմ իմ ընկերներից Վազգեն Մանուկյանին[139], որը ԵՊՀ դասախոս է, և միշտ

[139] **Վազգեն Մանուկյան** (1946, Գյումրի), ֆիզմաթ. գիտ. թեկնածու, 1972-1990 թթ.՝ ԵՊՀ դասախոս, 1990 թ.՝ ԳԽ պատգամավոր, 1990-1991 թթ.՝ ՀՀ վարչապետ, 1992-93 թթ.՝ ՀՀ Անվտանգության գծով Պետնախարար, Պաշտպանության նախարարի պաշտոնակատար և ռազմարդյունա-

հետաքրքրվում է համշենցիների խնդիրներով, որ իր մեքենայով գնանք Բաղրամյանի շրջան, հանդիպենք կուսշրջկոմի առաջին քարտուղար Հենրիկ Մինասյանի հետ, ճշտենք մի շարք մանրամասներ, պայմանավորվածություններ ձեռք բերենք:

Հենրիկ Մինասյանը մեզ ջերմորեն է ընդունում, խոստանում է ամեն ինչով աջակցել համշենցիների վերաբնակեցմանը: Ասում է, որ իրենք այդ նորակառույց տները սիրով կհատկացնեն անժամկետ օգտագործման համար, բայց չեն կարող որպես սեփականություն տալ: Նրանց գույքի փոխհատուցման և բազմաթիվ այլ հարցեր իր իրավասությունից դուրս են, դրանք հանրապետության կուսակցական ղեկավարության լուծելիք խնդիրներն են:

Ամիսներ շարունակ ես ինձ հասանելի տարբեր պաշտոնյաների հետ քննարկում եմ համշենցիների տեղափոխության հարցը, և բոլորն էլ ասում են, որ սիրով կաջակցեն, եթե վերևներում դեմ չլինեն: Օրինակ՝ Պոլիտեխնիկական ինստիտուտը (համալսարան) առաջարկում էր, որ եթե խեմշիլների մեջ զրո կուրսում սովորել ցանկացողներ կան, ապա իրենք պատրաստ են նրանց հանրակացարանով ապահովել և այլն: Տարբեր բնագավառների մարդիկ զանազան առաջարկներ էին անում, բոլորն ուզում էին ինչ–որ բանով օգտակար լինել: Նրանց շնորհիվ ես էլ հույսով ու հավատով էի տոգորվում, որ ամեն ինչ

բերական համալիրի ղեկավար, 1995-2007 թթ.՝ ԱԺ պատգամավոր, 2009-2019 թթ.՝ Հանրային խորհրդի նախագահ:

լավ է լինելու, միայն պետք է սպասենք Կենտկոմից լավ լուրերի:

Երբ հերթական անգամ զանգահարեցի **Սերո Խանզադյանին**, նա ասաց, որ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը[140] համշենցիների դիմումը կտրուկ մերժել է: Տե՜ր Աստված, ինչո՞ւ: Ի՞նչ պատասխան պիտի տամ հեռուներում անհամբեր սպասող համշենցիներին, ինչպե՞ս պիտի բացատրեմ: Ամաչում էի, անսահման ամաչում:

Բայց ինչպե՞ս է եղել մերժումը: Այդ մասին **Սերո Խանզադյանը** 1989 թ. «**Հայրենիքի ձայն**» թերթում տպագրված իր «**Փակ դռների առաջ**» հոդվածում գրել է. «Ես նորից Կենտկոմում եմ, Մինիստրների խորհրդում: Նույնիսկ Կենտկոմի առաջին քարտուղարին (նախկինին) դիմեցի.

– Էլի՞,– տրտմեց նա:– Ի՞նչ համշենցի հայ, ի՞նչ բան, էն էլ մահմեդական: Լավ, մի քիչ սպասիր, կմտածենք:

… Ի վերջո, մեր կառավարության նախկին նախագահն ինձ անկեղծ ասաց.

– Գիտես, բարեկամս, կառավարությունը ամեն ինչ կանի, որպեսզի այդ հայերին բերի մեզ մոտ: Դրա ծախսերը

---

[140] **Կարեն Դեմիրճյան** (1932, Երևան - 1999, Երևան), պետական, կուս. գործիչ, 1966-72-ին՝ ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար, երկրորդ քարտուղար, 1972-74-ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1974-88-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1991-99-ին՝ «Հայէլեկտրամեքենա» ԲԸ նախագահ, գործադիր տնօրեն: 1998 թ. հիմնադրել է Հայաստանի ժողովրդական կուսակցությունը: ԽՍՀՄ (1974-89) և ՀԽՍՀ (1967-89) Գերագույն խորհուրդների պատգամավոր: 1999 թ. ընտրվել է ԱԺ նախագահ, զոհվել է 1999 թ. հոկտեմբերի 27-ին (Հայաստանի ազգային հերոս, 1999, հետմահու):

չնչին բան են մեզ համար: Սակայն… Սակայն մեր Կենտկոմի առաջին քարտուղարը (նախկին) դեմ է այդ բանին: Քանի անգամ խնդրել եմ, մերժել է:

Մինչ այս, մինչ այն, լսեցի, որ Բաղրամյանի այն նոր գյուղում, որը պահում էինք համշենցիների համար, Կենտկոմի կարգադրությամբ հապշտապ բնակեցվել է, նաև՝ ոչ հայերով: Այս մասին լուր տվի Չիրկինի հայերին: Նրանք գրեցին՝ ոչինչ, մի այլ տեղ կբնակվենք:

Դարձյալ գնացի Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ: Հենց որ ինձ տեսավ, գոչեց.

– Եթե մահմեդական հայերի հարցով ես եկել, չեմ ընդունի: Այդ հայերին ես չեմ թույլ տա, որ գան Հայաստանում բնակվեն: Չեմ թույլ տա: Վե՛րջ:

Երկինքը փլվեց իմ գլխին: Տուն եկա գազազած: Տե՛ր Աստված, այս ի՛նչ է կատարվում…»[141]:

Սերո Խանզադյանի գրածին չհավատալու որևէ պատճառ չկա, քանի որ այն ժամանակ Կարեն Դեմիրճյանը ողջ էր, ուներ մեծ հեղինակություն ու ազդեցություն, և կարող էր լրատվամիջոցներով հրապարակայնորեն հերքել կամ պարզաբանումներ անել:

Հոդվածը շատ մեծ արձագանք ունեցավ, շատերն էին ցանկանում մանրամասներ իմանալ: **Ս. Խանզադյանը** կրճատված տարբերակը «**Նողկալի մերժում**» վերնագրով 1993 թ. հրատարակեց «**Գարուն**» ամսագրում: Մինչև տպագրելը գլխ. խմբագիր **Լևոն Անանյանը**[142] Սերո Խան-

---

[141] **Ս. Խանզադյան**, Փակ դռների առաջ, «**Հայրենիքի ձայն**», 1989, մայիսի 10, նույնը՝ «**Ձայն համշենական**», 2012, № 3-4:

[142] **Լևոն Անանյան** (1946, Կողբ -2013, Երևան), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, 1990-2001 թթ.՝ «**Գարուն**» ամսագրի գլխ. խմբագիր, 2001-

զաղյանի հետ համաձայնեցնելով, հոդվածն ուղարկեց Կարեն Դեմիրճյանին, հուսալով, որ նա պարզաբանում կգրի, որը հոդվածի հետ կտպագրի: Երկար սպասեցինք: Չնայած հիշեցումներին **Կ. Դեմիրճյանը** հերքում կամ պարզաբանում չգրեց: Ի վերջո, «Գարունի» նախկին խմբագիրներ **Վարդգես Պետրոսյանի**[143] և **Անժիկ Հակոբյանի**[144] հորդորով Կ. Դեմիրճյանի մասին հատվածը կրճատվեց և տպագրվեց այս տեսքով. «Ես կապվեցի մեր Մինիստրների խորհրդի ղեկավարության հետ: Այնտեղից ինձ ասացին, թե ՀԿԿ Կենտկոմն է կտրուկ արգելել այդ հայերի ներգաղթը Հայաստան»[145]:

Այդ մերժումից հետո փորձեցի Ղրղզստանի, Ուզբեկստանի և Ղազախստանի համշենցիների գոնե անհատական ներգաղթ կազմակերպել: Ինչպես որ նրանք Կրասնո-

---

13 թթ.՝ Գրողների միության նախագահ, բազմաթիվ հոդվածների և մի շարք գրքերի հեղինակ:

143 **Վարդգես Պետրոսյան** (1932, Աշտարակ- 1994, Երևան), գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, 1966-75-ին՝ «**Գարուն**» ամսագրի գլխ. խմբագիր, 1975-81-ին ՀԳՄ վարչության առաջին քարտուղար, 1981-88-ին՝ նախագահ, 1988-94-ին ՀՀ Մշակույթի ֆոնդի նախագահ, Պետական մրցանակի դափնեկիր (1979), ՀԽՍՀ (1975-1985), ԽՍՀՄ (1984-89) և ՀՀ (1990-94) ԳԽ պատգամավոր:

144 **Անժիկ Հակոբյան** (1929, Լենինական-2009, Երևան), լրագրող, գրող, թարգմանիչ, 1976-86-ին՝ «**Գարուն**» ամսագրի, 1986-88-ին՝ «Գրական թերթի» գլխ. խմբագիր:

145 **Ս. Խանզադյան**, Նողկալի մերժում, «**Գարուն**», 1993, թիվ 8, էջ 15, ռուսերեն թարգմանությունը տե՛ս Серо Ханзадян, Возмутительный отказ // **Б. Г. Торлакян, Этнография амшенских армян**, сборник статей и материалов, Амшенская библиотека № 1, Краснодар, 2002 (-198 с.), с. 194-197.

դարի երկրամասում, Ռոստովի մարզի Կամենսկի[146] և Վորոնեժի մարզի Գրիբանովսկի[147] շրջաններում էին բնակություն հաստատում, մի քանի–երեսուն ընտանիք սեփական նախաձեռնությամբ Հայաստանի գյուղերում տներ գներ, ապրեր, որպեսզի գնալ–գալ լիներ, տարբեր վայրերի համշենցիների հետ կապերի թելերը ձգվեին նաև Հայաստան: Բայց, իմանալով, որ Կենտկոմի առաջին քարտուղարը խիստ դեմ է իրենց ներգաղթին, նրանք ևս չէին ցանկանում առճակատվել ամենազոր Կենտկոմի հետ:

Անկեղծ ասած, ես մինչև այսօր էլ չգիտեմ, թե մերժման պատճառը ո՞րն էր, համշենցիների մահմեդական լինե՞լը, բայց այդ մարդիկ զոհեր էին, բռնի կրոնափոխվածների սերունդներ, որոնք անգամ մահվան սպառնալիքի պայմաններում սերնդեսերունդ պահպանել էին իրենց հայերեն լեզուն, մարդիկ, որոնք երազում էին ապրել Հայաստանում, երեխաներին հայեցի դաստիարակել: Իսկ կրոնական արարողությունների մասնակցում էին միայն ծերերը, այն էլ, եթե մոտակա որևէ բնակավայրում մզկիթ կար:

Խորհրդային Միությունում ամենուր անաստվածության քարոզ էր, և հենց Հայաստանում էին բազմաթիվ եկեղեցիներ ավերվել և ՀԿԿ ԿԿ գլխավորությամբ հակաքրիստոնեական և աթեիստական արշավանքներ էին կազմա-

---

[146] ՌԴ 2020 թ. մարդահամարի տվյալներով Ռոստովի մարզի Կամենսկի շրջանի շուրջ 88.000 բնակիչ ունեցող Կամենսկ-Շախտինսկ քաղաքային օկրուգում բնակվում էր 143 խեմշիլ, 612 հայ, 186 քուրդ:

[147] ՌԴ 2020 թ. մարդահամարի տվյալներով Վորոնեժի մարզի Գրիբանովսկի շրջանում, այդ թվում՝ Վերխնի ու Սրեդնի Կարաչան և Նիժնի Կարաչան գյուղերում բնակվում էր 335 խեմշիլ, 157 քուրդ, 81 թուրք: Գրբանովսկի շրջանում ապրում էր նաև 35 հայ:

կերպվում, մշտական վերահսկողության տակ պահվում քրիստոնեության ամեն մի դրսևորում: Իսկ այդ ընթացքում Հայաստանում **անշեղորեն**, դա կոմկուսի ամենասիրած բառերից էր, **անշեղորեն** աճում էր մահմեդական ադրբեջանցիների թիվը: Այսպես, **1959 թ.** հանրապետությունում բնակվում էր 107 հազար 748 ադրբեջանցի, **1970 թ.**՝ 148.189 ադրբեջանցի, **1979 թ.**՝ 160 հազար 841 ադրբեջանցի[148], այսինքն՝ 20 տարում աճը կազմել էր **53.093** հոգի:

Իրականությունն այս է: Եվ այս պայմաններում 1985 թ. Ղազախստանից ու Կիրգիզիայից (Ղրղզստանից) մի քանի հարյուր համշենահայերի ներգաղթը մերժվեց, ինչը կարելի է բնորոշել միայն Սերո Խանզադյանի հոդվածի վերնագրով՝ **նողկալի մերժում**:

[148] Ադրբեջանցիների մարդահամարների տվյալները տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում-2 (Յու. Մկրտումյան, Հ. Սարգսյան, Ա. Թաղևոսյան և ուրիշներ)- գիրք II, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005 (- 254 էջ), էջ 151, 161:

ՆԱՄԱԿՆԵՐ

ՂՐՂԶՍՏԱՆ, ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
(1984–1989 թթ.)

Այս բաժնում հրատարակվող իմ գրած նամակների բնագրերը, հասկանալի է, որ ուղարկվել են հասցեատերերին: Ուստի դրանք վերականգնել և հրատարակության եմ պատրաստել պահպանված սևագրերի հիման վրա: Հնարավոր է, որ ուղարկելուց առաջ մաքրագրելիս կամ մեքենագրելիս որոշ բառեր և նախադասություններ փոխել, ավելացրել կամ կրճատել եմ: Գուցե և նույնությամբ եմ ուղարկել:

Ցավոք, ժամանակին չեմ ենթադրել, որ երբևէ այդ նամակները կհրատարակվեն և, երբեմն, դրանք գրելու ամսաթվերը սևագրերում չեմ արձանագրել, այդ իսկ պատճառով քառանկյուն փակագծերում նշել եմ հավանական ժամանակը:

Ջելալ Կարաիբրահիմովի գրած նամակների ամսաթվերն էլ, եթե բացակայել են, ապա հիմք եմ ընդունել ծրարների վրա եղած փոստային բաժանմունքների առաքման օրվա կնիքների ամսաթվերը, որոնք ևս հրատարակում եմ քառանկյուն փակագծերում:

1. Здравствуйте, многоуважаемый Сулейман Дурсунович[149]

Я очень благодарен Вам и всей Вашей семье за тёплое гостеприимство и дружбу. Я здесь всем рассказал какие замечательные наши соотечественники живут в Киргизии. Интерес к хемшилам так велик, что все мои знакомые просят рассказать о вас. Я уже два раза – в Доме журналистов и Доме народного творчества Армении выступал с беседой о хемшилах, демонстрировал фотографии и записи ваших песен. Так что, многие здесь уже знают о вас.

Вот уже несколько дней в Армении проходит фестиваль народного творчества амшенцев. В Армению из Майкопа (Адыгея) приехали два ансамбля народного танца, а из Абхазии – один ансамбль, у них было много выступлений, в том числе несколько раз по телевидению. Жаль, что Вам не довелось увидеть всё это. В начале октября нынешнего года в Ереване состоится слёт амшенских армян и фестиваль народного искусства. Мы были бы очень рады, если бы в этих событиях приняли участие и наши соотечественники из Киргизии.

А теперь о самом главном.

Дорогой Сулейман Дурсунович, всё идёт хорошо. Я сообщил живущим в Ереване амшенцам о вашем желании. Мы с нетерпением ждём вас. Прошу срочно сообщить мне письмом, когда вы сможете приехать и сколько вас будет.

Прошу за несколько дней сообщить телеграммой рейс и количество всех приезжающих, чтобы мы вас встретили.

Из Чиркино также хотят приехать, так что поддерживайте с ними связь.

---

[149] Նամակը հասցեագրված է Սուլեյման Դուրսունի Սալեհօղլիին (Ղրղզստան, Օշի մարզ, Ուչ-Կորգոնի գյուղախումբ, գ. Տաժիկ-Կըշտակ):

Прошу Вас передать мои приветы и добрые пожелания Вашему брату Гейдару Дурсуновичу, Вашим сыновьям Махмуду и Дурсуну Сулеймановичам, а также моим другим высокочтимым знакомым Салехогли Пашали Мухамедовичу, Караибрагимоглы Муйдину Мустафаевичу, Караибрагимоглы Мустафе Ильясовичу, Караибрагимоглы Сафару Мемедовичу, Бешлиоглы Дурсуну Юсуфовичу, а также молодым Хасану Тантогли и Алиму Кесоглы и другим.

До новой встречи, всего Вам доброго.

С уважением Сергей Варданян

Групповое фото рядом с мечетью я в нескольких экземплярах отправил Хабибу Кошанидзе, чтобы он передал Вам.

[май, 1984 г.]

2. Здравствуй, дорогой Хабиб[150]

Дорогой Хабиб, бесконечно благодарен за сердечный приём, гостеприимство и искреннее дружеское отношение. Прошу от меня передай твоей супруге Тамаре глубокую благодарность и признательность. Вас никогда не забуду.

Я здесь всем рассказал о том, какие замечательные земляки у нас есть в далекой Киргизии. Все очень заинтересованы вами. Я уже в Доме журналистов и Доме народного творчества прочитал 2–3 часовые лекции, показал цветные фотографии, а также включил записи, сделанные у вас и познакомил с вашим фольклором. Так что вас здесь уже многие знают.

Дорогой Хабиб, вот уже несколько дней, как в Армении проходит фестиваль амшенцев. Из Майкопа приехали две танцевальные группы, а одна группа – из Абхазии. Они

---

[150] Նամակը հասցեագրված է Հաբիբ Աբդուլլահի Քոշանիձեին (Ղրղզստան, Օշի մարզ, Կըզըլ-Կիյա քաղաք):

много выступали, и также выступили по телевидению. В начале октября в Ереване будет проходить сбор–фестиваль амшенцев. Очень будем рады, если наши земляки из Киргизии тоже будут участвовать.

А сейчас о главном. Я сообщил живущим в Ереване амшенцам о вашем желании. Всё хорошо и мы с нетерпением ждём вашего приезда. Об этом я написал и Сулейману Дурсуновичу Салехоглы и попросил его, чтобы перед отъездом мне сообщили когда они приедут и сколько их будет, а перед выездом хотя бы за два дня сообщили телеграммой об этом.

Дорогой Хабиб! Я бандеролью послал фотографии, снятые у вас. Прошу всем раздать. Посылаю также снимки достопримечательных мест Армении, прошу их тоже раздать.

Дорогой Хабиб! Скажу, что в Чиркино меня также хорошо приняли. Я остался в доме у Димки (Джелал). Очень благодарен ему и другим. Из Чиркино также хотят приехать сюда. Я им тоже написал письмо.

Пока всё. Прошу передать дорогому дедушке–многоуважаемому Хаки Кошанидзе, членам его семьи, твоему брату–Гюлпаше, сыновьям Карабаджакоглы, и всем всем, невозможно всех перечислить, мою бесконечную благодарность.

Прошу тебя, сразу же после получения фотографий, напиши мне, чтобы я не беспокоился.

До новой встречи.
С уважением Сергей Варданян [май,1984 г.]

3. Здравствуй, дорогой Джелал[151]

Спасибо за тёплый приём. Передай, пожалуйста, мою искреннюю благодарность всем членам вашей семьи. Я очень тронут вашим сердечным отношением ко мне.

Сначала о самом главном. Я сообщил о вашем намерении амшенцам, проживающих в Ереване. Всё очень хорошо. Мы с нетерпением ждем вашего приезда. Я написал письмо в Уч–Коргон Сулейману Салехоглы и Кызыл–Кия Хабибу и сообщил об этом. Прошу, держите друг с другом связь и если находите удобным, приезжайте вместе, но если они задержатся, то вы приезжайте раньше. Конечно, вы там легче можете решить этот вопрос. Во всех случаях мы с нетерпением ждём вас. Прошу тебя как можно быстро ответить на моё письмо и сообщить приблизительно сколько людей и когда приезжают, а за 2 дня до приезда пришлите телеграмму, чтобы мы встретили вас.

Об этом пока всё.

Дорогой Джелал, вот уже несколько дней как в Ереване проходит фестиваль амшенцев. Из Майкопа приехали две танцевальные группы, а из Абхазии одна. Они много выступали и даже по телевидению. Зал был всегда переполнен. В октябре этого года опять состоится в Ереване сбор амшенцев. Будем очень рады если будут участвовать наши земляки из Киргизии и Казахстана.

Я здесь многим рассказал о вас. Интерес к вам так велик, что меня каждый день расспрашивают о вас. За этот короткий период я прочитал две трехчасовые лекции в Доме журналистов Армении и Доме народного творчества. Показал им слайды. Большой интерес вызвали сделанные у вас

[151] Նամակը հասցեագրված է Ջելալ Օսմանի Կարաիբրահիմովին (Ղազախստան, Չիմքենդի մարզ, Սայրամի շրջան, գ. Չիրկինո):

магнитофонные записи, так что здесь уже многие знают о вас.

Так как я надеюсь, что мы скоро встретимся, по этому коротко пишу. Только скажу, что послал тебе ваши фотоснимки и карточки с достопримечательностями Армении. Прошу всем раздать. Посылаю также самоучитель армянского языка и верю, что не только ты научишься писать на армянском, а научишь и других. Посылаю также несколько книг, поступай с ними как знаешь.

Дорогой Джелал, прошу тебя написать сколько в Чиркино всего населения и какие народности. Если тебе не трудно, записывай для меня национальные обычаи, сказки, традиции и т.д. Вообще всё то, что считаешь нужным писать, всё, что заинтересует этнографа, журналиста.

Ցուրտ ու մութ տարիներն էին, պատերազմ էր, բազմաթիվ զոհեր, գաղթ, սով, էլեկտրականության հաճախակի անջատումներ: Ուշքումիտքս հազար տեղ էր, բայց Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի համշենցիների չլուծված խնդիրները չբուժված վերքի նման զգացնել էին տալիս, հոգիս ցավում էր:

Ջելալի հետ 1988 թ. մեր վերջին հանդիպումից 24 տարի անց՝ 2012 թ. ամռանը, Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփա քաղաքում, Ստամբուլի համշենցիների «Հաղիգ» (-Հատիկ) մշակութային միության նախագահ Մեհմեթ Ալթունքայան թեյարանում ինձ ծանոթացրեց իր ազգականներից մեկի հետ, որը ճանաչում էր Ջելալին: Ալթունքայա-

ներն ու Կարաիբրահիմովները նույն ազգատոհմն են՝ Ջերմըզցի են: Նա ասաց, որ Ջելալը 2000 թ. Ղազախստանից ընտանիքով եկավ Խոփա, բայց քիչ մնաց, տեղափոխվեց Անկարա: Ձեռքի հեռախոսով զանգեց Ջելալին, փոխանցեց ինձ: Խոսեցինք՝ ոնց ես, ոնց չես: Ջելալն Անթալյայում էր, տղաներն այնտեղ հաջողակ գործարարներ են, ինքն Անկարայում շախմատի դպրոցում է աշխատում, հիմա ազգանունը Քարաիբրահիմօղլու է:

ՀԵՔԻԱԹՆԵՐ[185]
ՖՈՒՔԱՐԱ (ՖՈՒՔԱԱ) ԴԱՂԱՆ

Գար չքար, մէգ ֆուքարա (ֆուքաա) դաղա մէ գար: Ան դաղան զէնգին մարթու մէ ախչըգօնէ հազ գէնէր: Մէգ օխ-թի մէ իմաց թա զէնգին մարթէ ախչըգօնէ գարքուշ գուզա: Դաղան մօղէ քէնաց:

– Հօպա՛ր, քու մօղէդ էգի, իմացի թա ախչիգէդ գար-քուշ գուզէս, յէս անու շադ հազ գէնիմ: Ի՞նչ էնուշ բիդի քէ-զի էնիշտա էլլուշի ամա:

Զէնգին մարթէ ծիծաղէցավ, ասաց.

– Թուն ինչբէ՞ս ինծի էնիշտա էլլօղ էս:

Դաղան ալի ախչէց.

– Յէս էմմէն աստածէդ գէնիմ, թուն ասա, յէս բիթուն գէնիմ:

Զէնգին մարթէ ալի ծիծաղէցավ, ասաց.

– Անու ամա բիդի թէռօնէ իյէք քիշէր դէգլէզ ցունին վաան բարգուշ:

Դաղան ասաց.

– Հիմի ցէմէռ ա, շադ ցուրդ ա, յէս մէռնի գում:

[185] Բոլոր հեքիաթները տպագրվել են, տե՛ս **Ձայն համշենական**, ժո-ղովածու, գիրք 3, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթա-գրեց Ս. Վարդանյանը, Երևան 1989, էջ 225-238, **Ս. Վարդանյան**, Կրո-նափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվես-տը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, 2009, էջ 184-198, «Ցի կօղնուշը» նաև՝ «Ձայն համշենական» ամսաթերթում, 2006, № 1-2, «Արդէլէցիք՝ ավջի» զվարճապատումը նաև՝ **Ս. Վարդանյան**, Բանա-հյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), Երևան, 2022, էջ 238:

Ջէնգինէ ասաց.

– Վախէ մի, մէռնի չէս, աստաղնօուն լուսան շօղնա զուս:

Դաղան քէլօխէ քիյէլօվ դունէ էյէվ:

Քիչ օր զօնի, շադ օր զօնի, մէզ օր մէ զէնգին մարթէ քյօչէ լէրն ի վէ դօնի զուր: Մէթնէց, ջօմփուն յօնին մէզ դուն մէ դէսավ, հազ աավ, քէնաց դունէ, փութ աավ անա, ան ֆուքարա (ֆուքաա) դաղին դունն ա: Թէռօնէ ցուրդ էր, մարթէ ի՞նչ էնէր, մէդավ դուննիուս, ասաց.

– Յէս աօր հօզա զինօմ անա, զէլլի՞ թա, թէռօնէ ցուրդ ա, մէթնէց:

– Հաբա, ի՞նչի էլլի չի, նաս օնցի, նի՛ստ, դաղվօրցի, յէս հիմի չայ մէ դազցէնիմ,– ասաց դաղան:

Մարթէ բէդ աավ, բէդ աավ, օ՛չ չայ զօ, օ՛չ ալ դաղան զօ: Ի՞նչ աղավ դէյնա, մարթէ թուրս էլավ, դէսավ անա ձառինէ դազէ շադ բիձիզ զիյազ մէ զայի, ձառէցէ վաան, շադ պարցէ դաղէ ձառինէ չիբուխին չուօվէ օմօն մէ զախ էնզած ա, դաղան ալ մօդէ զօնզած (զունզած) ա.

– Դա՛, ի՞նչ զէնէս,– ասաց զէնգինէ:

– Ի՞նչ էնօղ ում, քէզի ամա չայ յէփ օնի զում,– ասաց դաղան:

– Իդա չուէդ խաս զիյազօվէս յէփ զըլլա՞ (կըլլա) թա, չուէ վօրդա՞դ ա, զիյազէ վօրդա՛դ ա.

Դաղան ասաց.

– Ինչի՞ յէփ էլլի չի, աստաղին լուսան շօղնուշ զըլլի՞ր ու խաս զիյազօվ չուր դաքնա չի՞ թա:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955 թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել եմ 1984 թ. մայիսին Չիրկինոյում:

ՖՈՒԽԱՐԱ ԴԸՂԸՆ
Ջենիկի խոսվածք

Գա̈յ չիկա̈ր, մէգ ֆուխարա դըղը մը գա̈ր: Ա̈դ դըղըն զընգին մաշտու մը ախճկօնը հազ գընէր: Մէգ բօյ մը լուէծ տա̈ զընգին մաշտը ախճըկօնը հայս դըվուշ կուզա̈: Դըղըն մօղը կընած:

–Քէռի՛, քու մօղըդ էգա, իմըծա տա̈ ախճիգըդ հայս դըվուշ կուզիս, յէս ընու շադ հազ գընիմ: Ի՞նճ ընուշ բիդու յա̈ քէզի փէսա ըլլուշի հօմար:

Զընգին մաշտը ձիձաղէծավ, ասած.

–Տուն ի՞նծծօ ինձի փէսա ըլլօղ իս:

Դըղըն ա̈լի աղաճէծ.

–Յէս ըմըն աստաձըդ գընիմ, տուն ասա̈, յէս ալայ գընիմ:

Զընգին մաշտը ա̈լի ձիձաղէծավ, ասած.

–Ա̈դու հօմար բիդու յա̈ տուսը իրէկ կիշէյ չըպլախ ծըն-ուն վըրըն բարգուշ:

Դըղըն ասած.

–Հիմի ծըմէռ ա̈, շադ ցույդ ա̈, յէս մէռնիմ գու:

Զընգինը ասած.

–Վախիլ մի, մէռնիլ չիս, աստըխէրուն լուսըն դակնաս կու:

Դըղըն կըլէխը քէրէլօվ դունն էգավ:

Քիճ օր գօնի, շադ օր գօնի, մէգ օր մը զընգին մաշտը քօճը սայն ի վիյ դօնիր գու: Մըտնէծավ, ջօմպուն յօնին մէգ դուն մը դէսավ, քէֆ ըղավ, կընած դունը, սէյր ա̈րավ, ըն

ֆուխարա դըղին դունն ա: Տուսը ցույդ էր, մաշտը ի՞նճ ընէր, մըդավ դունը, ասած.

–Ցէս ասօր հուզա գինօմ նա, գըլլի տա, տուսը ցույդ ա, մըտնէծ:

–Աքա ինճը՞ն ըլլիլ չի, նաս օնծի, նիստ, դէղավօյծի, յէս հիմի չայ մը դակծընիմ գու,–

ասած դըղըն:

Մաշտը բէդ արավ, բէդ արավ, նա չայը գա, նա դըղըն գա: Ի՞նճ ըղավ դէյ, մաշտը տուս էլավ, դէսավ օր ձառին դագը շադ բիջիգ գըրագ մը գարի, ձառէծը վըրըն, շադ պայսը դէղ մը ձառին ջուխկըն ճըրօվ օմօն մը գախ ընգաձ ա, դըղըն ալ մօղը գօյնաձ ա:

–Դօ՛, ի՞նճ գընիս, – ասած զընգինը:

– Ի՞նճ ընօղ իմ, քէզի հօմար չայ գէպիմ, – ասած դըղըն:

–Իդա ճույն իսա գըրագօվ գէպի տա, ճուրը վօյդէ՛խ ա, գըրագը վօյդէ՛խ ա:

Դըղըն ասած.

–Օրի՞ էպիլ չի, աստխին լուսըն դակնուշ գըլլիր ու, իսա գըրագօվ ճուրը դակնալ չի՞ տա:

Ծանոթագրություններ

Կրոնափոխ համշենահայերի Խոփայի և քրիստոնյա համշենահայերի Ջենիկի խոսվածքների նմանություններ-ն ու տարբերությունները պատկերացնելու համար հրատարակել եմ նաև հեքիաթի Ջնիկի խոսվածքի իմ փոխադրած տարբերակը՝ որոշ ծանոթագրություններով:

Ջենիկի խոսվածքով «գարկվուշ» ասում են միայն տղայի ամուսնանալու դեպքում, իսկ Խոփայի խոսվածքում օգտագործում են նաև աղջկա համար:

Ջենիկի խոսվածքով «հօրպար» ասում են միայն հորեղբորը կամ հոր կողմից ազգականին, իսկ Խոփայի խոսվածքում կարող են օգտագործել նաև ոչ ազգականի համար, ինչպես որ տվյալ դեպքում «քեռի» բառը:

«Ծօղնաս գու» Ջենիկի խոսվածքով նշանակում է չափից շատ տաքանալ:

Ջենիկի խոսվածքով «էյէվ» չեն ասի:

«Հազ աավ» տվյալ դեպքում Ջէնիկի խոսվածքով չեն ասի:

«Փութ աավ» Ջենիկի խոսվածքով չեն ասի:

«Դէյնա» այս դեպքում չեն օգտագործում:

«Չիբուխ» ասում են կտրած ճիպոտին:

«Ամա» Ջենիկի խոսվածքով չեն ասի:

ԿՈՂԻՅԷ

Իյէք հաղիգ կող գանի: Յաար հէղէ սօյ էնգէր էնի: Հէղ-րա կօղութին գէնէնի: Մէգ օր մէ անէր մէգ մարթու մէ ա-չառէ կօղնուշ գուզէնի: Ան մարթէ հէրգէ գուր: Իյէք կօղան մէգ հաղիգէ մարթուն մօղգինցավ հէմ զօրչուշի գէբավ.

– Յէս շաշէնցա՛, յէս շաշէնցա՛…

Մարթէ ասաց.

– Ի՞նչ աղավ, ինչի՞ շաշէնցար:

Ան ալի զօրչէ գուր: Հէրգօղ մարթէ զօրչօղ մարթուն մօղնիվա էյէվ: Մէգալ կօղիյէ մէգ աչառէ կօղցօն: Գօրչօղ մարթէ ասաց հէրգօղ մարթուն.

– Մէգ աչառօվէ խօղէ ինչբէ՞ս հէրգէ գուս, անու ամա յէս շաշէնցա:

Մարթէ յէտ փութ աավ անա, մէգ աչառէ չքար, ասաց.

– Ախպա՛ր, յէս ալ շաշէնցա:

Գօրչօղ մարթէ էնգէրնուն մօղնիվա քէնաց, աչառէ մօրթէցին, փայ ային: Հէղէվ էրգու էնգէրէ հէղրա աղօն, մէ-գալին թէրցուցին: Էրգու օմնու հէղէվ էրգուսէ աստին թա.

– Էրթօք մէ էնգէրօչս փութ էնիք, ինչբէս գաբրի, սօ՞յ ա թա, չօքրու՞ղ ա թա:

Էզին անու ղօնէ, մարթէ չքար: Գէնիզէ ղօնն էր: Դուն-նիվա մէղօն, չայ խէմէցին: Դիվարին վաան օչխօունէ միսէ զախ էնզած էր: Դօնէ դիյէ ավջիլուղան էյէվ: Գէնիզէ ասաց.

– Քու էնգերտաքէղ էզին, չայ խէմէցին, քէզի հարցու-ցին, քէնացին:

Մարթէ օնզլօմիշ աղավ, ինա միսէ անէր կօղնօղ ուն: Գէնօչէ ասաց.

– Միսէ սավքիին դազէ բահա:

Գէնիգէ միսէ սավքիին դազէ բահէց: Քիշէրէ կօղիյէ է-զին, փութ ային, տէռվիքէ խաշնած ին: Մէգ հաղիգէ դունէ վայնան օջախին մէչնիվա մէղավ, փութ աավ, միսէ չքար: Ուսուլ–ուսուլ գէնօչէ յօննիվա նէ մէղավ: Գէնիգէ քիդէր թա մարթն ա: Կօղէ հարցուց գէնօչէ.

– Միսէ վօ՞րդաղ բահէցէր:

Գէնիգէ աաաց.

– Միսէ սավքիին դազն ա:

Ալի ուսուլ–ուսուլ գէնօչէ յօննան էլավ, միսէ առավ, թուռէ պաց աավ, տուս էլավ: Գէնօչէ մարթէ իմաց, գէնօ-չան հարցուց.

– Միսէ բահէցէ՞ր թա:

Գէնիգէ աաաց.

– Քօ՞նի դօնում հարցնօղ էս:

Մարթէ օնգլօմիշ աղավ՝ միսէ կօղցօն: Վի էլավ, թուռ-նիվա թէռավ: Փութ աավ թա, կօղէ միսէ դօնի զու: Միսին դիյէ կօղին ժըմնէց, աաաց.

– Թուն թաթրէցար, դու ինձի, հիմի յէս դօնիմ:

Կօղէ քիդէր թա ույնէ էնգէրն ա, միսէ ուն դէվէց, ինքէ առչէթին քէնաց: Մարթէ թարցավ, ալի դուննիվա էյէվ:

Կօղին էնգէրէ էյէվ, հարցուց.

– Միսէ ու՞վ ա:

Ան աաաց.

– Միսէ քէզի դէվի՞ օչ թա:

– Չա՛, ինձի դէված չունիս:

– Օլահսա (օլիյէսնա) միսին դիյէ մէզմա կօղցավ:

Մէգէ մէգին ասաց.

– Սուտ դաղինէ մէք անու թէրուցաք, ան մէզմա սօյ կօղ էր:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955 թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել եմ 1984 թ. մայիսին Չիրկինոյում:

ՇԱՇԷ

Գանի չքանի, իյէք ախպար գանի: Էրգու ախպարդաքէ խէրք ունէնի, մէզը՝ խէրքան բազաս էր: Էրգուսէ աստին.

– Ինչակ յէ՞փ մէք թաղօղ ուք, ան ուղօղ ա, մէք էրթօք դօնան, աստւ դօնէ օբօլ էնիք:

Վի էլան, քէնացին: Շաշէ ինչ ու դօնէ զար անա, գիյավ, քախցած մէնաց անա, ան ալ էլավ, քէնաց: Քէնաց, քէնաց, մէզ զէնգին մարթու մէ ռաստ էյէվ: Մարթէ ասաց.

– Նօ՞ր գէրթաս, այէ ինձի հօյիվ աղի:

Դաղան ռազի աղավ: Մէզալ աքվանա դաղան աձիյէ քէշէց, մարթուն ասաց.

– Ինձի ցուզվա (ցուզվէնցու) հացէ խէրզա:

Ան օէ մարթէ հացէ խէրզեց, մէզալ օր ալ խէրզեց, յէքինջի օէ մօլիյէցավ:

Հօյիվը բէդ աավ, բէդ աավ, հացէ պիյօղ օօք չզօ: Փօլօրէ փութ աավ, խէնձօրի ծառ մէ դէսավ, աձիյէ անթուս քէշէց: Խէնձօրնէցէ վաան խէնձօրէ զիլիմած էր: Աձօւն ասաց.

– Ցէս խէնձօրէ վար թափի զում, թուք ինձի ամա ժօղվէցէք:

Դաղան խէնձօրէ վար թափէց, ինչավ, փութ աավ անա, աձիյէ խէնձօրնիյէ բիթուն զիյած ունին: Սադէ մէզ աձու մէ զօղօշին առային խէնձօր մէ մէնաած էր: Միրդէ էլավ, բիթուն աձօւն մօրթէց, անու օբօլ աավ:

Իզվօն աձօւն դիյը էյէվ, փութ աավ անա, աձիյէ բիթուն մօրթէված ին, սադէ մէզէ մէնաած ա: Հօյիվան սէրդօղ հարցուց.

– Ի՞նչ աէր աձօուս, ինչի՞ մօրթէցէր:

Հօյիվէ ասաց.

– Թուն ինձի ամա հաց խէրգէցէր օչ, յէս աձօուն աստի թա, խէնձօրը վար թափի գում, թուք ժօղվէցէք, անէր բիթուն զիյան, իսա աձըս ինձի ամա մէգ հաղիգ մէ զօղօշին առային օքօլ աավ, անու ամա իսու մօրթէցի օչ:

Մարթէ իմաց անա, իսա շաշ հօյիվիս թէռցուց:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955 թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել եմ 1984 թ. դեկտեմբերին Երևանում:

ԹԷՄԲԱԼԸ

Գանի չքանի, մէգ ցախուղին մէչը քառսուն հաղիգ կօղ գանի: Ան քառսուն հաղիգ կօղը էմէժինէ ույինէ էնուշին պօնէ փայ գէնէնի: Մէգը բազարնիվէ գէրթար, մէգը՝ մաղազին, մէգը՝ փաղա, մէգը թացօն գէնէր, մէգալօքը կօղնուշ գէրթանի, կօղնուշ, փէուշ (պէուշ), գազանմիշ էնուշ: Կօղօուն մէչը մէգ հաղիգ թէմբալ մէ գար: Մէգ օր մէ աստին թա աս թէմբալին.

– Թուն հացէ էնօղ էս, թացօն էնօղ էս, մէք իզվօն էզօղ ուղօղ ուք:

Աս թէմբալը ինչբէս ու աաքազէ էլավ անա, բարզէցավ անա, մէմալ աաքազէ մաէ գուր անա, զարթէցավ: Իզվօն կօղիյէ էզին անա՝ օ՜չ հաց զօ, օ՜չ չուր զօ, օ՜չ թացօն զօ, չազյաին ինչիկ չզօ:

– Ի՞նչ աէր թուն աաօր,– հարցուցին:

– Յէս աաօր աաքազէ վի էլավ անա, բարզէցա անա, ինչակ աաքազէ մաէցավ անա, բարզէցա:

Իսա մարթիքըս աստին թա.

–Ի՞նչ էնիք, ի՞նչ էնիք օչ, իսու փաղի վաան վար թէնիք:

Վար թըին: Բազարնիվա էրթօղին աաաց թա.

– Քառսուն մէտրօ, հիսուն մէտրօ զէնջիլ մէ ինձի ամա (օմա) փէ (պէ): Զէնջիլէ հաստ էլլի, գըդրի օչ:

Ան քէնաց բազարնիվա, հիսուն մէտրօ օմուր զէնջիլ մէ առավ փիյէց (պիէց, էփիր), անու էյէթ:

Աս քէնաց ցախուղին գէսը փաթթէց, առավ ումուզը, քաշէց:

– Ի՞նչ զէնէս,– աստին:

– Իսա բիթուն մէգէղէն քաշօղ ում,– ասաց թէմբալը:

Անէր վախէցին իսա մարթաս, իսա զօվաթլի ա դէյ նա:

– Ինչի՞ իդմօն զէնէս,– ալի հարցուցին:

– Յէս էմէժինէ իսու հէղը խաղօ՞ղ ում թա, մէգէղէն փէ-յի (պէի) զում, նէստի զում:

Կօղիյէ աստին թա.

– Իսա պօնէս աս էնէ չի զաա, այէ իսու խէմուր էնէլ դօք:

Թէմբալը ասաց բազարնիվա էրթօղին.

– Ինձի ամա քառսուն թօրբա ալուր փէ (պէ):

Ան քէնաց, քառսուն թօրբա ալուր փիէց (պիէց, էփիր), ան քառսուն թօրբան մէգէղէն քառսօննիվա էլից, չուրն ա էլից, զէբավ խէմուր էնուշի: Մարթիքը ալի հարցուցին.

– Ի՞նչ զէնէս:

– Էմէժինէ խօմ խէմուր էնօղ, հաց էնօղ չի՞մ, քառսուն թօրբա մէգէղէն խէմուր զէնիմ, էմէժինէ զուղիք,– ասաց թէմբալը:

Անէր աստին թա.

– Աս շադ խօզ մարթ ա, իսու օբօլ էնիք, սադէ նէստի թօղ, ուղա թօղ: Մէք փէյի (պէի) զուք, իսու հէդ խօսիք օչ:

Աս թէմբալը նէստավ, գիյավ կիյացավ, գիյավ կիյա-ցավ, ալ ավէլլի կիյացավ, կօղիյէ շադ մէգդաղէցին, քիչ մէգդաղէցին, թիզէցին: Մէգ խէրք ուննօղ մէ ասաց թա.

– Մէք պիյօղ ուք, աս թէմբալը ուղօ՞ղ ա թա: Էգէք իսա մէգդաղացնիյէս փայ էնիք, իսու ինչ ու քէնգի անա, ուն դօք, թէրցէնիք:

Մէգ մէգալի հէդէ խարբէցին, գէլլի՞ թա աստին.

– Գէլլի՛,– աստին:

Մէգ աքվանա մէ քառսուն փայ ային: Թէմբալ մարթէ նէստած ա, խօսի չի:

– Ինչի՞ խօսի չէս,– աստին:

Ալի խօսէցավ օչ: Կօղիյէ վախէցին թէմբալան:

– Ասու էրգու փայ դօք,– աստին:

Ալի խօսէցավ օչ:

– Իյէք փայ դօք,– աստին:

Ալի խօսէցավ օչ:

– Չօրս փայ դօք,– աստին:

Ալի խօսէցավ օչ:

Էդի սօղէ էռսունուինը փայ դէվին: Ալի ու խօսէցավ օչ անա՝

– Ինչի՞ խօսի չէս, հէի՞ք չա թա քէզի,– աստին:

Թէմբալը ասաց թա.

– Ցէ դադին էշադը խօմ չգօ՞ հօգա դադէս, իխադիգ գուդաք, գուդաք անա, վօ՞վ դանօղ ա:

Էռսունուինը հօքին աստին թա.

– Մէք դօնի գուք, վար թընի գուք քու դօնէ:

Ասէր թէմբալին փայը շագլէցին, դաին դօնէ վար թըին, դաղուվօրցուցին:

Էռսունունինը հօքին մէգ փայ առին, թէմբալ մարթէ նէստած դաղը էռսունունինը փայը առավ, գիյավ, բարգէցավ:

Իսա հէքիային աստաձէ ան ա թա՝ կօղօուն ալ խէրք բիդի:

Ասացող՝ Քյազիմ Կարաիբրահիմով, ծնվել է 1926 թ. Կանլի դարա (Գօնլի դաա, Աղունօղ քէղ) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում: Գրառել եմ 1987 թ. հունիսին Չիրկինոյում:

ՑԻ ԿՕՂՆՈՒՇԸ

Գար չքար, ավալէ մէգ զէնգին մէ գար: Ան շադ սօյ, էրօնդ ցի մէ ունէր: Խօզ շուն մալ ունէր: Անու թէռնան օուք զաթէ ինչիկ կօղնալ չի գաէր: Չայխանին հէքիաթ գընէր թա.

– Իմ թէռնան օուք ինչիկ կօղնալ չի գաա:

Ասու աստած խաբարդաքէ մօղէ նէստօղ մէգալ զէն-գին մարթէ իմաց: Ան մարթէ էրգու հադիգ հօյիվ ունէր: Ան հօյիվնիյէ շադ կօղ մարթ էնի: Աս մարթս ասաց թա.

– Ֆիլանջիին ցին կօղնօղ էք: Ինչ ու ուզէք անա, յէս ցէ-զի գուդօմ:

Կօղիյէ մարթուն դուննիվա քէնացին անա, թէռօնէ մէգ շադ խօզ շուն մէ դէսօն: Մարթուն դուննիվա ջինջուղ մէ նէս օսնիլ չի գաէր: Կօղիյէ էգին ույնէ դիյօչը ասդին թա.

– Մէզի բազարան քառսուն մէտրօ չվօն փէ (պէ), մէգ օչխօունէ միսէ փէ (պէ), գալաթ մէ փէ (պէ):

Դիյէ բազարան աստածնիյէ փիյէց (պիէց) ուն դէվէց: Անէր առին քէնացին ցին կօղնուշ: Մարթան թէռօնէ մօղէ շադ մէծ ծառ մէ գար: Քէնացին գալաթնիվա միսէ նէ ցքէ-ցին, չվօնը գալաթին գաբէցին, ծառինէ վանիվէ էլօն, չվօ-նը ծառինէ թափաին վաան չաթալին առանիվէ յէտ թօղու-ցին խօղնիվա: Ինչօն, չվօնին ծայը փռնէցին, թաքօն ծառի-նէ հէղէթին: Ուսուլ–ուսուլ սէլվէլէցին: Շունէ թէռավ, փութ աավ անա, գալաթին մէչը միս զօ: Շունէ թուս թէռավ գալա-թին մէչնիվա: Ան օխթին կօղիյէ գալաթէ չվօնօվէ վէր քաշէ-

ցին ձառինէ վաանիվէ: Գալաթէ շունօվէ ձառին վաան զաբէցին:

Ուինքը ուսուլ–ուսուլ քէնացին կումին մէչնիվէ: Ցին քազէցին, դաին: Սաբախտէն մարթը վի էլավ անա, փութ աավ անա շունը չզօ: Իստուս մօնքաց, ինտուս մօնքաց, շունը չզօ: Մէմալ փութ աավ անա, ցէն մէ էյէվ:

– Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ…

Յէտ աշէց անա, շունէ ձառինէ ձային զալաթին մէչն ա: Թէռավ, ցիուն փութ աավ անա, ցին ալ չզօ: Մարթէ քէլօխը զախ ցքաց չայխանանիվէ էյէվ, նէստավ: Ումէց հէդէ խաբրէ չի, քիդէս թա լիզուն զուլ դէված ունէր: Մէմալ ու փութ աավ անա, ույնէ ցիուն վաան մէզ մարթ մէ քուկա: Մարթէ մօղզինացավ անա, ասաց.

– Մազաամ (մազա) խօզ շունան ալ խօզ կօղ զօննա զու:

Ասացող՝ Քյազիմ Կարաիբրահիմով, ծնվել է 1926 թ. Կանլի դարա (Գօնլի դաա, Արունօղ քէղ) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում: Գրառել եմ 1987 թ. հունիսին Չիրկինոյում:

ԱՐԴԷԼԷՑԻՔ՝ ԱՎՋԻ[186]

Արդէլէցիք ավջիլուղա քէնացին: Հինգ հօքի մարթ քէնաց: Քէնացին անա, արչօնէ ձազէ քէղան, փութ աին անա, արչէ էէվնա չի, խօյին ա:

– Ի՞նչ էնիք, ի՞նչ էնիք օչ, մէգ հօքի մէ յէտ թօղուք մէչնիվա:

Մէզին աստին թա.

– Թուն նէ միդ:

Ասաց.

– Չա՛, վախի զում:

Մէզալին աստին թա.

– Թուն նէ միդ:

Ան ալ ասաց.

– Վախի զում:

Մէ հօքի մէ զար, քէլօխէ թէթէվ էր, ան ասաց թա.

– Յէս մէդնու զում:

Անու չվօնէ զաբէցին, զույնիուս յէտ թօղին: Արչէ քէլօխէ փէռնէց մէչէ:Քաշէց քէլօխէ զըդրէց: Յէտ քաշէցին անա, մարթուն քէլօխէ չքար: Թուրցէվլի մարթիքէ աստին թա.

– Իսա մէդավ անա, քէզ քէլօխէ զա՞ր թա, չքա՞ր թա:

---

[186] «Արդէլէցիք՝ ավջի» զվարձապատումն ինձ համար սկզբնաղբյուր է հանդիսացել գրելու «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարձապատումի տարբերակները)» ուսումնասիրությունը, Երևան, ՀԱԻ հրատ., 2022 (- 352 էջ + 16 էջ գուն. ներդիր), որտեղ համեմատվում են կրոնափոխ համշենահայերից և XIX-XX դարերում տարբեր վայրերի քրիստոնյա հայերից գրառված, սյուժետային ընդհանրություններ ունեցող 37 տպագիր և անտիպ երգիծապատումներ:

Մէգէ ասաց թա՝ չքիդիմ, մէգալը ասաց թա՝ չքիդիմ, մէգալն ալ ասաց.

– Հա՛յդէ, էրթօք գէնօչան հարցէնիք:

Քէնացին կյաղնիվէ, գէնօչան հարցուցին.

– Աս աքվանա մարթըդ վիր էլավ անա, քէլօխը վաա՞ն էր թա, վաա՞ն չէր թա:

Ան ալ ասաց թա.

– Քէլօխէ չքիդիմ, համա բէրբուքէ (բէրվուքէ) ժաժի գուր:

Ասացող՝ Քյազիմ Կարահիբրահիմով, ծնվել է 1926 թ. Կանլի դարա (Գօնլի դաա, Արունօղ քէղ) գյուղում, բնակվում էր Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում: Գրառել եմ 1987 թ. հունիսին Չիրկինոյում:

ԱՐԴԱԼԱՑԻՆԵՐԸ՝ ՈՐՍՈՐԴ

(Թարգմանություն)

Արդալացիները որսորդության գնացին: Հինգ հոգի մարդ գնաց: Որ գնացին, արջի որջը գտան, որ նայեցին, արջը չի երևում, խորն է:

–Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք, մեկ հոգու բաց թողնենք մեջը:

Մեկին ասացին թե՝

–Դո՛ւ մտիր:

Ասաց.

–Չէ՛, վախենում եմ:

Մյուսին ասացին թե՝

–Դո՛ւ մտիր:

Նա էլ ասաց.

–Վախենում եմ:

Մի հոգի կար, գլուխը թեթև էր, նա ասաց թե՝

–Ե՛ս կմտնեմ:

Նրան պարանը կապեցին, փոսը բաց թողեցին: Արջը մեջը գլուխը բռնեց: Քաշեց, գլուխը կտրեց: Որ հետ քաշեցին, մարդու գլուխը չկար: Դրսի մարդիկ ասացին.

–Սա, որ մտավ, տեսնես գլուխ կա՞ր, թե՞ չկար:

Մեկը ասաց, թե՝ չգիտեմ, մյուսը ասաց թե՝ չգիտեմ, մյուսն էլ ասաց.

–Հայդե՛, գնանք կնոջը հարցնենք:

Գնացին գյուղն ի վեր, կնոջը հարցրեցին.

–Այս առավոտյան մարդդ որ վեր ելավ, գլուխը վրա՞ն էր, թե՞ վրան չէր:

Նա էլ ասաց.

–Գլուխը չգիտեմ, բայց շրթունքը շարժում էր:

ՄԱԽՔԷ

Գար չքար, մարթ մէ գար: Ան մարթը ինէնաաունինէ մախք աղաձ ունէր: Ան մարթէ հալիվօրցավ անա, փէղամբէրին մօղնիվա քէնաց, աաաց.

– Փէղամբէ՛ր, յէս ինէնաաունինէ մախք աղաձ ունիմ, կօղութին աղաձ ունիմ, մարթ ցվօնաձ ունիմ, մարթօցէ խափաձ ունիմ, աշխար ժօղվաձ ունիմ: Յէս ան աշխըրյին դաղ չունիմ, իաա մախքօուս խալէսէ գաի՞մ թա, ի՞նչ էնուշ բիդի խալէսուշի ամա:

Փէղամբէրէ աաաց.

– Շաղ մախք ունիս, անու ամա չօրս ջօմփուն առային մէձ չօր ձառ մէ զօ, անու մօղէ քարավանսարայ շինուշ բիդի, էմմէն էրթօղ–էգօղ մարթօցէ առօնց փաա գուղէցընէս: Ինչակ քի ձառէ յէշիլնա օչ անա, մէգ մարթ մէ ուղէլու նէն օսնօղ չա:

Մարթէ փէղամբէրին աստաձը աավ, ան ձառէ քէղավ, չօրս ջօմփուն առային քարավանսարայը շինէց, շաղ մարթու ուղէցուց, ուղէլու մարթ ան ջօմփացան նէն օսնի չէր:

Քիչ օր օնցավ, շաղ օր օնցավ, բառավ մէ պիր ափուն մօնի–մօնի գէրթար: Մարթէ դէսավ բառվուն, ցէն էյէղ.

– Մօմի՛, հաց ուղէլու նէն օսնիլ մի, յէս վաադ աղաձ ունիմ՝ ուղէլու մարթ նէն օսնօղ չա:

Բառավէ թէվէ թափէց, աաաց.

– Ուղուշի վաքիտ չունիմ, շաղ էվադի պօն ունիմ:

Մարթէ ալի բառավուն ցէն դէվէց, բառավէ էյէվ օչ: Մարթուն սիրդէ էլավ, թէվօնքէ ափէ առավ, աաաց.

– Ինէնաունինէ մախք աղաձ ունիմ, քէզիօվէ հաւր ըլլի թօղ:

Բառվուն ցվօնէց, յէղ աշէց անա, ձառէ յէշիլցավ, մար-թուն պիօնէ պաց մէնաց. «Քէզ ի՞նչ աղավ, աղաղիգ մարթ ուղէցուցի՝ ձառէ յէշիլցավ օչ, բառվուն ցվօնէցի, մախք ա-յի՝ ձառէ յէշիլցավ, էրթօմ փէղամբէրին մօղէ»: Մարթէ քէ-նաց, աււաց.

– Յէս ալի մախք այի, համա ձառէ յէշիլցավ:

Փէղամբէրը աււաց.

– Յէս բիթուն քիղիմ: Ան բառավէ գէրթար դաղին ու ախչէզօնէ առան քազուշ մուզիթունօվ: Օնգուչ թի ինձի՝ մէզ–մէզալի հազ ընօղնօուն առան քազուշան ավէլի մախք չզօ: Թուն անօց խալէսէցէր, անու ամա քու մախքիյէ Աս-պաձէ սէփէց:

Ասացող՝ Մինիսա Կարաբաջակովա (օրիորդական ազգանունը՝ Ասկարովա), ազգությամբ թաթար, ծնվել է 1952 թ. Թաթարական ԻԽՍՀ Ալմետևսկ քաղաքում: 1968 թ. ամուսնացել է համշենցու հետ և սովորել է Համշենի բարբառի Խոփայի խոսվածքը: Ռուսաց լեզվի և գրականու-թյան ուսուցչուհի էր: Զրույցը լսել էր սկեսրայրից՝ Շա-բան Սայիդի Կարաբաջակօղլիից (1892–1980 թթ., ծնվ. Ա-ջարիայի Գոնիո գյուղում): Բնակվում էր Ուզբեկստանի Անդիժանի մարզի Սովետաբադ քաղաքում (1991–ից՝ ուզբեկ.՝ Խոնոբոդ, ռուս.՝ Խանաբադ), որտեղ էլ 1987 թ. հունիսին գրառել եմ:

ՉԱԴՈՒ

Գար չքար, մէգ կյաղին զէնգին մարթ մէ զար: Ան մարթէ հյէք դաղա ունէր: Դաղաքէ խէրք ուննօղ դաղա էնի, բիթունն ալ թաղէ (տաղէ) գունի: Մէգ օր մէ դաղէ ասաց թա.

– Հէ՜յ, Ասպաձ, ինձի մէ ախչիգ մէ դու, իմ վարիէթէս ուղա թօղ:

Քիչ օր օնցավ, շադ օր օնցավ, ան դօնէ մէչէ ախչիգ մէ ուննվէցավ: Մէգալ քիշէրը մարթուն մալան մէգ հաղիգ մէ զօրսէվէցավ: Մէգալ օրէ ալի մէգ մալ մա զօրսէվէցավ: Ան ախչիգէ աղավ հէդէվ, էմմէն օր դօնան մալ զօրսէվի գուր: Դաղէ ասաց մէձ դաղին.

– Աս քիշէր թաքի կումին մէչէ, փութ աա թա վօվ մալէ կօղնա գու:

Դաղան կումին քուն աղավ: Զարթէցավ անա, ալի մէգ մալ մէ չքար: Դաղին սիրդէ կլավ: Իսա ջօմփիս դաղէ մէչքէդաղի դաղին ասաց: Ան ալ քէնաց, քուն աղավ, զարթէցավ անա, ալի մալ մէ չքար: Դաղին ալ ավէլլի սիրդէ կլավ: Էմմէնու բիձիգ դաղան ասաց թա.

– Յէս էրթօմ բէղ էնիմ:

Կումէ քէնաց, անդաղ քիչ նէստավ, շադ նէստավ, փութ աավ անա, թուռէ պացվէցավ: Դաղան ույնէ աչվէնօուն ավդէց օչ, բիձիգ քուր օօցքէցան վի կլաձ էր, կումնիվա էգաձ էր: Դաղան բուչխին խօսէլու նէստավ: Մէմալ փութ աավ անա, ախչիգէ օչխարէ զիյավ, անդի հէդէվ ուսուլ–ուսուլ քէնաց ալի օօցքուցէ մէչէ բարզէցավ: Ախպային մազիյը վախութինան ջէրմէգէցօն: Աքվանա դաղէ դէսավ անա, ջօնչէց օչ: Ասաց.

– Մազիյըդ ինչի՞ ջէրմէզած էն:

Դաղան ասաց.

– Կօղին յէս փէռնէցի:

Ախչիգէ իմաց, աչվէնիյէ դաղին վաանիվէ շիլէց:

Դաղէ հարցուց.

– Վօ՞վ ա:

– Վօվ էլլօղ ա, քու ախչիգն ա՝ օօցքուցէ մէչէ բարզօղը:

Դաղէ քէլօխնիվէ զօրչէց.

– Ի՞նչ զասէս, խէրքէդ փախուցէ՞ր թա, ախչզօնէ մախ-քէ ինչի՞ զառնուս:

Դաղին հէդէ յաար աղավ, դաղէ դօնան թուս հօնէց, թէռցուց: Դաղան մէզ սօյ ցի մէ ուուշէց, թէվօնքէ առավ, ցիուն վաան հէձավ, քէնաց:

Քառսուն օր ջօմփա քէնաց: Աշխաաս էլավ: Ջօմփուն էրգու հաղիզ բիձիզ լազօտ ռաստ էյէվ: Դաղան ան լազօղ-նիյէ առավ հէդը: Քէնաց, քէնաց, ցախուղի մէ մէչէ մէզ հին դուն մէ ռաստ էյէվ: Մօղզինցավ, թըռնան փութ աավ անա, բուխչին մէզ զաիվ բառավ մէ նէստած էր: Դաղան մէդավ հօղանիվէ: Բառվուն ասաց.

– Յէս քու դունէդ զինօղ ում:

Բառավէ հարցուց.

– Թուն վօ՞վ էս:

Ան ասաց.

– Յէս ավջի իմ, յէս քէզի ամա միս փէյի (պէի) զում, թուն թացօն զէփէս, հէդրա զուդիզ:

Բառավէ ի՞նչ ասէր, ռազի աղավ: Դաղան էմմէն օր շունիօվէ ցախուղնիվէ ավջիլուղա գէրթար: Դուննիվա առօնց միս թառնա չէր:

Քիչ օր օնցավ, շաղ օր օնցավ, շընիյէ մէձընցօն: Դաղան բառվուն ասաց.

– Ցէս իմ կյաղնիվէ էրթօղ ում, շընիյէ փութ աա, էմմէն օր միս, գաթ ուն դու: Շընիյէ յէտ թօղու մի, փութ էնէս թա, իսա օմօնին մէչը գաթէ աղուն թարցավ, յէտ թօղու գուս էրգուսին ալ:

Ասաց, ցիօնէ վաան հէձավ, քէնաց: Քէնաց, քէնաց, քէնաց, ջօմփադունաքէ մէզ մարթ մէ դէսավ օչ: Ույնէ կյաղը պօքէցավ, փօլօրը փութ աավ, անդաղ ալ ումէց քէդավ օչ: Ձառի մէ դազէ նէստավ: Ցին ալ մօղէ յէտ թողուց: Ինքնուինքէ մըդուէց. «Քէզ ի՞նչ աղավ, հօզայի աբրօղ մարթիքէ նօ՞ր քէնացին»: Կյաղին մարթ–մուրթ, ցէն–ցուն զաթէ չքար: Խօղիյէ էլլած էնի, դէնիյէ ավիրած էնի, կումիյէ բօշ ին, մալ–մուլ, ինչիկ չքար:

Էմէդինա ցին խըրդէց (խըրդաց), խըրխընջաց: Դաղան յէդ աշէց անա, ցէն մէ իմաց, մէզ հօքի մէ քէլօխնիվէ զօրչէ գուր: Թօզէ էլավ, թօզին մէչնան զէնիզ մէ դէսէվէցավ, մօղզինցավ անա, դաղան ջօնչէց, ույնէ բիձիզ քույն էր: Դաղան դէսավ անա, վախէց: Վայի շէիյէ ցիլադած էնի, աունքվէնիյէ էլած էնի, մազիյէ խարըված էնի: Դաղան վախուշան ձառնիվէ էլավ: Քուր զօրչէօվ ձառին մօղը էյէվ, ասաց.

– Ցէս քէզի աշխարիս մօն կալօվ կէղնու չկարցի, թուն քէզի՞ (ինքէ՞դ) էգիր թա: Բիթունօցէ զիյա, թուն մէնացէր: Հիմի քէզի ուղօղ ում: Թէզ ինչի մօղըս:

Դաղան ասաց.

– Մէմալ աշխարըս փութ էնիմ, ինչբէս աշխար ա, անդի հէդէվ գուղէս ինձի:

Դաղան չօրս աչվէնիօվէ ջօմփուն փութ գէնէր, շընօուն բէդ գէնէր: Շընիյէ դէսէվի չէնի:

Մազաամ (մազա) բառավէ դօնան էլած էր: Ցէփ ու էյէվ, փութ աավ անա, շընիյէ գէսէցաիվա խօղնիվա մէդած ին, զաթէ օմօնին մէչէ աղուն թարցած ա: Էմեդինա շընօուն յէտ թօղէց: Շընիյէ զօփմիշ աղօն: Քուր թէմ էնզի չի զաա.

– Ինչի՛, քախցած իմ, ուդօղ ում քէզի:

Դաղան ալի փօլօրէ փութ աավ, հէռու դաղնան դէսավ թօզէ էլած էր, ասաց ինքնուինքէ.

– Իմ շընիյէ քուկօն:

Քուէ թէմ էնզի չկաաց, ձառինէ վաաննիվէր էլլուշի գէբավ: Թէվէ էրգէնցուց դաղին մօղնիվէ, ան օխթին շընիյէ ժըմնէցին, քուօչէ ցիլադէցին:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955 թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել եմ 1987 թ. հունիսին Չիրկինոյում:

ՕՑԷ

Գար չքար, մէգ մարթ մէ գար: Ան մարթէ բիձի օխ-թաու հէղէվ ավջիլուղ գէնէր: Շաղ սօյ ավջի էր: Ան ավջին կյաղին ջօթին զինա գուր մաօվէ: Մաը բառավ էր:

Մէգ օր մէ ավջին քէնաց ավջիլուղա: Ան ինչիկ ցվօնէլ չկարցավ: Ապագէ մաի գուր, ավջին յէտ թարցավ: Փիշ-ման քուկար դուննիվա: Ցախուղին ու դօնէ առային մէձ քէղ մէ գար: Ան քէղին մէչէ մէգ յաշիղ մէ լաղա (լաղէ) գուր: Ավջին գունգէցավ (գօնգէցավ), փութ աավ. յաշիղը քէղին հէղնինէ տայվա գէրթա: Ինքնուինքէ աաց թա.

– Քէզ ի՞նչ զօ յաշիղին մէչէ:

Թէռավ փըռնէց յաշիղը, փութ աավ անա, մէչէ մէձ օց մէ գար: Օցէ մարթու լիզու սօվըէ, խաբըէ գուր: Աաց թա.

– Ցէս քէզի ուղօղ ում:

Ավջին աաց.

– Ցէս քէզի խալըսէցի, թուն ինձի ինչի՞ ուղօղ էս:

Օցէ աաց.

– Ինձի քէզի բէս մարթ մէ չուրնիվա վա ցքէց: Անու ա-մա բիթուն մարթօցէ յէս ուղօղ ում:

Ավջին աաց.

– Հա՛յդէ, հէդրա էրթօք, իյէք հաղիզ հօքօվօրցան հարցնիք, անէր ինչ աաին անա, ան գէնէս:

Քիչ քէնացին, շաղ քէնացին, ջօմփուն մէգ էշաղ մէ դէ-սան: Էշաղը շաղ զաիվ էր, զօօվի բէղէղէ գուր: Անդէ օցէ հարցուց.

– Իսա մարթէ ինձի քէղին մէչնան հօնէց, յէս իսա մար-թուս ուղուշ զուզիմ, ի՞նչ խէրքըղ զըղրա զու:

Էշաղը ասաց.

– Մարթօցը բիթուն ուղուշ բիղի, իմ դիյը ինձի կաունէ թաղէցուց, ցէմէռէ թէռցուց:

Անղի հէղէվ մէզ ցի մէ ռաստ էյէվ, ան ալ ամօն ասաց: Էղի սօղը դաուշօնէ ռաստ էյէվ: Անու ալ հարցուցին: Դաուշօնէ ասաց թա.

– Յէս ցէզի ավդա չիմ, ինչբէ՞ս իսպօն մէձ օցէ բիձի յա-շիղին մէչէ սաղմէցավ:

Օցէ ասաց թա.

– Մարթէ շիդազ զասա, յէս յաշիղին մէշն է:

Դաուշօնէ ալի ավդաց օչ: Ասաց.

– Հալա նէ միդ, փութ էնիմ:

Օցէ նէ մէղավ, քէլօխէ թուրցէվ մէնաց: Դաուշօնէ ա-սաց.

– Հաբա քէլօխէդ սաղմէցավ օչ:

Օցէ քէլօխն ալ թիյէց յաշիղին մէչնիվա: Ան չախը դաուշօնէ յաշիղին խուփէ խաշնէց, մարթուն ասաց.

– Իսա աշխըրիս բէղքութինին չօքուդութին զէնին, իսա իսպօն աշխար ա:

Մարթէ յաշիղը առավ, ալի քէղնիվա վա ցքէց: Յէտ թառնէլէ ինքնուինքէ ասաց.

– Ասօր ինչիզ ցվօնէլու ինչբէ՞ս դուննիվէ թառնօմ:

Թէվօնքը ափէ առավ, դաուշօնին ցվօնէց, ասաց.

– Դաուշօնէ շիդազ զասէր, իսա աշխըրիս բէղքութինին չօքուդութին զէնին, իսա իսպօն աշխար ա:

Ասացող՝ Ջելալ Օսմանի Կարաիբրահիմով, ծնվել է 1955 թ. Ղազախստանի Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում, ավարտել է Ֆրունզեի (Բիշքեկ) պետհամալսարանի մեխմաթ. ֆակ., Չիրկինոյի ռուսական դպրոցի տնօրենն էր: Գրառել եմ 1988 թ. օգոստոսին Երևանում:

ՂՐՂԶՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1944 թ. Կենտրոնական Ասիա աքսորված կրոնափոխ համշենցիների հարսանիքի նկարագրությունը կարծում եմ հետաքրքիր կլինի ընթերցողներին, ուստի որոշեցի գրական հայերեն պատմելուց բացի, որոշ հատվածներ կամ նախադասություններ, ուղիղ խոսքեր, բառեր ներկայացնել ինչպես որ գրառել եմ՝ բարբառով, քանի որ միայն բարբառով է հնարավոր փոխանցել նման ազգագրական նյութերի նրբերանգներն ու համնուհոտը:

Դժվարության հանդիպելիս ընթերցողները կարող են օգտվել սույն գրքում զետեղված Խոփայի խոսվածք–գրական հայերեն բառարանից:

Տղան աղջկան հավանում է, մորն ասում է, որ ցանկանում է ամուսնանալ: Մայրը գնում է աղջկա մոր մոտ այդ մասին խոսելու: Եթե համաձայնության են գալիս, ապա որոշում են «նէշօն ղէվուշ»՝ նշան տալ, «նէշանուշ»՝ նշանել: Մայրերն իրենց ամուսինների և ընտանիքի անդամների հետ քննարկելով են այդ բանակցությունները վարում:

Նշան դնելիս տղայի կողմից 10–15 մարդ է գալիս: Նվերներ են տալիս, մատանի են նվիրում: Տանտերը սեղան է բացում, քննարկում են հարսանիքի հետ կապված հարցերը:

(Դաղան ախչրկօնը հավնի զու, մարին զաաա.

– Սօյ ախչիզ ա, արնօղ ում։

Հէղէվ մարը էրթօղ ա ախչրկօնէ մօրը հէղը խարբօղ ա։ Գաաա.

– Իմ դըղան քու ախչրկօնը հազ զէնա։

Ռազի էլլի անա նէշօն դըվօղ ուն։ Հէղէվան դաս–դասնուհինզ մարթ կուկօն նէշօն դէվուշ։ Դօնը դիյը հաց վարթնա զու)։

Հարսանիքի որոշված օրը փեսայի կողմը հարսի տուն է գնում սովորաբար երեկոյան 7–8–ի կողմերը, իսկ եթե աղջկա տանը սեղան է գցվելու (հիմնականում՝ բակում), ապա ավելի շուտ՝ ժամը 4–ին, որպեսզի երեկոյան 8–9–ին հետ գան փեսայի տուն։

Փեսայի կողմը ճամպրուկով է գալիս, որի մեջ լինում են հարսի շորը, շապիկ, բաճկոն, ժակետ, գլխաշոր, ականջօղ, մատանի, մեդալիոն և այլն։

Ճամպրուկը տալիս են հարսի սենյակի առջև սպասող հարսնաքրոջը։ Հարսնաքույրը լինում է կամ հարսի քույրը կամ մոտիկ ազգականուհի, անպայման ամուսնացած։ Հարսնաքույրը, ազգականուհիները կամ մտերիմ ընկերուհիները հագցնում են հարսին։ Շորեր հագցնողներին 10–ական ռուբլի «փախշիշ» են տալիս։

Դրանից հետո հարսի հորեղբայրը կամ եղբայրը նրա մի ձեռքից բռնած, հարսնա–քույրն էլ մյուս ձեռքից բռնած, բերում են տան դռան մոտ, բայց դուրս չեն գալիս։ Դռան մոտ կանգնած են լինում հարսի հորեղբայրը, քեռին, այլ ազգականներ։ Փեսայի ազգականները հարսի հորեղբորը

և քեռուն գումար են տալիս: Այն նախապես տղայի բարեկամներին է տալիս փեսայի հայրը: Հարսի հորեղբորը տրվող գումարը կոչվում է «հօպէրչէք», իսկ քեռուն տրվողը՝ «քէրէչէք»:

«Հօպէրչէք»–ը լինում է հարյուր ռուբլի, «քէրէչէք»–ն էլ լինում է 50 ռուբլի: Հարսի հորեղբայրը ինքն է հայտարարում.

–Ախչըկօնը հօպէրչէքը հաուր մանաթ ա:

Փեսայի հայրը կարող է կատակով չհամաձայնվել, քիչ տալ, նրանք է՛լ ավելի գովեն հարսին: Եթե հարսը քեռի չունի, դռան մոտ կանգնում են մորաքրոջ ամուսինը, մորաքրոջ տղաները, հիմնականում՝ երիտասարդները:

Հորեղբոր փոխարեն կարող են կանգնել հորեղբոր տղաները, իրար հետևից մի քանիսը, փողը վերցնում է մեկը: Փողը փեսայի հայրը անձամբ չի տալիս: Նրա փոխարեն փողի համար վիճում, կատակում են նրա եղբայրները կամ աչքաբաց, սրամիտ մեկը: Կարող է հարևանը կամ փեսայի հոր ընկերն ասել, որ նվերի փոխարեն ես կտամ «հօպէրչէքը», կամ էլ կարող է հայրն իր ընկերոջը կամ մի ազգականի ասել, որ առ այս 200 ռուբլին կտաս «հօպէրչէք»:

«Հօպէրչէք»–ի փողը «հօպար»–ը՝ հորեղբայրը, իսկ «քէրէչէք»–ը՝ քեռին, բաժանում է մյուս եղբայրների միջև կամ հետո գնում են միասին ռեստորան, միասին ծախսում, կամ ոչխար են առնում, քեֆ անում, կամ էլ եղբայրներն են ասում՝ այդ փողը թող մնա քեզ, եթե հորեղբայրը ուննոր չէ: Եթե նրանցից մեկը եղբայրներ չունի, այդ փողը իրենն

է, դնում է գրպանը: Իրենց ասելով, այս սովորույթը ղազախների կամ կիրգիզների (ղրղզների) մոտ չկա, որևէ հարևան ժողովուրդ չունի:

Քեռու և հորեղբոր հետ դռան մոտ կարող է կանգնել նաև հարսի եղբայրը, հիմնականում՝ փոքր, նրան էլ են փող տալիս, բայց քիչ: Հորեղբայրը և քեռին փողը վերցնելուց հետո հեռանում են, մնում է փոքր եղբայրը, որն ասում է, որ ես չեմ թողնում, նրան էլ են փող տալիս, բայց՝ քիչ:

(Դաղին սէմթան չամադանօվէ նօհարսա քուկանի, հարսինէ հարսէնքույէ պիյէ գուր, նէմէղնի գուր հօղանիուս, հարսը նէթէնէ գունի դաղին դօնան պիյաձ շէիյէ հաքցընէ գունի: Շէիյէ հաքցընօղնօուն դասէ մանաթ փախշիշ գուղանի: Անդի հէղէվ հարսը հօննօղ էլլէնի անա դաղին սէմթան յա հօպարը, յա հարսին ախպարը, թէվէ փըռնէ գուր, հարսէնքույն ալ թէվը փըռնէ գուր, պիյէ գունի թուրնիվա թէմ ցքէնի: Թրօնը վաան դաղին սէմթան մարթ ցէն գուղանի, քուկա հիսուն մանաթ):

Դրանից հետո հարսին հանում են դռնից: Հարսը տնից դուրս գալիս սովորաբար արտասվում է, ասում է.

- Յէ՛ մա, բաբա՛, քույի՛գ, ախպա՛ր... (Մայրիկ, հայրիկ, քույրիկ, եղբայր):
- Բավականաչափ լացում է, գոռում են.
- Լա՛ մի (մի՛ լացիր):

Հարսի թափորի առջևից փոքր զուռնա, մեծ սրինգ են փչում, դհոլ են խփում, երգում են, պարում են, եթե հեռու է՝ հարսին ձի են նստացնում (ցիուն հէձեցնի գուն): Գալիս են տղայի տուն են հասնում:

Աղջկա մայրը հարսանիք չի գնում, հայրը, եղբայրները, քույրերը գնում են:

Աղջկա հայրը միանգամից չի գնում, նրան համոզում են ու նա էլ բոլորի հետ գնում է փեսայի տուն: Ճանապարհը լավ մաքրած, սրբած են լինում, իսկ եթե մթնել է, ապա փայտի ծայրին շոր են փաթաթում, նավթ են լցնում վրան և այրում, ճանապարհը լուսավորում:

Որ գալիս հասնում են փեսայի տան մոտ, հրացան ունեցողները օդ են կրակում, ատրճանակ ունեցողներն ատրճանակով են օդ կրակում, երկու կողմի հարազատները գոռում, գոչում են:

(Անդի հէղէվ հարսը հօնին գու թուրնիուս գօնչէլօվ, խաղալօվ (երգելով, պարելով), գէրթան: Մօդիք էլլի անա օտքէնցի քուկօն, արչէթին ձիբուն (փոքր գուռնա), գավալը փէչի գուն, դաուլը գուդդօն, զօնչի գուն: Քուկօն դաղին դունէ պօբի գուն (հասնում են), հէռու էլլի անա, ցիուն հէձէցնի գուն:

Էնիշտան ինքէ քալ չի ախչէկօնէ դուննիվա:

Հարսի շէիյը՝ սօյ շաբիզ կէլլի, գաբա գուննա, չէքէտ գուննա, խալվի գուննա, վաան լաչակ գուննա, քյուփէ (ականջօղ), մաղնի գուննա, արչէթին հօմայիլ գուննա: Քուկօն դաղին թուրնիուս թէմ կէնզին: Հարսը դօննան կէլլա, անա կուլա:

– Յէ՛ մա, բաբա՛, քույի՛գ, ախպա՛ր, – լալօվ հանին գու:

Էփէյդա կուլա, անու զօրչի գուն.

– Լա՛ մի:

Ախչկօնէ մայէ հարսնիքնիվա էրթա չի, դաղէ գէրթա, ախպէրդաքէ գէրթան, քուօշթօնէ (հարազատ քույրերը և զարմուհիները) գէրթան:
Հաուր մետրէ հէրու դաղին դանան զօնչին զու: Զօմփան սօյ մը սէփէլ (սրբել) զուղօն, մէղօղում էլլի անա, «Մախաչկալա» զասին, հին շօհյէ փաղին փաթթի զուն, վաան քազաղի լէլլու զուն, քօլի զուն, ջօմփան լուսացնի զուն: Չօրս դաղ լուս քօլէ զունի):
Հարսի տուն գնում են, եթե մոտ է, երեկոյան ժամը 7–8–ին, իսկ եթե հարսի տանը սեղան է գցվելու, ապա ժամը 4–ին, որպեսզի երեկոյան ժամը 8–9–ին հետ գան փեսայի տուն: Հիմնականում, ով փող ունի, հարսի տան բակում էլ է սեղան բացում, բայց պարտադիր չի:
(Քազաղին լէլլու զուն իյէք–չօրս դաղ լուս զէնին, հարսը էյէվ դէյնա, թէվօնք ուննօղը թէվօնք զուցքա, լիվօռ (ատրճանակ) ուննօղը լիվօռ զուցքա (երկու կողմից էլ հարազատները զոռում զոչում են):
Թէրօնքը սէփէլ զուղօն, չուր ցանին զու, անդի հէդէվ հարսը (ազգականներով) քիչ մէ մօղզինա զու դուննիվա: Մօղզինան, հէդէվնա հարսինէ արչէթնիվա խալի, քիլիմ փէրի զուն, օչխար փէրի զուն):
Հարսի բարեկամները պահանջում են, որ զորգ, կարպետ բերեն, այստեղ էլ կատակում են, վիճում, թե այս գորգը փոքր է, կարճ է, ավելի երկարը բերեք, բերում են ավելի մեծը: Եթե էլի են շարունակում կատակել, վիճել, փեսայի ազգականներից մեկը ասում է «Ես իմ կոստյումը կփռեմ, թող հարսը անցնի»: Մի խոսքով՝ աղմուկ, աղա-

ղակ, աշխուժություն է տիրում, հետո հարսի ազգականները պահանջում են ոչխար բերեն, բերում են:

(Հարսը խալէցէ վաան զօնգի (գունգի) գու, օչխարը իյէք դօնում օնցնի գու հարսինէ պօլօրը, օչխարը հարսինէ հոմա նշան կուդօն՝ օնգուջը գէղրի գուն: Հէղէվ ան օչխարը քումնիվա դօնին գու, ան օչխարը հարսինը գէլլի): Ոչխարի ականջից շատ քիչ արյուն են հանում, հարսանիքի ժամանակ այդ ոչխարը չեն մորթում, դա հարսի սեփականությունն է դառնում:

Փեսան երկու ընկերներով հետևում թաքնված գնում է հարսի մոտ, առաջ բաշլուղի կտորով ծածկում էր դեմքը, հիմա հովարով (կոզիրյոկով) գլխարկ են դնում, հովարը իջեցնում է դեմքին, իսկ եթե գլխարկ չի դնում, ապա գլուխը թաքցնում է կոստյումի մեջ, մոտենում է հարսին: Ընկերները մի պահ կողք են քաշվում, և նա գրպաններից հանում է կոնֆետներն ու մանրադրամը, նետում է աղջկա վրա և իսկույն բոլոր երեքը փախչում են: Ընկերները չեն թողնում, որ հարսի ազգականները փեսային բռնեն, եթե բռնեն՝ ամոթ է, ուրեմն ճարպիկ չի, աչքաբաց չի:

(Անդի հէղէվ էնիշտային ցէն գուդօն, էնիշտան էգու էնգէր գուննա, չէբին խուրդա (քազաձ) փաա գուննա, ան փաան կանֆէտօվէ հարսինէ վաան ցօնա գու ու փախչի գու:

Բիձի դաղաքը ան փաան կօնֆէտնիյօվէ ժօղվի գուն, խալէցէ վաան խաղ գէնին (պարում են), էնիշտային խաիմնին խալէցէ վաան խաղ գէնին, հէղէվն ալ հարսինէ խաիմ-

նիյէ հէղրու խաղ գէնին՝ (միասին պարում են) Օբշի խո-րօն, Շալախօ, Լիթիթի, Թիթրէմէ ...

Գօմաց – զօմաց էրթալօվ թուրնիուս թէմկէնզին, էգու հաղիզ թէնազ, մէզ տարէլկա (օմօն, սաղան) փէյի գուն, թէնազնիյէ խաչ գէնին թըրօնէ վէէվին շիմին վաան, շիմին վաա փիալա, յա տարէլկա (օմօն, սաղան) վարթէնի գուն, անի վաա մէղնէլէ հարսէ աչ օտքօվէ շէփէցնա գու, զօղրա գու: Գօղրի անա, սօյ հէսէբի գուն զօղրի օչ անա, չօքուտ հէսէբի գուն:

Հարսինէ հօղան այրի գէլլի, հարսինէ անդաղ գունգէց-նի գուն բուչխին: Հարսինէ խսիմնիյէ մէղնի գուն այրի հօ-ղանիվա (առանձին սենյակ), ղաղին (փեսային) խսիմնիյէ աննիվա խարէվի (խարնէվի) չին: Անդի հէղէվ բաբը (էնիշ-տայի դաղը՝ հայրը, որ հարսի համար պապ – բաբ է հա-մարվում կամ կոչվում) քուկա հարսինէ վայի փէրդան վէգալնու գու, հարսինէ կէլխուն փաա թընա գու (քողը բարձրացնում է և տակը փողը՝ 25–50–100 ռուբլի է դնում): Անդի հեղէվ դէփուր վարթէնին գու, խաղ գընին (կողքի սենյակում հարսի հարազատների համար սեղան են բա-ցում):

Անդի հէղէվ թամադա մէ գուուշին (թամադա են ընտ-րում):

Այժմ բակում են բացում սեղանը և հարսի և փեսայի ազգականները միասին են նստում ու թամադա ընտրում, նախկինում լավ սեղանը հարսի բարեկամների համար էր, իսկ փեսայի բարեկամների համար սեղան էին դնում, բայց ոչ նույն առատությամբ:

Հարսը մնում էր իր սենյակում, ուր նրանց համար սեղան էին գցում, փեսան իր ընկերների հետ առանձին սենյակում էր հաց ուտում, տարեց մարդիկ առանձին էին նստում: Հարսի կողմը միայն տղամարդ ազգականներն էին փեսայի տղամարդ ազգականների հետ սեղան նստում, իսկ երիտասարդ աղջիկներն ու մյուս կանայք՝ հարսի սենյակում: Փեսայի կին բարեկամները սեղան էին դնում, փեսայի եղբայրները օգնում էին սեղան գցելուց, իսկ սեղանի շուրջը նստում էին հիմնականում հյուրերը և ոչ մոտիկ ազգականները: Այժմ մի փոքր փոխվել է, սեղան են բացում բակում, մինչև հյուրերի սեղան նստելը, ընտրված է լինում թօյբաշի[187]՝ հարսանիքի ղեկավար: Փեսայի հայրը հարսանիքից մեկ շաբաթ առաջ հավաքում է մոտիկներին, որոշում են, թե ովքեր պիտի լինեն թօյբաշին, թամադան, զավսկլադը (պահեստապետը), որը որոշում է որտեղ ինչ դնեն: Նա ունի օգնականներ, որոնք օղի, գարեջուր են բաժանում սեղաններին, այդ ժողովում որոշում են, թե ինչ պետք կգա, այսքան օղի, այսքան ուտելիք, որոշում են, ով պետք է մեծ կաթսայի մոտ կանգնի, եփի, ով մատուցի:

Փեսայի հայրը չի խառնվում ոչնչի, նա միայն փողն է տալիս թոյբաշուն, թոյբաշին մյուսներին ուղարկում է այս ու այն առնելու, բերում են, հավաքում մի սենյակում: Զավսկլադը (պահեստապետը) միայն խմիչքի համար է պատասխանատու, իսկ մյուս բաները կանայք են եփում–թափում, իրենք գիտեն: Այդ ժողովի ժամանակ են որո-

---

[187] **թօյբաշի**- հարսանիքի, խնջույքի ղեկավար:

շում, թե քանի հոգի պիտի զագս զնա, ինչ մեքենայով և այլն:

Թոյբաշին հարսանիքի ժամանակ սկզբում հրավիրում է հարսի ազգականներին, հետո այն հյուրերին, որոնք հեռվից են եկել, հետո հարևաններին, բոլորին հրավիրում է, բոլորը նստում են: Նա ասում է, որ այս մարդու տղան ու այս մարդու աղջիկը ամուսնանում են, խնդրում եմ կարգապահ լինեք, ուտեք, խմեք, ուրախանաք, պարեք: Հետո ընտրում են թամադա, որին մինչ այդ արդեն ընտրել էին, թոյբաշին ասում է, որ այս մարդուն թամադա ենք առաջարկում, հարցնում է՝ դուք հո դեմ չե՞ք, պարզ է, որ դեմ չեն լինում, թամադան ընտրում է օգնականներ ու երբ հոգնում է, նրանք են կենացներ ասում:

Թամադան բարեմաղթանքներ է ասում, որ բարի եք եկել, թող ձեզ մոտ էլ նման ուրախություն լինի, հրավիրում է հարսին ու փեսային իրենց ընկերներով, սկսում է նվագել երաժշտությունը, մի 10–15 հոգի հարսի և փեսայի ազգականներից, հարսի և փեսայի հետ անում են պատվո շրջան: Առջևից գնում են հարսը և հարսնաքույրը, փեսան և փեսայի ընկերը: Նրանց հետ մոտիկ ընկերներ, մոտիկ ազգականներ, քույրեր և եղբայրներ, ոչ բոլոր բարեկամները: Նրանք քայլում են դանդաղ, նրանց առջևից 2–3 հոգի պարելով գնում են: Մի շրջանի ընթացքում պարողները փոխվում են:

Արդեն մի 10 տարի է, որ այդ պատվո շրջանը կատարելիս հարսի և փեսայի գլխավերևում մեծ կտոր են պահում չորսով՝ տղա–աղջիկ, տղա–աղջիկ: Բոլորը ծափա-

հարում են, հարսը երբեմն փեսայի թևն է մտնում, բայց սովորաբար չի մտնում: Գալիս հասնում են իրենց համար նախատեսված սեղանին: Երբ հարսն ու փեսան անցնում են, բոլորը կանգնում են: Հետո բոլորը նստում են, բայց հարսնաքույրն ու փեսայի ընկերը կանգնած են մնում: Թոյբաշին խոսում է, ասում է խմիչքները բացեք, քեֆ արեք, կանչում է հարսի եղբորը, եթե չունի՝ երիտասարդ քեռուն, նա դանակով բարձրացնում է հարսի քողը, դրանից հետո բոլորը ծափ են տալիս, որից հետո թոյբաշին թույլ է տալիս նստել: Եվ ամեն անգամ կենաց ասելու ժամանակ հարսն ու փեսան վեր են կենում, ոչ ուտում են, ոչ խմում (շատ քիչ են ուտում): Նրանք մի 3 ժամ են նստում, հետո գնում են: Բայց մինչ այդ հայտարարում են, որ այժմ պիտի պարեն հարսն ու փեսան, ոչ ոք չխառնվի.

– Հարսինըխաղ էլլօղ ա, օուք խարէվի օչ թօղ:

Միայն նրանք են պարում: Սկզբում նրանց հետ դուրս են գալիս հարսնաքույրն ու փեսայի ընկերը, նրանց հետ մի փոքր պարում են, այնուհետև թողնում են, որ նրանք մենակ պարեն: Հարսանքավորները պարի ընթացքում մոտենում են հարս ու փեսային և փող են տալիս, խառը՝ երկուսին էլ տալիս են: Եթե հարսնաքույրն ու փեսայի ընկերը շարունակում են պարել, նրանց էլ են տալիս՝ 10–ական, 25–ական, 50–ական ռուբլիներ: Այդ փողը մնում է նրանց: Փող են տալիս նաև նվագողներին: Հետո հարսն ու փեսան գնում են տուն: Հարսը գնում է առանձին սենյակ, ուր նա քնում է փեսայի քրոջ և իր մոտիկ հարազատ աղջիկների հետ:

Փեսան կարող է էլի հետ գալ և շարունակել հարսանիքում ուրախանալ: Հարսանիքի ավարտից շատ առաջ փեսան գնում է ընկերոջ, եղբոր կամ բարեկամի տուն, որտեղ էլ քնում է: Երկու–երեք օր այդպես մնում է նրանց տանը, այդ ընթացքում թաքուն, երբ հայրը տանը չի, կարող է գալ–գնալ ու հարսի հետ խոսել:

(Հալիվօրնիյէ ժօղօվվի գուն, նիքյա[188] գէնին էնիշտայի դունը): Զրուցում են: Հարսը մի սենյակում է նստում, փեսան՝ մյուս: Հալիվորների համար սեղան են դնում, հարազատները չեն հավաքվում, շատ մոտիկ մի 2–3 հոգի: Կարող է տղայի ընկերը նրա հետ այդ սենյակում լինել, աղջկա ընկերուհին էլ՝ նրա հետ: Տղան խալաթ է հագնում, առանց կոճակի կամ էլ վերնաշապիկ՝ առանց կոճկելու և տաբատ՝ առանց կոճկելու, մի խոսքով այնպիսի հագուստ, որ կոճկված կամ կապված չլինի, այլ՝ազատ: Աղջիկն էլ միայն խալաթ է հագնում՝ առանց կոճկվելու, առանց վարտիք, ամբողջովին մերկ, միայն խալաթ: Ոչ ոք չկա այդ սենյակում:

Ծերունիներն իրենց միջից մեկին նշանակում են շաադաղ[189]: Ներկա է լինում նաև մոլլան: Կանչում են տղայի ընկերոջը, նրան տալիս են մի բաժակ շերբեթ՝ շարբաթ, և ասում.

(Նիքյաին շաադաղը նէստի գու, դաղին սէմթան նէստի գուն, ախչըկօնէ սէմթան նէստի գուն, մօլլան ալ նէստի գու, մօլլան հարցէնա գու.

---

188 Նիքյա- պսակադրություն, ամուսնություն:

189 Շաադաղ-վկա:

– Ֆիլանջիին ախչիկէ քէզի դէվին, ռազի՞ էս թա):

–Դու գնա և փեսային հարցրու. «Դու՛, այսինչի որդի, քո համաձայնությա՞մբ ես կին վերցրել այսինչի աղջկան»:

Ընկերը շարբաթի բաժակը տանում տալիս է փեսային, և փեսան, երկու ձեռքերով շարբաթի բաժակը բռնում է և ասում բաժակի վրա.

–Ես՝ այսինչս, այսինչի տղան, կին վերցրի այսինչի աղջկան իմ համաձայնությամբ: Ընկերը հարցնում է.

–Հազ այէր ու առէ՞ր թա (Սիրեցիր ու առա՞ր):

Պատասխանում է.

- Հա՛, հազ այի, առի (Այո՛, սիրեցի, առա):

Այսպես հարցնում է երեք անգամ և երեք անգամ լսում պատասխանը: Պետք է այնքան բարձր ասվեն այդ խոսքերը, որ և՛ աղջիկը, և՛ ծերունիները լսեն: Որից հետո այդ շարբաթի կեսը խմում է փեսան, որից հետո փեսայի ընկերը բաժակը վերադարձնում է:

Ծերունիները կանչում են հարսնաքրոջը և ասում, որ գնա նրան էլ հարցնի: Գնում է նույն սցենարով հարցնում է: Հարսը մնացած շարբաթն է խմում: Հարսնաքույրը դատարկ բաժակը բերում է ծերունիների մոտ: Հարսը կարող է բարձր չպատասխանել, շարբաթը որ խմի, նշանակում է՝ համաձայն է: Որից հետո հարսի ընկերուհին բաժակը վերադարձնում է և ասում, որ նա համաձայն է: Մոլլան ասում է.

- Այսօրվանից այսինչի տղան և այսինչի աղջիկը համարվում են մարդ ու կին: Բոլորն ասում են.

- Օմին,– և գնում են տուն:

Փեսայի հայրն ու մայրը ծերունիներին նվեր են տալիս՝ գուլպա, թաշկինակ, վերնաշապիկ, իսկ մոլլային՝ փող՝ 10–25–50 ռուբլի:

Երբ տղայի ընկերը բաժակը վերադարձնում է, գնում է փեսայի մոտ, նա հագնվում է, երբ հարսի ընկերուհին է բաժակը վերադարձնում ծերունիներին և վերադառնում հարսի մոտ, հարսն է հագնվում:

Հետո չորսով նստում են մի սենյակում, թեյ են խմում, սուրճ, ինչ–որ բան են ուտում, երաժշտություն են լսում, զրուցում: Կարող են մի քանի շատ մտերիմներ էլ և՛ փեսայի, և՛ հարսի կողմից մի 3–4 հոգի, ներկա գտնվել: Բայց ոչ երբեք փեսայի հայրն ու մայրը:

Որից հետո նրանք գնում են, հարսն ու փեսան մտնում են իրենց սենյակը...

Այս բոլորը (ծերունիների ժողովը և այլն) տեղի է ունենում երեկոյան՝ արևի մայր մտնելուց հետո:

Հարսանիքի հաջորդ օրն իսկ հարսը տանը գործ է անում, ավլում, թափում: Հարսը փեսայի հոր հետ չի խոսում ամենաքիչը կես տարի: Լինում է և երեք–չորս տարի և ավելի: Չի խոսում նաև փեսայի եղբայրների հետ, բայց ավելի քիչ՝ 3–4 ամիս: Փեսայի իգական և արական սեռի բոլոր ազգականների հետ ժամանակավորապես չի խոսում, բայց իգական սեռի ազգականների հետ ավելի շուտ է սկսում խոսել: Որքան հեռու է ազգականը, այնքան ավելի շուտ է սկսում նրա հետ խոսել: Սովորաբար նվեր տալուց հետո նվեր տվող ազգականի հետ սկսում են կամաց–կամաց խոսել:

Փեսան էլ չի խոսում հարսի ազգականների հետ, և՛ տղամարդկանց, և՛ կանանց։ Այս դեպքում էլ, ինչքան հեռու է ազգականը, ավելի շուտ է խոսում։ Այս ամենը տևում է մոտ հինգ ամիս, իսկ հարսի ծնողների հետ չի խոսում մեկ տարի, իսկ ծխել ու խմել նրանց ներկայությամբ՝ երբեք չի կարելի։ Հարևանների հետ կարելի է խոսել։

Շաաղաղը հարսանիքից հետո 5, 10 կամ 20 օր հետո հարսին ու փեսային հրավիրում է իր տուն, ոչ թանկարժեք նվերներ է տալիս։ Ընդհանրապես, մյուս ազգականներն էլ, հարևաններն էլ, ընկերներն էլ հրավիրում են։

Հարուստ մարդկանց հարսանիքը 2–3 օր էր տևում, մյուսներինը՝ սովորաբար մեկ օր։ Հարսանիքի հաջորդ առավոտյան մոտիկ ազգականները հավաքվում են փեսայի տան մոտ և կրկին երգում, պարում, նվագում, կրկին հաց էին ղնում։ Այդ պարը կոչվում է «Սախատնի խաղ», փեսային էլ են պարացնում։

Փեսայի ծնողները հարսանիքից հետո շաաղաղին նվերներ են տալիս՝ վերնաշապիկ, կոստյում, գլխարկ, թամադային չեն տալիս, բայց երբեմն վերնաշապիկ են նվիրում։

Փեսայի ազգականները հարսանիքի համար մեկական ոչխար էին նվիրում։ Հիմա այսպես է, հարսանիքի ժամանակ մեկ–երկու ժամ քեֆ անելուց հետո ընդմիջում է լինում, մի սեղանի մոտ մեկը տետրակով նստած է լինում, մոտենում են, նվերներ՝ ոչխար, փող են տալիս՝ 20–ից մինչև 2000 ռուբլի նվիրում են և միկրոֆոնով հաղորդում։ Քույրերի ամուսինները, քեռիները, մոտիկ ազգականները

100–ական ռուբլի են նվիրում, իսկ հարևանները՝ 50–ական:

Աղջիկների հետ տալիս են օժիտ, որը կոչվում է «ջէիզ»: «Ջէիզ»–ը տալիս են հար–սանիքի օրը:

Շաադաղը հարսանիքի ժամանակ, երբ հարսն ու փեսան պարում են, անպայման փող է տալիս, իսկ նվեր՝ երբ նրանց հրավիրում է իր տուն:

Հաջորդ առավոտյան հարսի ազգականուհիների համար առանձին սենյակում սեղան են գցում, փեսային կանչում են և ասում, որ թող փեսան մեր ձեռքին ջուր լցնի: Օրենքով նա պետք է ջուր լցնի, որ լվացվեն: Ջուր լցնելու համար նրան նվեր են տալիս: Հյուրերը սկուտեղի (թեֆսի) վրա գեղեցիկ գործած թաշկինակ (մենդիլ) են դնում ու վրան փող՝ 10–25 ռ., նաև կոնյակ, հավ, սիգարեթ, ընկույզ, կոնֆետ, միրգ: Այդ ամենն իրենց հետ են բերած լինում: Փեսան պետք է սկուտեղը կատակով գողանա, իսկ հարսի ընկերուհիները չպետք է թողնեն: Լինում են դեպքեր, որ փեսան չի կարողանում գողանալ, աղջիկները նրան բռնում են, բայց հետո աղջիկները կանչում են ու տալիս սկուտեղը: Փեսան սկուտեղի վրայի փողը վերցնում է, իսկ ուտելիքը ուտում ընկերների հետ:

Ամուսնությունից հետո հարսը պետք է առաջինն արթնանա: Երկու–երեք ամիս նորապսակ զույգերը տղայի և աղջկա ծնողների մոտ իրար հետ չէին քայլում: Երկու–երեք ամիս տղան առավոտյան շուտ գնում, երեկոյան ուշ էր գալիս, որ հայրը չտեսներ:

Երբ համագյուղացի էր մահանում, հինգ–վեց ամիս, նախկինում՝ մեկ տարի, հարսանիք չէր կարելի անել, իսկ ընտանիքի անդամները՝ մեկ–երկու տարի: Քանի որ Կենտրոնական Ասիայում համագյուղացիներից շատերն այլազգիներ են, ապա նրանց դեպքում համշենցիներն այդ արգելքները չեն պահում:

Հարսանիքի մասին գրառումները 1984 թ. արել եմ Ղրղզստանում՝ Կըզըլ–Կիյայում բնակվող համշենցիներից և Ղազախստանում՝ Չիրկինո գյուղում՝ Քյազիմ Կարաիբրահիմովից (ծնվ. 1926 թ.) և Ջելալ Կարաիբրահիմովից (ծնվ. 1955 թ.), նաև նրանց համագյուղացիներից:

Հ.Գ. Հարսանիքի մասին այս հրապարակման հարցում կամուկացի մեջ էի, քանի որ 40 տարի առաջ Ղրղզստանում և Ղազախստանում գտնվելու կարճ ժամանակահատվածում, ինձ համար հաճախ դժվարընկալելի խոսվածքով և բազմաթիվ անհասկանալի, ոչ հայերեն բառերով պատմված մահմեդական անծանոթ ծիսակարգով հարսանիքի նկարագրությունն էր և բացառված չէին թերությունները: Բայց որոշեցի տպագրել, մտածելով, եթե անգամ դրանք թերի են, այնուամենայնիվ, ապագա ուսումնասիրողներին կարող են պիտանի լինել:

ՆԱՄԱԿՆԵՐ
(1967–1979 թթ.)

Գրքի՝ «Աստված մի դուռ փակում է, մի դուռ՝ բացում, կամ՝ ընդհակառակը» գլխում անդրադարձել էի 1984 թ. ամռանը Կրասնոդարի երկրամասի համշենահայերի գյուղեր իմ ճանապարհորդությանը, որի ընթացքում Սոչիում այցելել էի ազգագրագետ Բարունակ Թոռլաքյանին: Նա 1967 թ. դեկտեմբերին Բաթումում հանդիպել էր 1944 թ. Ղրղզստան և Ղազախստան աքսորված համշենցի հայերի պատվիրակությանը, որը եկել էր Աջարիայի իրենց գյուղերը վերադառնալու հարցերը կարգավորելու համար: Քանի որ նրանց տներում բնակեցվել էին աջարներ ու վրացիներ, տեղական իշխանությունները չէին ցանկացել, որ համշենցիները հետ գան:

Բ. Թոռլաքյանը փորձել էր աջակցել, որ համշենցիները վերաբնակվեն Հայաստանում և այդ նպատակով 1967 թ. դեկտեմբերին նամակով դիմել էր Սերո Խանզադյանի օգնությանը: Մեծանուն գրողը բավականին ծանոթ էր քրիստոնյա համշենցի հայերի խնդիրներին, քանի որ 1966 թ. սեպտեմբերին Մեծ Սոչիի Լազարևսկի շրջանի Լոո գյուղում ստեղծված «Ձայն համշենական»[190] գրական խմբակի (որի անդամ էր նաև Բ. Թոռլաքյանը), ինչպես նաև Կոմունիստական կուսակցության Սոչիի քաղաքային կոմիտեի

[190] Գրական խմբակի ստեղծման և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների մասին տե՛ս **Անդրանիկ Զեյթունյան**, «Ձայն համշենական» գրական խմբակը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, № 11-12, էջ 2, 3:

և քաղխորհրդի հրավերով 1967 թ. մարտի վերջին այցելել էր Սև ծովի հյուսիսային առափնյակի հայաբնակ մի շարք գյուղեր ու դպրոցներ, զրուցել տեղի իշխանությունների, մտավորականների, մանկավարժների ու գյուղացիների հետ[191]:

Իմ խնդրանքով Բ. Թոռլաքյանը տվեց որոշ նամակների կրկնօրինակները, որպեսզի օգտագործեմ ուսումնասիրությանս մեջ: Դրանք (№ 2, 3, 4, 6, 7) ես հրատարակեցի «Ձայն համշենական» ամսաթերթում[192], իսկ լրացուցիչ ներկայացվող № 1, 5, 6ա, 8, 9, 10 նամակների բնագրերը պահվում են ՀԱԱ Սերո Խանզադյանի ֆոնդում[193]:

Դրանցում հեղինակների շտապողականության և այլ պատճառներով սպրդել են որոշ կետադրական և ուղղագրական սխալներ, որոնց մի մասը փորձել եմ ուղղել, իսկ Ղրղզստանի Կըզըլ–Կիյա քաղաքի բնակիչ Քոսօղլի Քյազիմի ռուսերեն նամակում դրանք թեև ուղղել եմ, բայց բնագրին հարազատ մնալու համար քերականական և ոճական անհարթությունները թողել եմ նույնությամբ:

[191] **Ս. Խանզադյան**, Համշենցի հայերի մոտ (Առաջաբանի փոխարեն) // **Ձայն համշենական**, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանզադյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1971 (- 248 էջ), էջ 3-56:

[192] **Ս. Վարդանյան**, Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984, Նամականի, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2016, № 9-10, էջ 7, 8:

[193] ՀԱԱ, Սերո Խանզադյանի ֆոնդ 798, ցուցակ 1, գործ 1059:

№ 1 Հարգելի ընկ. Սերո

Ինձ հայտնի էր, որ Բաթումիի սահմանամերձ (թրքական) գյուղերում ապրող, յա թաղանի սպառնալիքի տակ մահմեդական դարձած համշենահայերը, Հայրենական պատերազմի տաք ու խառն տարիներին (1943 թ.) տեղափոխվել են Միջին Ասիա: Նախօրոք տեղեկանալով, որ նրանցից ոմանք դեկտեմբեր ամսին արձակուրդ ստանալով պետք է լինեն հայրենի քաղաքում, Երևանից վերադարձիս հանդիպեցի Բաթումի:

Ինձ հաջողվեց երկար զրույց ունենալ նրանցից մի քանիսի հետ, մոտիկից ծանոթանալ նրանց ներկայիս կյանքի ու կենցաղի մասին, լուսաբանել մի շարք կարևոր հարցեր, որոնք մինչև այսօր մութ էին ինձ համար:

Ամենագլխավորն ու էականը իմ կարծիքով նա է, որ այդ տարաբախտ մարդիկ, թեև ավելի քան 300 տարի առաջ ստիպված ընդունել են իսլամի կրոնը, սակայն հոգով մնացել են հայ. իրենց թուրք չեն համարում ու մինչև այսօր պահպանել են մայրենի բարբառը: Ուժեղ է մնացել նրանց մեջ ազգային ինքնասիրությունը: Դրա բացահայտ ապացույցն է թեկուզ միայն այն փաստը, որ անձնագրերի մեջ գրվում են ոչ թե թուրք, այլ համշենցի: (Ես անձամբ ստուգեցի մի քանիսի անձնագրերը): Մեծ ու փոքր խոսում են Համշենի բարբառով՝ մեր բարբառով: Նրանց մեջ ես ինձ զգում էի իմ հայրենի ծննդավայրում՝ Կյուշանա գյուղում: Մինչև այսօր թուրքի կամ այլ մահմեդական ազգի

աղջիկ կնության չեն տալիս: Ես իրենցից գրի առա Համշենի բարբառով մի քանի մանիներ:

1944 թվին նրանց ներկայացուցիչները եղել են Հայաստանում, ապա և Մոսկվայում, որպեսզի իրենց աջակցեն վերականգնել անցյալի պատմությունը, այն, որ իրենք համշենցի հայեր են, բռնությամբ իսլամացած և ոչ մի առնչություն չունեն թուրք ցեղի հետ: Դժբախտաբար, այդ պղտոր տարիներին, անհատի պաշտամունքի սանձարձակ օրերին նրանց դիմումը մնացել է ձայն բարբառո անապատի:

Արտահայտվելով իրենց համագյուղացիների անունից, բուռն ցանկություն են հայտնում վերականգնել իրենց համշենահայ լինելնին: Այդ անվիճելի ազգային իրավունքի վերականգնումը նրանք իրավացիորեն հնարավոր են գտնում միայն ՀՍՍՀ աջակցությամբ ու համապատասխան որոշումով: Այդ ուղղությամբ նրանք կարոտ են համապատասխան ցուցմունքի ու օժանդակության: Իր հերթին, իրենք պատրաստ են բոլոր հայ լինելնին վերականգնել ցանկացողների ստորագրությամբ խնդրագիր գրել ու լիազոր ներկայացուցիչ ուղարկել Երևան՝ գործին համապատասխան ընթացք տալու համար:

Ներկայիս Միջին Ասիայում ապրող մահմեդական համշենահայերը հաշվվում են շուրջ 150 ընտանիք:

Նրանց հետ փոխանակվեցի հասցեներով: Շատ խնդրեցին այդ հարցի մասին կապվել Հայաստանի համապատասխան հիմնարկների, հեղինակավոր անձանց հետ ու իրենց հայտնել հետևանքի մասին:

Հարգելի Սերո, ես չէ, որ պետք է հիշեցնեմ Ձեզ հարցի չափազանց էական ու սկզբունքային լինելու մասին: Բավական է ասել, որ մեր սահմանից այն կողմը՝ նախկին Համշեն գավառում, այժմյան Թուրքիայի Րիզէ նահանգում (նախկին Լազիստանի գավառում) մենք ունենք առնվազն 250–300 հազար բռնի ուժով իսլամացած համշենահայեր:

Նախքան Ձեր խորհուրդն ու ցուցմունքները ստանալը այս հարցի մասին, Հայաստանի գործադիր մարմիններին գրելը համարելով անխոհեմություն, դիմում եմ Ձեզ խոր համոզված, որ շուտափույտ իմանալով ղեկավար ընկերների կարծիքը, ինձ կգրեք Ձեր եզրակացությունն ու ցույց կտաք ապագա անելիքի մասին:

Մեր մահմեդական հայրենակիցներից 7 հոգու հետ Բաթումիում լուսանկարվեցի: Ցանկացած ժամանակնիդ մի օրինակ կուղարկեմ կամ Երևան գալուս կբերեմ:

Այսպես, սիրելի պատվավոր համշենցի, աջակցեցեք ավելացնել մեր հայրենակիցների թիվը մեր բզկտված ազգի համար:

Խոր հարգանքներով՝

(ստորագրություն)

15/ XII 1967 թ., Սոչի

յ.գ. Եթե մեր հայրենակիցները համաձայնվեին վրացի դառնալ, ինչպիսի հարգանքի ու պատվի արժանացած կլինեին գուշակելու կարիք չկա:

Նույն

№ 2 Սիրելի Բարունակ

Նամակդ բառացիորեն ինձ ցնցեց: Ես հենց վաղվանից կզբաղվեմ համշենցի մահմեդականացած հայերի վիճակով: Դու դեռ ոչ մի տեղ մի դիմիր, սպասիր իմ առաջին քայլերին: Բայց շտապ գրիր՝

- Քանի՞ անձ են այդ 150 ընտանիքը: Եթե հնարավոր է՝ ըստ տարիքի, սեռի:
- Որտե՞ղ են տեղավորված Միջին Ասիայում, ո՞ր մարզում, ո՞ր քաղաքում, շրջանում:
- Հիմա ինչո՞վ են զբաղվում:
- Արդյոք բոլորը միասի՞ն են, թե՝ ցրված: Ուղարկիր նրանց հասցեները:
- Մինչև 1944 թ. արտաքսումը այդ հայերը որտե՞ղ են ապրել, Բաթումի քաղաքու՞մ, թե՞ գյուղերում: Գրիր:
- Գրիր՝ էլ ինչ տվյալներ ունես նրանց մասին: Շտապ գրիր: Վաղը ես գնում եմ խոսելու՝ ուր հարկն է: Էլ հանգի՞ստ կունենամ:

Ողջ լեր

Սերո Խանզադյան

17. XII. 67

Երևան

Ծանոթագրություններ

* Նամակի վերևի ձախ անկյունում Բ. Թոռլաքյանը նշել է. «Ստացա 25–ին»:

**Նամակի հետևի երեսին կա Բ. Թոռլաքյանի նշումը. «25–ին նամակ գրեցի Բաթումի ընկ. Հարությունյան Հարությունին և Татар–оглы–ին «Фейз–олы Пинали–ին» որ-

պեսզի քանի ընտանիք լինելու մասին ճիշտ տեղեկություն տան:

Նամակը սխալ եմ հասցեագրած. Пушкинская 74–ի փոխարեն գրել եմ 77»:

Այս նշումների վերջում Բ. Թոռլաքյանը ստորագրել է:

№ 3 Սիրելի Բարունակ

Երեկ մի նամակ թողրի դեպի քեզ: Դրանից հետո խոսեցի Ն. Խ. Հարությունյանի (ՀՍՍՀ Գեր. Սով. նախագահության նախագահ)[194] և Գ. Ա. Տեր–Ղազարյանցի (Կենտկոմի II քարտուղարի)[195] հետ Միջին Ասիայում եղած համշենահայերի հարցով: Համաձայնություն սկզբունքորեն կա: Այս մասին դեռ բան չգրես մեր եղբայրներին: Կան բազմաթիվ խոչընդոտներ: Հույս կա պետականորեն լուծել դրանք: Այժմ.

- Թող համշենցիները մի նամակ ուղարկեն Председателю президиума Верховного Совета Арм. ССР тов. Н. Х. Арутюняну. Կարճ գրեն իրենց խնդրանքը– մենք այսքան տուն ենք, այսքան անձ հայեր, որ 19…թվի այսինչ ամսին,

[194] **Նագուշ Հարությունյանը** (1912, Երևան-1993, Մոսկվա) եղել է տեխ. գիտ. դոկտոր, ակադեմիկոս (1950), Գիտ. Ակադեմիայի փոխնախագահ (1960-61), ԵՊՀ ռեկտոր (1960-63), 1962-75 թթ.՝ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, 1962-79 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

[195] **Գեորգի Տեր-Ղազարյանցը** (1923, Բաքու) 1958-61 թթ. եղել է ԽՄԿԿ Կենտկոմի աշխատակից, 1961- 66 թթ.՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1966-73 թթ.՝ երկրորդ քարտուղար:

Բերիայի ձեռքով (կամ այլ պատճառով) արտաքսվել ենք մեր ծննդավայր այսինչ տեղերից: Ապրում ենք այսինչ տեղերում: Իբրև հայեր, մենք Հայկական ՍՍՀ–ում ունենք բազմաթիվ արյունակից բարեկամներ (родственники): Այս վայրը բնակլիմայական պայմաններով խիստ աննպաստ է մեզ համար: Ուստի խնդրում ենք Միութենական կառավարության, ինչպես և Ղազախստանի (եթե այդտեղ են ապրում) կառավարության առջև միջնորդել մեզ տեղափոխելու Հայաստան:

Մոտավորապես նման մի դիմում:

Ի լրացումն երեկվա գրածիս ինձ պետք է շտապ իմանալ՝

- Ո՞ր թվին, ո՞ր ամսին են հեռացվել Բաթումից, ո՞ր տեղերից և ի՞նչ պատրվակով են հեռացվել:
- Արդյոք հիմա համախու՞մբ են ապրում, որտե՞ղ:

– Դիմումի տակ թող առայժմ մի քանի հոգի ստորագրեն միայն, այն էլ առանց աղմուկի, առանց անժամանակ ոգևորության և այլն:

- Եթե հնարավոր է, թող նրանցից մի խելքը գլխինը շտապ գա Երևան, ուղիղ ինձ մոտ–ավելի մանրամասն զրույցի: Այնպիսի անձ գա, որ տեղյակ լինի համշենահայ բնակչության (Միջին Ասիայի) տեղաբաշխմանը, կյանքին: Սա շատ ավելի գործնական բան կլինի: Գալու պատրվակը պետք է լինի Հայաստանում որևէ հարազատի հանդիպման բանը: Եկողը պետք է միայն ինքն իմանա, որ գալիս է:
- Մենք մտադիր ենք ամենից առաջ կապվել այն վայրի հանրապետական մարմինների հետ, որտեղ ապրում

են մեր եղբայրները, տեղի մարմինների համաձայնությունն ստանալ, հետո դիմել Մոսկվա: Համոզված եմ, որ թե՛ Միջին Ասիայի և թե՛ Մոսկվայի մեր ղեկավար ընկերները կօժանդակեն այդ գործին:

Գործը պետականորեն կարևոր է և պետք է դնել պետական հիմունքների վրա: Հինգ–տասը ընտանիք չեն, որ ներքին կարգով, անհատ–անհատ վճռվի:

Ես հույս ունեմ, որ այս խնդիրը կլուծվի դրականապես մեր սովետական մարդասեր և բարյացակամ իշխանության կողմից:

Շտապ լուրեր ուղարկիր:
Ողջ եղիր, հարգանքներով՝
Սերո Խանզադյան
20. XII. 67, Երևան

Ծանոթագրություններ

Նամակի առաջին էջի ձախ անկյունում Բ. Թոռլաքյանը նշել է. «Ստացա դեկ. 26–ին»:

Նամակի վերջին՝ 4–րդ էջում, Բ. Թոռլաքյանը գրել է. «Սերոյին պատասխանել եմ 27/XII, հայտնել, որ անմիջապես հայտնել եմ Բաթումի, որպեսզի համշենցիների ներկայացուցիչը գա մոտս, 27/XII»:

№ 4 ՍԻՐԵԼԻ ՀԵՆՐԻԿ [196]

Երևանից վերադարձիս ես հանդիպեցի Բաթումի, որտեղ վերջապես ինձ հաջողվեց տեսնել մի խումբ մահմե-

[196] Նամակը հասցեագրված է «**Գրական թերթի**» աշխատակից, բանաստեղծ **Հենրիկ Թումանյանին** (1914-1982):

դական դարձած համշենահայերի: Նրանց մասին շատ էի լսել, սակայն անձնապես ծանոթանալն ու հետերնին երկար զրույց ունենալն հիմնովին փոխեց իմ պատկերացումն այդ իմ մահմեդական հայրենակիցների մասին: Ինչ խոսք, որ նրանց կյանքը ես ընդգրկել էի իմ աշխատանքում, սակայն, այժմ միայն իրավունք ունեմ հաստատ գրել այդ հոգով հայ մնացած համշենցիների ստվար մի զանգվածի մասին: Թեև նրանց մասին ցանկալի է առանձին, ընդարձակ ակնարկ գրել, սակայն ինձ թվում է, որ առայժմ արժե Ձեր թերթի («Գրական թերթի») համար պատրաստած ակնարկում, համառոտ ավելացնել նրանց մասին, իսկ մոտիկ ապագայում, եթե հնարավոր գտնեք, կուղարկեմ ընդարձակ ակնարկ:

Նկատի ունենալով, որ «Հայրենիքի ձայնը» լայն տարածում ունի սփյուռքում, ես մտադիր էի այդ մասին կապվել նրանց հետ, սակայն, քանի որ դու եղար իմ աշխատանքի ժողովրդականացնելու նախաձեռնողը, առանց քո կարծիքն իմանալու, նրանց դիմելը համարում եմ անտեղի (թերևս, նույնիսկ անթույլատրելի):

Իմ կարծիքով նրանց մասին արժե ավելացնել հետևյալը.

Յաթաղանի սպառնալիքի տակ շուրջ 300 տարի առաջ մահմեդական դարձած ու հայրենի երկրում մնացած համշենահայությունը այսօր կլինի շուրջ 200000 շունչ: Նրանք մինչև այսօր չեն կորցրել իրենց ազգային ինքնասիրությունը, խոսում են մայրենի՝ Համշենի բարբառով, պահպանել են նահապետական բարքերն ու սովորությունները: Թեև մահմեդական կրոնն են ընդունել, սակայն խնամիական կապեր չեն հաստատում ուրիշ մահմեդական ազգերի հետ (աղջիկ կնության չեն տա): Նրանցից մի

հատված՝ մոտ 150 ընտանիք, ներկայիս ամփոփված խմբերով ապրում են Ղազախական ՍՍՀ–ում:

Հարսանիքներում, խնջույքներում շատ անգամ երգում են մայրենի պարերգեր–մանիներ: Ահա երկու փնջիկ նրանցից գրի առած մանիներից.

Աuէ, օնունդ աuէ,
Լաչկիդ փիսկուլը խաս է,
Էկի քեզի տոնող իմ,
Գնա քո մորդ աuէ:
Ինա էնթու թզընին,
Վերի է, թե տոնու է,
Իմ նշոնլուն լաչակը
Ես զիտնէj թէ քոնու է:

Այս հակիրճ տվյալները ուղարկում եմ քո հայեցողությամբ իմ ակնարկում կավելացնես[197]:

Ես այդ մեր հայրենակիցների ներկա կյանքի ու ցանկությունների մասին մանրամասն գրել եմ ընկ. Սերո Խանզադյանին:

Ծանոթագրություններ

Նամակի վերևի ձախ անկյունում նշված է 25. XII. 67 թ., իսկ հասցեատեր «Հենրիկ»–ի անվան տակ ավելացված է ազգանունը՝ «Թումանյան»:

---

[197] **Բ. Թոռլաքյանի** խնդրանքը չի կատարվել և «**Գրական թերթի**» 1968 թ. մայիսի 24-ի համարում տպագրված նրա «**Համշենահայեր**» հոդվածում այդ հատվածը չի ավելացվել:

Նամակի վերջում Բ. Թոռլաքյանի ստորագրությունն է:

№ 5 Սիրելի Սերո

Երեկ ստացա նամակդ ու անմիջապես համապատասխան գրություն ուղարկեցի Բաթումի: Այսօր պատրաստվում էի այդ մասին հայտնել քեզ, ստացա երկրորդ նամակդ: Հրաշալի ու ապշեցուցիչ արագություն: Նամակով դիմեցի նրանց, որպեսզի մեկին ուղարկեն մոտս: Հույս ունեմ, որ դեռ չեն վերադարձել ու անձամբ կբացատրեմ անելիքների մասին: Բացի նամակից, վաղվա համար հեռախոսի հրավեր եմ տվել:

Հետևանքների մասին կհայտնեմ առանց հապաղումի:

Հարգանքներով՝
(ստորագրություն)
27/XII 67 թ.
Սոչի

Ծանոթագրություններ

Նամակի հետևի երեսին Բ. Թոռլաքյանը գրել է.

յ.գ. Ցավալի էր, որ մեր փոստը դանդաղ է աշխատում, ամսի 20–ին ուղարկած նամակդ ինձ հասավ 26–ին:

№ 6 Սիրելի Սերո

Երեկ հեռախոսով խոսեցի Բաթումիի հետ, մոռանալով, որ ավանդական սովորությամբ, Նոր տարին տանը պետք է լինել: Մեր համշենցի մահմեդական եղբայրները,

բոլորը թոռել են դեպի իրենց ընտանիքները: Այժմ ստիպ-ված սպասելու ենք իմ՝ նրանց ուղարկած, նամակի պա-տասխանին:

Ես, համաձայն քո նամակի, գրեցի որպեսզի ուղարկեն իրենց ներկայացուցիչը, որը այստեղ ինձնից կիմանա բո-լոր ձեռք առնելիք միջոցների մասին ու կգա Ձեզ մոտ՝ Եր-ևան (Ձեր հասցեն եկողը կիմանա ինձանից):

Հուսանք, որ հաջողությամբ կը պսակվի այս նվիրա-կան գործը:

Ձերմ բարևներով՝
(Բ. Թոռլաքյանի ստորագրությունն է):
29/XII 67թ.

Ծանոթագրություններ

Բ. Թոռլաքյանի օրինակի և Ս. Խանզադյանին ուղարկ-վածի միջև կան որոշ տարբերություններ, որոնք հավա-նաբար առաջացել են նամակը մաքրագրելիս: 6ա համա-րակալմամբ տպագրվում է նաև Ս. Խանզադյանի ստա-ցած բնագիրը:

№ 6ա Սիրելի Սերո

Երեկ հեռախոսով կապվեցի Բաթումիի հետ, մոռանա-լով, որ ավանդական սովորությամբ Նոր տարին պետք է սեփական տանը գտնվել: Մեր համշենցի մահմեդական եղբայրները բոլորը թոռել են տներնին: Ստիպված սպասե-լու ենք իմ՝ նրանց տնային հասցեով ուղարկած նամակի պատասխանին կամ ներկայացուցիչ–լիազորին:

Համաձայն քո վերջին նամակի, եկողը ինձանից կիմա-
նա անելիքների մասին ու քո հասցեն:

Հավատանք ու հուսանք, որ հաջողությամբ կպսակվի
այս նվիրական գործը:

29/ XII 67 թ.

Ձեր բարևներով՝
(ստորագրություն)

22.01.1968 г.

№ 7 Привет из г. Кызыл–Кия
Здравствуйте, дорогой мой родной брат

Барунак Григоревич Торлакян !!!

Мой дорогой Барунак, спасибо и большая благодарность за хорошее письмо, получил Ваше славное письмо и читал в нашем общетве. Все наши люди, включая малышей, все поблагодарили Вас за вашу заботу о нашем счастье, о нашем будущем поколении, ведь как вы знаете, новое известие – это счастливое жизнь наших детей на чистом кавказском воздухе. На ваше письмо не только взрослые, даже малыши–дети обрадовались, что вскором будущем будут жить на счастливом месте. Барунак джан, прочитав Ваше письмо, всё ясно, очень понятно, как вы успешно заботитесь о нашем счастье, очень и очень большое спасибо, дорогой земляк и родной брат Барунак джан !!! Безусловно ваши указания мы выполним, если же бог даст

здоровья обязательно мы вышлем нашего представителя–Алтунбачак Дурсун, который сейчас сидит около меня и передаёт больший привет.

Дурсуна направим, если болен не будет, а в противном случае я приеду, сейчас у нас идёт подготовительная работа, думаю до марта месяца развернёмся и ещё о результатах дополнительно развернемся и ещё о результатах дополнитеьно сообщу в следующем письме.

А теперь большой привет передают все наши, которые Вас знают и мои товарищи ваши знакомые, которые были в Батуми и общественный привет от всего нашего народа и желаем Вам хорошего здоровья и долгих лет жизни, а так же большой привет Вашему семейству от старших до малых.

Барунак Григоревич! Прошу ещё раз напишите письмо в Ереван для уточнения и ответ сообщите мне, прошу не считать трудностью, ведь если вы спасёте нас с детьми от этого Ада, то ваше имя останется в истории и в наших сердцах во веки веков.

Просим Вас не отложить данный вопрос ни на один день, ни на один час без внимания.

До свидания, с приветом Казим Кос–оглы.

Ծանոթագրություններ

Նամակի վրա Բ. Թոռլաքյանը նշումներ է արել. «Երևանի հասցեն ուղարկել եմ փետրվարի 22–ին»:

«15/IV написал новое письмо с просьбой сообщить причину молчания».

Յուրաքանչյուր նշումի տակ Բ. Թոռլաքյանը ստորագրել է:

Այս լուսանկարը «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Բ. Թոռլաքյանը» (Երևան, 1986) գրքում՝ էջ 91–ում, թարսուշիտակ (հայելային) է տպագրվել: Լուսանկարի հետևի կողմում գրված է

Նստած են ձախից աջ

1. Քարահիբրահիմօղլի Մոմեդ, 2. Թոռլաքյան Բ. Գ., 3. Քոսօղլի Քազըմ,

Կանգնած են 1. Թաթարօղլի Ադեմ, 2. Ֆեյզօղլի Բինալի, 3. Ֆեյզօղլի Շուքրի, 4. Դավիթօղլի Մուստաֆա, 5. Մարաշօղլի Քերիմ

12/XII 1967 թ.
Բաթումի

№ 8 Թանկագին Սերո

Նամակիդ պատասխանի ուշացման պատճառը իմ մի քանի օրով տնից բացակա լինելն էր:

Երևանից գալես վերջը ոչ մի տեղեկություն չունեմ մեր մահմեդական եղբայրներից: Ինչպես երևի մութ ուժերը ուժեղ գործում են: Մեր կողմից անհրաժեշտ է լրջախոհ ու համառ աշխատանք: Քանի որ մեր ղեկավար ընկերներն

ըստ արժանվույն հետաքրքրվում են այդ վեհ գործով, պետք [է] հուսալ ու հավատալ, որ հաջողությունները աներկբա կլինեն: Հոկտեմբերյան տոների առթիվ կլինեմ Երևանում, մանրամասն կխորհրդակցենք: Իմ համեստ ուժերը մինչև վերջ Ձեր (հասկացեք մեր ղեկավարների) տրամադրության տակ են:

Միրալիր բարևներ տիկնոջդ, մայրիկիդ, համբույրներ բալիկներիդ:

Հարգանքներով՝
(ստորագրություն)
28/X 68 թ.
Սոչի

№ 9 Հարգելի Սերո

Ընտանեկան պայմաններս ստիպեցին ինձ Երևանից շտապ վերադառնալ: Մինչև հունվարի մեկը՝ Ցոլակի տուն վերադառնալը, տնից բացակայելու հնարավորություն չունեմ:

Մեր մահմեդական համշենահայերի մտորմունքների մասին տեղյակ լինելու համար նամակ ուղարկեցի Բաթումիի իմ ծանոթներին: Եթե դու պատասխան ստանաս Միջին Ասիայից խնդրում եմ հայտնել ինձ:

Սրտի խոր կսկիծով պարտք եմ զգում հայտնել քեզ իմ անբուժելի վշտի առթիվ: Չարագուշակ հեռագրով Ամերի-

կայից հայտնեցին եղբորս՝ Միսակի, վախճանման գույժը, որը տեղի է ունեցել ամսիս 12–ին[198]:

Հարգալից բարևներս
մայրիկիդ, տիկնոջդ, երեխաներիդ
Հարգանքներով՝
(ստորագրություն)
16/ XI 68
Սոչի

տես ետևը

յ.գ. Սիրելի Սերո, խնդրում եմ իմ մեքենագրուհուն՝ ընկ. Լուսիկին (Լուսյա) հայտնել, որ շուրջ մեկ ամիս դժվար թե կարողանամ իրեն աշխատանք ուղարկել: Միաժամանակ խնդրում եմ նրան, որ ուղարկի իր հասցեն:

Նույն

№ 10 Սիրելի Բարունակ Թոռլաքյան

Սրտանց շնորհավորում եմ ծննդյանդ ութսունամյակը:

Ուրախ եմ, որ Սուխումի մտավորականությունը սիրալիր կատարել է քո հոբելյանական հանդիսությունը:

Սիրելի ավագ եղբայր: Ես քեզ շատ եմ սիրում՝ քո ազնվության ու նվիրվածության համար՝ Համշենահայությանը: Նաև նշանավոր ազգատոհմիդ համար:

---

198 Խոսքը **Բ. Թոռլաքյանի** հորեղբոր տղայի՝ նշանավոր վրիժառու **Միսաք Թորլաքյանի** (1889, Տրապիզոնի նահանգ, գ. Կյուշանա - 1968, Կալիֆորնիա) մասին է, տե՛ս **Միսաք Թորլաքեան**, Օրերուս հետ, Գ. հրատ., Պէյրութ, 2001 (-624 էջ), էջ 278:

Մեծ են քո ծառայությունները Համշենյան հայության ազգագրության, բանահյուսության հավաքման ու հրապարակման գործում: Հատկապես ինձ համար շատ թանկագին են հուշերը՝ մեր բազմաթիվ հանդիպումների, նաև Կըզըլ Կիյայի մեր մահմեդական եղբայրների հետ ունեցած հանդիպումների: Ի՞նչ եղան այդ մարդիկ: Գուցե նրանց և մեզ հուզող հարցը նորի՞ց մեջտեղ բերենք: Գուցե ինքդ մեկնես Կըզըլ Կիյա: Կուզեմ լսել խոսքդ՝ այս կապակցությամբ:

Դե, ուրեմն, սիրելի Բարունակ, կրկին շնորհավոր ութսունամյակդ: Ութսուն տարին քեզ նման ազնիվ ու շատ հարկավոր մարդու կյանքի կեսն է. ցանկությունս է՝ այդքան էլ ապրես:

Շնորհակալ եմ Թումանյանի անվան դպրոցի ընկերներից՝ հոբելյանդ անելու համար:

Ողջ եղիր, ջահել բարեկամս.

Հարգանքներով՝

Սերո Խանզադյան

27–3–79

Նորքի դղյակ (Բնագիրը մեքենագիր է)

Բարունակ Թոռլաքյան

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՀԵՏ[199]

Ճորոխի ծովեզրյա հովիտներում մահմեդական համշենահայեր[ի] բնակվելու մասին առաջին անգամ իմացել էի 1918 թվին Բաթումիում իմ ծանոթ Սերոբ Մարգարյանից, որը մոտիկ բարեկամություն ուներ նրանց հետ: Ավելի մանրամասն տեղեկություններ ինձ հաղորդեց 1942–43 թվերին սահմանապահ կայազորում ծառայած Վազգեն Գասպարյան[ը]:

1967 թվի դեկտեմբեր ամսին ինձ հաջողվեց Բաթումիում երկար զրույց ունենալ մի խումբ (15 անձ) այդ շրջանում ապրած մահմեդական հայրենակիցների հետ: Հանդիպումը չափազանց ջերմ ու հոգեցունց էր, կարծես տարիներով իրարից բաժանված հարազատներ[ը] գտել էին միմյանց:

Առաջինը ինձ ապշեցրեց նրանց անարատ համշենահայ բարբառով խոսելնին: Անցել է արդեն ավելի քան 300 տարի յաթաղանի սպառնալիքի տակ նրանց մահմեդական կրոնը ընդունած օրից, սակայն մայրենի լեզուն պահել են անաղարտ, ավելի մաքուր, քան Պոնտոս փախչող

---

[199] ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, **Բ. Թոռլաքյան**, Համշենահայերի և պոնտահայերի ազգագրական նյութերը (ձեռագիր) (Խարբերդ և Սեբաստիա), մաս II, 1959-1969 թթ., № 43, ձեռագիր տետր № 182, 37 թերթ, թերթ 52-55, այդ թվում 53-րդ թերթում սոսնձված հատված:

համշենահայերից շատերը, որոնց մի մասը շրջապատված լինելով թուրք ազգաբնակչությամբ, թրքախոս էին դարձել կամ խոսում էին ու այսօր էլ խոսում են թրքերեն բառերով խճողված բարբառով: Պարզվեց, որ նրանց նախնիները Համշենից հեռացել են 150–200 տարի առաջ (թերևս, ոմանք Համշեն[ի] բռնի մահմեդականացրած տարիներին) ու Ֆուռթունա գետի ընթացքով դեպի ծովափ իջնելով հաստատվել Խոփա գավառակում: Մի շարք գյուղեր հիմնվել են ծովի մոտերքում: Փոքրաթիվ ընտանիքներ բնակություն են հաստատել Բաթումի ու Խոփա քաղաքներում, որտեղ ապրում են նաև այսօր: Մահմեդական համշենահայերի այս հատվածը կոչվում է Խոփացի համշենցիներ: Մեծ ու փոքր բոլոր[ը] տիրապետում են համշենահայ բարբառին, ընտանիքներում տիրողը մայրենի բարբառն է: Թեպետև դարեր են անցել մահմեդականությունն ընդունած օրից, սակայն մահմեդական ազգերի հետ՝ թուրք, լազ, աճարացի, ազգակցական կապեր չեն հաստատում, աղջիկ կնության չեն տալիս:

Բաթումիի բնակիչ Արշակ Ավետիսի Գարամանյան[ը], որը երկար տարիներ ծառայել է այդ շրջանի սահմանապահ ջոկատում, պատմում [է]. «1938 թվին մի երեկո հյուր եղա Գոնիո գյուղում Գարահիբրակիմ օղլի Բեկտաշ Սուլիեվիչի տանը: Ըստ ավանդական հավաստի վկայության, նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել: Մինչև այսօր էլ բնակիչները նրանց Ճերմակցի են անվանում: Տանտիկինը հացի հեսի (խմոր) շաղվելը վերջացնելուց հետո վրան մատով խաչ քաշեց ու ապա խմորը ծածկեց: Իմ հարցին,

թե մահմեդական լինելով ինչու խաչի նշան է անում, պատասխանեց. «Ես հիներուս էսմոն տեսած ունիմ, ինչ էնիմ որ մուսլուման դարձած իք»: Կանանց շատերը հայկական անուններ ունեն՝ Մայրոմ, Թագու[կ], Տիրուկ, Հեղնար, Խնկենի և այլն:

Հաճախ գտնվել եմ նրանց հարսանիքներում: Պարում են նույն պարերը, ինչ դեպի ծովափ փախչող համշենահայերը՝ թրթռուկ (թիթռեմե), կանանց շուրջպար, հարսի պար: Վերջինիս տարբերությունը կայանում է նրանում, որ պարողների առջևից գնացողը նաշխուն թաշկինակը բարձր բռնած ուրախ երգելով ու ճկուն շարժումներով առաջնորդում [է] պարողներին, նրան հետևում են զույգերը: Աղջիկներն ու կանայք դեմքերը չեն ծածկում, տղամարդկանց հետ համատեղ երգում ու պարում են: Հետաքրքրականը նրանումն է, որ հարսանիքներում, թե խնճույքներում ավելի երգում են հայերեն (Համշենա բարբառով) խաղերգեր քան թուքերեն: Երաժշտական գործիքները նույնն են, ինչ որ մեր գյուղերում՝ դավուլ, զուռնան ու ամենից սիրված քեմենչեն:

Ահա մի քանի մանի–պարերգերի նմուշներ, որոնց ինձ հուշեցին իմ նոր բարեկամ մահմեդական հայրենակիցներս.

Լուսնի գիշեր աս գիշեր,
Արի հարսցու աս գիշեր,
Էկեր դատդ թողուլ չինա,
Փախի էկէ էս գիշեր:

* * *

Քա ինչ էղավ, ինչ էղավ,
Ինչէ լալով մոն կուգաս,
Ունիս մեկ նշոնլի մը
Մեմել ինչէ մոն կուգաս:

* * *

Ասե օնունդ ասե,
Լաչկիդ փիսկյուլը խաս է,
Էկի քեզի տոնող իմ,
Գնա մայրիկիդ ասե:

* * *

Ինա էնթուն թզընին,
Վերի է թե դոնու է,
Իմ նշոնլուն լաչակը
Գիտնեյի թե քոնու է:

* * *

Չըմըխէ[200] կանկալ էրի,
Ծվաղնոցեն կախ էրի,
Դուն օր նշանլու եղար,
Ես էս ախ ու վախ էրի:

Ամենաէական իրողությունը կայանում է նրանում, որ չնայած ժամանակի տիրող աշխարհայացքին, որ ազգության ամենագլխավոր հատկանիշը կրոնն է, մահմեդականացված համշենահայերը ընդհանրապես, իսկ խոփացի համշենցիք հատկապես, իրենց երբեք թուրք չեն համարել:

200 Չըմըխ-քաղցր բույս:

Ավելին, մահմեդական դարձած համշենահայերը թրքական իշխանությունների հետապնդումից փրկվելու միտումով, իրենց հայեր չեն անվանում, իսկ մյուս կողմից էլ, ազգային ինքնասիրությունը այնքան ուժեղ է մնացել մեջերնին, որ թուրք կոչվելը կամ գրվելը սրբապղծություն են համարում: Նրանք գտել են սրամիտ ելք. հայրենի բնօրրանի անունով իրենց կոչում են ու պաշտոնական փաստաթղթերում ազգությունները ցույց տալիս «համշենցի» (хамшин): Բոլոր իմ Բաթումիում ծանոթացած 15 համշենցիների անձնագրերի վրա «ազգություն» հարցի դիմաց գրվել [է] «хамшин», այսինքն համշենցի: Ահա նրանց երկուսի անձնագրերի պատճենը (կրճատված).

Ֆեյզ օղլի Բինալի, ծնված 14 փետրվար 1937 թվին Բաթումիի շրջանի Չարնալի գյուղում: Ազգը «Խամշին»: Անձնագրի համարը 598732

Քյոս օղլի Քազիմ, ծնված 15 մայիս 1926 թ. Բաթումիի շրջանի Չարնալի գյուղում: Ազգը «Խամշին»: Անձնագրի համարը 7481

Իմ զրուցակիցների վկայությամբ, այդպիսի անձնագրեր, այսինքն ազգությունը «Խամշին»–համշենցի–ունեն Խորհրդային երկրում ապրող բոլոր մահմեդականացած համշենահայերը: Այսպիսով ստեղծվել է հայ ժողովրդի ինքնատիպ նորագույն ենթաճյուղը՝ «Համշենցիք»: Դրանով նրանք պահել են ազգային ինքնուրույնությունը, նույն ժամանակ կողմնորոշվելով նաև քրիստոնյա համշենահայերից:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջը, Խորհրդային Միության ու Թուրքիայի միջև կայացած պայմանագրի համաձայն, Խոփայի շրջանի մահմեդական համշենահայերի գյուղերի մեծ մասը մնացել է թրքական սահմաններում ու միայն մի քանի գյուղեր՝ Խորհրդային երկրում՝ Բաթումիի շրջանում:

Բաթումիի շրջանի գյուղերը հիմնվել են Ճորոխ գետի արևմտյան ափերում, որոնք են.

Գըզըլ Թոփրաք–Բաթումիից 4 ժամ հեռու, Ճորոխ գետի արևմտյան՝ ծովափնյա երկրամասում: Բնակիչները 20 տուն մահմեդական համշենահայեր, շուրջ 80 տուն քրդեր:

Չարնալի կամ **Ճառնալ**–Գըզըլ Թոփրաքից դեպի հարավ, խիստ լեռնային գյուղ, զուտ համշենահայեր մահմեդական 30 տուն, Գարաքչի օղլի, Քյոս օղլի, Ֆեյզ օղլի, Միլիշ օղլի, Դավիթ օղլի և այլ ազգատոհմերից:

Գարաք օղլի Իբրակիմի վկայությամբ իրենց նախնիները կոչվել են Գարաքյաններ, իսկ Քյոս օղլիների՝ Քոսյան, Դավիթ օղլիների՝ Դավիթյան լինելը անկասկած է:

Գյոնիո–Գըզըլ Թոփրաքից դեպի Խոփա լեռնային անխառն մահմեդական համշենահայերի գյուղ 50 տնվոր բնակչություն, մեծ մասը Գարաբաջակ օղլի, Մարաշ օղլի, Գարաիբրակիմ օղլի ազգատոհմերից:

Գարաիբրակիմ օղլի Իսակի ու նրա հորեղբայր 80–ամյա Ահմեդի վկայությամբ, նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել ու մինչև այսօր էլ համագյուղացիք իրենց Ճերմակցի են անվանում:

Կորիաթ–Գյոնիոյի հարավային սահմանակից գյուղ 30 տուն բնակչություն. Թաթար օղլի, Թանթ օղլի, Սալիհ օղլի և այլ ազգատոհմերից:

Ավքա–Կորիաթի սահմանակից փոքր գյուղ, 8 տուն բնակչությամբ, Աքբույուք օղլի, Սարխոշ օղլի ազգատոհմերից:

ՓԱԿ ԴՌՆԵՐԻ ԱՌԱՋ
ԱՌԱՋԻՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Հիմա էլ, որ հիշում եմ հեռավոր այն օրերի մեր պետական ու կուսակցական աշխատողների նողկալի վերաբերմունքը հայ համշենցիների նկատմամբ, ամբողջ մարմնով փշաքաղվում եմ: Բայց նախ ասեմ, թե ինչ ասել են «համշենցի», «Համշեն», «համշենական»:

1967 թվի մարտին ես առաջին անգամ համշենցի հայեր տեսա: Այդ մասին գրեցի «Գրական թերթում»[201]: Հետո հրատարակեցի «Ձայն համշենական» ազգագրական–բանահյուսական ժողովածու: Այդտեղ ասացի. «Մայրը գրեթե մոռացել է իր զավակներից մեկին»[202]: Ասեմ՝ Համշենը մի ժամանակ ընդգրկում էր Փոքր Հայքի ծայր արևելյան գավառը՝ նախ բուն Համշենը, հետագայում նաև Օրդու, Ջենիկ, Տրապիզոն երկարությամբ: Դա Սև ծովի հարավ–արևելյան ափն էր: Համշենի հայը ամբողջ երեք հազար հինգ հարյուր տարի իր բնօրրանում ապրեց հայկական կյան-

---

[201] Նկատի ունի հետևյալ հրապարակումը՝ Ս. Խանզադյան, Ձայն համշենական, «Գրական թերթ», 1967, ապրիլի 14, № 16, էջ 4: Ս. Խանզադյանի հակիրճ խոսքից հետո «Լոռյի գրական խմբակի անդամների ստեղծագործություններից» ենթավերնագրի ներքո տպագրվել են Անդրանիկ Ջեյթունյանի մեկ պատմվածքը և Համշենի բարբառով գրի առած ինն առած-ասացվածքները, Աշոտ Քոչկոնյանի և Ալեքսանդր Անտոնյանի բանաստեղծությունները, Գուրգեն Խաչատրյանի մեկ բանաստեղծությունն ու «Համշենի առակներից» երեք մշակումները (Ս. Վ.):
[202] Ձայն համշենական, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանզադյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1971 (- 248 էջ), էջ 3 (Ս. Վ.):

քով, մինչև թուրքական բարբարոսների պատճառած կոր-ծանումը, այսինքն՝ մինչև 1915 թվականը: Մեծ աղետ էր եղել դրանից տակավին 300 տարի առաջ: Օսման թուրք սուլթանների բռնակալ զորքերը, թուրք մոլեռանդ քարո-զիչ Ղուրուֆ–օղլի Մահմեդի առաջնորդությամբ, բռնի ու-ժով Համշենում հարյուր հազարավոր հայերի մահմեդա-կան դարձրին: Հիմա, ինչպես եվրոպական աղբյուրներն են վկայում, Թուրքիայում մեկուկես միլիոն մահմեդական հայեր են ապրում: Ես այս բանը իմացա, երբ համշենցինե-րի մոտ էի, երբ հանդիպեցի տասնյակ մահմեդական հայ համշենցիների: Այնինչ մեր ժամանակակից պատմությու-նը հանցավոր կերպով լռում է այդ մասին:

1967–ի մարտի 24–ին հասա համշենցիների նոր գաղ-թավայրը՝ Բոլշոյ Սոչիի լեռնային հայկական գյուղերը: Գրեթե մեկ ամիս մնացի ընդամենը ութսուն տարի դրա-նից առաջ այստեղ գաղթած համշենցի հայերի մոտ՝ Վեսյոլկա, Պրիմերնի, Չերեշնյա, Դե–Սիմոն, Սերգեյ–Պոլե, Դագոմիս, Ներքին և Վերին Լոո, Բերանդա և այլ գյուղե-րում, որոնք հայերն են հիմնադրել և հիմա էլ կան:

Այդտեղ ես հանդիպեցի ծերունի Բարունակ Թոռլաքյա-նին: Կարճահասակ, խիստ բարեկիրթ մարդ է, մտավորա-կան էությամբ: Նա ասաց, թե ինքը հին համշենցի է, Տրա-պիզոնին մոտիկ Կուշանա համշենահայ գյուղից: Նրա հո-րեղբոր տղա Միսաք Թոռլաքյանը համշենահայերի ազա-տագրման պայքարի առաջնորդներից է եղել 1915–21 թվա-կաններին, զինված հայդուկ–ֆիդայի: Ինքը՝ Բարունակը ևս պատանի ֆիդայի է եղել և 1918–ին ռուսական նախան-

ջող զորքի հետ տեղափոխվել է Նոր Համշեն, այսինքն՝ Ադլեր:

Մեր հանդիպումից մեկ տարի հետո Թոռլաքյանը անսպասելի եկավ մեր տուն՝ Տերյան փողոց: Նրա հետ յոթ–ութ հոգի գեղջուկ մարդիկ կային, համեստ հագնված, տառապած, նաև անհույս ու տխուր:

- Այս մեր եղբայրները մահմեդական համշենցի հայեր են,– ներկայացրեց Թոռլաքյանը:–Եկել են Կիրգիզիայի Օշի մարզից…

- Իմ առջև բացվեց հայի ողբերգության մի ամբողջ ու նոր աշխարհ: Էս ի՞նչ բան է:

- Հայերեն գիտե՞ք, եղբայրներ:

Ինչպե՞ս չէ,– մի քիչ նեղացած ասացին նրանք:– Մենք հայ ենք: Մահմեդական ենք, բայց հայ ենք, հա՛յ …Մեր մայրենի լեզուն–մեր բարբառը մեզ պահում է: Մենք իրեն ենք պահում, ինքը՝ մեզ:

Ուրեմն այսպես: Երեք հարյուր տարի առաջ, ինչպես ասացի, բռնությամբ մահմեդական դարձած այս հայերից մի քանիսը ահա ինձ մոտ են, իմ տանը: Մենք զրուցում ենք սրտանց, երկար:

- Ապրում էինք Բաթումի մոտի մեր հայրենի լեռնային Սարբ, Գանիո, Ավգա գյուղերում:

1921 թվականին, երբ Կարսի մարզն ու Բաթումի շրջանի կեսը ստորաբար հանձնվեցին Թուրքիային, համշենցիների այս ու էլի այլ գյուղեր մնում են սահմանի այս կողմը…

- Այդտեղ ապրում էինք մեր հայ ոգով ու կենցաղով, հայ լեզվով, թեև հավատով մահմեդական էինք: Այն մար-

ղը, որ մեզ՝ մահմեդական հայերիս, «թուրք» ասեր, մենք նրա վիզը կկտրեինք…

Հետո՞: Ի՞նչ եղավ հետո: Զարմանալի հարց եմ տալիս: Մի՞թե չգիտեմ, թե ինչ է լինում «հետո» հայի հետ: Չէ՞ որ ապրել ենք մարդակեր Ստալինի կրնկի տակ:

- 1944 թվականին մեզ պոկեցին մեր մայր հողից ու աքսորեցին:

Բոլորի անունից այս բանն ինձ ասում է Քյոս–օղլի Մահմեդ հայը: Բռնությամբ թուրքացրած հայի ժառանգը: Ասում է հայերեն, Համշենի դասական հայ բարբառով: Ինչ ասեմ, գրաբարը այս մարդկանց կենցաղում մորթվել է, ժամանակակից աշխարհաբարը՝ մեռցվել: Մնացել է միայն մի սուրբ հայերեն՝ բարբառը, Համշենի հայ բարբառը, որ իր մեջ ունի հայ հոգեբանության անսպառ հարստություն: Հայի մորթված լեզվի մի ճյուղն է ահա ապրում բարբառը:

- Մեզ «տավառնի» փակ վագոններով քշեցին Կիրգիզստան: Մի քսան–քսանհինգ օր հետո բանտ–վագոններից մեզ թափեցին Օշի մարզի Կըզըլ Կիյա շրջանում, սարային մեռած ամայության մեջ: –Եթե կուզեք ապրեցեք այստեղ,– ասացին մեզ բերած չեկիստները: –Չեք ուզի, մեռեք:– Չմեռանք: Ապրեցինք:

Սա ասողներն այնպես են նայում ինձ, կարծես ես Թովմա Առաքյալն եմ, որ գավազանիս մի շարժումով հայից 1921–ին խլված հայոց Գողթան գավառը կարող եմ հայացնել, ինչպես արել է Հիսուս Քրիստոսի Թովմա աշակերտը: Իսկ ես չեմ խեղճանում, ո՜չ…

Բաթումի շրջանից բռնությամբ աքսորված այս հայերի ազգանունները աքսորի

ճանապարհին խեղել են՝ Քյոս–օղլի, Կարա–Իսխան–օղլի դարձրել: Եղել են Գասպար–Քասպարյան, Իսահակ–Իսահակյան:

- Երբ մեզ մի գիշերում աքսորեցին, մեր անձնագրերը տեղնուտեղը փոխեցին, ինչ
ուզեցին, այն էլ գրեցին մեջը, ինչպես կամեցան, այնպես էլ կոչեցին մեզ:

Կարաիբրահիմը ինձ է մեկնում իր «պասպորտ»–անձնագիրը: Սարսռում եմ: Դրա մեջ «ազգությունը» հարցի դիմաց ռուսերեն գրված է՝ «համշենլի»: Այսինքն՝ այս մարդը (մարդիկ) «համշենլի» ազգ են: Դիվական բառ է, «ժողովուրդների մեծ հայրը» նոր ազգ է ստեղծել՝ «համշենլի»:

–Մեզ տարան լցրին ամայի հողի ճեղքերը՝ կուզեք ապրեցեք, կուզեք սատկեցեք: Ապրեցինք: Հայ ենք, ապրեցինք Կըզըլ Կիյա շրջանում: Բոլորս՝ երեխա, թե մեծ, ոչխար ու տավար պահող ենք: Ոչխար պահեցինք կոլխոզ–-սովխոզներում: Կերակուր էինք ստեղծում պետության համար, մեզ սպանողների համար: Աքսորի դժոխային օրից մենք այլևս աստված չունենք, ոչ Քրիստոս, ոչ Մուհամմեդ: Մեր աստվածը ոչխարի կտտորն է՝ թրիքը: Մեր պահած ոչխարի մսից, կաթից, բրդից մեզ ոչինչ չէին թողնում, տանում էին…

Այս դժբախտ հայերը աքսորավայրում փորձում են հայկական դպրոց հիմնել, արգելում են: Ով հայերեն էր խոսում, տանջում էին:

Հարցնում եմ՝ որքա՞ն էիք Բաթումի շրջանից աքսոր-
ված հայերդ:

- Գիշերը զենք ու բռունցքով խուժեցին մեր տներն ու մեզ տարան: Ոմանք վախից մեռան, հատկապես մանր երեխաները: Վագոն–բանտախցերի մեջ էլ մեռան: Կանայք ծննդաբերում էին մեռած զավակներ: Բայց դե… Բաթումի շրջանից աքսորեցին վեց հազար համշենցի հայերի: Տեղ հասանք հազիվ չորս հազար: Աքսորի սառույցների մեջ էլ մեռանք: Հիմա երեք հազար ենք:

- Հիմա ի՞նչ եք ուզում, եղբայր համշենցիներ,– հարցրի նրանց:

- Ուզում ենք գալ Հայաստանում ապրել,–ասացին նրանք: – Ուզում ենք գալ ձեզ հետ մնալ, Էջմիածնի հովանու տակ, հայի դժբախտ Քրիստոսի օրհնությամբ: Փրկեցեք մեզ, հայեր…

* * *

Մի ամբողջ շաբաթ այդ մարդիկ մնացին ինձ մոտ՝ մեր տանը: Ես նրանց հետ բախեցի հազար դուռ ու դարպաս՝ նրանց խնդրանքը կատարելու համար: Հարցրի՝ ինչպե՞ս ծագեց ձեր մեջ այդ միտքը՝ Հայաստանում ապրելու ցանկությունը:

- Աքսորավայրում մենք զրեթե անհույս էինք,– ասացին նրանք: – Է՜հ, ասում էինք, մեր երկիրը, մեր հողն ու տները մեզնից առան–պրծան: Հիմա էստեղ թե կապրենք՝ կապրենք, թե կմեռնենք, թող մեռնենք:

Ապրեցինք: Եկավ 1953 թվականը: Լսեցինք, որ Ստալինը մեռել է: Մեռել է, մեռել է, հողը գլխին:

Մեզ հետ Բաթումի շրջաններից չորս–հինգ հարյուր տուն–ընտանիք մահմեդական վրացիների էլ էին քշել, աքսորել: Վրացի էին, մահմեդական, մեր ճակատագրին եղբայր, նաև խեղճուկրակ:

1956 թվին այդ աքսորական վրացիները մարդ են ուղարկում Մոսկվա՝ Անաստաս Միկոյանի մոտ, թե՝ էսպես–էսպես, մենք մուսուլման վրացի ենք, մենք ուզում ենք վերադառնալ մեր երկիրը՝ Վրաստան:

Գնացին, ետ եկան ուրախ, զվարթ: Նրանց ընդունել է այն ժամանակ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, հայ Անաստաս Միկոյանը և օգնել: Գնացինք այդ վրացիներին տեսության, հավաքվում էին, որ վերադառնան տուն: Վրացիներն ասացին, թե Միկոյանը լսեց մեզ, հուզվեց, լաց եղավ ու ասաց:

- Մի տխրեք, ամեն կերպ կօգնեմ ձեզ, որ վերադառնաք ձեր երկիրը:

Միկոյանը վրացի մահմեդականներին օգնում է ամեն ինչով: Նրանց մեծ նպաստ–գումարներ է տալիս, պետության հաշվին, պետության ծախսերով տեղափոխում տուն–տեղով, տանում Վրաստանում տեղավորում իրենց նախկին գյուղերում, իրենց հողի վրա:

Այս իմանալով, մեր աքսորական համշենցի հայերը հույս են փայփայում՝ գուցե իրենց էլ ետ տան իրենց տեղերը: Նրանք ևս երեք հոգու ուղարկում են Մոսկվա՝ Միկոյանի մոտ, նույն խնդրանքով:

- Տասնհինգ օր Կրեմլի պատերի տակ թափառեցինք, մինչև Միկոյանը մեզ ընդունեց,– պատմում է Մոսկվա

գնացածներից Կարաբեքիր–օղլին:–Ընդունեց: Հարցրեց՝ դուք հա՞յ եք: Ասինք՝ այո, հայ ենք: Ասավ՝ ինչո՞վ կապացուցեք, որ հայ եք: Ձեր «պաշպորտներում» չի գրած, որ հայ եք, ձեր ազգանունները…

Բացատրեցինք: Հայ ենք՝ մահմեդական հայ:

- Չեմ հավատում,– ասաց Միկոյանը թթված, բարկացած:

- Աշխարհում,– ասացինք,– ոչ մի մարդ չի գտնվի, որ հայ չլինի և ասի, թե հայ եմ:

Միկոյանը մերժեց մեր խնդրանքը, մեզ գրեթե վռնդեց իր պալատից:

Այսպես ընկճված, հուսահատ նրանք վերադառնում են իրենց աքսորավայրը: Դրանից տասնմեկ տարի հետո ահա այդ հայերից ութ–ինը հոգի եկել են ինձ մոտ՝ Երևան: Նախ եկել են Վրաստան: Գնացել են իրենց գյուղերը տեսել: Այնտեղ վաղուց այլազգիներ են տեղավորված: Գնացել են Թիֆլիս:

- Վրաստանի կառավարությունը մեզ սիրով ընդունեց,– ասացին նրանք: – Վրացի ղեկավարներն ասացին՝ Վրաստանի հողում ինչ վայր ուզում եք, ընտրեցեք, մենք այնտեղ ձեզ համար գյուղեր կշինենք, ձեզ կտեղավորենք, միայն ձեր հին գյուղերումը՝ ոչ: Այնտեղ արդեն մարդիկ են ապրում, լավ չի, որ նրանց տեղահանենք:

Այսպես եղավ: Վրաստանի ղեկավարները խելք ունեն: Գիտեն, թե ինչպիսի աշխատավոր է հայը, այն էլ գյուղացին: Ամեն ինչ անում են, որ մեր համշենցիներին պահեն իրենց մոտ:

- Բայց մենք չմնացինք Վրաստանում: Եկանք Հայաստան: Հիմա ասացեք, կարո՞ղ եք մեզ տեղավորել Հայաստանում: Չենք ասում, թե մեզ շքեղ քաղաք տվեք: Ո՜չ: Մենք անասնապահ մարդիկ ենք, մեզ որևէ տեղ հողամաս տվեք և մենք մեր գլխի ճարը կտեսնենք, տուն–տեղ կստեղծենք, կապրենք:

Ես հարցրի՝ դուք Հայաստանում արդյոք չե՞ք նեղվի այն բանից, որ մահմեդական հայ եք:

- Մենք հայ ենք, պրծավ գնաց,– ասացին նրանք: –- Մենք մեր երեխաների համար հայկական դպրոցներ կստեղծենք: Մենք երեք հարյուր տարի մեր հայությունը պահել ենք, չենք կորցրել, այսուհետև ևս կպահենք, երեք հարյուր չէ, երեք հազար տարի: Միայն օգնեցեք, որ մենք հեռավոր աշխարհից գանք մեր տունը:

Մենք միասին բարեսիրտ Բարունակ Թոռլաքյանի հետ սկսեցինք մի ծանր ճակատամարտ մղել Ղազախստանում ու Կիրգիզիայում մնացած երեք հազար հայերի փրկության համար: Ասեմ՝ ես հիացած էի այս մահմեդական հայերով: Ազնիվ են, արդարամիտ, մարդասեր, մանավանդ անխոնջ աշխատող, մի կորեկից մի լավաշ հաց ստեղծող:

Նախ Թոռլաքյանի ու Կարաօղլու հետ գնացի Կենտկոմ, այն ժամանակվա ղեկավարներից մեկի մոտ: Ես Կենտկոմի անդամ էի ու հավատացած, որ խոսքս չի մերժվի:

Կենտկոմի երկրորդ քարտուղարը զարմացավ՝ հայ և մահմեդակա՞ն. խոսեց Կարաիբրահիմ Օղլու հետ: Զարմացավ, որ այս համշենցին հրաշալի խոսում է հայերեն,

իր բարբառով, իհարկե: Իսկ մի՞թե բարբառը հայերեն չէ: Բարբառը հայերեն է, այն էլ նրա սերուցքը, նրա մեռոնը:

- Բայց այդ տեղափոխումը պետականորեն անհնարին է կատարել,– ասաց քարտուղարը: – Կիրգիզիայի ղեկավարները կնեղանան: Երեք հազար, այո՞: Դժվար բան է:

Ես նրան ասացի, թե դուք պետական հուներով մի գործեք այս մարդկանց տուն բերելու համար: Միայն հանձնարարեցեք մի երկու շրջանի, որ նրանք տեղավորեն սրանց: Այս մարդկանց կիրավիրեն այստեղ ապրող իրենց համշենցի ազգականները:

Այսպես երկար խոսեցինք: Քարտուղարը մեզ ուղարկեց Աշխատանքի տեղավորման կոմիտե (կարծեմ այդպես է կոչվում): Թե ինչ ասաց նրա նախագահին, չգիտեմ: Այդ կոմիտեում ևս զարմացան՝ հայ ու մահմեդակա՞ն:

Երկար առանք–տվինք: Զգացի, որ Կոմիտեն վերևից հրաման է ստացել՝ մերժել մեր խնդրանքը, հայի խնդրանքը՝ հայ կառավարությունից: Բայց նախագահը պարզ չասաց, թե մերժվում է ձեր խնդրանքը:

- Իհարկե, անպայման պիտի օգնել ձեզ,–ասում էր նա: – Օգնել: Լավ եք անում, որ ուզում եք գալ: Այո, այո… Վաղը եկեք:

Այսպես մի շաբաթ գնացինք–եկանք: Նախագահը համշենցիներին ասաց՝ լավ, դուք գնացեք ձեր տեղերը, մենք ձեզ իմաց կտանք, թե երբ գաք:

Ես համշենցիներին տարա զանազան վայրեր, թե որտեղ իրենք գյուղ ու տուն կառուցեն, ապրեն: Նրանց շատ դուր եկան Հատիս լեռան փեշերը:

- Այստեղ մենք շատ ոչխար ու կով կպահենք: Սա մեզ հարմար տեղ է:

Ես նրանց ճանապարհեցի Կիրգիզիա՝ իրենց աքսորավայրերը: Հույս տվի: Սակայն, ավա՜ղ, իմ ու նրանց գաղափարի, արդար ցանկության վրա ոչ թե ձյուն, այլ խոշորագունդ կարկուտ մաղվեց: Հերթական այցս Կենտկոմ՝ համշենցիների ցավով, ողբերգական եղավ: Կենտկոմում ասացին՝ ձեռք քաշիր այդ մտքից: Մենք չենք կարող այդ հայերին տեղ տալ Հայաստանում: Վե՜րջ:

Ահա այսպես եղավ 26 տարի առաջ: Ոչ մի գիշեր քունս մարդավարի չտարավ: Ցնցվում էի, արթնանում համշենցի հայերի աղաղակից:

- Մեզ անտեր մի թողե՜ք…

(Շարունակելի)

«Հայրենիքի ձայն», 1989, մայիսի 3, № 18, էջ 4, 5:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՓԱԿ ԴՌՆԵՐԻ ԱՌԱՋ
ԱՌԱՋԻՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Հիմա էլ, որ հիշում եմ հեռավոր այն օրերի մեր պետական ու կուսակցական աշխատողների նողկալի վերաբերմունքը հայ համշենցիների նկատմամբ, ամբողջ մարմնով փշաքաղվում եմ: Բայց նախ ասեմ, թե ինչ ասել են «համշենցի», «Համշեն», «համշենական»:

1967 թվի մարտին ես առաջին անգամ համշենցի հայեր տեսա: Այդ մասին գրեցի «Գրական թերթում»[201]: Հետո հրատարակեցի «Ձայն համշենական» ազգագրական–բանահյուսական ժողովածու: Այդտեղ ասացի. «Մայրը գրեթե մոռացել է իր զավակներից մեկին»[202]: Ասեմ՝ Համշենը մի ժամանակ ընդգրկում էր Փոքր Հայքի ծայր արևելյան գավառը՝ նախ բուն Համշենը, հետագայում նաև Օրդու, Ջենիկ, Տրապիզոն երկարությամբ: Դա Սև ծովի հարավ–արևելյան ափն էր: Համշենի հայը ամբողջ երեք հազար հինգ հարյուր տարի իր բնօրրանում ապրեց հայկական կյան-

---

[201] Նկատի ունի հետևյալ հրապարակումը՝ Ս. Խանզադյան, Ձայն համշենական, «Գրական թերթ», 1967, ապրիլի 14, № 16, էջ 4: Ս. Խանզադյանի հակիրճ խոսքից հետո «Լոռյի գրական խմբակի անդամների ստեղծագործություններից» ենթավերնագրի ներքո տպագրվել են Անդրանիկ Ջեյթունյանի մեկ պատմվածքը և Համշենի բարբառով գրի առած ինն առած-ասացվածքները, Աշոտ Քոչկոնյանի և Ալեքսանդր Անտոնյանի բանաստեղծությունները, Գուրգեն Խաչատրյանի մեկ բանաստեղծությունն ու «Համշենի առակներից» երեք մշակումները (Ս. Վ.):
[202] Ձայն համշենական, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանզադյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1971 (- 248 էջ), էջ 3 (Ս. Վ.):

քով, մինչև թուրքական բարբարոսների պատճառած կոր-ծանումը, այսինքն՝ մինչև 1915 թվականը: Մեծ աղետ էր եղել դրանից տակավին 300 տարի առաջ: Օսման թուրք սուլթանների բռնակալ զորքերը, թուրք մոլեռանդ քարոզիչ Ղուրուֆ–օղլի Մահմեդի առաջնորդությամբ, բռնի ուժով Համշենում հարյուր հազարավոր հայերի մահմեդական դարձրին: Հիմա, ինչպես եվրոպական աղբյուրներն են վկայում, Թուրքիայում մեկուկես միլիոն մահմեդական հայեր են ապրում: Ես այս բանը իմացա, երբ համշենցիների մոտ էի, երբ հանդիպեցի տասնյակ մահմեդական հայ համշենցիների: Այնինչ մեր ժամանակակից պատմությունը հանցավոր կերպով լռում է այդ մասին:

1967–ի մարտի 24–ին հասա համշենցիների նոր գաղթավայրը՝ Բոլշոյ Սոչիի լեռնային հայկական գյուղերը: Գրեթե մեկ ամիս մնացի ընդամենը ութսուն տարի դրանից առաջ այստեղ գաղթած համշենցի հայերի մոտ՝ Վեսյոլկա, Պրիմերնի, Չերեշնյա, Դե–Սիմոն, Սերգեյ–Պոլե, Դագոմիս, Ներքին և Վերին Լոո, Բերանդա և այլ գյուղերում, որոնք հայերն են հիմնադրել և հիմա էլ կան:

Այդտեղ ես հանդիպեցի ծերունի Բարունակ Թոռլաքյանին: Կարճահասակ, խիստ բարեկիրթ մարդ է, մտավորական էությամբ: Նա ասաց, թե ինքը հին համշենցի է, Տրապիզոնին մոտիկ Կուշանա համշենահայ գյուղից: Նրա հորեղբոր տղա Միսաք Թոռլաքյանը համշենահայերի ազատագրման պայքարի առաջնորդներից է եղել 1915–21 թվականներին, զինված հայդուկ–ֆիդայի: Ինքը՝ Բարունակը ևս պատանի ֆիդայի է եղել և 1918–ին ռուսական նահան-

ջող զորքի հետ տեղափոխվել է Նոր Համշեն, այսինքն՝ Աղլեր:

Մեր հանդիպումից մեկ տարի հետո Թոռլաքյանը անսպասելի եկավ մեր տուն՝ Տերյան փողոց: Նրա հետ յոթ–ութ հոգի գեղջուկ մարդիկ կային, համեստ հագնված, տառապած, նաև անհույս ու տխուր:

- Այս մեր եղբայրները մահմեդական համշենցի հայեր են,– ներկայացրեց Թոռլաքյանը:–Եկել են Կիրգիզիայի Օշի մարզից…

- Իմ առջև բացվեց հայի ողբերգության մի ամբողջ ու նոր աշխարհ: Էս ի՞նչ բան է:

- Հայերեն գիտե՞ք, եղբայրներ:

Ինչպե՞ս չէ,– մի քիչ նեղացած ասացին նրանք:– Մենք հայ ենք: Մահմեդական ենք, բայց հայ ենք, հա՛յ …Մեր մայրենի լեզուն–մեր բարբառը մեզ պահում է: Մենք իրեն ենք պահում, ինքը՝ մեզ:

Ուրեմն այսպես: Երեք հարյուր տարի առաջ, ինչպես ասացի, բռնությամբ մահմեդական դարձած այս հայերից մի քանիսը ահա ինձ մոտ են, իմ տանը: Մենք զրուցում ենք սրտանց, երկար:

- Ապրում էինք Բաթումի մոտի մեր հայրենի լեռնային Սարբ, Գանիո, Ավզա գյուղերում:

1921 թվականին, երբ Կարսի մարզն ու Բաթումի շրջանի կեսը ստորաբար հանձնվեցին Թուրքիային, համշենցիների այս ու էլի այլ գյուղեր մնում են սահմանի այս կողմը…

- Այդտեղ ապրում էինք մեր հայ ոգով ու կենցաղով, հայ լեզվով, թեև հավատով մահմեդական էինք: Այն մարդը, որ

մեզ՝ մահմեդական հայերիս, «թուրք» ասեր, մենք նրա վիզը կկտրեինք…

Հետո՞: Ի՞նչ եղավ հետո: Զարմանալի հարց եմ տալիս: Մի՞թե չգիտեմ, թե ինչ է լինում «հետո» հայի հետ: Չէ՞ որ ապրել ենք մարդակեր Ստալինի կրնկի տակ:

- 1944 թվականին մեզ պոկեցին մեր մայր հողից ու աքսորեցին:

Բոլորի անունից այս բանն ինձ ասում է Քյոս–օղլի Մահմեդ հայրը: Բռնությամբ թուրքացրած հայի ժառանգը: Ասում է հայերեն, Համշենի դասական հայ բարբառով: Ինչ ասեմ, գրաբարը այս մարդկանց կենցաղում մորթվել է, ժամանակակից աշխարհաբարը՝ մեռցվել: Մնացել է միայն մի սուրբ հայերեն՝ բարբառը, Համշենի հայ բարբառը, որ իր մեջ ունի հայ հոգեբանության անսպառ հարստություն: Հայի մորթված լեզվի մի ճյուղն է ահա ապրում բարբառը:

- Մեզ «տավառնի» փակ վագոններով քշեցին Կիրգիզստան: Մի քսան–քսանհինգ օր հետո բանտ–վագոններից մեզ թափեցին Օշի մարզի Կըզըլ Կիյա շրջանում, սարային մեռած ամայության մեջ: –Եթե կուզեք ապրեցեք այստեղ,– ասացին մեզ բերած չեկիստները: –Չեք ուզի, մեռեք:– Չմեռանք: Ապրեցինք:

Սա ասողներն այնպես են նայում ինձ, կարծես ես Թովմա Առաքյալն եմ, որ գավազանիս մի շարժումով հայից 1921–ին խլված հայոց Գողթան գավառը կարող եմ հայացնել, ինչպես արել է Հիսուս Քրիստոսի Թովմա աշակերտը: Իսկ ես չեմ խեղճանում, ո՛չ…

Բաթումի շրջանից բռնությամբ աքսորված այս հայերի ազգանունները աքսորի

ճանապարհին խեղել են՝ Քյոս–օղլի, Կարա–Իսխան-–օղլի դարձրել: Եղել են Գասպար–Քասպարյան, Իսահակ–Իսահակյան:

- Երբ մեզ մի գիշերում աքսորեցին, մեր անձնագրերը տեղնուտեղը փոխեցին, ինչ
ուզեցին, այն էլ գրեցին մեջը, ինչպես կամեցան, այնպես էլ կոչեցին մեզ:

Կարաիբրահիմը ինձ է մեկնում իր «պասպորտ»–անձնագիրը: Սարսռում եմ: Դրա մեջ «ազգությունը» հարցի դիմաց ռուսերեն գրված է՝ «համշենլի»: Այսինքն՝ այս մարդը (մարդիկ) «համշենլի» ազգ են: Դիվական բառ է, «ժողովուրդների մեծ հայրը» նոր ազգ է ստեղծել՝ «համշենլի»:

–Մեզ տարան լցրին ամայի հողի ճեղքերը՝ կուզեք ապրեցեք, կուզեք սատկեցեք: Ապրեցինք: Հայ ենք, ապրեցինք Կըզըլ Կիյա շրջանում: Բոլորս՝ երեխա, թե մեծ, ոչխար ու տավար պահող ենք: Ոչխար պահեցինք կոլխոզ–-սովխոզներում: Կերակուր էինք ստեղծում պետության համար, մեզ սպանողների համար: Աքսորի դժոխային օրից մենք այլևս աստված չունենք, ոչ Քրիստոս, ոչ Մուհամմեդ: Մեր աստվածը ոչխարի կտորն է՝ թրիքը: Մեր պահած ոչխարի մսից, կաթից, բրդից մեզ ոչինչ չէին թողնում, տանում էին…

Այս դժբախտ հայերը աքսորավայրում փորձում են հայկական դպրոց հիմնել, արգելում են: Ով հայերեն էր խոսում, տանջում էին:

Հարցնում եմ՝ որքա՞ն էիք Բաթումի շրջանից աքսորված հայերդ:

- Գիշերը զենք ու բռունցքով խուժեցին մեր տներն ու մեզ տարան: Ոմանք վախից մեռան, հատկապես մանր երեխաները: Վագոն–բանտախցերի մեջ էլ մեռան: Կանայք ծննդաբերում էին մեռած զավակներ: Բայց դե… Բաթումի շրջանից աքսորեցին վեց հազար համշենցի հայերի: Տեղ հասանք հազիվ չորս հազար: Աքսորի սառույցների մեջ էլ մեռանք: Հիմա երեք հազար ենք:

- Հիմա ի՞նչ եք ուզում, եղբայր համշենցիներ,– հարցրի նրանց:

- Ուզում ենք գալ Հայաստանում ապրել,–ասացին նրանք: – Ուզում ենք գալ ձեզ հետ մնալ, Էջմիածնի հովանու տակ, հայի դժբախտ Քրիստոսի օրհնությամբ: Փրկեցեք մեզ, հայեր…

* * *

Մի ամբողջ շաբաթ այդ մարդիկ մնացին ինձ մոտ՝ մեր տանը: Ես նրանց հետ բախեցի հազար դուռ ու դարպաս՝ նրանց խնդրանքը կատարելու համար: Հարցրի՝ ինչպե՞ս ծագեց ձեր մեջ այդ միտքը՝ Հայաստանում ապրելու ցանկությունը:

- Աքսորավայրում մենք գրեթե անհույս էինք,– ասացին նրանք: – Է՜հ, ասում էինք, մեր երկիրը, մեր հողն ու տները մեզնից առան–պրծան: Հիմա էստեղ թե կապրենք՝ կապրենք, թե կմեռնենք, թող մեռնենք:

Ապրեցինք: Եկավ 1953 թվականը: Լսեցինք, որ Ստալինը մեռել է: Մեռել է, մեռել է, հողը գլխին:

Մեզ հետ Բաթումի շրջաններից չորս–հինգ հարյուր տուն–ընտանիք մահմեդական վրացիների էլ էին քշել,

աքսորել: Վրացի էին, մահմեդական, մեր ճակատագրին եղբայր, նաև խեղճուկրակ:

1956 թվին այդ աքսորական վրացիները մարդ են ուղարկում Մոսկվա՝ Անաստաս Միկոյանի մոտ, թե՝ էսպես–էսպես, մենք մուսուլման վրացի ենք, մենք ուզում ենք վերադառնալ մեր երկիրը՝ Վրաստան:

Գնացին, ետ եկան ուրախ, զվարթ: Նրանց ընդունել է այն ժամանակ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, հայ Անաստաս Միկոյանը և օգնել: Գնացինք այդ վրացիներին տեսության, հավաքվում էին, որ վերադառնան տուն: Վրացիներն ասացին, թե Միկոյանը լսեց մեզ, հուզվեց, լաց եղավ ու ասաց:

- Մի տխրեք, ամեն կերպ կօգնեմ ձեզ, որ վերադառնաք ձեր երկիրը:

Միկոյանը վրացի մահմեդականներին օգնում է ամեն ինչով: Նրանց մեծ նպաստ–գումարներ է տալիս, պետության հաշվին, պետության ծախսերով տեղափոխում տուն–տեղով, տանում Վրաստանում տեղավորում իրենց նախկին գյուղերում, իրենց հողի վրա:

Այս իմանալով, մեր աքսորական համշենցի հայերը հույս են փայփայում՝ գուցե իրենց էլ ետ տան իրենց տեղերը: Նրանք ևս երեք հոգու ուղարկում են Մոսկվա՝ Միկոյանի մոտ, նույն խնդրանքով:

- Տասնհինգ օր Կրեմլի պատերի տակ թափառեցինք, մինչև Միկոյանը մեզ ընդունեց,– պատմում է Մոսկվա գնացածներից Կարաբեքիր–օղլին:–Ընդունեց: Հարցրեց՝ դուք հա՞յ եք: Ասինք՝ այո, հայ ենք: Ասավ՝ ինչո՞վ կապա-

ցուցեք, որ հայ եք: Ձեր «պաշպորտներում» չի գրած, որ հայ եք, ձեր ազգանունները…

Բացատրեցինք: Հայ ենք՝ մահմեդական հայ:

- Չեմ հավատում,– ասաց Միկոյանը թթված, բարկացած:

- Աշխարհում,– ասացինք,– ոչ մի մարդ չի գտնվի, որ հայ չլինի և ասի, թե հայ եմ:

Միկոյանը մերժեց մեր խնդրանքը, մեզ գրեթե վռնդեց իր պալատից:

Այսպես ընկճված, հուսահատ նրանք վերադառնում են իրենց աքսորավայրը: Դրանից տասնմեկ տարի հետո ահա այդ հայերից ութ–ինը հոգի եկել են ինձ մոտ՝ Երևան: Նախ եկել են Վրաստան: Գնացել են իրենց գյուղերը տեսել: Այնտեղ վաղուց այլազգիներ են տեղավորված: Գնացել են Թիֆլիս:

- Վրաստանի կառավարությունը մեզ սիրով ընդունեց,– ասացին նրանք: – Վրացի ղեկավարներն ասացին՝ Վրաստանի հողում ինչ վայր ուզում եք, ընտրեցեք, մենք այնտեղ ձեզ համար գյուղեր կշինենք, ձեզ կտեղավորենք, միայն ձեր հին գյուղերումը՝ ոչ: Այնտեղ արդեն մարդիկ են ապրում, լավ չի, որ նրանց տեղահանենք:

Այսպես եղավ: Վրաստանի ղեկավարները խելք ունեն: Գիտեն, թե ինչպիսի աշխատավոր է հայը, այն էլ գյուղացին: Ամեն ինչ անում են, որ մեր համշենցիներին պահեն իրենց մոտ:

- Բայց մենք չմնացինք Վրաստանում: Եկանք Հայաստան: Հիմա ասացեք, կարո՞ղ եք մեզ տեղավորել Հայաստանում: Չենք ասում, թե մեզ շքեղ քաղաք տվեք: Ո՜չ:

Մենք անասնապահ մարդիկ ենք, մեզ որևէ տեղ հողամաս տվեք և մենք մեր գլխի ճարը կտեսնենք, տուն–տեղ կստեղծենք, կապրենք:

Ես հարցրի՝ դուք Հայաստանում արդյոք չե՞ք նեղվի այն բանից, որ մահմեդական հայ եք:

- Մենք հայ ենք, պրծավ գնաց,– ասացին նրանք: –Մենք մեր երեխաների համար հայկական դպրոցներ կստեղծենք: Մենք երեք հարյուր տարի մեր հայությունը պահել ենք, չենք կորցրել, այսուհետև ևս կպահենք, երեք հարյուր չէ, երեք հազար տարի: Միայն օգնեցեք, որ մենք հեռավոր աշխարհից գանք մեր տունը:

Մենք միասին բարեսիրտ Բարունակ Թոռլաքյանի հետ սկսեցինք մի ծանր ճակատամարտ մղել Ղազախստանում ու Կիրգիզիայում մնացած երեք հազար հայերի փրկության համար: Ասեմ՝ ես հիացած էի այս մահմեդական հայերով: Ազնիվ են, արդարամիտ, մարդասեր, մանավանդ անխոնջ աշխատող, մի կորեկից մի լավաշ հաց ստեղծող:

Նախ Թոռլաքյանի ու Կարաօղլու հետ գնացի Կենտկոմ, այն ժամանակվա ղեկավարներից մեկի մոտ: Ես Կենտկոմի անդամ էի ու հավատացած, որ խոսքս չի մերժվի:

Կենտկոմի երկրորդ քարտուղարը զարմացավ՝ հայ և մահմեդակա՞ն. խոսեց Կարաիբրահիմ Օղլու հետ: Զարմացավ, որ այս համշենցին հրաշալի խոսում է հայերեն, իր բարբառով, իհարկե: Իսկ մի՞թե բարբառը հայերեն չէ: Բարբառը հայերեն է, այն էլ նրա սերուցքը, նրա մեռոնը:

- Բայց այդ տեղափոխումը պետականորեն անհնարին է կատարել,– ասաց քարտուղարը: – Կիրգիզիայի ղեկավարները կնեղանան: Երեք հազար, այո՞: Դժվար բան է:

Ես նրան ասացի, թե դուք պետական հուներով մի գործեք այս մարդկանց տուն բերելու համար: Միայն հանձնարարեցեք մի երկու շրջանի, որ նրանք տեղավորեն սրանց: Այս մարդկանց կիրավիրեն այստեղ ապրող իրենց համշենցի ազգականները:

Այսպես երկար խոսեցինք: Քարտուղարը մեզ ուղարկեց Աշխատանքի տեղավորման կոմիտե (կարծեմ այդպես է կոչվում): Թե ինչ ասաց նրա նախագահին, չգիտեմ: Այդ կոմիտեում ևս զարմացան՝ հայ ու մահմեդակա՞ն:

Երկար առանք–տվինք: Զգացի, որ Կոմիտեն վերևից հրաման է ստացել՝ մերժել մեր խնդրանքը, հայի խնդրանքը՝ հայ կառավարությունից: Բայց նախագահը պարզ չասաց, թե մերժվում է ձեր խնդրանքը:

- Իհարկե, անպայման պիտի օգնել ձեզ,–ասում էր նա: – Օգնել: Լավ եք անում, որ ուզում եք գալ: Այո, այո… Վաղը եկեք:

Այսպես մի շաբաթ գնացինք–եկանք: Նախագահը համշենցիներին ասաց՝ լավ, դուք գնացեք ձեր տեղերը, մենք ձեզ իմաց կտանք, թե երբ գաք:

Ես համշենցիներին տարա զանազան վայրեր, թե որտեղ իրենք գյուղ ու տուն կառուցեն, ապրեն: Նրանց շատ դուր եկան Հատիս լեռան փեշերը:

- Այստեղ մենք շատ ոչխար ու կով կպահենք: Սա մեզ հարմար տեղ է:

Ես նրանց ճանապարհեցի Կիրգիզիա՝ իրենց աքսորավայրերը: Հույս տվի: Սակայն, ավա՜ղ, իմ ու նրանց գաղափարի, արդար ցանկության վրա ոչ թե ձյուն, այլ խոշորագունդ կարկուտ մաղվեց: Հերթական այցս Կենտկոմ՝ համշենցիների ցավով, ողբերգական եղավ: Կենտկոմում ասացին՝ ձեռք քաշիր այդ մտքից: Մենք չենք կարող այդ հայերին տեղ տալ Հայաստանում: Վե՜րջ:

Ահա այսպես եղավ 26 տարի առաջ: Ոչ մի գիշեր քունս մարդավարի չտարավ: Ցնցվում էի, արթնանում համշենցի հայերի աղաղակից:

- Մեզ անտեր մի թողե՜ք…

(Շարունակելի)

«Հայրենիքի ձայն», 1989, մայիսի 3, № 18, էջ 4, 5:

ՓԱԿ ԴՌՆԵՐԻ ԱՌԱՋ
ԵՐԿՐՈՐԴ ՄԵՐԺՈՒՄԸ

Ես այս խոսքը արդեն գրում էի, երբ կարդացի Սերգեյ Վարդանյանի համարձակ ու սրտացավ հոդվածը՝ ներքին սփյուռքի հայության ցավերի ու տառապանքների մասին: Արդեն գրածս ավարտելու վրա էի, երբ մարտի 29–ին կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագրով հաղորդում լսեցի այն մասին, որ վերականգնվում է Գերմանական Ինքնավար Հանրապետությունը, թե 1941 թվականին Վոլգայի ավազանից բռնությամբ աքսորված գերմանացիները վերադառնալու են իրենց բնիկ հայրենի տեղերը: Իսկ նրանք, ինչպես ասացին հաղորդման ժամանակ, երկու միլիոն են:

Այս հուսադրող լուրը իմանալով, ես որոշեցի կիսատ թողած գործս շարունակել: Որոշեցի նորից առաջ քաշել Բաթումի շրջանից արտաքսված դժբախտ մահմեդական հայերի հարցը:

Ես համշենահայերի այդ հատվածի մարդկանց հանդիպեցի մի քանի տարի առաջ: Այսպես՝ 1984–ի դեկտեմբերին Սերգեյ Վարդանյանը մեր տուն բերեց երկու համշենահայերի:

- Սրանք ևս աքսորականներ են, Աջարիայից: Համշենահայ մահմեդական հայեր:

Ես փաթաթվեցի երկուսին էլ:

- Ա՜խ, զավակնե՜րս: Ձեր տունդարձի ճանապարհը չեք մոռացել:

- Երբե՞ք,– ասացին նրանք:

Սերգեյը հուզվել է: Ազնվական տղա է՝ պատմաբան, խիզախ: Եվ վերջապես՝ 1989–ի փետրվարի 9–ի «Խորհրդային Հայաստան» թերթում երբ կարդացի նրա ընդարձակ հոդվածը[203], հայի այդ զավակը աչքիս գնաց մեր մեծերին հասավ: Ինչպիսի՜ ցավ, ազգային ինչպիսի արթնացման խթան: Հարցեր է բարձրացնում, որոնք խեղդված էին մեզանում ամբողջ վաթսուն–վաթսունհինգ տարի շարունակ:

Անցած երկու–երեք տարին ինձ համար երազելի տարիներ էին և ոչ միայն ինձ համար: Ահեղ սառցաշերտեր են փշրվում: Մենք փորձում ենք ցրել շատ խավար ամպեր, որ կուտակվել են մեր ազգային մթնոլորտում: Թեև դանդաղ, բայց և այնպես պարզվում են ստալինիզմի ահեղ ոճիրները, որ թափվեցին մեր ազգի գլխին: Շատ բաների մասին արդեն շատերս, այդ թվում նաև ես, ասել ենք: Հիմա էլ բոլորս պետք է ամենայն զորությամբ խոսենք այն սոսկալի բռնությունների մասին, որ թափվեցին հայ ժողովրդի գլխին, այն մասին, թե ինչպես երեսնական թվականների սկզբներից պետական դաժանությամբ հարյուր հազարավոր հայեր պոկվեցին իրենց հողից, տնից ու քշվեցին դեպի ոչնչացում, դեպի աքսոր: Հայտնի է, որ, ինչպես նաև գրում է Վարդանյանը ասածս թերթում, միայն 1918–1923 թթ. ներկայիս Հայաստանի տարածքում հայերի թիվը նվազել է 523 հազարով: Ինչ ձևով էլ ուզում են դատեն, սա կատարյալ ցեղասպանություն էր: Հիշենք. Հայաստանի Կենտգործկո-

---

[203] Տե՛ս Ս. Վարդանյան, Մենք պարտավոր ենք, «Սովետական Հայաստան», 1989, փետրվարի 9, № 35, էջ 2, 3 (Ս. Վ.):

մը 1923–ին ահեղ վճիռ կայացրեց՝ թուրքի ձեռքից փախած հայերին արգելվում է Հայաստան վերադառնալ: Հիշենք՝ 1927–ին ՀԽՍՀ կառավարությունը որոշում է հանրապետության բնակչության մի մասին «Նրա սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ–ի ազատ հողային ֆոնդերում տեղավորել»: Սա կատարյալ աղետ էր: Հիշում եմ՝ տասնյակ հազարավոր գաղթական դժբախտ հայերի քշեցին դեպի հյուսիս: Նրանք ողբալով գնացին ու… այլևս, շատ քչերի բացառությամբ, չվերադարձան տուն, կորան, գնացին… Հապա 1949–ի ոճրագործությու՞նը: Դրա մասին գրել եմ:

Սերգեյ Վարդանյանը նաև հիշատակում է, թե միայն 1970–84 թվականներին, տնտեսական, նյութական, բարոյական ու էլի այլ կարիքներից ու հալածանքներից ստիպված, մեր փոքրածավալ հայրենի հանրապետությունից ԽՍՀՄ տարբեր կողմեր են գաղթել 161 հազար հոգի: Սա ընդամենը 15 տարում: Աղե՞տ էր: Այո: Հիմա հարցնենք, ասածս 1920 թվականից մինչև 1984–ը հայ ժողովուրդը սրտացավ, ազգային պետականություն ունե՞ր: Ոչ: Չուներ: Ժողովրդի նկատմամբ կա՞ր տարրական հոգատարություն: Չկար:

Հիշեցնեմ նաև այն, որ Ղրիմից, Հյուսիսային Կովկասից, Ադրբ. ԽՍՀ–ից (հատկապես Նախիջևանի ԻԽՍՀ–ից) ավելի քան 200 հազար բնիկ հայեր արտաքսվեցին:

Գնացին: Գնացին կորա՛ն…

Հիմա հարցնենք՝ արդյոք, արտաքսվածներից ցանկացողներ եղա՞ն վերադառնալու իրենց ծննդյան տեղերը: Եղան, այո և շատ: Սակայն պետական բյուրոկրատիան

թույլ չտվեց: Ամեն փիշածածկ ղեկավար դարձել էր ժողովրդի տերը: Ոչ, ի՜նչ եմ ասում, դարձել էր ժողովրդի դահիճը:

Էլի օրինակ բերեմ:

1966–ին հինգ–վեց ջահել տղաներ եկան Երևան՝ ինձ մոտ:

- Մենք,– ներկայացան նրանք,– եկել ենք Բաքվից ոչ հեռու, ծովափին նոր ստեղծված Սումգայիթ քաղաքից: Այդ քաղաքում հիմա տասնութ հազարից ավելի հայեր ենք: Բոլորս ջահել ընտանիքներ ենք: Մեր՝ Սումգայիթի հայերիս միջին տարիքը 27 է: Մեզանից գրեթե բոլորը ծառայել են բանակում: Ղարաբաղից ենք, Շամխորից, Ադրբեջանի հայկական էլի այլ շրջաններից: Մենք բոլորս Սումգայիթում կամ շինարար ենք, կամ մեխանիկ, բանվոր, արհեստավոր: Եկել ենք խնդրելու Հայաստանի կառավարությանը, որ մեզ տեղ տա, տեղավորվենք այստեղ: Խնդրում ենք…

- Ինչու՞,– հարցրի: – Վա՞տ եք ապրում Սումգայիթում:

- Պարզապես դժոխքի մեջ ենք,– պատասխանեցին նրանք: –Հացի–թացի կարիք չունենք: Նաև լավ բնակարաններ ունենք: Աշխատում ենք, վաստակում: Բայց դա ապրել չի, մեր կերած հացը հարամ է: Մենք կյանք չունենք Սումգայիթում: Զանազան տեղերից Սումգայիթ եկած ադրբեջանցիները մեզ հալածում են, անպատվում հենց միայն նրա համար, որ հայ ենք: Բնակարանի մեր հարևան ադրբեջանցիները մեզ վրա գոռում են: –Հեռացեք, գյավուր հայեր, աստիճանները մուրտառում եք ձեր քրիստոնյա ոտքերով, հարամում եք մեր հավատը, մեր Ղուրանը: –

Ադրբեջանցիները մեր զավակներին ծեծում, ջարդում են, մեր կանանց անպատվում: Դանակով, կացնով սպառնում են մեզ: Ամիս չի լինի, որ նրանք մեզնից մարդ չսպանեն: Մենք օր ու արև չունենք Սումգայիթում: Աստծու սիրուն, փրկեցեք մեզ:

Այսպես նրանք ներկայացրին իրենց վիճակը:

Նրանք խնդրեցին Սումգայիթի ողջ հայության անունից իրենց Հայաստանում մի պատառիկ չոր, քարոտ հող տալ, ասելով, թե իրենք այդ հողում իրենց ձեռքով տներ կշինեն, կապրեն:

Հարցրի՝ իսկ ինչու՞ չեք ցանկանում վերադառնալ Ղարաբաղ կամ ասենք՝ Շամխոր:

- Ղարաբաղում ու Շամխորում հայերի վիճակը ևս ծանր է: Հայերն այդ հայկական գավառներից հեռանում են խմբերով: Նրանք ևս հալածված են…

Ես նրանց տարա Աբովյանի շրջանը, ցույց տվի Կոտայքի վերևներում եղած անմարդաբնակ սարերը, լեռնալանջերը, ուր նախկինում բնակավայրեր են եղել: Կմնա՞ք այստեղ:

- Կմնանք,–համախումբ պատասխանեցին նրանք: Հարմար է: Միայն այստեղ մեզ հող տվեք, մեր փողով շինանյութ տվեք՝ ցեմենտ ու փայտ, իսկ քար այստեղ շատ կա: Տվեք և ինքներս մեր ձեռքով տուն կշինենք, հողը կկենդանացնենք:

Երեք օր շարունակ ես դռնեդուռ ընկա այս դժբախտների հետ՝ էլ Կենտկոմ, էլ Մինիստրների խորհուրդ, Գերա-

գույն խորհուրդ: Ամեն տեղ մեր աղերսանքին սառցեղեն պատասխան դեմ արին:

- Չենք կարող ձեզ ընդունել: Ի՞նչ է, Սումգայիթը սովետակա՞ն քաղաք չէ: Ի՞նչ է, դուք դե՞մ եք եղբայրությանը:

Այսպես եղավ, կրկնեմ՝ 1966–ին: Եղան նաև ղեկավար մարդիկ, որ ինձ մեղադրեցին նացիոնալիզմի մեջ, հայ–ադրբեջանական եղբայրության արանքը սեպ խրելու մեջ: Իմ վիրավորանքը դարձավ ողբ: Ի՞նչ անեն այս անտեր–անտիրական հայերը: Մեղա՜ աստծուն…

Եվ… եղավ 1988–ի Սումգայիթի հայերի կոտորածը: Սիրտս արյունոտվում է: Սումգայիթի հայերը կամ սպանվեցին ադրբեջանցի ղեկավարների ու բանդաների ձեռքով, կամ ցրվեցին:

Հիմա նորից վերադառնամ Միջին Ասիա ու Ղազախստան աքսորված համշենցի մահմեդական հայերի ճակատագրին:

1984 թվականի դեկտեմբերն էր: Ջահել բարեկամս՝ Սերգեյ Վարդանյանը, մեր տուն բերեց երկու համշենցի մահմեդական հայերի: Մեկը դպրոցի դիրեկտոր–մանկավարժ էր, ջահել Ջելալ Կարաիբրահիմովը, մյուսը անասնապահական ֆերմայի նախկին վարիչ, այդ օրերին արդեն կենսաթոշակի անցած Քյազիմ Կարաիբրահիմովը: Սրանց ևս 1944–ին բռնությամբ աքսորել են Ղազախստան:

- Այդ սև օրը հիշում եմ,– իր մայրենի հայոց բարբառով ասաց Քյազիմ Կարաիբրահիմովը: –Արդեն երեխատեր մարդ էի: Չեկայի զորք ներխուժեց Աջարիայի մեր գյուղը… Մեզ սոսկալի տանջանքներով քշեցին Ղազախստան:

Երկուսն էլ պատմեցին, որ իրենք բնիկ էին իրենց հայրենիքում՝ Կոնյա, Ավգիա, Սար գյուղերում: Իրենց պապերին, ինչպես ասել եմ, 300 տարի առաջ են թուրք սուլթանները բռնությամբ կրոնափոխ արել: Ասացին՝ ապրում են Ղազախստանի Չիմքենդի մարզում:

- Մեզ 1944–ին տարան ու նետեցին մի ամայի վայր, անունը Չիրկին,– հիշեց Քյազիմը:– Մենք մեր ձեռքով մեզ համար տներ շինեցինք Չիրկինում, տուն–տեղ դրինք, սկսեցինք անասուն պահել՝ տնտեսության ողնաշարն ու տավարը: Չիրկինում մեզ չթողին հայկական դպրոց բաց անել: Ռուսական ստեղծեցին:

Նա ու Ջելալն ասացին, թե իրենք Չիրկինում 57 ընտանիք են: Բոլորի աչքը տուն դառնալու ճանապարհին է: Տուն, այսինքն՝ Հայաստան:

- Աջարիայից վեց հազար մահմեդական հայ աքսորեց Ստալինը: Հիմա՝ քառասունհինգ տարի հետո, Կիրգիզիայում ու Ղազախստանում նրանցից մնացել է ընդամենը երեք հազար… Օգնեցեք: Փրկեցեք մեզ…

Ես սկսեցի նորից դռնեդուռ ընկնել այս մարդկանց օգնելու համար: Սկզբում խոստանում էին օգնել: Հատուկ նամակ գրեցի Մինիստրների խորհրդին: Ասացին՝ կօգնենք:

Չիրկինի երեխաները ինձ նամակ գրեցին ռուսերեն, իհարկե:

- «Հարգելի Սերո Նիկոլաևիչ: Մենք՝ Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկին գյուղի աշակերտներս, դիմում ենք ձեզ հետևյալ խնդրանքով: Մեր համայնքը կազմված է 57 ընտանիքից: Նրանք բոլորը հայ մուսուլմաններ են, Կարաիբրահիմ–օղլի նշանավոր տոհմից… Մենք որոշել ենք

մեր բախտը կապել հայրենի Հայաստանի հետ, ապրել մեր նախնիների հողի վրա…»:

Դպրոցը ութամյա է, ասացի՝ ռուսական: Հայերեն ոչ մի ժամ չի դասավանդվում:

Նամակը ստորագրել են 68 երեխա, 9՝ առաջին, 10՝ երկրորդ, 8՝ ութերորդ դասարանցի: Երեխաների մեծ մասի ազգանունները Կարաիբրահիմով է, կան նաև Ռահման–օղլի Ռուստամ, Թաթար–օղլի Մամեդ, Չուխար–օղլի Իբրահիմ, Մուսաևա Էլմիրա…

Ա՜խ, դաժա՜ն բախտ: Հայ երեխաներ, հայեր աքսորված, անուններն ու ազգանունները՝ թուրքի…

- Մի տարակուսեք,– ասաց դպրոցի տնօրեն Ջելալը:– Մեր երեխաները բոլորը հայ են, իրենց զտարյուն հայ են համարում: Մեր երեխաները ուզում են փրկվել…

Ջելալն ինձ նվիրեց իրենց դպրոցի աշակերտների խմբային լուսանկարը: Եկեք, նայեք, մարդիկ, ի՜նչ սքանչելի երեխաներ են՝ հայկական բնորոշ երևույթներ, գեղեցիկ, խելոք, սիրուն… Նայես, կասես Բջնիի կամ Մարալիկի հայ երեխաների լուսանկար է սա…

Ջելալն ու Քյազիմն ինձ տվին իրենց գյուղացիների, ընտանիքների համախոսական խնդրանքը՝ մեծահասակների 57 ստորագրություն:– «Ուզում ենք ապրել մեր նախնիների հողում,– գրում են նրանք,– մեզ անհանգստացնում է մեր զավակների ու թոռների ճակատագիրը»:

Ասացի՝ այս խնդրագրի տակ ստորագրել են գյուղի բոլոր 57 ընտանիքների ավագները: Ես այս նամակներն ու ստորագրությունները օրինակեցի ու իմ՝ դեպուտատիս

միջնորդությամբ ներկայացրի Մինիստրների խորհուրդ: Այնտեղ սրտացավ մարդիկ եղան, որոնք ասացին, թե համշենցի մահմեդական այդ հայերի պահանջները միանգամայն բնական ու արդար են և հնարավոր է կատարել:

Ես սկսեցի զբաղվել, թե որտեղ տեղավորենք նրանց: Միտքս եկավ, որ մեր Մեղրու շրջանը խիստ սակավաբնակ է: Դե, մտածեցի, մեր այս համշենցի հայերին ուղարկեմ Մեղրի, տեղավորվեն բազմաթիվ դատարկված գյուղերում: Զանգ տվի Մեղրի՝ կուսշրջկոմ: Ինձ ասացին, թե առաջին քարտուղար Ալբերտ Վարդանյանը գտնվում է Երևանում: Ես գտա նրան: Այսպես–այսպես: Նա անչափ ուրախացավ:

- Կընդունենք, կընդունենք այդ դժբախտ մարդկանց,– սրտանց ասաց նա:– Թող հենց հիմա գան: Երեք հազար հայ ընդունել, նշանակում է Մեղրու հայերի քանակը խիստ ավելացնել: Շատ թափուր գյուղեր, անտեր հողեր ունենք, թող գան: Թող գան:

Մի օր հետո ես Ջելալ Կարաիբրահիմովին ու Քյազիմ Կարաիբրահիմովին Սերգեյ Վարդանյանի հետ հատուկ «Վոլգա» ավտոյով ուղարկեցի Մեղրի:

- Լավ հող է,– ասացի նրանց: – Տաք տեղ է, ինչպես ուզում եք դուք: Գնացեք և եթե հավանեք, ապա ձեզ այդ շրջանում կտեղավորենք:

Գնացին: Ետ եկան երկու օր հետո: Տեսա թթված են: Ի՞նչ է եղել:

- Շրջանը լավ հողեր ունի,– ասացին:– Մարդիկ մեզ ընդունեցին եղբայրների պես: Ինչ ուզեք, ասացին, կանենք

ձեզ համար: Բայց, կներեք, մեր բարեկամ, մենք չենք ուզում տեղավորվել Մեղրիում:

- Ինչու՞,– զարմացա ես:

- Ի՞նչ ասենք, ախր, մենք ուզում ենք փախչել ոչ հայկական միջավայրից: Իսկ Մեղրին շրջապատված է թուրքերով…Էլի՞ գնանք թուրքերի շրջապատի մեջ ընկնենք: Մեղրին չենք ուզում…

Ընկա անելանելի վիճակի մեջ: Ի՞նչ անեմ:

Հաջորդ օրը կիրակի էր: Մտքիս մեջ նոր որոշում ծագեց՝ այս մարդկանց տանեմ նորաստեղծ Բաղրամյանի անվան շրջանը, այնտեղ տեղավորեմ:

Նրանց ու Սերգեյին վերցրի ու մեկնեցի Բաղրամյան: Նաև համարձակ եմ գնում, այդ շրջանի կուսշրջկոմի առաջին քարտուղարն է հին բարեկամիս՝ Վահրամ Մինասյանի որդին, ազնվական Հենրիկը: Նա անպայման կընդառաջի մեզ:

Եվ ահա նոր շրջանի նոր շրջկոմում եմ: Մարդ չկա: Մտանք միլիցիայի բաժանմունք: Մի կապիտան ընդառաջեց ինձ:

Գնացինք Տալվորիկ: Արաքսի աջ ափին է: Դեկտեմբերի սկիզբն է, բայց ձյուն չկա: Ձախ կողմից Արարատ լեռն է, դիմացից՝ Արտենիսը, ապա՝ Հայկական պար շղթան: Հյուրերս ուշադիր նայում են լեռներին, դաշտին, որի մեծագույն մասը կիսաանապատ է: Ես նրանց հայացքներում մի զարմանալի ցավ եմ տեսնում՝ կարոտի ցավ դեպի իրենց հողն ու երկինքը: Հարցրին՝ ո՞ր կողմն են Բաթումի իրենց հայրենի գյուղերը: Ցույց տվի:

- Մո՞տ է:

- Հեռու չէ,– ասացի:– Շիրակով– Ղուկասյան, այնտեղից հեռու չեն ծովը, ձեր լեռները:

Քյազիմը ձեռքը հանեց պատուհանից, երկար պահեց: Քամի էր:

- Էս քամին ոնց որ մեր գյուղի քամին լինի: Հարազատ է…

Կապիտանն ասաց, թե տեղ հասանք: Լավ ասֆալտած խճուղու ձախ կողմին քսան–քսանհինգ նոր կառուցված շենքեր երևացին: Կանգ առանք, դուրս եկանք մեքենայից: Երկու համշենցիները կլանվեցին այստեղի օդով, դաշտով, մեզնից աջ երևացող Արագածով, որի հարավահայաց փեշերին Թալինի շրջանն է:

Նոր գյուղի նոր տները դատարկ են: Տակավին մարդ չի ապրում այնտեղ: Տղաները հարցրին՝ Արաքսը մոտի՞կ է: Մոտիկ է:

- Ձուկ կա՞ մեջը,– հարցրեց Ջելալը:– Լոքո: Լսել ենք դրա համբավը:

Տները տուֆից են: Լիովին պատրաստ բնակության: Շենքերը մեկ–երկու հարկանի են, երկու մուտքով, երկու ընտանիքի համար: Մենք մտանք գրեթե բոլոր շենքերը: Սենյակները ծեփած, ներկված են, դուռ–պատուհանները՝ ևս: Խոհանոցն ու լողարանները պատրաստ են, միայն ջուր չկա:

– Ջուր կլինի շուտով,– պարզեց կապիտանը:– Նաև էլեկտրական հոսանք կլինի, գազ կլինի:

Սկսեցինք պտտվել նորակառույց գյուղում, Ջելալն ու Քյազիմը կռացան հող վերցրին, հոտոտեցին, նույնիսկ տարան դեպի բերանները, համը տեսան: Ես հուզվեցի՝ այս մարդիկ հողի մարդիկ են, հասկանում են հողի լեզուն, գիտեն նրա համի զորությունը՝ ինչ բերքեր կտան: Ես նկատեցի, որ նրանք հավանեցին թե հողը, թե տեղանքը: Փառք աստծուն:

Մի երկու ժամի չափ մնացինք Տալվորիկ նոր ավանում: Ի վերջո, համշենցիներն ասացին՝ այստեղ մեզ համար հարմար է:

Վերադարձանք Երևան: Նույն օրվա երեկոյան Կարաիբրահիմովները Տաշքենդ թռչող օդանավով մեկնեցին: Հրաժեշտին ինձ ասացին.

- Բաղրամյանի այդ գյուղը հավանեցինք: Կգանք: Աստիճանաբար կգանք՝ տասը–տասնմեկ ընտանիքով: Մնաք բարյավ…

Նրանք հետները Բաղրամյանից հողանմուշ տարան:

Կրկնեմ՝ այս մահմեդական հայերը մեզ հետ խոսում էին հայերեն, իրենց՝ համշենյան բարբառով:

Դեկտեմբերի 18–ին նրանցից հեռագիր ստացա: «Տեղ ենք հասել ապահով: Ողջույններով՝ Ջելալ»: Հեռագիրը տված է Բելիե Վոդիի Սայրամից, համարը՝ 44704:

***

Ես ամբողջովին զբաղված եմ նրանց հոգսերով: Գրեթե ամեն օր մտնում եմ Կենտկոմ, Մինիստրների խորհուրդ՝ համշենցիների խնդրանքը իրագործելու:

Մի երեկո Հենրիկ Մինասյանը եկավ ինձ մոտ:

- Լսել եմ՝ ուզում ես համշենահայեր բերել մեր շրջանում տեղավորելու: Ուրախ եմ: Պատրաստ ենք ընդունելու, թեկուզ երեք հարյուր ընտանիք:

Զրուցեցինք երկար: Իրոք, շրջկոմի առաջին քարտուղարը ուրախ էր: Նոր շրջան է, աշխատող ձեռքի խիստ կարիք կա:

- Այնքան ամայի հողեր ունենք մեր շրջանում,– ասաց նա,– որ երեսուն հազար մարդ կարելի է տեղավորել, ապահովել հողով: Թող գան: Ողջ շրջանով սպասում ենք:

Ավելի համարձակ եմ բախում պետական իշխանությունների դռները՝ դրանք համշենահայերի համար բաց անելու նպատակով: Սակայն զգում եմ, որ այս դռները տհաճությամբ են բացվում իմ առջև, պետական չինովնիկ այրերի մեջ սառնություն եմ նկատում:

- Կօգնենք, կօգնենք,–ասում են նրանք: Նկատում եմ, որ կեղծում են:

Համշենցիներից նամակ ստացա, հղված դեկտեմբերի 26–ին: Ծրարի մեջ մի շատ հուզիչ լուսանկար կա: Չիրկինում մեր մահմեդական հայերի հարսանիք է: Հարսը զարդարված է բնորոշ հայկական ճերմակ զգեստով՝ թրթռուն քողով, տղան թուխ բեղեր ունի, առատ մազախուրձ, կատարյալ հայի կերպար: Մեկը ավանդական զուռնա է նվագում: Մի կին ձեռքերը պարզած պարում է: Մի այլ հարսանքավոր կնոջ զգեստը բնիկ հայկական է՝ Տրապիզոնի տարազ, որ տեսել եմ միայն հին լուսանկարներում:

«Եղբայրական բարևներ… Չիրկինի համշենցիներից: Մեր հայ ժողովրդի, Երևանի ու հատկապես ձեր տված ջերմությունը երկար տաք կմնա մեր սրտերում…»,–կարդում եմ նամակում,– «Մեր սիրելի հայ ժողովրդի մասին, Ձեր մասին լավ գիտի մեր Չիրկինում ապրող յուրաքանչյուր համշենցի…

Նույն օրը, երբ մենք վերադարձանք, հավաքվեցին մեր գյուղացիք, բոլորը՝ մեծ ու փոքր: Պատմեցինք մեր սիրելի հայրենիքի անսահման բարության մասին՝ դեպի մեզ: Մենք պատմեցինք այն գյուղի մասին, ուր պիտի ապրենք: Մի ամբողջ շաբաթ քննարկեցինք այդ հարցը և, վերջիվերջո, եկանք օգտակար համոզման ու վճռի: Բոլորը միահամուռ համաձայնություն տվին այն բանին, որ վերադառնանք ու ապրենք մեր հայրենիքում…

Մեր այստեղի տները վաճառելու պրոբլեմը մնում է չլուծված… Այնպես որ մեր հայրերի ամբողջ տառապանքն ու քրտինքը կուտակված է այստեղ… Մեր տները շատ լավն են, բարձր գին ունեն: Սակայն տեղաբնակ դազախները, իմանալով, որ մենք, միևնույնն է, կհեռանանք այստեղից, արդեն հրաժարվում են մեր տներն առնելուց, թեև նման ցանկություն ունեին առաջներում: Նրանք մտածում են, որ մենք մեր տները հենց այդպես կթողնենք իրենց: Իսկ մեր տները մի–մի պալատ են:

Թանկագին Սերո Խանզադյան,

Հենց որ այդ հարցը վճռվի, հաջորդ օրը բոլոր համշենցիները կլինեն իրենց հայրենիքում: Վերջապես կկատարվի մեր ժողովրդի երազանքը: Բոլոր համշենցիները խոսք

տվին, որ իրենք ամեն ինչ կանեն Հայաստանում՝ հանուն մեր հայրենիքի բարգավաճման…»:

Ես նորից Կենտկոմում եմ, Մինիստրների խորհրդում: Նույնիսկ Կենտկոմի առաջին քարտուղարին (նախկինին) դիմեցի:

- Էլի՞,–տրտմեց նա:–Ի՞նչ համշենցի հայ, ի՜նչ բան, էն էլ մահմեդական: Լավ, մի քիչ սպասիր, կմտածենք:

Ես համշենցի եռանդուն հայրենասեր Վովա Յայլյանին ուղարկեցի Ղազախստան: Գնա իմացիր մերոնց վիճակը, ի՞նչ դժվարություններ ունեն, ի՞նչ են ուզում:

Յայլյանը գնաց ու վերադարձավ:

- Բոլորը,– ասաց,– պատրաստ են գալու Հայաստան: Սակայն այդ մարդիկ արյուն քրտինքով տուն են շինել, այգի ստեղծել, անասուն ունեն: Ի՞նչ անեն: Իրենց ամբողջ ունեցվածքը այդ տներն են: Ուզում են ծախեն: Գնող չկա: Տեղական իշխանությունները ղազախներին ասել են՝ փող չտաք այդ տներն առնելու, շուտով հայերը կգնան ու նրանց տներն ու հողը, կայքը ձեզ կմնա:

Համշենցիները խնդրում են Հայաստանի կառավարությանը, որպեսզի իրենց գյուղը, իրենց 57 տները մեր կառավարությունը գնի կամ միջնորդի՝ Ղազախստանի կառավարությունը գնի և արժեքը վճարի տանտերերին: Այս խնդրանքով էլ դիմեցի մեր վերադասին: Ապարդյուն: Ասում են՝ ինչու՞ վիրավորենք եղբայրական Ղազախստանին:

Համշենցիներն ինձ գրեցին, թե իրենց յուրաքանչյուր տան, տնտեսության արժեքը առնվազն 75–80 հազար է,

սակայն իրենք պատրաստ են բավարարվելու 10 հազարով: Թող մեզ տան այդ չնչին գումարը, որ գոնե տեղափոխվելու, ճանապարհի հաց ու թացի միջոց ունենանք:

Գրավոր դիմեցի մեր իշխանություններին՝ համշենցիներին տվեք 570 հազար ռուբլի:

Մերժեցին: Գնացի ակադեմիա: Գիտեմ, նրանց տարեկան բյուջեն 35 միլիոն 500 հազար ռուբլի է: Աղաչեցի՝ կես միլիոն զոհեցեք մեր դժբախտ հայերին: Մերժեցին խնդրանքս:

Իսկ Ղազախստանից մեր դժբախտները շտապեցնում են:–Օգնեցե՛ք:–Սոսկալի է: Ախր աքսորված, տառապած մարդիկ փրկություն են որոնում: Չկա ու չկա: Այդ մահմեդական հայերի որդեգրումը մեր Հայաստանի կողմից աստվածային գործ կլիներ:

Ի վերջո, մեր կառավարության նախկին նախագահն ինձ անկեղծ ասաց.

–Գիտես, բարեկամս, կառավարությունը ամեն ինչ կանի, որպեսզի այդ հայերին բերի մեզ մոտ: Դրա ծախսերը չնչին բան են մեզ համար: Սակայն … Սակայն մեր Կենտկոմի առաջին քարտուղարը (նախկին) դեմ է այդ բանին: Քանի անգամ խնդրել եմ, մերժել է:

Մինչ այս, մինչ այն, լսեցի, որ Բաղրամյանի այն նոր գյուղում, որը պահում էինք համշենցիների համար, Կենտկոմի կարգադրությամբ հապշտապ բնակեցվել է, նաև՝ ոչ հայերով: Այս մասին լուր տվի Չիրկինի հայերին: Նրանք գրեցին՝ ոչինչ, մի այլ տեղ կբնակվենք:

Դարձյալ գնացի Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ: Հենց որ ինձ տեսավ, գոչեց.

- Եթե մահմեդական հայերի հարցով ես եկել, չեմ ընդունի: Այդ հայերին ես չեմ թույլ տա, որ գան Հայաստանում բնակվեն: Չեմ թույլ տա: Վե՛րջ…

Երկինքը փլվեց իմ գլխին: Տուն եկա գազազած: Տե՛ր աստված, այս ի՛նչ է կատարվում…

Այսպես եղավ: Հուսահատվե՞նք: Ո՛չ:

Այս ամենը գրելով, պատմելով, ես այսօր` վերակառուցման այս օրերին, դիմում եմ մեր կառավարությանը: Հատուկ միջոցներ ստեղծել Միջին Ասիայում ու Ղազախստանում հայրենի հողի կարոտով ապրող երեք հազար հայ մահմեդական համշենցիներին անհապաղ հայրենիք վերադարձնելու նպատակով: Չէ՞ որ նրանք ահեղ ու մարդակեր Ստալինի զոհերն են: Պետք է փրկել նրանց:

Սպասում եմ:

«Հայրենիքի ձայն», 1989, մայիսի 10, № 19, էջ 5–7:
Ս. Խանզադյանի «Փակ դռների առաջ»
հոդվածի արտատպությունն իմ առաջաբանով
տե՛ս «Ձայն համշենական», ամսաթերթ,
Երևան, 2012, № 3–4, էջ 2–5 (Ս. Վ.):

Ե՞ՐԲ ԿԲԱՑՎԵՆ ՀՈՒՅՍԻ ԴՌՆԵՐԸ[204]

«Ձայն համշենական», ամսաթերթ,
2012, մարտ–ապրիլ, № 3–4, էջ 2:

Վերջին տարիներս մամուլն ու հեռուստատեսությունը քանիցս անդրադարձել են 18–րդ դարում բռնի կրոնափոխված համշենահայության անցյալին ու ներկային: Ցավոք, գրիչ վերցնողների ու ելույթ ունեցողների մեծ մասը կամ ծանոթ չի խնդրին կամ չի ցանկանում հիշատակել իրենից առաջ այդ մասին գրած գիտնականներին ու մտավորականներին: Իսկ երբ անցյալ տարի ապրիլի վերջին Ղրղզստանի Կըզըլ–Կիյա քաղաքից Երևան եկավ այնտեղի համշենցիներից մեկը՝ Ռուսլան Կարաբաջակովը՝ ծանոթանալու Հայաստանում վերաբնակվելու հնարավորություններին, Հայաստանի, հետո Սփյուռքի, Ադրբեջանի ու Թուրքիայի, այլ երկրների շատ լրատվամիջոցներ ողողվեցին ստահոդ լուրերով, թե շատ շուտով Ղրղզստանից 200–250 ընտանիք համշենցիներ են բնակվելու Լեռնային Ղարաբաղում:

Երբ ամիսներ անց զանգեցի Ռուսլանին, ասաց, որ մի տասը ընտանիքի է համոզել, բայց լուծման կարոտ շատ հարցեր կան: Անցել է ուղիղ մեկ տարի, բայց այդ 250 ընտանիքները դեռ չկան, իսկ նրանց իբր շուտափույթ վե-

[204] «Ե՞րբ կբացվեն հույսի դռները» վերնագրով պարզաբանումներն ու լրացումները գրվել և հրատարակվել են «Ձայն համշենական» թերթում Ս. Խանզադյանի «Փակ դռների առաջ» հոդվածի արտատպության առթիվ (Ս. Վ.):

րաբնակեցման մասին առաջին իսկ տեղեկատվությանն անմիջապես հաջորդեց Ադրբեջանի իշխող կուսակցության՝ «Ենի Ադրբեջանի» ԵԱՀԿ ուղարկված բողոքը:

Ադրբեջանցիներն աղմկում էին, թե հայերն արդեն վերաբնակեցնում են Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքները: Փառք Աստծու, բանը արյունահեղության չհասավ, քանզի Ղրղզստանում համշենահայերը բնակվում են թյուրքալեզու ժողովուրդների, այդ թվում՝ ադրբեջանցիների հետ նույն գյուղերում ու քաղաքներում և կարող էին սադրանքներ լինեին, և հայտնի չէ ինչ ճակատագիր էր սպասվում Օշի մարզում սփռված մոտ 900–1000 համշենցիներին: Հիշեցնեմ, որ Օշի մարզը քանիցս ազգամիջյան բախումների թատերաբեմ է դարձել:

Ինչևէ, Ռուսլանը հյուր եկավ նաև ինձ, քանզի ես էլ 1984 թ.-ին Կըզըլ-Կիյայում էի հյուր եղել նրա հայրական տանը: Ռուսլանի հայրը՝ Դուրսուն Կարաբաջակօղլին դեռևս 1960-ականներին էր պայքարել Ղրղզստանի համշենահայերին Հայաստան տեղափոխելու համար, բայց ապարդյուն: Ահա այդ փորձերին է նվիրված անվանի արձակագիր **Մերո Խանզադյանի** (1915–1998 թթ.) «**Փակ դռների առաջ**» ընդարձակ հոդվածը, որը տպագրվել է «**Հայրենիքի ձայն**» թերթի 1989 թ. մայիսի 3-ի և 10-ի համարներում: Հոդվածի մեկ այլ տարբերակը «**Նողկալի մերժում**» վերնագրով գրողը հրապարակել է «**Գարուն**» ամսագրի 1993 թ. 8-րդ համարում: Հետագայում այս խնդրին անդրադարձողներին հնարավոր թյուրիմացություններից զերծ պահելու համար զգուշացնեմ, որ հոդվածում այլևայլ

պատճառներով սպրդել են տարեթվերի և անունների որոշ սխալներ:

Որպեսզի մեր ընթերցողներն ավելի լավ ըմբռնեն, թե ինչու էինք կրոնափոխ համշենցիների՝ Հայաստանում բնակություն հաստատելու խնդրանքին աջակցելու համար, 1984 թ. դիմել գրող Սերո Խանզադյանին, նշեմ, որ նա մինչ այդ էլ զբաղվել էր այդ հարցով, որ նա ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ էր, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1980–1990 թթ.), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984 թ.), նաև համաժողովրդական սեր և հարգանք վայելող գրող: Հիշեցնեմ, որ նա դեռևս 1971 թ. հրատարակել էր «**Ձայն համշենական**» ժողովածուի առաջին հատորը, որտեղ բարձրաձայնել էր Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի համշենահայության խնդիրները, նաև գրքում ընդգրկել համշենահայ արձակագիրների և բանաստեղծների ստեղծագործությունները, ինչն այն տարիներին շատ մեծ ոգևորություն էր առաջացրել այդ գաղթօջախներում:

Ի լրումն Ս. Խանզադյանի ստորև տպագրվող «**Փակ դռների առաջ**» հոդվածի, ասեմ, որ 1984–ին ես եղա Միջին Ասիայից Կրասնոդարի երկրամաս տեղափոխված համշենցիների մոտ, 1987–ին կրկին մեկնեցի Ղազախստան, Ուզբեկստան և Ղրղզստան, հանդիպեցի մեր տարաբախտ հայրենակիցներին: Իսկ հաջորդ տարի ամռանն ինձ հյուր եկավ Ջելալ Կարաիբրահիմովը, մեկ շաբաթ շրջագայեցինք Հայաստանում, բայց արդեն սկսվել էր արցախյան շարժումը, ամենուր Ադրբեջանից մազապուրծ

բռնագաղթածներ էին, որոնք օգնության կարիք էին զգում: Հետո եղավ Սպիտակի ավերիչ երկրաշարժը, հաջորդեցին ցուրտ ու մութ տարիները: Միջին Ասիայում էլ ծայր առան ազգամիջյան բախումներ, շատերն արտագաղթեցին, այդ թվում համշենահայերի զգալի մասը, որը բնակություն հաստատեց Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի և Վորոնեժի մարզերում:

Երբ անցյալ տարի հոկտեմբերին Թուրքիայի Խոփա քաղաքում էի, ծանոթներիցս մեկն ասաց, որ Քեմալփաշա գյուղում մի քանի տարի է Ղրղզստանից մեկ–երկու ընտանիք է եկել բնակվելու, որ նրանք այդ օրերին հյուրեր ունեն Կրասնոդարի երկրամասից: Գնացինք նրանց տուն: Պարզվեց, որ Չաղրինա գյուղի համշենցիներից մեկը Ղրղզստանից Կրասնոդարի երկրամաս արտագաղթած համշենցիներից հարս է բերել և հարսանիքին եկել են աղջկա հայրն ու հորաքույրը, որոնք կանգ են առել իրենց հորեղբոր տանը: Դեռ նոր էինք սկսել զրույցը, հորաքույրը՝ Նուրիյե (Հուրիխան) Կարաբաջակովան իսկույն ինձ ճանաչեց, ասաց, որ ինքը շատ երիտասարդ էր և լավ է հիշում, որ 1984 թ. Հայաստանից մարդ էր եկել, իրենց հավաքեց և լուսանկարեց: Ես նրան նվիրեցի իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գիրքը, որում տպագրված էր այդ լուսանկարը: Նուրիյեն, որ արդեն հասուն կին էր, շատ հուզվեց, արտասվեց, որովհետև լուսանկարում պատկերված իր հարազատների մի մասն արդեն ողջ չէր, ինքն էլ անբուժելի հիվանդություն ուներ: Հարցրեցի 1984 թ.–ին Հայաստան

եկած Քյազիմ և Ջելալ Կարաիբրահիմովների մասին, ա-սաց Քյազիմը մահացել է, իսկ Ջելալն արդեն 5–6 տարի է ընտանիքով Թուրքիայում է, Անկարայում է բնակվում, աշխատում է շախմատի դպրոցում: Այսքանը:

Եզրահանգումներ չեմ ուզում անել, թող ընթերցողները կարդան Սերո Խանզադյանի հոդվածը, նաև իմ այս լրա-ցումները, իրենք էլ հետևություններ անեն, իսկ ինձ հա-մար շատ ծանր է կրկին անցյալը փորփրելը, ու նաև հիշե-լը, թե ինչպես էինք Սերո Խանզադյանի հետ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ու Մինիստրների խորհրդի ծանր, կաղնե դռները թակում, հույսով ու հավատով սպասում **փակ դռների առաջ**:

«Բէգաբաթի մօլլան»

(Զրույց բեգաբաթցի մոլլա Հեմդիի հետ)

«Իմ դադէ մօաջիր քէնաած էր անա Թուրքիյանիվա, ան գասէր՝ Թուքիէյին էրմէնիքն ու թուրքիյէ յար հէդէ յար ադած էննի անա: Աան բիճիլիգ դասնուչօրս, դասնուհինգ դաուգօն էր, սալդատնիյէ էգու հօքի քուկանի, գասա, աֆիցէրօվ, էշաղունէ վաան, արաբային վաան թէնէ գուքի էրմէնինօուն օբօլ աղած շէիյը, էրմէնիքը ցախուտն ի վէ փախած էնի: Մօրթաձնուն մօրթած ունէնի, փախաձը փախած էր, դնիյէ օբօլ աղած ունէնքյ: Դօնէ մէչը հինգ դարվի յէիջաղ ունէնի՝ գաուրմա, յաղ, բօնիր, պաղվալնուն: Հօնէ գուքի արաբային պարցէնէ գուքի, ասկէրնօուն դօնէ գունի: Ագյար թա մէ գիլօմէշէ առնէքի անա, դէսնէնի անա, ինչակ իգուն չիբուխօվէ գութտանի:

Էրմէնի դաղօցը դունէ բահուշի վախէ գունի, ինչի թա քիդանանի անա մէզի ալ ցվօնէ գունի: Հէդէվ գասա, էրմէնի դաղօցը լիգուն մէզի բէս էր: Ռուսը էյէվ քարաբըլնիօվէ բասմիշ աղավ, բասմիշ աղավ անդի փախաձնիյէ փախօն, մնացաձնօուն բիթուն մօրթէցին թուրքիյէ:

Նիկօլա վաքտին 9-10 դաուգօն դաղա է, օնդօրթինդա զաղվա աղավ թուրքօուն հէդէ Նիկօլան թուրքօուն հէդէ յար աղավ, մեք փախաք, քէնացաք Թուրքիէնիվա: 3-4 դարին ռէվալյուցիյա աղավ Ռուսիյէին:

Անդի Սօմսուն շահարան վի էլաք, էգաք մէ մէմլաքաթնիվէ: Ալի Գյունայէ էգաք՝ Բաթում: Մէք Ջօօխօնէ Սարփին

իք։ էգաք անա միր դնիյէ չկանի, կօլած ունէր Նիքալայէ։ Անդի հէդէվ դուն շինէցաք, դուն աաք, ֆուքաա էքի, մէգ գօվ մէ ունաքի, օչխընիյէ չարթած էնի, ալ ինչիկ չունաքի։ - Գօմաց-գօմաց ալի աղաք մարթ։ Քիչ մէ զէնգինցաք, էգաք - էգաք իսա վաքտիս 44 դարվին մէզիգի իստուս քէշէցին - Սօվեթը։ Գրանիցա էր, մէզ քէշէցին։ Իսա պօլօր մէզի դադիդմիշ աավ մէ-մէզ հադիգ աղավ։ Մէք ինչիկ պրիչինա աղած չունաքի։ Հուքումաթին գարշուլուղ աղած չունաքի։

Աջարացը մէչը էլած էր։ Աջարացիք ասկարլուղը ժօղվէցին փիյէգունի մաշինէցօվը, անդաղը հէդվին սալդաթ գանի, թէվօնքը առին ափնան աջարացիք, սալդաթնուն թէվիյը գաբէցին, ույինքը փախան։ Ան փօնը քրվէցավ - Մօսկվանիվա։ Էսպօն աղավ դէյնա։

Մէր միլլաթը քիչ էքի հօզա, շաղը Թուրքիէյին էր։ 4 մաալա գաքի, գարթացած չունէքի, հօյիվ էքի, օչխար փութ գէնէնի մէր միլլաթը, գարթուշի լօգօր գէբած էնի, մեծ դաղը թաղօղ մարթ չունէքի։ Աջարացիքէ ունէնի։ Ստալինէ ասաց թա, Բէրիան ասաց թա.

- Ան վաքտին ինչ գէնէքի անա գիդէք թա, շահարին մեծը՝ Բաթում, Փութքարաձէ ցէզի քշօղ ուք, ասաց թուք մոււարաբէին վաքտին ասկէրլուխ աաք օչ։

Փութքարաձէ Ստալինին ասաց.

- Յէս գրուզին իմ, ֆամիլյաս գրուզին ա, յէս քիդիմ ասկըրլուղին վօվ իդա պօնիյէդ աավ, քուրդ, հօմշէնցի թուրքիյէցան էզօղ մարթիքէ։

Մէզի սուստղաղին քէշէցին։ Քուրդն ալ քշվէցավ, հօմշէցիքն ալ քշվէցան, ջօնիյէ ալ քշվէցան՝ լազիյէ, աջարէցէց

մէչը թուրքիէցան էգօղ մարթ գէնի, անօնց ալ, անօգ ալ քէ-շէց, ւիօշանօուն ալքէշէց, սաադէ աջարացի մէնաց, չիստի գրուզին մէնաց:

- Թուրքիյէ հօմշէնցինօուն նէմաղու չէնի՞ թա:

- Թուրքիյէ հօմշէնցին մուսուլման էր, ինչի՞ նէմաղօղ էր:

- Հօմշէնցին ալ էրմէնիցան թարձած էր ալ:

- Բիթուն թարցած ա, ալ ավալէ թառնալու վօվ գար:

- Մէք վօ դարվին թարցած իք:

- Յէս չքիդիմ, ան թարցնօղը Հազրէթի Ալին էր, Փէղամ-բէրի վաքթին, Հազրէթի Ալին թարցուց քիլինջօվը միլլա-թին, ան չախը թվօնք չգար, Հազրէթի Ալին էր, փայլէվան մարթ էր:

-Լիզուն ինչի՞ մօլիյաց չէք:

-Լիզուն վօ՞վ մօլիյա զու:

-Թուրքօուն մէչը զինա զուքի:

- Մէք անօգ մէչը զինա չէքի, այրի այրի կյաղ էքի: Թուր-քէ ույնէ կյաղին էր, մէք մէր կյաղին էքի: Լիզուն մարթ մօ-լիյէ զու թա, էմէժինէ խաբրի զուս:

- Ինչբէ՞ս մուսլիման զէնէնի, քիղէ՞ս թա:

- Գիլինջէ զութտանի, փայլէվանիյէ քէլլէնի յաց չարթէ զունի, վախօղնիյէ գէլլէնի մուսլիման, հարցնէ զունի՝ «-Մուսլիմա՞ն էս թա», «Հա», նէմաղու չէնի: Խրիստյան էս թա՝ չարթէ զուր:

Գրէկնօուն թարցուց, էրմէնիստօնուն թարցուց հօմշէն-ցի էղօն, ան դաղը էրմէնիստօնուն հայէրիքը համշէցի զա-սին, թուրքիյէցան էգօղնուն լէզվընիյէ մէզի մօղիզ ին: Էրէ-

վանի լիզուն ուուշ ա քիչ մէ։ Էրմէնիստանի լիզուն մէզի բէս ա։ Անօց ալ հօմշէցի զասին։

- Բաշհոմշէնցի ջօնչէս զու թա։

- Հաբա, անէր լիզուն թարցուցած ունին, բառվէնիյէ, հալիվօրնիյէ քիդին քիչ մէ, յաշիրը բիթուն թուրչա խաբրի զուն։ Աթինային շահարին ան փօլօր հօմշէնցի ին բիթուն։

-Մէ միլլաթը էրմէնջա խաբրի զուն, մէզալօքէ լիզուն օ-բօլ աղած ունին, թուրչա խօբրի զունի։

- Անէր էրմէնի՞ էն թա։

-Հօմշէնցի ին անա էրմէնէցան թարցած ին։

- Գօնլիդարային կյաղին 15 դուն, սէֆթա աղադի մէ չքաքի։

-Գաբջօցէ կյաղին ալ 20 թութուն (այսինքն՝ ծուխ) զար։ Գյունայէ կյաղը 8 հաղիզ օջախլուղ աքի, Ջէռնալէ 30 թու-թուն զար, Մօքօյի զասէնի՝ 10 թութուն, ան չախը 150 թու-թուն զէլլէր, հիմի շաղ զօ։

Իմ դադէ Գյունայէ աղած ա, իմ բաբէ Խօփային աղած ա, Խիզօ զասին։

- Քէզի վօ՞վ ասաց, թա մէք էրմէնիցան թարցած իք։

- Լիզուս զասա, վօ՞վ ասօղ ա։ Էրմէնիջէ խաբրի զուք ա-նա, անդի թարցած իք ալ։ Ալ ասօղ բիդի թա։

- Վօ՞ դարվին մուսլիման աղած իք։

- Քիթաբի մէչը քրված ա՝ էզու հաուր իյէք-չօրս դայի ա-ռաչ։

- Ուստի՞ էզած ա ան քիթաբը։

- Աքբույուքօղլի քիյած ունի։ Օնունը ինչի՞ն էր։

- Ալի էֆէնդի, ան չախը շադ գարթացած մարթօցէ է-ֆէնդի գաuէնի:

- Գարթա, վօ՞րդադ քրված ա:

- Խարաբ աղած ա, օրթի: Իսա մէմէ թաթված էր: Իսա քօնի դարվի ա, էգու հաուր: Բիթուն ավիյած ին:

- Ի՞նչ քիյած ունին, գարթա:

- Ինչո՞ւ բիդէր անա, մարթը քիյած ունի, ահա, hօզա յա-սինը քէրված ա, էգած ա, էգած ա, էգած ա, hօզա hիվօնդ-նoուն hօմա քիյած ունի, ինչբէս շիդզօղ ա:

- Վօ՞ դարվուն մուսլիման աղած իք, քէրված էր թա:

- Հա, քէրված էր, քէղնու չիմ գայիլ: Հիմի ավիյած ա:

- Ավալէ գարթացած էր իյէք հաուր հինգ դայի գաuէր:

- Չա, էգու հաուր իյէք դայի:

- Փաշալին գարթաց ու իյէք հաուր հինգ դայի:

- Աքբույուքօղլի Ալի էֆէնդի խօջա էր անա, քիյէց մու-սուլման էլլուշէ անդէ ավալէ էգած ա»:

ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔ՝ ՀԱՄՇԵՑՆԱԿ (ԹՈՒՐՑԵՎԱՆՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԱԼԱՑԻՆԵՐԻ ԵՆԹԱԽՈՍՎԱԾՔՆԵՐ) – ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ[205]

— Ա —

Աաքագ, արաքագ (արդ.՝ **այաքագ**) – արեգակ:

Աբա, զաբա – 1. կապա, պարեգոտ: 2. կոշտ կտորից կամ այլ նյութերից կարված միջին երկարության բաճկոն:

Աբի – դիմելաձև արական սեռի ավագին, օգտագործվում է նաև նրա մասին խոսելիս՝ անվան փոխարեն:

Աբլա – դիմելաձև իգական սեռի ավագին, օգտագործվում է նաև նրա մասին խոսելիս՝ անվան փոխարեն:

Աբհազյա, Աբխազյա – Աբխազիա:

Աբրիլ (ամսանուն է) – ապրիլ:

---

[205] Բառարանի բառերը գրառել եմ Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում բնակվող կրոնափոխ համշենահայերից: Բառարանից օգտվելը դյուրացնելու համար վերջում առանձնացրել եմ տարվա եղանակներ, ամիսներ, շաբաթվա օրեր, թվեր, գույներ, ինչպես նաև ազգակցական կապեր ցույց տվող և մարմնին առնչվող բառեր:

Իմ կազմած և հրատարակած նախորդ բառարանները տե՛ս **Ձայն համշենական**, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, գիրք 3, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց **Սերգեյ Վարդանյանը**, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (- 252 էջ), 245 բարբառային բառերի բառարան (էջ 241-246): **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևանի պետհամալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ), Խոփայի խոսվածք- Գրական հայերեն (1898 բառ, էջ 272-338) և Գրական հայերեն – Խոփայի խոսվածք (էջ 339-401):

Աբրուշ – 1. ապրել: 2. կենակցել:
Աբրիգօս, քախսի[206] – ծիրան:
Աբուր – ջրալի ճաշատեսակ է, պատրաստվում է տե-
րնակաղամբով, եգիպտացորենի ալյուրով, յուղով և
այլն:
Ագ – աղբյուրի, ջրի ակ:
Ագիշ, խէմուրսէպիչ – փոքրիկ, մետաղյա թիակ՝ տաշտին
կպած խմորը քերելու համար՝ ակիշ:
Ագրա, արգա (արդ.՝ **այգա**) – ատամ:
Ագօս – ակոս:
Աղալէթ – արդարություն:
Աղէս, լադէս – 1.հավի կրծքի երկճղի ոսկոր: 2. գրազ, գրազ գալ:
Աղէր – նրանք:
Աղիչ – փեթակից մեղր քամելու գործիք:
Աղվէդ, ջէվաբ, ջուղաբ[207] – պատասխան:
Աղու – դրա:
Ազադութին, ազադուտուն – ազատություն:
Աթար – աթար:
Աթմաջա – ճուռակ, արու բազե:
Աթօր – աթոռ:
Ալլահ, Ալլա, Էլլա – Ալլահ:
Ալաֆ, օղանք, օվանք – ընտանի խոշոր եղջերավոր կենդանինե-
րի համար պատրաստվող կերեր:
Ալէնթիրիք, ջէյրան – էլեկտրականություն:
Ալթուն – ոսկի:
Ալի – դարձյալ, կրկին, վերստին:

---

[206] **Քախսի** են ասում Թուրքիայում, **աբրիգօս**՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համշենցիները:
[207] **Ջէվաբ, ջուղաբ** են ասում Թուրքիայում, **աղվէդ**՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համշենցիները:

Ալի ու – էլի որ:
Ալլայ, բիթուն, բութուն – ողջ, բոլոր, լրիվ, ամբողջ, ամբողջովին, լիովին:
Ալչիլուղ, էլչիլուղ – խնամախոսություն:
Ալուր – ալյուր:
Ալքյասար – մուրճի տարատեսակ է:
Ախթուշ – հաղթել:
Ախչիք, աչխիզ – աղջիկ:
Ախպար (արդ.՝ **ախպայ**) – եղբայր:
Ախպարութին, ախպարուտուն (արդ.՝ **ախպայուտուն**) – եղբայրություն:
Ախպօր (արդ.՝ **ախպօյ**), **փուղար** – աղբյուր:
Ախքադ – խեղճ, կարեկցանքի արժանի:
Ախքադութին – խեղճություն, աղքատություն:
Ահա – ահա:
Աձ – այծ:
Աձէլի – ածելի, սայր:
Աձուշ, հաձուշ (ձու) – ածել:
Աձուք – բանջարանոց:
Աղ, թուզ – աղ:
Աղա – աղա, հարուստ, հասարակական դիրք ունեցող մարդ:
Աղադիզ – այդքան հատ:
Աղաձ պօն – եղած բան:
Աղաման, աղամօն – աղաման:
Աղդ – 1.աղտ, կեղտ: 2. ցեխ:
Աղդօդ – 1.աղտոտ, կեղտոտ: 2.ցեխոտ:
Աղդօդուշ – 1.աղտոտել, կեղտոտել: 2.ցեխոտել:
Աղէսուք – ծովի ջրի աղի լինելու համար են ասում:
Աղի, թուզլու – աղի:
Աղիմ – եղյամ:
Աղիմզէրուշ – եղյամապատվել, եղյամով ծածկվել:

Աղինջ – եղինջ:
Աղինուշ – հղիանալ, ասվում է միայն կովերի համար:
Աղչուշ, ախչուշ – խնդրել, աղաչել:
Աղչուր – աղաջուր:
Աղու, տախ, զէիր – թույն:
Աղուդ – արոտավայր:
Աղուլի – թունավոր:
Աղուն – 1. արյուն: 2.կարիճի խայթոց:
Աղուն – աղալու համար նախատեսված հացահատիկ՝ աղուն:
Աղունուշ – արյունոտել:
Աղունք, առւնք – եղունգ:
Աղուշ – աղալ:
Աղփ, թըրիք – կենդանիների՝ ձիու, էշի, ջորու, կովի և գոմեշի
 կղկղանք՝ թրիք, գոմաղբ:
Աղփօնօց – թրիքի և աթարի հավաքման վայր:
Ամա, համա – բայց:
Ամա, հօմա – համար:
Ամար, օմար – ամառ:
Աման – աման, ափսե:
Աման, ամօն – այդպես:
Ամէնդաք – ամանեղեն:
Ամիս, օմիս – ամիս:
Ամնուշ, օմնուշ – 1. ամանի, որևէ տարայի մեջ դնել:
 2. փաթեթավորել: 3. ծածկել, վրան քաշել: 4. որևէ
 նյութով կամ լաքով պատել՝ լաքապատել:
Ամչըզան, օմչըզօն – ամաչկոտ:
Ամչուշ, օմչուշ – ամաչել:
Ամըքան – հղիության ամիսների քանակը:
Այնէ – հայելի:
Այչիչաղ – արևածաղիկ:
Այրի – առանձին:

Այչիչաղի յաղ – արևածաղկի ձեթ:
Ան – նա, այն:
Անա – եթե, երբ, որ:
Անալուղ, գայնանա – զոքանչ:
Անբաք – անհամ, անալի:
Անգաբաթ – 1.անկապ, բանից անտեղյակ, գործի, իրավիճակի հետ կապ չունեցող անձ: 2.տարաժամ՝ ոչ պայմանավորված ժամին:
Անգլամիշ (**օնգլօմիշ**) **ըլլուշ** – հասկանալ:
Անգուչ, օնգուչ – ականջ:
Անգուչ (**օնգուչ**) **թէնուշ** – 1.ականջ դնել: 2.ունկնդրել: 3.խորհուրդը լսել: 4.ասվածը նկատի ունենալ: 5.հնազանդվել:
Անգուչէ գանչուշ, օնգուչէ գօնչուշ – ականջը կանչել, մեկի բացակայությամբ նրա մասին խոսել, նաև հիշել:
Անդէր, օնդէր – անտեր:
Անդի – դրանից:
Անդի հէդէվ – այնուհետև, դրանից հետո:
Անէնաք, անէցք, օնէցք – անեծք:
Անէր – նրանք:
Անթէնաք սաղգուշ – անդանակ սատկել, այն կենդանիների մասին է, որ ոչ թե մորթվել են, այլ որևէ հիվանդությունից սատկել են: Դրանց միսը չի ուտվում:
Անթուլաք, օնթուլաք – հաստ փայտ, որի վրա թեքությամբ փայտեր են շարում կրակ անելու համար:
Անթուս, ինթուս – այն կողմ:
Անէցք, օնէցք, անէսք – անեծք:
Անիձուշ, օնիձուշ – անիծել, նզովել:
Անինձ – անիծ, ոջիլի ձվիկ:
Անլաթմիշ էնուշ – պարզաբանել:
Անլի – անալի:

Անլի խօսուշ – անալի, անհամ, անհետաքրքիր խոսել:
Անխէրք – անխելք:
Անջար – անճար, անհույս:
Անջուրա – անճուռա, անջորան: Մանր, սև, փայլուն սերմերով խոտաբույս է, որը փռում են տավարի տակ:
Անմաղք – անմեղ:
Անչախուլ, խէնօցի, յաղուղ, յայիք – խնոցի:
Անչաք, անուչաք – այնչափ, այնքան:
Անսնուշ, օնսնուշ – 1.գնալով անցնել: 2.մեկից առաջ ընկնել: 3.դադարել: 4.անհետանալ: 5.մոռացվել: 6.մի կողմից մյուսը գնալ: 7.ընթանալ: 8.ազդեցությունը, կարևորությունը կորցնել:
Անցած, օնցած – անցած, անցյալ, նախորդ:
Անցօղուշ, օնցօղուշ – անցնել–վերջանալ, ավարտվել:
Անուբէ – այբուբեն:
Անուն, օնուն – անուն:
Անուշ, օնուշ – անուշ:
Անուշէլիք, օնուշէլիք – ուտելիքին ավելացվող համեմունք, համեղ դարձնող որևէ հավելում:
Անօղթ – 1.անժամանակ: 2. վաղաժամ: 3. անտեղի:
Աշըղ, աշիղ – սիրած:
Աշըղլուղ, աշիղլուղ – սիրահարություն:
Աշխար (արդ.՝ **աշխայ**) – աշխարհ:
Աշխար էգուշ – աշխարհ գալ՝ ծնվել:
Աշուն – աշուն:
Աշուշ, փութ էնուշ – նայել:
Աչար – արջառ, եզ:
Աչէրօզ – ցլիկ:
Աչգէրուկ – զարուկ, տիկնակլոնձ:
Աչիչ – չար աչք կպցնել, աչքով տալ:
Աչիչ հէլուն – աչքի ուլունք:

Աչվի, աչֆի – աչք:
Աչվի էնուշ – աչքով անել, աչքի շարժումով հասկացնել, աչքի կոպը իջեցնելով նշան անել:
Աչվի թէնուշ – աչք դնել, աչք տնկել, ինչ որ բան հավանել, ցանկալ գողանալ, ձեռք բերել:
Աչվէնիյէ շիլուշ – աչքերը չռել, աչքերը լայն բացել:
Աջ, բէրուք – բողբոջ, կոկոն:
Աջարյա – Աջարիա:
Աջէրթուշ – ճմրթել:
Աջթէրուշ, բէրուքթէրուշ – բողբոջել, կոկոն տալ:
Աջէրուշ – 1. ճզմել, տրորել: 2. մերսել:
Աջէրվուշ – ընկճվել, ճնշվել:
Աս, հաս – այս, սա:
Ասաղ – ասեղ:
Ասաղ թէվուշ – ասեղով սրսկել:
Ասէր – սրանք:
Ասէցէնուշ – ստիպել խոսել, խոստովանել:
Աստիս – այս կողմ:
Ասխընդուշ, աստխէնդուշ – 1.ասղնտել, ասեղով կամ ասեղի նման ծակծկել, ծակոտել: 2. մարմնում ծակծկոցներ զգալ:
Ասպած, Ասված, Աստէված – Աստված:
Աստաղ, աստախք – աստղ:
Աստաղսուզ, արանձ (արօնձ) աստաղ – առանց աստղ, անաստղ:
Ասփ – ասպ, ազբ, ջուլհակի հաստոցի շարժուն շրջանակ՝ սանրաձև թելերով, որոնց արանքով անցնում են հենքի թելերը:
Ասքէր – զինվոր:
Ասօր (արդ.՝ **ասօյ**), **հասօր** – այսօր:
Ասուշ – ասել:

Ավալէ – առաջ, հին ժամանակներում, անցյալում, նախկինում:
Ավալուբաք – ապուպապ, նախնի:
Ավդէցէնուշ – հավատացնել:
Ավդուշ – հավատալ:
Ավզօն – կենդանիների ջուր խմելու համար գետնից բարձր, ոչ խորը, նեղ և երկար քարե, մետաղե կամ փայտե հարմարանք, տաշտաձև փորված գերան՝ գուռ, ջրավազան:
Ավէլ – ավել:
Ավէլլի – 1.ավելի: 2. ավելորդ: 3. շատ: 4. մնացորդ: 5. անպետք:
Ավէլուշ – ավլել:
Ավէլուսք, ավէլուցք – 1.ավելցուկ: 2. աղբ:
Ավէր – 1. վատ: 2 սխալ: 3. անսարք:
Ավէրաձ – 1. փչացած: 2. ջնջված:
Ավէր խօսուշ – վատ խոսել, վատաբանել:
Ավթա – շաբաթ (7 օր):
Ավիրուշ, ավէուշ (արդ.՝ **ավիյուշ, ավէյուշ**) – 1. ավերել: 2. քանդել: 3. ջնջել: 4. կործանել: 5.փչացնել:
Ավջի – որսորդ:
Ավջիլուղ – որսորդություն:
Արաբա – 1. ավտոմեքենա: 2. արաբա (սայլ):
Արանձ, արօնձ – բացակայությունն այն առարկայի կամ երևույթի, որը նշվում է այս բառից հետո առանց:
Արանձ (արօնձ) խէրք – առանց խելք, անխելք:
Արային – միջև:
Արաչ, արանչ – 1.առաջ: 2.նախկինում: 3. սկզբում: 4. նախապես:
Արգէթափ – անատամ, ատամները թափված:
Արդէցուք – արտասուք, արցունք:
Արդ (արդ.՝ **այդ**) – 1.արտ: 2.դաշտ:
Արդախան (քաղաք է) – Արդահան:
Արէթմիշ էնուշ – անջատել, բաժանել:

Արէլմիշ էլլուշ – ուշքի գալ:
Արէնգօխ – 1.մի կողմի վրա: 2.զառիթափ ճանապարհ:
3.սարալանջով անցնող ճանապարհ: 4.հորիզոնական:
Արի մէնուշ – առանձին մնալ:
Արխ, հարք, հարգ, արուն – առու:
Արձուշ – արածել:
Արձէցէնուշ – արածացնել:
Արմուգ – արմունկ:
Արնուշ – 1.առնել: 2. վերցնել: 3. գնել: 4. ամուսնանալ:
Արչ (արդ.՝ **այչ**) – արջ:
Արչէթ – առջև, առջևի կողմ, առաջամաս:
Արչէթվէնուս – առաջիկայում, առաջիկա:
Արչէվ, արչէթ – առջև:
Արչի դարի (արդ.՝ **դայի**) – նախանցյալ տարի:
Արչու (արդ.՝ **այչու**) **մաղու** – մեծ, վայրի մեղու, բույնը շինում է
հողի մեջ:
Արչիու – առաջվա, նախկին:
Արչի (արդ.՝ **այչի**) **քօթիղ** – արջի քոթոթ:
Արջի (ծառատեսակ է) – հաճարի, հաճարենի, քրիստոնյա
համշենահայերը հաճարենուն ասում են աժրի, լա-
տիներեն՝ Fagus, թուրքերեն՝ քայըն, ռուսերեն՝ բուկ:
Արջութ – հաճարենիների խումբ, աճելու վայր:
Արուն – անձրևի ժամանակ ջրերը գետն ուղղելու համար
փորված առու:
Արփա – գարի:
Աունք, աղունք – եղունգ:
Ափ – 1.ձեռքի ափ: 2. գետի ափ:
Ափարջուղ – նոր ծլած կանաչ սոխ:
Ափթալ – ապուշ, հիմար:
Ափնան էգուշ – ձեռքից գալ, հնարավորության սահմաններում
մի բան անել:

Աքլար (արդ.՝ **աքլայ**) – աքաղաղ:
Աքլէրջութ – փոքր աքլոր:
Աքվա – առավոտ:
Աքրէբ – կարիճ:
Աքուշքա – պատուհանի շրջանակ:
Աֆիշ – կինոնկարների, համերգների և միջոցառումների մասին երևացող տեղերում փակցվող գովազդ, հայտարարություն:
Աֆֆ էնուշ – ներել:

— Բ —

Բաալի – թանկ:
Բաբ, բաբի – պապ:
Բաբա, դադ, հար (արդ.՝ **հայ**)[208] – հայր:
Բաբիլա – պապին դիմելու փաղաքշական ձև:
Բազաս – պակաս:
Բազասնուշ – պակասել:
Բադ – ցանկապատ:
Բադուշ – 1. ցանկապատել: 2. շուռ գալ: 3. ընկնել, շրջվել: 4. գլորվել: 5. փլել: 6. քանդել:
Բադամ – նուշ:
Բադէրուշ – 1.պատռել: 2.պայթել:
Բադէրցէնուշ – 1.պատռեցնել: 2.պայթեցնել:
Բազար, փազար (արդ.՝ **փազայ**) – 1.շուկա: 2. կիրակի:
Բազի բիր – 1.երբեմն: 2.մերթընդմերթ:
Բաժքուշ – բաժանել, զատել:
Բալդիս – քենի:
Բալլի – հայտնի:
Բախ – բեղ:

---

[208] **Հայր՝ հար** (արդ.՝ **հայ**) բառը գիտեն քիչ թվով մեծահասակներ:

Բահուշ, բաուշ – 1.պահել: 2.թաքցնել: 3.պահպանել:
Բաղ, բախ – պաղ, սառը:
Բաղդօր – պղտոր:
Բաղէցէնուշ – 1.պաղեցնել, սառեցնել: 2.խաղաղեցնել:
Բաղինձ – 1.պղինձ: 2.պղնձե մեծ կաթսա:
Բաղինձվօր – պղնձագործ:
Բաղրաջ, բաքրաջ – պղնձե փոքր դույլ, պղնձե կաթսա:
Բաղութին – խաղաղություն:
Բաղ փէրնուշ – սառնասրտությունը պահել, սառնասիրտ լինել, չնեղվել:
Բայաղի – 1. ամուր: 2. ստոր:
Բայիր, բօյիր – բլրակի լանջ, փոքր, թեք տարածք, ոչ մեծ զառիթափ:
Բանիր, բօնիր – պանիր:
Բաշլուղ – տղամարդու գլխի փաթթոց, գլխանոց:
Բաշմալում, հարալ – համենայն դեպս, հավանաբար, ամեն դեպքում:
Բաչ – համբույր:
Բաչ էնուշ – համբուրել:
Բաջա – երդիկ:
Բաջախա – ազդր:
Բաջանաղ – քենակալ:
Բասթօն – ձեռնափայտ:
Բարագ – թեք տեղանք, զառիվեր:
Բարաժ – ամբարտակ:
Բարավ – պառավ:
Բարավնուշ – պառավել:
Բարավցաձ – պառաված, ծերացած:
Բարգէլդաղ – անկողին:
Բարգէցէնուշ – 1.պառկեցնել: 2.քնեցնել:
Բարգուշ (արդ.՝ **բայգուշ**) – պառկել:

Բարզ – ցուրտ:
Բարի – գոնե, ծայրահեղ դեպքում, գեթ, միայն թե:
Բարխ – ժայռ:
Բաքլավա (թխվածք) – փախլավա:
Բաքմազ – դոշաբ:
Բաքրաջ, բաղրաջ – պղնձե փոքր դույլ, պղնձե կաթսա:
Բէրուք, աջ – բողբոջ, կոկոն:
Բէրուքթէրուշ, աջթէրուշ – բողբոջել, կոկոն տալ:
Բէղէրուշ, մօն էզուշ – զբոսնել:
Բէղէխ, բէղաղ – պտղունց:
Բէղ էնուշ – 1. սպասել: 2. մնալ: 3. հսկել: 4. հուսալ:
Բէղուք – պտուղ:
Բէղք, լավ[209]**, սօյ** – լավ:
Բէղքընուշ, լավնուշ – առողջանալ:
Բէղքութին – լավություն:
Բէզղուք, վօր, օր – հետույք:
Բէթէմալ – անարժան, անպետք անձ, հարազատներ ու ազգականներ չունեցող: Բեթեմալը օսմաներենից մնացած բառ է (բե թեմել), ժամանակակից թուրքերն ասում են «թեմելսիզ»՝ հիմք չունեցող, անկայուն, ոչ մշտական: Խոփայի խոսվածքում բեթեմալ նշանակում է ձախորդ, անհաջողակ, շատ ցավ ու հոգս ունեցող, խեղճ, անբախտ անձնավորություն, որը մտերիմներ չունի:
Բէլ – 1. բահ: 2. երկժանիք բահ, որն ունի իրարից հեռու երկու երկաթյա ժանիք, քրիստոնյա համշենահայերն ասում են **լէխտըր**:

---

[209] **Լավ** բառը խոսվածքի մոռացվող բառերից է, բայց վերջին երկու տասնամյակում Արդվինի նահանգից Հայաստան բեռներ փոխադրող համշենցի վարորդների շնորհիվ այն այժմ շատերը գիտեն և հայաստանցու հանդիպելիս օգտագործում են այդ, նաև Հայաստանում սովորած այլ բառեր՝ **բարև**, **ջան**, **քաղաք** և այլն:

Բէնդ – ջրաղացի փակող փայտ:
Բէլչաղ – 1. երախակալ: 2.սանձ: 3.փոկ:
Բէմբէյազ – ճեփ–ճերմակ:
Բէչախ – գուլպա:
Բէս – պես, նման:
Բէսպաղտուշ, բէսբախտուշ – պսպղալ, շողալ:
Բէսպաղտէցնուշ – 1. պսպղացնել: 2. հղկել:
Բէր – ոչխարների մականատեղ, հավաքավայր, որտեղ կեսօրին ոչխարներին կթում են:
Բէրբուք, բէրվուք – շուրթ, շրթունք:
Բէրէքէթ– առատություն, լիություն, շահավետություն:
Բէցխի (ծառատեսակ է) – լաստենի:
Բէցխութ – լաստենիների աճման վայր, լաստենիների խումբ:
Բէքար – ամուրի տղամարդ:
Բէքչի – պահակ:
Բըրիքէթ – ուղղանկյուն արհեստական շինանյութ, որով գերեզմանների և այլ շինությունների եզրապատեր են շարում:
Բիբէր – տաքդեղ:
Բիդանուշ – օգտակար լինել:
Բիդանօղ – օգտակար, պետք եկող:
Բիդացված – օգտագործված:
Բիդի – պիտի, պետք է:
Բիդու – պիտանի:
Բիթուն, բութուն, ալլայ, – ողջ, բոլոր, լրիվ, ամբողջ, ամբողջովին, լիովին:
Բիլազդուղ – ապարանջան:
Բիլմէջէ, հօնգ[210] – հանելուկ:
Բիճի, բիճիգ, բիճիք – փոքր:
Բիճիգութին – մանկություն:

---

[210] **Հօնգ** բառը գիտեն հատուկենտ մեծահասակներ:

Բիձիլիգ– պիծիլիկ, փոքրիկ:
Բինչ – պինչ, քթանցք, ռունգ:
Բիշի – լավաշի նման բացված խմորից պատրաստված ուտելիք:
Բիչմիշ էնուշ – հնձել:
Բիչքի – փոքր սղոց:
Բիրդէ բիրէ – այսպես միանգամից:
Բուբրիք – 1. պուպրիկ՝ տիկնիկ: 2. ծիսական տիկնիկ:
Բուլիգ – փոքրիկ աղջիկ, աղջիկ երեխա:
Բուլիք – աչքի բիբ:
Բուլուգ, շաբիք – վերնաշապիկ:
Բուլութ, մէրալ – ամպ:
Բուձէք – պիծակ, իշամեղու:
Բուջախ, քօշա – անկյուն:
Բուջուլիք – փոքրիկ:
Բուրագ, օջախ – օջախ, կրակարան:
Բօբգընուշ – 1.մղկտալ: 2. կծու ուտելիքից մրմռալ: 3. մոխրանալ: 4. խորովել:
Բօբօլ – 1.որդ, ճիճու: 2.բլոճ, միջատ:
Բօբլօդուշ – որդնել, որդոտել, ճիճվոտել:
Բօդբօդուշ – 1.պտպտալ: 2.ինքն իրեն խոսել:
Բօզ – մոխրագույն:
Բօխք – բողկ:
Բօլօքուշ – 1.ճչալով բողոքել: 2.գոռգոռալ, բղավել: 3. ֆիզիկական կամ հոգեկան ցավի պատճառով բարձր ձայներ արձակել:
Բօղազ – կոկորդ:
Բօյա – ներկ:
Բօյ – հասակ:
Բօյիր, բայիր – բլրակի լանջ, փոքր, թեք տարածք, ոչ մեծ զառիթափ:
Բօյնա – միշտ, անվերջ, անդադար, անընդհատ:

Բօյօվ – բարձրահասակ:
Բօնիր, բանիր – պանիր:
Բօշ – դատարկ, անօգուտ, իզուր, թույլ:
Բօշաթմիշ էնուշ, թարթքուշ – դատարկել:
Բօչ, փօչ – 1.պոչ: 2.ունկ:
Բօչաղ, փօչաթ – պոչատ:
Բօչքէօխ – 1.պոչուկի սկզբնամասը և վերնի հատվածը: 2.ողնաշար:
Բօրդ (արդ.՝ **բօյդ**), **բօրդիկ** – պորտ:
Բօրչ – փոխարինաբար տրվող կամ վերցվող գումար, պարտք:
Բօրջուշ – պոճոկել:
Բօրու – խողովակ:
Բօրունքդած ցէն – կոկորդային ձայն:
Բօրունքդուշ– կոկորդային ձայն հանել:

— Գ —

Գաադ – կարոտ:
Գաադ մէնուշ – կարոտ մնալ:
Գադդէնուշ – կարոտել:
Գաբ – 1.կապ: 2.առնչություն: 3.շփում:
Գաբա, աբա – 1.կապա, պարեգոտ: 2. կոշտ կտորից կամ այլ նյութերից կարված միջին երկարության բաճկոն:
Գաբէէթ – մեղք, հանցանք:
Գաբիչ, կօղի, վարդիքգաբիչ, գայիշ, խուլաց կօղի – գոտի:
Գաբիսուն – հողի մեջ խրվող, կարճ, սուր փայտ, որից կապում են կենդանիներին:
Գաբուղ – կեղև:
Գաբուն – կապուկ, խուրձ:
Գաբուշ – կապել:
Գագա էնուշ, գագանուշ – կչկչալ (հավը):

Գազալ, ընգուզ[211] – ընկույզ:
Գազալա – ամորձիք:
Գազալի (**կակալի**) **մաղիս** – ընկույզի միջուկ:
Գազալի գէղէփ, գէջէփ – ընկույզի կճեպ, կեղև, պատյան:
Գազլի – ընկուզենի:
Գազլութ – ընկուզուտ, ընկուզենիների պուրակ:
Գադու – կատու:
Գադվէցաք – կատվի ձագ:
Գազաղի, քազաղի – նավթ, կերոսին:
Գազգօզ – կուզեկուզ:
Գազէթ – թերթ:
Գաթ – կաթ:
Գաթգէթուշ – կաթկթալ:
Գաթէ գէդրուշ – կաթը կտրվել:
Գաթի խօդ – սինձ:
Գաթիր (արդ.՝ **գաթիյ**) – ջորի:
Գաթիք – կաթիլ:
Գաթմաութ – խոտաբույս է, որը կտրելիս կաթնանման հյութ է գալիս:
Գաթնօվ, գաթնէրած – կաթնով, կաթնարած:
Գաթնէրած, գաթնօվ, – կաթնարած, կաթնով:
Գաթուշ – կաթել:
Գալաթ – կողով:
Գալաշ (արդ.՝ **քօմի,** թուրց.՝ **փուչ**) – քամի:
Գալէմ, քէիչ, կէիչ – գրիչ:
Գալվուշ – 1.խցանվել: 2.պնդանալ: 3.առաջն առնել: 4 բռնել:
Գախ էնգուշ – կախ ընկնել, կախվել:
Գախ ցըքուշ – կախել, կախ գցել, կախ տալ:

---

211 **Ընգուզ** բառը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Գաձ – կայծ:
Գաձգէցէնուշ – ապտակել:
Գաձգիչ, գաձուլիգ, գաձօրիգ – լուսատտիկ, կայծոռիկ:
Գաձգուն – 1. կայծակ: 2. ապտակ:
Գաձէնդէրուշ – կայծկլտալ:
Գաձուլիգ, գաձգիչ, գաձօրիգ – լուսատտիկ, կայծոռիկ:
Գաղին – պնդուկ, տխիլ:
Գաղնի – տխլենի, պնդուկենի:
Գաղնութ – տխլենու պուրակ:
Գաղվա, գավգա, գէրիվ, գըրիվ – կռիվ:
Գամ – կամ:
Գամաց, գօմաց – կամաց:
Գայիբ մարթ – կորած մարդ:
Գայիբ էլլուշ – կորել:
Գայիշ – կաշվե գոտի:
Գայիշօղ – տերևակաղամբի (**փօնջար**) տերևներով, ըստ ցանկության նաև լոբիով, մսով, կարտոֆիլով եփած ճաշ:
Գայնաթա – աներ:
Գայնանա, անալուղ – զոքանչ:
Գայնի – աներորդի, աներձագ:
Գանդուրմիշ էնուշ – համոզել:
Գանէպ, գօնէպ – 1.կանեփ: 2. կանեփի թելից հյուսված պարան:
Գանչուշ, գօնչուշ – 1. երգել: 2. երգ:
Գանջէլօզ, գօնջօլօզ – ուրվական, ոգի, ուրու, գերեզմանապահ:
Գաշի – կենդանու կաշի:
Գավալ – մեծ սրինգ:
Գավարա – եղևնու բնափայտից պատրաստված բարակ տախտակ:
Գավգա, գաղվա, գէրիվ, գըրիվ – կռիվ:
Գավէրընգի – սրճագույն, դարչնագույն:
Գար – թելերով կար:

Գարանլուղ – մութ:
Գարաքիշ – դեկտեմբեր:
Գարգուտ, գարգուղ (արդ.՝ **գայգուտ**) – կարկուտ:
Գարգէդան – կարկատան:
Գարգէդուշ – կարկատել:
Գար էնուշ – կար անել:
Գարթալ – արծիվ:
Գարթէցնօղ – ուսուցիչ:
Գարթուշ – 1.կարդալ: 2.Ղուրանից աղոթք կարդալ: 3.աղոթել:
Գարթօղ – աշակերտ, սովորող, ուսանող:
Գարջ – կարճ:
Գարջ օխտ– կարճ ժամանակ:
Գարջէցէնուշ – կարճացնել:
Գարմէգուցք, գարմէգունաք (թռչնանուն է) – կարմրակուրծիկ, եզնակահավ, խածկտիկ:
Գարմի – կարմիր:
Գարմըրուշ – կարմրել:
Գարմուչ – կամուրջ:
Գարշը, էնթի, թիմաց – դիմաց, հանդիպակաց:
Գարչխալ (սարի անուն է) – Քաջքարյան կամ Պոնտոսյան լեռնաշղթայի արևելյան կողմում գտնող գագաթ է:
Գարուշ, գառուշ (արդ.՝ **գայուշ)** – կարել:
Գարքէվուշ, արնուշ – ամուսնանալ:
Գարքուշ – ամուսնացնել:
Գացին – կացին:
Գաուրմա, գաումա – յուղի մեջ տապակած միս, որը պահում են որպես ձմռան պաշար:
Գաուրմիշ էնուշ, դաբգուշ – տապակել:
Գափշին, քափչին – տառեխանմանների կարգի մանր ձուկ՝ խամսի, անձրուկ:

Գափազլի կօրտ (քօրդ), քափլումբաղա, ցանց, ցօնձ[212] – կրիա:
Գէբուշ, գէփչուշ – 1.կպչել: 2.մի գործի կպչել: 3.ձեռնարկել: 4.սկսել: 5. ըմբշամարտ:
Գէղէփ – ընկույզի, նշի, ծիրանի կորիզների պատյանները:
Գէղէփթէրուշ – 1.կեղևապատվել: 2.վերքը մաշկապատվել:
Գէդրիչ, գըդրիչ – կտրիճ, տղամարդ:
Գէդրիջութին, գըդրիջուտուն – կտրիճություն, քաջություն:
Գէդրուշ, գըդրուշ – 1.գործիքով կտրել, մասերի բաժանել: 2.մոր-թել: 3.դադարեցնել: 4. ձայնը կտրել: 5.խոսքն ընդհատել:
Գէզէաչվի – շիլաչք, շեղաչք:
Գէզուշ, գըզուշ – կզել, կռանալ:
Գէթուշ, գըթուշ – 1.կաթ կթել: 2.մեղր քամել:
Գէլլի, գըլլի – կլինի:
Գէլինի, հարս (արդ.՝ **հայս**) – հարս:
Գէձգուշ, գըձգուշ – ոտքերը կծկել:
Գէձգէվուշ, գըձգըվուշ – կծկվել:
Գէձիք, գըձիք – կծիկ:
Գէձու – կծու:
Գէձունք – մաշկի քոր, քորվտուք:
Գէձուշ, գըձուշ, վարուշ – կծվծալ, մրմռալ:
Գէձված, գըձված – կծված, փչանալու պատճառով կծու համ ու-նեցող սննդամթերք:
Գէմի – նավ:
Գէնիգ, գընիգ – կին:
Գէնչ – երիտասարդ:
Գէնքվուշ – ննջել:
Գէնօչ փօթին – կնոջ կոշիկ:
Գէշէրուշ, գըշըրուշ – կշռել:

---

[212] **Ցանց, ցօնձ** ասում են հիմնականում դանդաղաշարժ, ծույլ մարդ-կանց, բառը **կրիա** իմաստով շատ քչերն են օգտագործում:

Գէշթանուշ, գըշթանուշ – կշտանալ:
Գէջալուղ – գիշերանոց:
Գէջէփ, գըջէբ – կճեպ, կորիզի պատյան:
Գէջվուշ, գըջվուշ – կճպել, կեղևել:
Գէս – կես:
Գէսթուշ – կիսել:
Գէսէցաիվա – մինչև կեսը:
Գէսքիշէր – կեսգիշեր:
Գէսմաթ – 1. բախտ, ճակատագիր: 2. բախտավորություն, երջանկություն: 3. հաջողությունը: 4. ամուսնություն:
Գէր – կեռ:
Գէրգէնաղ – ջրաղացում աղունի հոսքը կարգավորող տատանվող փայտ:
Գէրէղօղիգ – ծուռոտ, կեռ ոտքերով:
Գէրիբդուշ – կշտամբել, նախատել, հանդիմանել:
Գէրիվ, գըրիվ, գավղա, գավգա – կռիվ:
Գէրման – կեռման:
Գէրվօղ, գըրվօղ – կռվող:
Գէրօջուշ, գէրէջուշ – կռանալ, կեռվել, կքել:
Գէրօջէցէնուշ – կռացնել, կորացնել, ճկել:
Գէրան, մարթաղ – գերան:
Գէրչաղ – իսկապես:
Գէրուշ (արդ.՝ **գիյուշ**) – կրել, տանել, փոխադրել:
Գէցուշ – կենալ, մնալ, բնակվել:
Գէունք – կրունկ:
Գէփչուշ, գըփչուշ, գէբուշ, գըբուշ – 1.կպչել: 2.մի գործի կպչել: 3.ձեռնարկել: 4.սկսել:
Գըձուշ – կծել:
Գըձբէլուշ – վերքի վրայի բարակ կաշին պոկել, պլոկել:
Գընքվադուշ – քնկոտել, քունը տանել:

Գըռանիցա, սինիր[213] – սահման:
Գըրգօղ, քարղա – ագռավ:
Գիագի (արդ.՝ **գիյագի**), **փազար** (արդ.՝ **փազայ**) – կիրակի:
Գիգիդօր – ոչխարի, այծի կղկղանք՝ կտիտ:
Գիդէս թա – իբր թե, թվում է թե:
Գիդէս քի – կարծես:
Գիլիմօր, կիլիմօր – առաստաղից ամրացված շղթա, որի ծայրի կեռիկից օջախի վրա կախում են կաթսա, թեյնիկ և այլն:
Գիմաթլի – թանկագին:
Գիմիշ էնուշ – խնայել, ափսոսալ, ձեռքը չգնալ:
Գիյագ – կրակ:
Գիյիգ, գէյիգ – եղջերու:
Գիյիգի (**գէյիգի**) **խօղ** – ուրց:
Գիյօնգ – կրունկ:
Գինչխ – կանեփի մնացորդ:
Գինուշ – կենալ, մնալ, հանգրվանել, իջնանել, օթևանել:
Գիջ – կիճ, մեղվի խայթոց:
Գիսաթ – կիսատ:
Գիսամաշուշ – կիսամաշել:
Գիվ – ծամոն:
Գիվէրժուղ, գիվէրջուղ – գանգուր:
Գիրուշ – կրել:
Գյալինլուղ – հարսնաշոր:
Գյավուրօղլի – գյավուրի, անհավատի տղա:
Գյուլ – վարդ:
Գյումուշչի – արծաթագործ:
Գյուջուխ – փետրվար:

---

213 **Գըռանիցա** են ասում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համշենցիները, իսկ Թուրքիայում բնակվողներն ասում են **սինիր:**

Գյուվէրչին – աղավնի:
Գյուրջի – վրացի:
Գյուրջիսթան – Վրաստան:
Գյոզլուխ – ակնոց:
Գյոլ – լիճ:
Գյոմիդ, քիյամիդ – կղմինդր:
Գյոնզաազ – օձիք:
Գյորա – համապատասխան:
Գուգում – երկարավիզ մետաղյա սափոր:
Գուդ – հավերին կերակրելու կուտ:
Գուդ, քուդ, շափքա, շաֆքա – գդակ, գլխարկ:
Գուդիլա – շան ձագ, քութիկ, նաև ասում են **լազոդ**:
Գուլ, զում – ումպ, կում:
Գուլ դէվուշ – կուլ տալ:
Գում – ավազ:
Գումար – գումարով թղթախաղ, բախտախաղ, մոլեխաղ:
Գույ – 1. փոս: 2. ջրհոր:
Գունզէնցէնուշ – 1. կանգնեցնել: 2. սպասեցնել:
Գունդուլիզ – 1. գնդլիկ: 2. կլոր: 3. գեր:
Գունթաղ – բութ (ոչ սուր):
Գունթաղ բոչ – անպոչ, կտրած պոչ:
Գունձ – խոտարմատներով հողակոշտ՝ գուղձ:
Գունչուլ – 1. խոտի դեզ: 2.կույտ:
Գուշթ – կուշտ, կշտացած, քաղցը հագեցրած:
Գուշթ – գոտկատեղից մինչև թևատակն ընկած աջ և ձախ հատված, բրբ.՝ կուշտ, կող:
Գուշթ էլլուշ – կուշտ լինել:
Գուշլօղ – առավոտից մինչև կեսօր ընկած ժամանակահատվածը:
Գուրբաթ – պանդխտություն:
Գուփլիչ, սաղաֆ – կոճակ:

Գօ, կօ – կա:

Գօքալախ – քեչայից կարված յափնջի (այծենակաժ), որը հագնում են հովիվները:

Գօքիդ – 1.կոպիտ: 2.դիմացկուն: 3. ամուր:

Գօգուշ – 1.կոկել, կոկիկացնել: 2.կարգի բերել: 3.հավաքել:

Գօղիմ – կոտեմ (ուտելի խոտաբույս է):

Գօղգօղիչ – մշակաբույսերի դաշտերը կենդանիներից պաշտպանելու համար աղբյուրի ջրի շիթի տակ տեղադրվող հարմարանք է: 1.5–2 մ երկարության փայտի կամ տախտակի մի ծայրին ամրացվում է տաշտակ, մյուսին՝ մետաղյա առարկա: Փայտը դրվում է հենման կետի վրա այնպես, որ երեխաների ճոճանակի պես ազատորեն բարձրանա և իջնի: Տաշտակը լցվելով ջրով ծանրանում է, ճոճանակի այդ ծայրը իջնում է և ջուրը թափվում է: Փայտի մյուս ծայրը, որը բարձրացել էր, համեմատաբար ավելի ծանր դառնալով իջնում է և հարվածում տակը դրված թիթեղին: Հարվածի ձայնից մոտակայքի կենդանիները փախչում են: Դատարկված տաշտակը, որ վեր էր բարձրացել, կրկին աղբյուրի ջրով լցվելով, ծանրանում, իջնում է և այդպես գործողությունը գիշերուզօր կրկնվում է:

Գօղգօղուշ – գոռգոռալ:

Գօղվան, գօթօլ – եգիպտացորենի գլխիկ:

Գօղրուն, շէրդ – շերտ:

Գօղրուշ (արդ.՝ **գօյդուշ**) – կոտրել, ջարդել:

Գօղրէղուշ – կոտրտել, մանրել:

Գօղրէվուշ – կոտրվել:

Գօղօշ – եղջյուր:

Գօզգօզ – կուզեկուզ:

Գօթ – 1.կովկիթ: 2.հացահատիկ չափելու փայտե աման՝ կոտ:

Գօթէջաք լազդի – եգիպտացորենի ցողուն:

Գօթօլ, գօղվան – եգիպտացորենի գլխիկ:
Գօլթուղ – թևատակ:
Գօլիբա – հյուղակ:
Գօխթուշ – թուխս նստել:
Գօղունցք – հացի եզրերի չոր մաս, կող:
Գօմաց – կամաց:
Գօմաց – գօմաց – կամաց – կամաց:
Գօմացնուշ – կամացացնել, դանդաղեցնել:
Գօմբուր – կուզիկ:
Գօնգնուշ – 1.կանգնել: 2. դադարել:
Գօնգօլ էնուշ – կծիկ անել:
Գօնէնջ – 1.կապույտ հազ հիվանդություն: 2. խեղդող հազ:
Գօնէպ, գանէպ – 1.կանեփ: 2.կանեփի թելից հյուսված պարան:
Գօննալիք – ունենալիք, ապագայում լինելիք:
Գօնչուշ, գանչուշ – 1.երգ: 2. երգել:
Գօնջօլօզ, գանջէլօզ – ուրվական, ոգի, ուրու, գերեզմանապահ:
Գօշթ թէնթում – երկար, սնամեջ դդմի տեսակ, որը չորացնելուց հետո ծակում են և օգտագործում որպես տարողություն:
Գօչ – փոքր աթոռ:
Գօր – կոռ, համագյուղացիների համար, որպես փոխօգնություն, անվճար, խմբովի աշխատանք, կա «չուրի գօր»՝ ջրի կոռ, «դունի գօր»՝ տան կոռ, «ջօմփու գօր»՝ ճանապարհի կոռ, «փէչքի գօր»՝ եգիպտացորենի գլխիկը պարփակող տերևները պոկելու կոռ և այլն:
Գօրգօթ – կորկոտ, ձավար:
Գօրթ – մարգագետին:
Գօրձէլի, քյօմուր – ածուխ:
Գօրչուշ – 1.գոռալ: 2.կանչել: 3. բառաչել:
Գօրչէղուշ – գոռգոռալ, ճիչեր արձակել, աղաղակել:
Գօրսէնուշ – կորցնել:
Գօրսէվուշ – կորսվել, կորել:
Գօվ – կով:

Գօվաթլի – ուժեղ:

Գօրք, **կօրք**, **քօրկ** – 1.կողասենյակ: 2.նախասրահ: 3.տան ամենափոքր սենյակը: Ռիզեի նահանգի թուրքախոս համշենահայերն ասում են զերանակապ տնակին:

Գօքար – 1.խոփ: 2. արոր:

Գօքար, չէֆթ, հօղհէրգիչ, խօղհէրգիչ – արոր:

Գօօբ, զօղօբ, զօրօբ – ճյուղերից կամ տախտակներից պատրաստված փոքր շինություն՝ **կորոբ**, որն անվտանգության նպատակով կառուցվում է շուրջ 2 մետր բարձրության սյուների վրա և ունի վերցվող սանդուղք: Կորոբները լինում են տներից հեռու՝ եգիպտացորենի և այլ մշակաբույսերի արտերի եզրերին: Բերքահավաքի շրջանում արտերը կենդանիներից պաշտպանելու համար գյուղացիները գիշերում են **կորոբներում**: Քրիստոնյա համշենահայերը **զօրօբ** են ասում տան բակում կառուցված նույնատիպ մթերանոցներին:

— Դ —

Դա – կոչական ձայնարկություն, դիմելաձև արական սեռին:

Դաազան, դարազան, դաուզօն – տարեկան, ապրած տարիների թիվը, տարիքը:

Դաբզուշ, զաուրմիշ էնուշ – տապակել:

Դազ – տակ:

Դազինչք – կաթսայի տակ կպած կամ մնացած ուտելիքի ոչ թարմ մնացորդ:

Դազնուվաա – տակնուվրա:

Դադ, բաբա, հար (արդ.՝ **հայ**)[214] – հայր:

Դադանց դուն – հայրական տուն:

---

[214] **Հայր՝ հար** (արդ.՝ **հայ**) բառը գիտեն փոքրաթիվ մեծահասակներ:

Դաղի վաադագ – հոր զավակ, «**վաստագ**» բառն առանձին չի օգտագործվում:
Դալ – 1.ճյուղ: 2. նոր սերունդ:
Դալիք – 1.տալիք, տալու գումար, պարտք: 2.գին, փոխարժեք:
Դալիքօնլի – երիտասարդ:
Դահա – է՜լ, այլևս:
Դաղդագ – տախտակ:
Դաղ – տեղ, վայր:
Դաղա, դըղա – 1.երեխա: 2.տղա:
Դաղէ – ինչ որ մեկի, ինչ որ բանի փոխարեն, տեղը:
Դաղնուղաղէ – տեղնուտեղը:
Դաղվօրցէնուշ, դաղավօրցընուշ – տեղավորել:
Դաղութին – երեխայություն:
Դայի – տարի:
Դայի – 1. դիմելաձև տարիքով տղամարդուն: 2.տարիքով տղամարդ:
Դանթէլ – ժանյակ, ժանյակավոր:
Դանինօք – տնեցիներ, տան անդամներ:
Դանձ, դօնձ – տանձ:
Դանձի, դօնձի – տանձենի:
Դանու, դօնու – 1. տանու, տնական, ընտանի, ոչ վայրի: 2. մշակովի:
Դանում, դօնում – կրկնվող գործողություն՝ անգամ:
Դանուշ, դօնուշ – տանել:
Դաշախ – տաշեղ:
Դաշդ – տաշտ:
Դաշուշ – տաշել:
Դավար (արդ.՝ **դավայ**) – տավար:
Դարաբա (արդ.՝ **դայաբա**) – փայտաշեն տան պատ, տախտակներով շինված միջնապատ:
Դարդ – դարդ, վիշտ:

Դարի (արդ.՝ **դայի**) – տարի:
Դարս – դաս, սովորելու համար տրված նյութ:
Դաուլ – դհոլ:
Դաուշօն – նապաստակ:
Դաք – տաք:
Դաքնուշ – 1.տաքանալ: 2.ջերմել:
Դաքր – տագր, տեգր:
Դաքցէնուշ – տաքացնել:
Դաքութին – տաքություն, ջերմություն:
Դէգլէգ – տկլոր, մերկ:
Դէգլէգնուշ – տկլորանալ, մերկանալ:
Դէմիրչի – երկաթագործ:
Դէէր (արդ.՝ **դէյէր**), **դէրէր** (արդ.՝ **դիյէր**) – տերև:
Դէյ նա – որ, որպեսզի:
Դէնազ էնուշ – ուրիշի շարժուձևը և խոսքը ծաղրական ընդօրինակել՝ տնազ անել:
Դէնգուշ – տնկել:
Դէնգվուշ – տնկվել, դուրս ցցվել, ցցվել, ցից կանգնել, անգործ կանգնել:
Դէշքար – պարտեզի ցանկապատի դուռ:
Դէսէվուշ – 1.տեսնվել: 2.կարճ ժամանակով ներկայանալ: 3.տեսակցել: 4.երևալ, տեսանելի լինել:
Դէսէցէվուշ – 1.տեսցնել: 2.բացատրել, պարզաբանել: 3.պատժել:
Դէսնուշ – 1.տեսնել: 2.նայել, դիտել: 3.տեսակցել:
Դէվէ – ուղտ:
Դէվուշ, դըվուշ – 1.տալ: 2.ամուսնացնել:
Դէրման – 1. դեղամիջոց: 2. ուժ: 3. ելք: 4. ազատում:
Դէփուշ – բաբախելով ցավել:
Դէփուր – 1.սեղան: 2.փոքր սեղան:
Դէքշէցէնուշ – մատների ծայրերով թխթխկացել:

Դէքուշ – տքալ, տնքալ:
Դըշ լաւթիք – ավտոմեքենայի անիվ:
Դիգ – տիկ, տճկոր, պանիր պահելու տիկ:
Դիգինա – փոքր զամբյուղ:
Դիզ, թիզ – բույսերի և կենդանիների մակաբույծ միջատ՝ տիզ:
Դիյաղ – հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյու-
ղի տակ:
Դիյէ, դէնա – որ, որպեսզի:
Դիր (արդ.՝ **դիյ**) – 1.տեր: 2.պաշտպան: 3.հովանավոր:
Դութ, դուղ – մարմնի վրա աճած մսի փոքրիկ գնդիկ:
Դուն – տուն:
Դուն էնուշ – ընտանիք կազմել, տունտեղ դնել:
Դուն փէռնուշ – տուն վարձել:
Դուշունմիշ էնուշ, մէդօրուշ – մտածել, մտորել:
Դուվա – աղոթք:
Դուվար (արդ.՝ **դուվայ**) – քարե պատ:
Դօդիք – 1.տոտիկ: 2.աթոռի ոտք:
Դօթ – տոթ:
Դօլմա (ճաշատեսակ) – դոլմա:
Դօխթօր – բժիշկ:
Դօղան – բազե, ճուռակ, աղավնաորս:
Դօմար, քյօք, քօք – արմատ:
Դօնգէնիգ – տանտիկին:
Դօնի արչէվ, դօնի փօս – բակ:
Դօնձ (արդ.՝ **դանձ**) – տանձ:
Դօնձի (արդ.՝ **դանձի**) – տանձենի:
Դօնու – տնական:
Դօնում, դանում – կրկնվող գործողություն՝ անգամ:
Դօնուշ, դանուշ – տանել:
Դօշաղ – ներքնակ:

Դոչ – ամերիկյան արտադրության բեռնատար ավտոմեքենա՝ «DODGE», որը շատ տարածված է Խոփայի գավառի համշենցիների գյուղերում:
Դուխի, շիմշիր (ծառատեսակ է) – տոսախ:
Դուստ – խնամի:

— Զ —

Զադգի բըլօջ[215], **ցիբու**[216], **ուղուր բօջէղի** (միջատ) – զատիկ:
Զաթէ – 1.արդեն իսկ, առանց այն էլ: 2.հենց: 3.ասենք:
Զաիվ, զաիֆ – նիհար, վտիտ:
Զաման, օխթ, վաքիտ, չախ – ժամանակ:
Զայ աղավ – 1.փչացավ: 2.վնասվեց: 3.ընկավ վնասվեց:
Զանգաք, **զօնգաք**, **զօնգաղ** – զանգակ, զանգուլակ:
Զանգէցնուշ – զնգացնել, զանգ խփել, զանգուլակի ձայնը հանել:
Զարզընիչ – նշանակում է զարկիչ: Փայտից պատրաստված, հաստ կոթով, ամուր, թիաձև, շերեփից մի քիչ մեծ խոհանոցային պարագա է, որի թիակի մասը լայն է: Նրանով կաթսայի մեջ բազմիցս ուղղահայաց հարվածում են և խառնում տերևակաղամբը ու ճաշի մյուս բաղադրիչները:
Զարթնուշ, զարթուշ – զարթնել, արթնանալ:
Զարթէցէնուշ – արթնացնել:
Զէիր, աղու, տաղ – թույն:
Զէմբիլ – զամբյուղ:
Զէյթուն – ձիթապտուղ:
Զէյթունի յաղ – ձիթապտղի ձեթ:
Զէնգին – հարուստ:
Զէնգզէնգուշ – 1.զնգզնգացնել: 2.ատամներն իրար խփել:

---

215 **Զադգի բըլօջ** բառը գրի եմ առել Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:
216 **Ցիբու** բառը գիտեն միջին և ավագ սերնդի շատ քիչ մարդիկ:

Զէնգէրուշ – զանգը հնչեցնել, զնգզնգալ:
Զէնջիլ – շղթա:
Զէրնուշ, սաուշ – սահել, սղալ:
Զըրուշ – զռալ:
Զիբիլ, խիջ – աղբ, թափոն:
Զիբու, ձիբու, ձիբուն – 1.փոքր զուռնա: 2.զուռնայի փչանցքի մասում տեղադրվող եղեգնից պատրաստված հարմարանք՝ պիպիչ, ձայնավերարտադրիչ:
Զումփա – խցան:
Զօնգաք, **զանգաք**, **զօնգաղ** – զանգակ, զանգուլակ:
Զօր – դժվար:
Զօր (արդ.՝ զօյ), **օր** – օր:
Զօրզազ, **ձօրձազ** – ծոծրակ:
Զօօվի –1.զոռով, ստիպելով: 2.դժվարությամբ:

— Է —

Էբէդի – 1.հավերժ, անվերջ: 2.երբևէ:
Էգուշ – 1.գալ: 2. ժամանել: 2. տեղ հասնել:
Էդէթ – 1.հետև: 2.հետևի կողմ:
Էդէվանց – 1. մեկի հետևից գնալ: 2. հետևի կողմից:
Էդէվ էնգուշ – 1.հետևից ընկնել: 2.թշնամանալ:
Էդէվցըքուշ – հետաձգել:
Էդի սօղէ –1.վերջապես: 2.ամենավերջում, վերջիվերջո:
Էդիսօղնաք – վերջերը:
Էզան – ազան, մուսուլմաններին աղոթքի՝ նամազի հրավիրող կանչ:
Էէգ, էրէք (արդ.՝ էյէք) – երեկ:
Էէս (արդ.՝ **էյէս**) – երես:
Էէվնուշ – 1.երևալ: 2. տեսանելի դառնալ: 3. նկատելի դառնալ: 4. ներկայանալ:
Էթաքլուղ – շրջազգեստ:

Էթրաֆ – շրջակայք:
Էլամաթ – ահավոր:
Էլիլէ – եղած վատ բան, փորձանք, անհաջողություն:
Էլլուշ – լինել:
Էլչի – խնամախոս:
Էլչիլուղ, ալչիլուղ – խնամախոսություն:
Էլուշ – ելնել, բարձրանալ:
Էմիջա, ամջա – 1.հորեղբայր: 2.ավագ տղամարդուն դիմելաձև:
Էմէժինէ, էմէնիժէ, միշթ – ամեն ժամանակ, միշտ:
Էմմէղինա, էմէղէնի– 1.հանկարծ: 2.իսկույն:
Էմմէն – ամեն:
Էմմէն դօնում – ամեն անգամ:
Էմմէնը – ամենքը:
Էմմէն օքի – ամեն ոք, յուրաքանչյուրը:
Էմմէշէ – ամեն ինչ:
Էնգէր – ընկեր: **Էնգէր** են ասում նաև իգական սեռի ընկերներին, քանի որ **ընկերուհի** բառ չունեն:
Էնգէրդաք (արդ.՝ **էնգէյդաք**) – ընկերներ:
Էնգէրդէն (**տաղօղ**) **թաղօղ** – ընկերովի աշխատող:
Էնգէուշ, էնգէրուշ – օգնել, օժանդակել:
Էնգուշ – 1.ընկնել: 2.կործանվել:
Էնթամէ– այն ժամանակ:
Էնթէրէսան – հետաքրքիր:
Էնթի, էնթին, թիմաց, գարշը – դիմաց, հանդիպակաց, այն կողմ:
Էնթիրցիք – դիմացիններ, այն կողմի մարդիկ, այնտեղացիներ:
Էնիշտա, նօղում, փէսա[217] – փեսա:
Էնչգէրուշ, էնչգաղուշ – հորանջել:
Էնջամի – 1.ինչպես որ կա, ինչպես որ է: 2.արդյունքում: 3.գործի ավարտին: 4.այնժամ:

---

[217] **Փէսա** բառը գիտեն փոքրաթիվ մեծահասակներ:

Էնուշ – 1.անել: 2.սարքել: 3.պատրաստել:
Էնքվի – ունք:
Էշ – 1. կենդանիների ընկերք: 2.խնձորի, տանձի միջուկ՝ կորիզներով:
Էշաքքօլլի – փեսայի կողմի ազգականներ:
Էշատ – էշ, ավանակ:
Էշքիյա – ավազակ:
Էշքիյալուղ – ավազակություն:
Էսէվ – 1.բացականչություն, զարմանքի արտահայտություն: 2.երանի, հեյ գիդի:
Էսէվ աշխար – զարմանքի և շփոթմունքի բացականչություն:
Էսէվ Աստված – զարմանքի և շփոթմունքի բացականչություն:
Էվադի – շուտափույթ, անհապաղ:
Էվէթ – այո:
Էվլիյա – սուրբ:
Էվրագուն, Էրվագուն – զեփյուռ:
Էրանդութին, Էրօնդութին – գեղեցկություն:
Էրանդ, Էրօնդ – գեղեցիկ:
Էրանդցէնուշ, Էրօնդցընուշ – գեղեցկացնել:
Էրգէն – երկար:
Էրգէն բօյլի – բարձրահասակ:
Էրգէնուշ – 1.երկարել: 2. մեկնվել, շորերով պառկել:
Էրգէնութին, Էրգէնութուն – երկարություն:
Էրգինք – երկինք:
Էրգուդազ, ձօնդըր – հղի:
Էրգուշափթի – երկուշաբթի:
Էրգուս, Էգուս, Էգու – երկու:
Էրզէցի – Ռիզեի նահանգից՝ ռիզեցի:
Էրզէվա, Էրզէվար – 1.պարտեզ: 2.բանջարանոց: 3.այգի: 4.մշակված հողատարածք:
Էրէք, Էէք (արդ.՝ **Էյէք**) – երեկ:

Էրթուշ – 1.երթալ: 2.գնալ: 3.քայլել: 4.ընթանալ:
Էրմէնի – հայ:
Էրմէնիսթան – Հայաստան:
Էրվագուն, Էվրագուն – զեփյուռ:
Էրք – արու հորթ:
Էփէյի – բավականին:
Էփուշ – 1.եփել: 2. թխել:
Էք – էգ:
Էքուց – վաղը:

— Թ —

Թաախ – թարախ:
Թաաք – 1.դարակ: 2.պատին հորիզոնական ամրացված տախտակ, որի վրա դրվում են ամանեղեն և կենցաղային իրեր:
Թաաք – ընդհուպ:
Թաբութ – մահմեդականների դագաղ, որը նման է պատգարակի:
Թաղան, թաղվան, տաղան, տաղվան – աշխատասեր:
Թաղուշ, տաղուշ – աշխատել:
Թաթ – 1.կենդանու թաթ: 2. մարդու դաստակ:
Թաթման, թաթմօն, թէվիաքնիչ – ձեռնոց:
Թաթվուշ – թրջվել:
Թաթրութին – հոգնածություն:
Թաթրուշ – հոգնել:
Թալ, թալան զաթ – ծննդկանի կամ նոր ծնած կենդանու առաջին օրերի կաթ՝ դալ, խիժ:
Թախց, տախց, շէֆթալի – դեղձ:
Թախցի, տախցի – դեղձենի:
Թաղ, տաղ – դեղ:

Թաղի (ծառատեսակ է) – թեղի, թեղենի, ծփի, կնձենի, լոշի, ղարաղաչ, մոծակի ծառ, լատիներեն՝ Úlmus, թուրքերեն՝ քարաաղաջ, ռուսերեն՝ վյազ, իլյմ, բերեստ:

Թամնուսք, թօմնուցք – վերջավորություն, վերջին մաս, ավարտ:

Թաս – թաս:

Թասպախ, թասմախ – թզբեհ, մեղեսիկ:

Թավա – թավա:

Թավան, թավօն – առաստաղ:

Թավլա – նարդի:

Թավլուշ, թավէլվուշ, թալվէղուշ, թալվէլուշ – թավալվել:

Թավուս – սիրամարգ:

Թար – հորիզոնական ձող, որի վրա թառում են հավերը՝ թառ:

Թար – դար, զառիվայր:

Թարգուշ – 1.թարգել, վերջ տալ: 2.դադարեցնել:

Թարդըգուշ – դատարկել:

Թարէնուշ – ծերանալ, միսը պնդանալ, կարծրանալ, ասվում է ընտանի թռչունների և կենդանիների համար:

Թարման, տարման, տարմօն – դարման, հարդ:

Թարմանուշ – կովերին դարման տալ:

Թարնուշ – 1.դառնալ: 2.վերադառնալ: 3.շուռ գալ: 4.դավանափոխվել: 5.պտտվել:

Թարզի, թէրզի – դերձակ:

Թարթէլուշ – նազուտուզ անել:

Թարս – 1.ճիշտ կողմին հակառակ: 2.անհաջող: 3.սխալ: 4.հակառակվել: 5.ափսոս:

Թարվա (արդ.՝ **թայվա**), **տարվա, նէքէթն ի վա** – դեպի ներքև:

Թարվէ (արդ.՝ **թայվէ**), **տարվէ** – դեպի վեր:

Թարց – նորահարսի առաջին անգամ ծնողների տուն գնալը՝ դարձ:

Թարցէնուշ – 1.դարձնել: 2.վերադարձնել: 3.շուռ տալ: 4.դավանափոխել: 5.պտտացնել: 6. թարգմանել:

Թարուշ – թռչնի թառելը:

Թաց – թաց:

Թացան, թացօն – 1.հացից բացի սեղանին դրվող այլ ուտելիքներ՝ պանիր, մածուն, թթվասեր, կարագ և այլն: 2.ջրալի կերակուր: 3.աղանդեր: 4.ուտելիքի վրա լցվող թանձրուկ: 5. կաթնամթերք:

Թափա – գագաթ, կատար:

Թափթէփուշ – թափթփել:

Թափվուշ – թափահարվել, օրորվել, ճոճվել, տատանվել:

Թափվէլօվ էրթուշ – ճոճվելով գնալ, քայլել:

Թափուլ – բրդի փունջ:

Թափուշ – թափահարել, թափ տալ:

Թաք – փայտե գլխով մուրճ՝ թակ:

Թաքա – նավ:

Թաքէթ – ուժ, զորություն:

Թաքիդում, թաքիդիմ – հավանաբար, կարծես, ոնց որ:

Թաքմիշ էնուշ – ինչ որ բան տեղադրել, անցկացնել, կախել:

Թաքչէջուջի – հանրահայտ մանկական խաղ՝ պահմտոցի, թաքնվոցի:

Թաքչուշ, թաքուշ – թաքնվել:

Թէրուր, թէպուր – փետուր:

Թէրուշ – թեփռել, փետրել, փետրահան անել:

Թէզ – 1. խոտի դեզ: 2.շուտ: 3.արագ: 4.շտապ:

Թէզէնի – թզենի:

Թէզէնուդ – թզենուտ:

Թէթի, հօշտ – շանը հեռու վանելու ձայնարկություններ:

Թէթէնի – թթենի:

Թէթէվ – 1.թեթև: 2.թեթևսոլիկ:

Թէթէվնուշ – 1.թեթևանալ: 2.հանդարտվել: 3.անլրջանալ: 4. ծանր մտքերից ազատվել:

Թէթվէնէլիք – թթխմոր:

Թէթվէցէնուշ – թթվացնել:
Թէթվուշ – թթվել:
Թէթու – թթու, թթվաշ:
Թէթքուշ, թէթխուշ – աքլորի և հավի զուգավորում, ավելի հաճախ ասում են **քըթխուշ**, որը նշանակում է **կտցել**:
Թէժար – դժվար:
Թէժարութին – դժվարություն:
Թէլ – մետաղալար:
Թէլաբադ – մետաղալարերով պատրաստված ցանկապատ:
Թէլէվիզիյօն – հեռուստացույց, հեռուստատեսություն:
Թէլէֆօն – հեռախոս:
Թէլէֆօն ընուշ – հեռախոսով զանգել:
Թէլվէլիչ – թղթերի ծայրերն իրար միացնելով երեխաների պատրաստած ֆռիկ, որն ամրացնում են փայտիկի ծայրին և վազելու ժամանակ կամ զեփյուռ փչելիս պտտվում է:
Թէլվէլուշ – թավալվել:
Թէխթկի, թըխթկի – թխկենի:
Թէխնուշ – թխանալ, սևանալ:
Թէմ – 1.դեմ: 2.դիմաց: 3.հակադարձ:
Թէմ ալ – համ էլ:
Թէմ… թէմ – թե՛... թե՛, հա՛մ…հա՛մ, և՛…և՛:
Թէմբալ – թամբալ, ծույլ:
Թէմբիհ էնուշ – հանձնարարել, պատվիրել:
Թէմէ – դեմը՝ առաջիկայում, մոտ ժամանակները:
Թէմ էլյուշ – դեմ լինել:
Թէմ էնզնուշ – կանգ առնել, դեմ առնել, հասնել, դժվարության հանդիպել, չկարողանալ շարունակել, պնդել, համառել, հակառակվել, խանգարել, չկարողանալ պատասխանել, դիմանալ, հենվել:
Թէմ էրթուշ – դիմացը գնալ, ընդառաջ գնալ:

Թէմիզ, իստաք – մաքուր:
Թէմրուշ – թմրել:
Թէնազ – դանակ:
Թէնզադուշ – դանակահարել:
Թէնթում – դդում:
Թէնջարա – կաթսա:
Թէնուշ – 1.դնել: 2.տեղավորել:
Թէշթէշուշ – թշթշալ:
Թէվ – ձեռք:
Թէվ դէվուշ – ձեռքով դիպչել:
Թէվէ թափուշ – ձեռքը թափ տալ:
Թէվէ օմուր – ձեռքը պինդ՝ ժլատ:
Թէվի կօկօչ – դաստակի կոճ:
Թէվհաքնիչ, թաթման, թաթմօն – ձեռնոց:
Թէվի մադ – ձեռքի մատ:
Թէվ ցըքուշ – օգնել՝ ձեռք մեկնել:
Թէվցի – ձեռքով:
Թէվուշ – խփել, հարվածել, ծեծել:
Թէվօնք – հրացան:
Թէվօնք ցըքուշ – հրացանով կրակել:
Թէր – թել:
Թէր – դեռ:
Թէրզից, տըրզից – դրկից, հարևան:
Թէրթէզիչ – փիփերթ:
Թէրթէվուց, թէրթէրուցք – թերթերունք, արտևանունք, թարթիչ:
Թէրթէր – տերևակաղամբով, սոխով, սխտորով տապակած ու-տեստ:
Թէրթու – բանջարեղենի թրթուր:
Թէրչ – ստերջ, ամուլ, անպտղաբեր (կենդանիների մասին է):
Թէրչադուշ – վազվզել:
Թէրչուշ – վազել, վազ տալ, վազելով ձեռքից ազատվել, պոկվել:

Թէրցէնուշ – 1.վռնդել, դուրս գցել: 2.խմբից հեռացնել: 3.վազացնել: 4.քշել:

Թէքնէ – փայտե տաշտ:

Թէքրար – նորից, դարձյալ:

Թըրիք, աղփ – թրիք:

Թըրչուշ – թրջել:

Թըքցընուշ – թքել:

Թըքուն, թուք – թուք:

Թի – բահ:

Թիբնուշ, տիբնուշ – 1.դիպչել: 2.արևի, լուսնի դեպքում՝ ճառագայթներով լուսավորել: 3.կռվել:

Թիզ – բութ մատի ծայրից մինչև ճկույթի ծայրն ընկած հատված՝ թիզ:

Թիզուշ – դիզել:

Թիթէր – թիթեռ:

Թիթիզ – 1. դյուրագրգիռ: 2. պահանջկոտ: 3. խիստ:

Թիլքի – աղվես:

Թիմաց, էնթի, էնթին, զարշը – 1. դիմաց: 2. հանդիպակաց:

Թիր – տերև:

Թիր արաբա – «TIR»–ը «Միջազգային ճանապարհային փոխադրումներ» կազմակերպության անվան ֆրանսերեն հապավումն է: Այն խոշոր բեռնատարներով, որոնք ունենում են վագոնի նման կցորդներ և կոչվում են ավտոգնացքներ, կազմակերպում է բեռների միջպետական փոխադրումներ: Թուրքիայի համշենցի վարորդներից շատերը վարում են այսպիսի **թիր արաբաներ**:

Թիրաֆի, թըրաֆի – թերավիհ, նշանակում է ռամազանի օրերին երեկոյան նամազից հետո կատարվող նամազ: Ռամազանի ժամանակ երեկոյան ժամը 20–ից մինչև 22–ը մզկիթ են գնում և նամազ անում:

Թիք – դիք, զառիվեր:

Թուզ – թուզ:
Թուզ – աղ:
Թուզլու, աղի – աղի:
Թութ – թութ:
Թուլ – թույլ:
Թուլանուշ – թուլանալ:
Թուլուլիք – թույլ, թույլիկ:
Թուլում – պարկապզուկ:
Թուխ – սև:
Թուխ աչվէնի – սև աչքեր:
Թուխթ – 1.թուղթ: 2.նամակ:
Թուխնուշ – թխանալ, սևանալ:
Թուխ չայ – մուգ թեյ:
Թուխ ջիգար – լյարդ:
Թուխուլիզ – թուխ, սևուկ:
Թումբ – փեթակի կափարիչ:
Թումփ – թումբ, ցածր բլուր, հողապատնեշ, հողաթումբ:
Թուն – դու:
Թունէլ – թունել:
Թուշ – թուշ:
Թուշուլիզ – թշերը ուռած, գեր:
Թուս, թուրս – բացի:
Թուս (**թուրս**) **էլուշ** – դուրս ելնել:
Թուս թէրչուշ – ցատկել, ոստնել:
Թուսթէրչիչ (արդ.՝ **թուսթէրչիզ**) – մորեխ:
Թուսի – կախարդություն, կախարդանք:
Թուր – դուռ:
Թուրան չէնգէլ, խաշնիչ – դուռը փակելու մետաղյա կեռիկ:
Թուրշի – հատուկ թթվեցրած ուտելիքներ՝ թթու:
Թուրջուշ – իրար վրա դարսել, դասավորել, իրերը դասավորել, հավաքել:

Թուրս – 1. դուրս: 2 բացի:
Թուրցէվ, տուրցէվ – դուրս:
Թուրցէվանցի, տուրցէվանցի – դրսեցի, այլ բնակավայրերի բնակիչ:
Թուրքչա – թուրքերեն:
Թուք, թունք, տուք – դուք:
Թուք, թըքուն – թուք:
Թօբօլդուշ – նետել, գցել:
Թօզ – փոշի:
Թօխլի – մեկ տարեկան ոչխար:
Թօխցընուշ – դողացնել:
Թօղուշ – 1.թողնել: 2.դողալ:
Թօմնուշ, թամնուշ – ավարտել, լրանալ:
Թօմնուցք, թամնուսք – վերջավորություն, վերջին մաս, ավարտ:
Թօյբաշի – հարսանիքի ղեկավարը տնտեսական–կազմակերպչական հարցերում:
Թօնդիր, թանդըր – բակում պատրաստված աղյուսե վառարան:
Թօնձըր – թանձր:
Թօր – թոռ:
Թօրէմիշ աղաձ – հայտնված, բազմացած:
Թօրի դադա – ծոռ:
Թօրմէլուշ – թառամել:
Թօրնուշ – ծնել:
Թօրնօղ – մանկաբարձուհի:
Թօրբա – տոպրակ, պարկ:
Թօրխ էնուշ, թօրխուշ – գյուղատնտեսական աշխատանքների համար հողը փորել, փխրեցնել, սերմը հողով ծածկել և այլն:
Թօփ – գնդակ:
Թօփալ – կաղ:
Թօփչի – թնդանոթաձիգ:

Թօքթօքուշ – թխթխկացնել, տկտկացնել:
Թօքուշ – հազալ:

— Ժ —

Ժաժգէլուշ – 1.շարժվել: 2. մի բան անել:
3. մի գործով զբաղվել:
Ժաժվուշ – շարժվել:
Ժաժուշ – շարժել:
Ժանգ – ժանգ:
Ժանգէրուշ – ժանգոտվել:
Ժէմնուշ, ժըմնուշ – ժամանել, հասնել, շտապել մեկի մոտ, հետևից հասնել:
Ժօղվէվուշ – հավաքվել:
Ժօղվիաջի, ժօղվիյա – մուրացկան:
Ժօղվիյա, ժօղվիաջի – մուրացկան:
Ժօղվուշ – հավաքել:

— Ի —

Իզվանի (**իզվօնի, իզվօնցու**) **հաց** – ընթրիք:
Իզվան – երեկոյան:
Իզուն – երեկո:
Իդու – դրա:
Իթթի – այդտեղից:
Իժէէ, իժէրէ (արդ.՝ **իժիյէ**), **միշթ** – 1.ամեն անգամ, ամեն ժամանակ: 2.միշտ, մշտապես:
Իլիզամ, իլիզօմ – երիկամ:
Իլիք, մաղման, մաղմօն – իլիկ:
Իխմէ, յիխմէ – խոտաբույսի անուն է:
Իդդիր (քաղաքի անուն) – Իգդիր:
Իմ – իմ:
Իման – այդպես, նման, դրա պես:
Իմանուշ – 1.լսել: 2.տեղեկանալ:

Իմացնուշ – 1.լսեցնել: 2.տեղեկացնել:
Իյէքինջի, յէքինջի – երրորդ:
Ինաթին – այն կողմում:
Ինէր – նրանք:
Ինձի, ինձիզի – ինձ:
Ինձի հէդ – ինձ հետ:
Ինձմա թուս –ինձանից բացի:
Ինշալլահ – 1.եթե Ալլահը (Աստված) կամենա, ինչպես որ կամենա: 2.Աստված տա:
Ինչ – ինչ:
Ի՞նչ ասուշ ա – ի՞նչ ասել է, ի՞նչ է նշանակում:
Ինչաք, ինչուզ – մինչև:
Ինչբէս, ինչվէս – 1.ինչպես: 2.ինչպիսի:
Ինչբէս ու – ինչպես որ:
Ինչէր – ինչեր:
Ինչէցէնուշ – իջեցնել:
Ինչէցու – ինչացու, ո՞վ, ի՞նչ, ինչի համար, ինչի է հատկացված:
Ինչի – ինչու:
Ինչիզէրթմէ, ինչիմէրթքէ, ինչիմէքթէ – ինչ որ բաներ:
Ինչիզ մէ – ինչ որ բան:
Ինչի թա– ինչ է թե, որպես թե, իբր թե, պատճառաբանելով որ իբր:
Ինչին ա – ի՞նչ է այդ, ի՞նչ է:
Ինչիքի – 1.որ բանի: 2.ոչ մի բանի:
Ինչիք չա – 1.մի բան չէ, ոչինչ է: 2.ասվում է նաև շնորհակալություն հայտնելուն ի պատասխան:
Ինչխաղիզ – 1.քանի հատ: 2.ինչքան: 3.ինչ տեսակ:
Ինչ ու – ինչ որ:
Ինչուզ, ինչաք – մինչև:
Ինտուս, ինտուզ – այն ուղղությամբ:
Ինու – նրան:

Ինքէ – ինքը:
Ինքնուինքէ – ինքնիրեն:
Իշթէ – ահա, այնպես, հենց այնպես:
Իչնուշ, ինչնուշ, իշնուշ – իջնել:
Իշուշ – 1.հիշել: 2. հայհոյել:
Իշքէնջէ էնուշ – կտտանքներ անել:
Իսա – այս:
Իսաթիս – այ կողմում:
Իսթի – այստեղ:
Իսթի թուս – այստեղից բացի:
Իսթի հէղ – այստեղից:
Իսպանաք (ուտելի բույս) – սպանախ:
Իսպան, իսպօն – այսպիսի, այսպես:
Իստավրի, սիվտէմբրուս – սեպտեմբեր:
Իստաք, թէմիզ – մաքուր:
Իստուս, իստուզ – այս ուղղությամբ:
Իսու – սրա:
Իսու չաք – այսչափ:
Իքուշ, ուուշուշ – ընդեղեն մաքրել:
Իփաղ – 1.մետաքս: 2.մետաքսե գլխաշոր:
Իք – 1. խոսքի մեջ որևէ մոռացված բառի, անվան փոխարեն գործածվող օժանդակ բառ: 2. իր, առարկա: 3. որևէ բան: 4. այս, այն բանը, այդ, այն անձը:

— Լ —

Լազ – շան լակ:
Լազաման – լակ տալու աման:
Լազան, լազէն, հէղիք – ձմռանը սարերում և անտառներում քայլելիս խոր ձյան մեջ չխրվելու համար կոշիկներին ամրացվող նեղ եզրերով օղակաձև հարմարանք է, որն ունենում է մոտավորապես 0 թվի տեսք: Երկարությունը

սովորաբար լինում է 30 և ավելի սմ: Փայտյա եզրերից ամրացված պարանները օղակի կենտրոնում այնպես են իրար ագուցված, որ հնարավոր լինի վրան կանգնել և կոշիկը կապել պարաններին:

Լազօթ – շան ձագ:

Լազուշ – լակ ուտել:

Լաղէս, աղէս – 1.հավի կրծքի երկճղի ոսկոր: 2. գրազ, գրազ գալ:

Լազղի բարավ – որպեսզի երեխաները չխաղան եգիպտացորենի դաշտերում և չվնասեն բերքը, մեծերը երեխաներին վախեցնում են, ասելով, որ այնտեղ **լազղի բարավ**՝ եգիպտացորենի պառավ կա, որը նրանց կուտի:

Լազղի զօթէշաք – եգիպտացորենի ցողուն:

Լազղի հաց – եգիպտացորենի ալյուրով թխված հաց:

Լազութ, լաուսթ, լազղ – եգիպտացորեն:

Լալ – համր:

Լալախթ – կիսահալված ձյուն, շլոփա:

Լախթ – մահմեդականների գերեզմանում՝ փոսի մեջ, հանգուցյալի վրա թեքությամբ դրվող իրար միացված տախտակներ:

Լահանա – սպիտակագլուխ կաղամբ:

Լաղբօրիք (արդ.՝ **լաղբօյիք**) – օձի տեսակ է, թուրքերեն ասում են **քյօր յըլան**՝ կույր օձ:

Լաղի – լեղի, դառը:

Լաղլաղուշ, լախլախուշ – լխկլխկալ, հեղուկը լխկալով շարժվել:

Լաղու – փայծաղ:

Լաղուբ – մականուն, վերադիր անուն:

Լաղջուշ – 1.լղճել: 2.պլոկել:

Լաղուշ – լողալ:

Լամբա – 1.լամպ: 2.լուսամփոփ: 3.ճրագ:

Լայլօն – նեյլոն:

Լաշ – լեշ:

Լաշի – մրտավարդ, մշտադալար թուփ է, որի վարդագույն ծաղիկների եզրերն աստիճանաբար դառնում են մանուշակագույն:
Լաշութ – լաշիների՝ մրտավարդերի աճելու վայր:
Լաչաք – լաչակ, կանանց գլխաշոր:
Լաչէք – ծառատեսակի անուն է:
Լաստիք – ռետինե կրկնակոշիկ:
Լավ[218]**, բէղք, սօյ** – լավ:
Լավաշ – լավաշ:
Լավնուշ – լավանալ, առողջանալ:
Լաց էնուշ – լաց լինել:
Լափա–լափա – փաթիլ–փաթիլ:
Լաքաթքա – պարսատիկ:
Լաֆ էնուշ – զրուցել:
Լէէն – լագան, կոնք՝ 1.լվացվելու և լվացքի տաշտակ: 2.ջրի ծորակի տակ դրվող մետաղյա տաշտակ:
Լէլլիչ – ձագար:
Լէլլուշ – լցնել:
Լէխտըր – հողը փորելու, փխրեցնելու համար իրարից հեռու երկու մետաղյա ժանիք ունեցող, բահի նման երկարապոչ աշխատանքային գործիք:
Լէմուշ – 1.ձաղկել, ճիպոտահարել: 2.ծեծել: 3.դաջել:
Լէյլէք – արագիլ:
Լէն – լայն:
Լէնցէնուշ – լայնացնել:

---

[218] **Լավ** բառը խոսվածքի մոռացվող բառերից էր, բայց վերջին երկու տասնամյակում Արդվինի նահանգից Հայաստան բեռներ փոխադրող համշենցի վարորդների շնորհիվ այն այժմ շատերը գիտեն և հայաստանցու հանդիպելիս օգտագործում են այդ, նաև Հայաստանում սովորած այլ բառեր՝ **բարև**, **ջան**, **քաղաք** և այլն:

Լէնցք – լայնք:
Լէնութին, լէնութուն – լայնություն:
Լէվանուշ, լըվանուշ, լէվուշ, լըվուշ – լվանալ:
Լէվացվուշ, լըվացվուշ – լվացվել:
Լէվացք, լըվացք – լվացք:
Լէվացքի չըվօն – լվացքի պարան: Ռիզեի նահանգի թուրքախոս համշենցիներն ասում են լաթգախ:
Լէվուշ, լըվուշ, լէվանուշ, լըվանուշ – լվանալ:
Լէր (արդ.՝ լէյ) – ամառային արոտավայր՝ յայլա, սարատեղի:
Լէրթ – մեջքն ամբողջությամբ:
Լէրթէվայի – մեջքնիվայր:
Լէրթի մէչքէդաղի օսկօրնէր, բօչքէօխ – ողնաշար:
Լէրի (արդ.՝ լէյի) **աբուր** – թանսպասի նման ապուր է:
Լէրչութ – լուրջ, իրական:
Լէցուշ, լըցուշ – լցնել:
Լէցվուշ, լըցվուշ – 1.լցվել: 2.կուտակվել: 3.ամբողջանալ:
Լէքցէնուշ, լըքցընուշ, լիքցընուշ – 1.լիքը լցնել: 2.լրացնել:
Լըմօն – նման:
Լըմօնուշ – նմանվել:
Լըմօնցէնուշ – ինչ որ մեկին նմանեցնել:
Լիզվօղ – լեզվանի, շատախոս:
Լիզու – լեզու:
Լիզու էղէվցըքուշ – թլվատել, լեզուն փաթ տալով խոսել:
Լիզուշ, լիսքուշ, լիցքուշ – լիզել:
Լիլիք, լիլիգ – 1. լոլիկ, պոմիդոր: 2.կլորիկ: 3.կլոր հատապտուղ:
Լիսօր – իլիկի երկար փայտ:
Լիսէր ձունգի – ծնկոսկր:
Լիսքան մաղ, ցուցամաղ – ցուցամատ:
Լիսքուշ, լիզուշ, լիցքուշ – լիզել:
Լիվէր – 1.ռնոլվեր, ատրճանակ: 2.զենք:
Լիվէր ցըքուշ – ատրճանակով կրակել:

Լիքէ – լիքը:
Լիքցէնուշ – ամբողջությամբ լցնել, կիսատը լրացնել:
Լու – լու:
Լուս – լույս:
Լուսանուշ – լուսանալ:
Լուսացէնուշ – լուսացնել:
Լուսէ փացուշ – էլեկտրական լամպը միացնել:
Լուսնիկա – 1.լուսին: 2.լուսնի լույսով լուսավորված, լուսնկա: 3.իգական անուն է:
Լուր – լուռ:
Լուցուշ – բռնկվել, միանգամից այրվել:
Լօբէնօց – լոբուտ, լոբու բանջարանոց:
Լօբիյա – լոբի:
Լօզօր – այժմ, հիմա, մի քիչ առաջ:
Լօրդու (արդ.՝ **լօյդու**), **խէխունց**[219] – խխունջ:
Լօրի (արդ.՝ **լօյի**) – լորենի:
Լօրի չայ (արդ.՝ **լօյի չայ**) – լորենու ծաղիկներից պատրաստված թեյ:
Լօրխուշ – թինկն տալ, կիսապառկել:
Լօք – լոկ, միմիայն:

— Խ —

Խաաղ, խարաթ – խրատ:
Խաաղ (**խարաթ**) **դէվուշ** – 1. խրատել: 2.սովորեցնել:
Խաբար – 1.տեղեկություն, լուր: 2.խոսք:
Խաբարդաք – լուրեր, զրույցներ, խոսակցություններ:
Խաբրուշ, խօբրուշ, խօսուշ – խոսել, զրուցել:
Խաղ – խայտ, պիսակ, բիծ, նշան, պուտ (ունեցող):

---

[219] **Խէխունց** բառը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Խաղուլիգ – խայտեր ունեցող, խայտաբղետ, բծավոր, պուտավոր:

Խաղվէղուշ – խուտուտ տալ:

Խաղվուն – 1.օժիտի մեջ դրվող ժանեկավոր ձեռագործ, որի վրա գույնզգույն թելերով, փայլփլուն, մանր զարդարանքներով ու ուլունքներով պատկերվում են ծաղիկներ, թռչուններ և զանազան նախշեր: 2.ասեղնագործություն:

Խազ, չիզգի – գիծ:

Խաթ – 1.ծալ: 2.կնճիռ: 3.շերտ: 4.խավ: 5.շենքի, շինության հարկ:

Խաթըր – հարգ, պատիվ:

Խալա, հալա, հօրքուր, հօքուր (արդ.՝ **հօքույ**) – հորաքույր:

Խալէսուշ – 1.վերջանալ: 2.փրկվել, ազատվել:

Խալի – խալի, գորգ:

Խալվութ – 1.աչքից հեռու, մեկուսի: 2.ծածուկ, գաղտուկ, գաղտնի:

Խախալ – 1.տխմար: 2.թույլ: 3.տագնապալից:

Խախաձ – պանրի մերան, մակարդ:

Խախաձ բանիր, **խըխաձ բօնիր** – հորած պանիր, ռոկֆոր պանիր:

Խախթէվուշ – խեղդվել:

Խախթուշ – խեղդել:

Խաձուշ – խայթել, կծել, խածել:

Խաղ – 1. խաղ: 2. ժողովրդական քառատող երգ՝ խաղիկ: 3.պար:

Խաղ ասուշ – երգել, խաղ ասել:

Խաղէ արնուշ – խաղում, մրցույթում հաղթել, շահել:

Խաղուշ – 1.խաղալ: 2.պարել: 3.երգելով պարել:

Խամ – անփորձ, անվարժ մարդ:

Խամ – 1.չմշակված տարածք: 2.առանց վարելու մնացած արտ: 3.նախկինում անասունների չարածած տեղ:

Խամցած – որևէ աշխատանք, գործողություն երկար ժամանակ չանելու հետևանքով ունակությունները կորցրած:
Խանըմ, հանըմ – տիկին, տանտիկին:
Խանձուշ, խօնձուշ – խանձել:
Խաշ – ջրի մեջ խաշած եգիպտացորենի գլխիկ:
Խաշնիչ, թուրան չէնգէ – դուռը փակելու մետաղյա կեռիկ:
Խաչ – 1.եկեղեցի: 2.խաչ:
Խաչնուշ, խաշնուշ – 1.փակել դուռը, պատուհանը, դարպասը: 2.կոճկել:
Խաս – լավ, ընտիր:
Խասթախանա, հասթախանա – հիվանդանոց:
Խավաղնութ – խաղողուտ:
Խավիձ, խավինձ, խավինց – խավիծ:
Խավուլիլիք, հավուլիլիգ – 1.մասուր: 2.մասուրի նման պտուղ: 3.մասրենի:
Խավօղ, խավաղ – խաղող:
Խավօղի (**խավաղի**) **չի, քիշմիշ** – չամիչ:
Խատվօր – 1.պուտավոր: 2.բծավոր:
Խատփուլիկ, խատփուլիգ – գույնզգույն:
Խարաթ, ղարաթ – շտապ:
Խարաթ (**ղարաթ**) **էնուշ** – շտապել:
Խարգուշ – խարկել, բովել:
Խարէվուշ – խառնվել, մասնակցություն ունենալ:
Խարման – հացահատիկ կալսելու տեղ՝ կալ:
Խարնուշ – 1.խառնել: 2.խառնշտորել: 3.շփոթել:
Խարջ – հարսնացուի ծնողներին տրվելիք նյութական փոխհատուցում:
Խարփուխ (արդ.՝ **խայփուխ**) – հարբուխ:
Խափէլութին – խաբեություն, ստախոսություն:
Խափէլուջի – խաբեբա, ստախոս:
Խափիսխանէ, ձազ – բանտ:

Խափուշ – խաբել:

Խաք – 1.ուրիշներ: 2.օտարներ: 3.հասարակություն: 4.բոլորը, ամենքը:

Խէզար – մեծ սղոց:

Խէթզէթուշ, խըթխըթուշ – եռալ:

Խէլար, խէրալ – խելառ, խելակորույս:

Խէլարցէնուշ – գժվացնել, խելակորույս դարձնել:

Խէլարուշ, խէլըրուշ – խելառել, խելառ դառնալ, խելքը կորցնել:

Խէլք դէվուշ – խորհուրդներ տալ:

Խէլքվօր, խէրքվօր – խելացի:

Խէլօրթ, հօղվէրդէվիչ – 1.խլուրդ: 2.ոմանք **խէլօրթ** են ասում մոդեսին, մյուսները մողեսին ասում են **խըլօզ**:

Խէլօք – 1. շտապ: 2. արագ: 3.անմիջապես:

Խէխէնջուշ – 1.խրխնջալ: 2.ուրախության ժամանակ խրխնջոցի նման ձայներ արձակել:

Խէխունց[220], **լօրդու** (արդ.՝ **լօյդու**) – խխունջ:

Խէմած, սարխօշ – խմած, հարբած:

Խէմիչ չուր – խմելու ջուր:

Խէմուշ – 1.խմել: 2.ծխել:

Խէմուր – խմոր:

Խէմուրսէպիչ, ագիշ – փոքրիկ, մետաղյա թիակ՝ տաշտին կպած խմորը քերելու համար՝ ակիշ:

Խէյուշ – խրվել:

Խէնդակ – խանդակ:

Խէնդաս – երախտագիտություն, շնորհակալություն արտահայտելու բարեմաղթանք է, որը նշանակում է **խինդով ապրես**:

---

[220] **Խէխունց** բառը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Խէնդուշ – 1.խնդալ: 2.ուրախ ապրել:
Խէնձօր – խնձոր:
Խէնձօրնի, խէնձօրի ձառ – խնձորենի:
Խէնձօրնութ – խնձորուտ:
Խէնչուշ – խնչել:
Խէնօցի, յաղուղ, յայուղ, յայիք, անչախուլ – խնոցի:
Խէչուշ – 1.մի կողմի վրա թեքվել: 2.գայթել: 3.ընկնել: 4.փլվել: 5.շուռ գալ: 6. կքել:
Խէսիմ, խըսիմ – ազգական:
Խէվ – խև:
Խէրգուշ, **ղըրգուշ** – ուղարկել, նետել:
Խէրդուշ – խրտնել:
Խէրդէցէնուշ – խրտնացնել:
Խէրթէշ – 1.խարտվածք: 2.փայտի թեփ: 3.մաղոցք: 4.գլխի մազերի թեփ:
Խէրթէշօղ, խէթէշօղ – թեփոտ:
Խէրխէրուշ – հռհռալ:
Խէրք – խելք:
Խէրքվօր, խէլքվօր – խելացի:
Խէփգէփուշ, խըփխըփուշ – 1.խփխփացնել: 2.աչքերը թարթել:
Խէփուշ, խըփուշ – 1.խփել: 2.փակել: 3.ծածկել:
Խըթխըթուշ, խէթգէթուշ – եռալ:
Խըլօզ – խլեզ, մողես, ոմանք մողեսին ասում են **խէլօրթ**:
Խըմուշ – 1.խմել: 2. ծխել:
Խընցկէլ, խէնցգէլ – 1. փոքր կողով:2. հացի կողով:
Խըրգուշ – խռացնել, խռմփացնել:
Խըփխըփուշ, խէփգէփուշ – 1. խփխփացնել: 2.աչքերը թարթել:
Խիբար – 1.պատ շարելիս մեծ քարերի արանքում դրվող փոքր քար: 2.վտիտ, փոքր, մանր մունր, մանրակազմ: 3.կատակով ասում են նաև փոքր երեխաներին:
Խիլա – փայտի ծեղ, եղեգնի, ցորենի ցողունի շյուղ:

Խիխիլա, քյուփէ – ականջօղ:
Խիյար – վարունգ:
Խիյարնօց – վարունգի մարգ, վարունգի աճելու վայր:
Խինչ – խլինք:
Խինչօղ – խլնքոտ:
Խիջ, զիբիլ – աղբ, թափոն:
Խիրիսթիյան – քրիստոնյա:
Խիրիսթիյանլուղ – քրիստոնեություն:
Խիփիլիզ – ըստ խլամ համշենցիների, **խիփիլիզը** աներևույթ չար ոգի է, որը նստում է քնած մարդկանց կրծքավանդակին, պառկում է նրանց վրա ու խեղդում: Եթե մարդիկ կարողանան խլել **խիփիլիզի** գլխարկը, նա կանհետանա, իսկ եթե գլխարկը դնեն իրենց գլխին, ապա իրենք անտեսանելի կդառնան: Հավատում են, որ ով **խիփիլիզի** գլխից գլխարկը վերցնի, կհարստանա:
Խուզուշ – խուզել:
Խուլ – խուլ:
Խուլացէնուշ – խլացնել:
Խուլաց կօղի – հյուսած գոտի:
Խուլաց մազ – հյուսած մազ:
Խուլաք – 1.հյուսք: 2. հյուս: 3. հյուսվածք: 4. խուրձ:
Խուլուշ – հյուսել:
Խուչակ, խուչկա – փայտ, որի վրա փաթաթվում է լոբին:
Խուս – 1.ալյուրի և ջրի խառնուրդով պատրաստված զանգված՝ խյուս: 2.ուղեղ:
Խուստուլիք (երեխա) – հաստլիկ:
Խուրչ – խուրջին:
Խուրմա – խուրմա:
Խուփ – 1.կափարիչ: 2.փակ:
Խօբրուշ, խաբրուշ, խօսուշ – խոսել, զրուցել:
Խօդ – խոտ:

Խօղժօղվիչ, խօղվէրդէվիչ – եղան:
Խօղվէրդէվիչ, խօղժօղվիչ – եղան:
Խօզ – 1.խոզ: 2. վատ:
Խօզգաղնի – կաղնի:
Խօէնուշ – խորանալ:
Խօթուշ – 1. խոթել: 2.խայթել խայթոցով:
Խօխօլ – 1. մացառ: 2. խճճված մազեր:
Խօղ, hօղ – 1.հող: 2. գետին:
Խօղաթաս – կավե թաս:
Խօղէ (hօղէ) տէնուշ, խօղէ (hօղէ) դէվուշ – հուղարկավորել, թաղել:
Խօղիէրգիչ, hօղիէրգիչ, զօքար, չէֆթ – արոր:
Խօղվէրդէվիչ, hօղվէրդէվիչ – գօրշուկ, փորսուղ:
Խօյիզ, խօիզ – կորիզ:
Խօնձօղօթ – փայտածուխ:
Խօշօր – խոշոր:
Խօշթէկալ – ցտեսություն:
Խօչ – 1.սրածայր ոստ: 2.բարակ և սուր փայտի կտոր: 3.ցից, ցցափայտ:
Խօջա – 1.մոլլա, խոջա: 2.ուսուցիչ:
Խօսուշ, խաբրուշ, խօբրուշ – խոսել, զրուցել:
Խօր, խօը (արդ.՝ **խօյը, խօյին**) – խորը:
Խօրան (hօրօն) խաղուշ – շուրջպար բռնել:
Խօրօն, **hօրօն, խաղ**[221] – պար:
Խօց – վերք:
Խօցօղ – վերքոտ:

— Ծ —

Ծար (արդ.՝ **ծայ**), **սուզգի** – քամիչ, փլավքամիչ:
Ծէն, ցէն – ձայն:
Ծէն (**ցէն**) **դէվուշ** – ձայն տալ, կանչել, հրավիրել:

---

[221] **Խաղ** – նշանակում է նաև ժողովրդական քառատող երգ՝ խաղիկ:

Ծըքում – փայտի բարակ, ժապավենաձև երկար շերտ, որով գործում են փոքր կողով:

Ծի, ցի – ձի:

Ծուգ, ցուք – ձուկ:

— Կ —

Կաղդուց, քաղդուց – գաղտնի:

Կապլամա[222] – մսով, բրնձով, սոխարածով ճաշ, որի վրա ավելացնում են մաղադանոս և համեմ:

Կասաբ – մսագործ:

Կասինկա[223]**, լաչակ** – գլխաշոր:

Կավախ – բարդի:

Կատլամա[224] – լավաշի հաստության խմորի վրա յուղ ու թթվասեր են քսում, երբեմն նաև շաքարավազ, շերտ–շերտ դարսում, գլանաձև փաթաթում և թավայի մեջ տապակում:

Կարպուզ – ձմերուկ:

Կարտօփի (արդ.՝ **կայտօփի**), **մաքվալ** – կարտոֆիլ:

Կառւն, քառւն – գարուն:

Կէդափ – գետափ:

Կէչ, քէչ – խոնավ:

Կիլիմօր, գիլիմօր – առաստաղից ամրացված շղթա, որի ծայրի կեռիկից օջախի վրա կախում են կաթսա, թեյնիկ և այլն:

Կիր – գեր:

Կիրփօր, հաստփօր – հաստափոր:

---

222 Ճաշատեսակը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

223 **Կասինկա** են ասում միայն նախկին ԽՍՀՄ-ում բնակվող կրոնափոխ համշենցիները:

224 Ճաշատեսակը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Կյալ, քյալ – գայլ:
Կյաղ, քյաղ – գյուղ:
Կյաղացի, քյաղացի – գյուղացի:
Կուլչէտայ[225] – ոչխարի մանր կտրտված մսով, բարակ շերտերի բաժանված խմորով, սոխով ջրալի ճաշ:
Կուկլիկ – տիկնիկ:
Կուղ – մածնաման, մածուն մերելու աման, անոթ:
Կում, քում – գոմ:
Կուրբա, քուրբա – գուլպա:
Կօդի – մետաղյա գոտի:
Կօդի, գաբիչ, վարդիքգաբիչ, գայիշ, խուլաց կօդի – գոտի:
Կօզ – կենդանիների մեզ:
Կօկօրթ – կոկորդի խնձորակ:
Կօկօչ – կոճ:
Կօղ, քօղ – գող:
Կօղնուշ, քօղնուշ – գողանալ:
Կօղութին, քօղութին – գողություն:
Կօրտ, քօրդ – գորտ:
Կօրք, քօրկ, գօրք – 1.նախասենյակ: 2.կողասենյակ: 3.տան ամենափոքր սենյակը: Ռիզեի նահանգի թուրքախոս համշենահայերն ասում են գերանակապ տնակին:

— Հ —

Հա, էվէթ – այո:
Հաբա – հապա, ապա:
Հաբաթ, հալբաթ – 1.հարկավ, իհարկե: 2.գուցե, երևի:
Հազնուշ – հագնել:
Հազվիթ (արդ.՝ **հավզիթ**) – հավկիթ, ձու:

---

[225] Ճաշատեսակը գրառել եմ Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Հագվիթ խաշուշ – ձու խաշել, ձու եփել:
Հագվիթ հալուշ – ձվածեղ անել:
Հաղիք – 1.հատիկ, սերմ: 2. հատ, քանակ:
Հազ էնուշ – 1.սիրել: 2.հարգել: 3.հավանել: 4.համակրել:
Հազար – հազար:
Հազըր – պատրաստ:
Հազրէվուշ – պատրաստվել:
Հազրուշ – պատրաստել, ավարտին հասցնել:
Հալ – վիճակ:
Հալած հավգիթ – ձվածեղ:
Հալավ – հագուստ, տարազ:
Հալբաթ, **հաբաթ** – 1.հարկավ, իհարկե: 2.գուցե, երևի:
Հալիվօր (արդ.՝ **հալիվօյ**) – ծերունի:
Հալիվօրնուշ (արդ.՝ **հալիվօյնուշ**) – ծերանալ:
Հալուշ – 1.հալել: 2.նիհարել:
Հալք – ժողովուրդ:
Հալքաղուշ – մաշվել, քրքրվել:
Հախ չուննուշ – իրավունք չունենալ:
Հաձուշ, աձուշ (ձու) – ածել:
Համա – բայց:
Համալ – 1. բեռնակիր: 2.ծառա:
Համէմ, հօմիմ, քինձ – համեմ, գինձ:
Համշէցի, հօմշէցի – համշենցի, ծագումով Համշենի գավառից:
Համշէցնակ, համշէնակ (**հօմշէցնազ, հօմշէնազ**) **խօսուշ** – Համշենի բարբառով խոսել:
Համրուշ, հօմրուշ – համրել, հաշվել, թվարկել:
Համրիչ, հօմրիչ – գումար:
Համօվ – համով:
Հայաթ – կյանք:
Հայաթ – տան բակի կողմի առաջին հարկի նախասրահ, նախասենյակ, փակ պատշգամբ:

Հայվան, հայվօն – անասուն:
Հանդ, հօնդ – հանդ, արոտավայր:
Հանուշ, հօնուշ – 1.հանել: 2. դուրս տանել: 3.հագուստը հանել: 4.հորինել: 5. ստեղծագործել: 6.հանելուկի պատասխանը գտնել:
Հաչուշ – հաչել:
Հաս, աս – այս:
Հասվէրուշ, հասվէուշ (արդ.՝ **հասվէյուշ**) – փշրվել, մասերի, բեկորների բաժանվել, բզկտել:
Հաստ – հաստ:
Հաստէնուշ – հաստանալ, գիրանալ:
Հաստուլիք – հաստլիկ:
Հաստութին, հաստուտուն – հաստություն:
Հաստփօր, կիրփօր – հաստափոր:
Հասուշ – պտղի հասունանալը, հասնելը:
Հավ – հավ:
Հավա – 1. եղանակ: 2. օդ:
Հավաս – հավես, ցանկություն:
Հավարընգի – երկնագույն, բաց կապույտ:
Հավնուշ – հավանել:
Հավնօց – հավանոց:
Հավուլիլիք, խավուլիլիք – 1.մասուր: 2.մասուրի նման պտուղ:
Հավուչ – գազար:
Հարալ, **բաշմալում** – համենայն դեպս, ամեն դեպքում, հավանականությամբ:
Հարս (արդ.՝ **հայս**) – 1.հարս: 2.ազգականի կին: 3.ամուսնացած կին:
Հարս (արդ.՝ **հայս**) **դուզնուշ, սուսնուշ** – հարս զարդարել:
Հարս էնուշ – հարս դարձնել:
Հարսի – խմոր հունցելու տաշտ:

Հարսին խաղ, հարսէնխաղ – հարսի պարը՝ հարսանիքի ժամանակ:
Հարսնէվօր – հարսնևոր, հարսանիքին մասնակցող:
Հարսնիք (արդ.՝ **հայսնիք**) – հարսանիք:
Հարսնէցէ դավիթիյէ – հարսանիքի հրավիրատոմս:
Հարսէնցու, հարսըևցու – հարսնացու:
Հարսէնքուր, հարսընքուր (արդ.՝ **հայսընքուր**) – հարսնաքույր:
Հարցէնուշ, հարցընուշ – հարցնել:
Հարք, հարգ, արխ – առու:
Հաց – հաց:
Հացաման, հացօմօն – հացաման:
Հաց ուդուշ – 1.հաց ուտել: 2.ճաշել:
Հացփուրթ – եգիպտացորենի ալյուրով թխված հացով բրդած ուտեստ:
Հացի արգա – սեղանատամ:
Հացի քար – հաց թխելու քարե կաղապար: Խորանարդաձև քար է, որը վերևի մասում ունի թասաձև խորը փորվածք, որի մեջ խմոր են լցնում և տեղադրում վառարանում:
Հաուր – հարյուր:
Հաքնիչ – հագուստ:
Հաքնուշ – հագնել:
Հաքվան, աքվան – առավոտյան:
Հաքցէնուշ – հագցնել:
Հաքուսվէյուշ – հագնվել:
Հէդ – հետ, միասին:
Հէդ – հետք, բիծ:
Հէդէ էնգուշ – 1.հետը ընկնել: 2. կատակել: 3. ծաղրել: 4. վիճել:
Հէդ էնուշ – հետք, ոտնատեղ բացել, ձմռանը առջևից գնալով հետևից եկողի համար ոտնատեղ բացել:
Հէդէվ – հետո:

Հէղէվանց – հետևից, հետևի կողմից:

Հէղիք, լագան, լագէն – ձմռանը սարերում և անտառներում քայլելիս խոր ձյան մեջ չխրվելու համար կոշիկներին ամրացվող նեղ եզրերով օղակաձև հարմարանք է, որն ունենում է մոտավորապես 0 թվի տեսք: Երկարությունը սովորաբար լինում է 30 և ավելի սմ: Փայտյա եզրերից ամրացված պարանները օղակի կենտրոնում այնպես են իրար ագուցված, որ հնարավոր լինի վրան կանգնել և կոշիկը կապել պարաններին:

Հէղրա – միասին, իրար հետ:

Հէլուն – ուլունք:

Հէլունլի – ուլունքավոր:

Հէձնուշ – 1.հեծնել որևէ կենդանու: 2.նստել ավտոմեքենայի ղեկին:

Հէմ, համ – և:

Հէմշիրէ – բուժքույր:

Հէմօմ – բաղնիք:

Հէյ գիդի – ձայնարկություն, ափսոսանքի արտահայտություն:

Հէշ, հէշտ – կովերին քշելու ձայնարկություններ:

Հէսան – սրելու քար՝ հեսան, սրոց:

Հէվէնի – սերկևիլենի:

Հէվու, հէրու (արդ.՝ **հէյու**) – անցյալ տարի:

Հէրգուշ, հէրգ էնուշ – հերկել:

Հէրէվօնցմա – հեռվից:

Հէրիք (արդ.՝ **հէյիք**), **հէիք** – հերիք, բավականաչափ:

Հէրքէցէնուշ (արդ.՝ **հէյիքցէնուշ**) – հերիքացնել, բավականացնել:

Հէրու (արդ.՝ **հէյու**) – հեռու:

Հէրու (արդ.՝ **հէյու**), **հէվու** – անցյալ տարի:

Հէրունցէնուշ – հեռու տանել, հեռացնել:

Հէրունուշ – հեռանալ:

Հէրք – հերկ:
Հէրքուշ – հերիքել, բավականացնել:
Հէքիյա – պատմություն:
Հէքիյա էնուշ – պատմել:
Հէքուց – էգուց, վաղը:
Հըղինցած – հղիացած, ասվում է կովերի և այլ կենդանիների համար:
Հիմի – հիմա, այժմ:
Հիմիգու – հիմիկվա, ներկայիս, արդի:
Հին – հին:
Հինգ, հինք – հինգ:
Հինգշափթի – հինգշաբթի:
Հինգ քար (խաղ) – քարկտիկ:
Հիշուշ, իշուշ – 1. հայհոյել: 2. անունը տալ:
Հիսուն, իսուն – հիսուն:
Հիվանդ, հիվօնդ – հիվանդ:
Հիվանդութին – հիվանդություն:
Հիվանդնուշ, հիվօնդնուշ – հիվանդանալ:
Հուդուդ – սահմանագլուխ, սահմանագիծ:
Հում – հում, անեփ:
Հումդ, հունդ – մանր սերմ, օրինակ՝ մաղադանոսի:
Հում էփած – հում եփած, թէրխաշ:
Հումուդիչ – գետնախնձոր:
Հունա – այնտեղ:
Հունդ, հումդ – մանր սերմ, օրինակ՝ մաղադանոսի:
Հունդէցու – սերմնացու:
Հուքմէ – ուժ, զորություն, կորով:
Հուքումաթ – 1. կառավարություն: 2. պետություն:
Հօդ – հոտ:
Հօդա – այդտեղ:
Հօդա, օդա – սենյակ:

Հօղ էնգնուշ – հոտ ընկնել:
Հօղմօղուշ – հոտոտել:
Հօղ ցըքուշ – հոտ զգել:
Հօզա – այստեղ:
Հօհօլ, հօղօլ, քօրջինջուղ – բու:
Հօղ, խօղ – 1.հող: 2. գետին:
Հօղէ (խօղէ) տէնուշ, հօղէ (խօղէ) դէվուշ – հուղարկավորել, թաղել:
Հօղժաժ – երկրաշարժ:
Հօղվէրդէվիչ, խօղվէրդէվիչ, խէլօրթ – խլուրդ:
Հօղփաղէնի – ծառատեսակի անուն է:
Հօղօլ, հօհօլ, քօրջինջուղ – բու:
Հօմ – համ:
Հօմա, ամա – համար:
Հօմայիլ – համայիլ, հմայիլ: 1.վզնոց, վզից կախվող զարդ: 2.վզնոց, որը ոչ միայն զարդ է, այլև, ըստ հավատալիքների, ունի չարխափան ուժ, ազատում է չար աչքից, փորձանքից, հիվանդություններից: 3.մոլլայի գրած չարխափան գիր՝ հմայագիր:
Հօմիմ, համէմ, քինձ – համեմ, գինձ:
Հօմրիչ, համրիչ – գումար:
Հօմրուշ, համրուշ – համրել, հաշվել, թվարկել:
Հօյիվ – հովիվ:
Հօնա, հունա – այնտեղ:
Հօնզ[226]**, բիլմէջէ**– հանելուկ:
Հօնցնուշ – հանգցնել:
Հօշտ, թէթի – շներին վանելու ձայնարկություններ:
Հօպար (արդ.՝ **հօպայ**) – հորեղբայր:

[226] **Հօնզ** բառը գիտեն հատուկենտ մեծահասակներ:

Հօպարիլա (արդ.՝ **hօպայիլա**) – փաղաքշական դիմելաձև հորեղբորը:

Հօպէրչէք (արդ.՝ **hօպէյչէք**)[227] – հարսանիքի ժամանակ հարսին տնից դուրս բերելիս դռների մոտ նրա հորեղբորը կամ նրա ներկայացուցչին փեսայի հոր կամ նրա ներկայացուցչի կողմից ընծայվող գումար:

Հօպօր (արդ.՝ **hօպօյ**) **դաղա, ախչիք, մօնչ** – հորեղբոր երեխա, աղջիկ, տղա:

Հօվ – հով:

Հօվվութուն (արդ.՝ **hօյիվութին**) **էնուշ** – հովվություն անել:

Հօրթ – հորթ:

Հօրթնօց – հորթանոց, գոմ:

Հօրքէցան հէդէ – ամբողջ հոգով:

Հօրօն, խօրօն, խաղ – պար:

Հօփէրվայի, hօրփէվայի – որբևայրի, այրի:

Հօքի – հոգի:

Հօքվէդէրուշ – վերակենդանանալ, վերածնվել:

Հօքուր (արդ.՝ **hօքույ**), **hօրքուր, խալա, hալա** – հորաքույր:

Հօքուրին (արդ.՝ **hօքույին**), **hօրքուրին, hօրքուօչ դաղա, ախչիք, մօնչ** – հորաքրոջ երեխա, աղջիկ, տղա:

Հօքօվօր – կենդանի արարած, ողջ, ապրող:

— Ձ —

Ձագ – ծակ, անցք, խոռոչ, որջ, որմնանցք, քարայրի բացվածք, բանտ:

Ձագուշ – ծակել:

Ձագձէգուշ – ծակծկել, մի քանի անցք բացել:

Ձաձգուշ – ծածկել:

---

[227] Գրի եմ առել Ղրղզստանի և Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից:

Ձաձուգ, ձաձուք – ծածկ, տանիք:
Ձախուշ – ծախել:
Ձաղ, ցաղ – եգիպտացորենի տերև:
Ձաղգուշ – ծաղկել:
Ձաղըր, ձաղրուն – ծիծաղ:
Ձաղիգ – ծաղիկ:
Ձաղրէէս – ժպտերես, ծիծաղերես:
Ձաղրէնի – ոչ պտաղտու ծառատեսակ է:
Ձաղրուն փէրնուշ – 1.ծիծաղ բռնել: 2.սկսել անզուսպ ծիծաղել: 3.ծիծաղելու ցանկություն առաջանալ:
Ձամուշ, ձօմուշ – ծամել:
Ձառ – ծառ:
Ձառի զիվ – խեժ:
Ձառի թափա – ծառի կատար:
Ձառ, ծառ (արդ.՝ **ծայ**), **սուզզի** – քամիչ, փլավքամիչ:
Ձառվէնուշ – ծարավել:
Ձառութ – ծառուտ:
Ձէդուք – մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա՝ ճանճերի նստելուց հետո:
Ձէլուշ – ծլել:
Ձէձուշ – ծեծել:
Ձէնուշ, ձընուշ – կենդանիների ծնելը:
Ձէված – ծռված:
Ձէվաղնի, ցէվաղնի – ծվաղենի, դափնեկեռասենի, վարդազգիների ընտանիքին պատկանող ծառ է, որն ունի բալի նման պտուղներ:
Ձէվաղնութ – ծվաղենիների պուրակ:
Ձէվաղ, ցէվաղ (ծվաղենու պտուղ) – ծվաղ, դափնեկեռաս:
Ձէրդուշ – ծրտել:
Ձէփուշ – ծեփել:
Ձիբէլ – բազուկով ճաշատեսակ:

Չիբլուշ – կճմթել, կսմթել:
Չիբու, ճիբուն, զիբու – 1.փոքր զուռնա: 2.զուռնայի փչանցքի մասում տեղադրվող եղեգնից պատրաստվող հարմարանք՝ պիպիչ, ձայնավերարտադրիչ:
Չիգաա – սիգարետ, ծխախոտ:
Չիգաա խէմուշ – սիգարետ ծխել:
Չիգուր – փոքր կացին:
Չիլ – 1.բույսի ծիլ: 2.հեղուկի բարակ շիթ:
Չիձ – ծիծ, կուրծք:
Չիձգէր – ծծկեր երեխա:
Չիձաղալի – ծիծաղելի:
Չիձաղուշ – ծիծաղել:
Չիձաղէցէնուշ – ծիծաղեցնել:
Չիձաման, ձիձօմօն – կրծկալ:
Չիձէռ – ծիծառ, ծիծեռնակ:
Չիյափ – 1.առևտրի կենտրոն, շուկա: 2.քաղաքի կենտրոնական հատվածը: 3.քաղաք:
Չիյափի հաց, ջօնի հաց – գյուղերում ապրող համշենցիները նախկինում այդպես էին ասում Խոփայում՝ խանութից գնված հացին:
Չիյափի քուրբա, ջօնի քուրբա – գյուղերում ապրող համշենցիները նախկինում այդպես էին ասում Խոփայում՝ խանութից գնված նեյլոնե գուլպաներին:
Չինօր – ծննդյան օր, ծննդյան տարեդարձ:
Չիրթ – ծիրտ, ծերտ:
Չուձունուշ – ծծել, հեղուկը ներս քաշել:
Չում – ծոմ:
Չում փէրնուշ – ծոմ պահել:
Չում գէփչուշ – ծոմ սկսել:
Չուր – ծուռ:
Չունգ էնգուշ – ծնկի իջնել, ծնկել:
Չունգի լիսէր – ծնկոսկր:

Ձունք – ձունկ:
Ձօմուշ, ձամուշ – ձամել:
Ձօնղր, էրգուդագ – հղի:
Ձօնղր – ձանր:
Ձօնղր – ձօնղր – ձանր – ձանր:
Ձօնղրէնուշ – 1.ձանրանալ: 2.հղիանալ:
Ձօվ – ձով:
Ձօվի չայ – այն վայրը, որտեղ գետը լցվում է ձովը, գետաբերան:
Ձօվի ջօթ – ձովեզր, ձովի ափ:
Ձօվչուր, ջօվչուր – ամբողջովին թրջված, քրտնամած:
Ձօրձագ, զօրզագ – ձոձրակ:
Ձօրվուշ, ձօուշ – ձորել:
Ձօց – ձոց:

— Ղ —

Ղամփու, ղօմփու – մեծ, կոշտուկոպիտ, անհաս (միրգ, մարդ):
Ղարաթ (**խարաթ**) **էնուշ** – 1.շտապել: 2.ջանք թափել, ճիգ գործադրել:
Ղաք – խակ, չհասունացած:
Ղէրգուշ, ղըրգուշ, խէրգուշ – ուղարկել:
Ղյափ, ղիյափ – շնագայլ, չախկալ:
Ղյափօն հարսնիք (արդ.՝ **ղիյափան հայսնիք**), **մօլա չախ** – արևոտ եղանակին բարակ անձրև, զոլ անձրև:
Ղօխս (արդ.՝ **ղօյխզ**) – կորիզ:
Ղօլօփա – ընկույզի կճեպ:
Ղօչ, քօշ – արու այծ, խոյ, նոխազ:
Ղօրմա արգա, շունի արգա – ժանիք:
Ղօրմօղուշ – գոմռալ (շունը):

— Ճ —

Ճախ, չախ – անձրև:
Ճախածկ, չաղացք – ջրաղաց:

— Մ —

Մաալա, մահալա – թաղ, թաղամաս:

Մագամ, մագա – 1.ըստ երևույթին, գուցե: 2. մի՞թե: 3.բայցևայնպես: 4.ուրեմն: 5. պարզվում է:

Մադ – մատ:

Մադաղ – մատաղ:

Մադաղ էլլուշ – մատաղ լինել:

Մադ էնուշ – մատնացույց անել, դրական օրինակը ցույց տալ, գովել:

Մադղաշ – 1.մատղաշ: 2.դեռատի: 3.նոր:

Մադման, մադմօն, իլիգ – իլիկ:

Մադնի, մադվի – մատանի:

Մազ – մազ:

Մազար, մէզար – գերեզման:

Մազալուղ, մէզալուղ – գերեզմանոց:

Մազուլիգ – մազոտ, թավամազ:

Մալ – 1.հարստություն, ունեցվածք: 2.ընտանի կենդանիներ, խոշոր եղջերավոր անասուններ:

Մալախտօ (ճաշատեսակ է) – կարմիր լոբու խյուսի վրա ավելացնում են սոխարած, սխտոր և ընկույզի միջուկ:

Մալիլա – փաղաքշական դիմելաձև մորը:

Մալինա – ավարա, պարապ–սարապ թրև եկող:

Մախ – մեխ:

Մախք – մեղք:

Մակաս – մկրատ:

Մաձէքամ, մաձէքօմ – քամած մածուն:

Մաձուն – մածուն:

Մաձուն մէրուշ, մաձուն փէրնուշ – մածուն մերել:

Մաղ – մաղ:

Մաղաբուր, մարխավաղ – հավամրգազգիների ընտանիքին պատկանող հատապտուղ է՝ հապալաս, հապալասենի,

մեծ թուփ է, ունի հյութալի, քաղցրաթթվաշ, մուգ կապույտ գույնի, կլոր պտուղ, լատիներեն՝ vaccinium myrtillus, թուրքերեն՝ յաբան մերսինի, ռուսերեն՝ չեռնիկա:

Մաղաղանօս (ուտելի բույս) – մաղաղանոս:

Մաղավուր էլլուշ – մեղավոր լինել, որևէ վատ արարք անել:

Մաղարա – 1.քարայր: 2.որջ:

Մաղիս – կորիզի միջուկ:

Մաղլութ – մոշուտ:

Մաղու – մեղու:

Մաղուշ – մաղել:

Մաղօլ – մոշենի, մոշի թուփ:

Մայիս (ամսանուն) – մայիս:

Մայնուշ – պարզաջրել, ողողել, մաքրաջրել:

Ման – իմաստ:

Մանգաղ, մօնգաղ – մանգաղ:

Մանդարին, մօնդարին – մանդարին:

Մանթարնուշ, մօնթարնուշ – 1.շրջվել, շուռ գալ դեպի մեկը: 2.շրջանացելով արգելքը անցնել թիկունքի կողմը:

Մանի, մօնի – ծառատեսակ է, ոմանք այդպես են ասում կաղնուն (խոզկաղնի): Լազերը նույնպես կաղնուն **մօնի** են ասում: Նախկինում Սամսոնի գավառի քրիստոնյա համշենահայերը ևս այդպես են ասել, բայց այժմ Աբխազիայի համշենահայերը **մօնի** են ասում բոխուն: Թուրքիայի իսլամ համշենցիներից շատերը ևս **բոխուն** ասում են **մանի**, **մօնի**, երբեմն էլ թուրքերեն՝ **իսթիրիչ**:

Մանութ, մօնութ – մանիների պուրակ:

Մանքուշ – ման գալ՝ փնտրել, որոնել:

Մանչ, մօնչ – մանչ, արու զավակ, տղա երեխա:

Մաշա – երկճյուղ մետաղյա հարմարանք՝ մեծ ունելի, ածուխ, փայտածուխ, այրվող փայտ բռնելու համար:

Մաշալլահ – 1.գովեստի, գոհունակության, զարմանքի բացականչություն, հրաշալի է, բռավո: 2.աչք չկպնի, աչքով չտամ:
Մաշմէքի, մաշմուրքի ծառ – շագանակենի:
Մաշմէքութ – շագանակենիների աճելու վայր:
Մաշմուրք, մաշմուք – շագանակ:
Մաշմուրքի ծառ, մաշմէքի – շագանակենի:
Մաշուշ – մաշել:
Մաշքէթէփ – չղջիկ:
Մաջուր – փոքր վարունգ:
Մասա – 1.սեղան: 2.պաշտոնատեղի, բաժին, բյուրո:
Մասրափուշ – մասրենու տեսակ, որի ցողունները մագլցում են ցանկապատերի և ծառերի վրա:
Մավա – օգուտ:
Մավա էլյուշ – օգտակար լինել:
Մավի – կապույտ:
Մար – սուր ծլեպ, փուշ, որը խրվում է մաշկի մեջ՝ մառ:
Մար (արդ.՝ **մայ**), մայի, մամա, մա – մայր:
Մարաղ – մարագ:
Մարդիվան, ցըքալա – սանդուղք, աստիճան:
Մարթ (արդ.՝ **մայթ**) – 1.մարդ: 2.ամուսին:
Մարթ (ամսանուն է) – մարտ:
Մարթութին – մարդկայնություն, մարդասիրություն:
Մարխ, մախր – խեժոտ փայտիկ, որն օգտագործվում է որպես կրակ անելու կպչան՝ մարխ:
Մարխավաղ, մաղաբուր – տե՛ս **մաղաբուր:**
Մարղ – մեղր:
Մարմին, վաչութ, օնցք – մարմին:
Մարչա – կտրտված փայտերի իրար վրա դասավորված կիտուկ, որը նախատեսված է վառարանում կամ օջախում այրելու համար:

Մարսուզ – առանց մայր:
Մարվի, մօրվի, օզայի մար – խորթ մայր[228]:
Մարցու – մածնի մերան, մակարդ:
Մաուշ – 1.մարել: 2.մայր մտնել:
Մաքարինա (արդ.՝ **մաքայինա**) – մակարոն:
Մաքթաբ, մէքթաբ, շկօլա[229] – դպրոց:
Մաքինա, արաբա – ավտոմեքենա:
Մաքվալ, կարտօփի (արդ.՝ **կայտօփի**) – կարտոֆիլ:
Մէզ – մեկ:
Մէզալ – մեկել, մյուս, ուրիշ:
Մէզալ օր (արդ.՝ **մէզալ օյր**) – վաղը չէ, մյուս օրը:
Մէզալօք – մեկելներ, մյուսներ:
Մէզէդէն – 1.միանգամից: 2. միասին:
Մէզէր–մէզէր – մեկիկ–մեկիկ:
Մէզէրսէմ, մէզէրսամ – մինչդեռ, այնինչ, տակավին:
Մէզդադուշ – մեկտեղել, մի տեղ կուտակել:
Մէզդադէցնուշ – մեկտեղեցնել:
Մէզհադիզ, վարդալի – 1.մեկ հատիկ: 2.միամորիկ, ծնողների միակ զավակ:
Մէդաձուշ – մտածել:
Մէդէվուշ – մտմտալ, մտածմունքի մեջ ընկնել:
Մէդօղում – մութ:

---

[228] Ամուսինների բաժանությունից հետո երեխաները մնում են ամուսնու ընտանիքում, իսկ կինը հեռանում է առանց երեխաների: Ամուսինը կարող է նոր կին՝ փոխնակ բերել, որը երեխաների համար կլինի մարվի, մօրվի, օզայի մար: Եթե ամուսինը մահացել է և այրին ցանկանում է երկրորդ անգամ ամուսնանալ, ապա իր երեխաներին թողնում է ամուսնու ազգականների՝ ծնողների, քրոջ, եղբոր մոտ և գնում է նոր ընտանիք: Այդ պատճառով խորթ հայր հասկացություն չունեն:
[229] **Մաքթաբ** են ասում Թուրքիայում, իսկ **շկօլա՝** նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող կրոնափոխ համշենցիները:

Մէդնուշ – մտնել:
Մէդօրուշ, մըդուուշ – մտորել, մտածել, խորհել:
Մէզի, մէզիզի (անձնական դերանուն է) – մեզ:
Մէզմա – մեզանից:
Մէթնուշ – մթնել:
Մէթցէնուշ, խօթուշ, նէթիյուշ – 1.մտցնել: 2.ներս դնել:
Մէթքին էլյուշ – մտքում լինել:
Մէլէմ – քուրք:
Մէլմէլուշ – 1.մլմլալ: 2.թեթև ծուխ բարձրանալ: 3.առկայծել:
Մէձ – մեծ:
Մէձ մօմ, մօմի – մամիկ, տատիկ, մեծ մայր:
Մէձէնուշ, մէձընուշ – մեծանալ, խոշորանալ:
Մէձէնցէնուշ, մէձընցընուշ – մեծացնել, խնամել, աճեցնել:
Մէձվօր – 1.մեծավոր, գլխավոր: 2.հասարակական դիրք ունեցող մարդ:
Մէձփօր – մեծփոր:
Մէմ ալ – 1.մեկ էլ: 2.մի հատ էլ: 3.մի անգամ էլ:
Մէյվա – միրգ:
Մէնէնազ – մենակ:
Մէնէնազութին – մենակություն, մենություն:
Մէնդիլ – թաշկինակ:
Մէնուշ – մնալ:
Մէշա – կաղնուտ:
Մէչ – մեջ:
Մէչք, մէչ – գոտկատեղ:
Մէչքէդադ, մէչխէդադ – մեջտեղ, կենտրոն:
Մէչքէդադի մադ – միջամատ:
Մէջախ –մոծակ:
Մէրէլուշ – մռայլվել:
Մէրնուշ, մէրուշ – մեռնել:
Մէրած – մեռած, մահացած:

Մէրցէնուշ, մէրնէցէնուշ, ցըվօնուշ – մեռցնել, սպանել:
Մէսուշ – մրսել:
Մէտրօ – մետր:
Մէր – մեր:
Մէրալ, բուլութ – ամպ:
Մէրաղ – 1.տառապանք: 2. հուզմունք: 3. անհանգստություն: 4. երկյուղ: 5. կասկած:
Մէրաքլի – հետաքրքիր, գրավիչ, հաճելի:
Մէրջիմ – 1.մրջյուն: 2. միջատ:
Մէրսունք – գոմում կենդանիների կերը, խոտը լցնելու տաշտաձև տախտակամած՝ մսուրք, մսուր:
Մէք – մենք:
Մէք մէզիզի, մէք մէզի – մենքումենք:
Մէքիք – մաքոք, մագոգ, կտավագործական հաստոցի մակույկի նման մաս, որն աջ ու ձախ պտտվելով թելերով կտավ է գործում:
Մէօք – մերոնք:
Մի՞թա, մի՞տա – 1.եթե: 2.մի գուցե: 3.բառից առաջ օգտագործվում է նաև ժխտական իմաստով:
Միթք – 1.միտք: 2.հիշողություն: 3.խելք:
Միլլաթ – ժողովուրդ:
Միյամիդ – միամիտ, մաքուր, պարզ, անմեղ:
Միյափիյան բօլօքուշ – աղիողորմ, աղեկտուր, ողբաձայն, մի ձայնի գոռալ, ճչալ:
Միշթ, իժէրէ (արդ.՝ իժէյէ) – միշտ:
Միշմուք – հացի միջուկ:
Միչուցք – խորիզ:
Միս – միս:
Միսօղ – մսոտ:
Միրաբ – ջրբաշխ:
Մուաջիր – գաղթական, փախստական, վտարանդի:

Մուգ – մուկ:
Մուզիթուն – բամբասանք:
Մուզիթուն էնուշ – բամբասել:
Մութ – կիսամութ, քիչ մթնած:
Մուխ – մուխ, ծուխ:
Մուխլամա (ուտեստ է) – մարմանդ կրակի վրա, թավայում հալած յուղի մեջ բոված եգիպտացորենի ալյուրին ավելացվում է գոլ ջուր և Մացարելլա կամ այլ հալվող պանրատեսակ, խառնվում է այնքան, մինչև որ յուղը բարձրանում է երեսին:
Մույիք – ելակ:
Մուն – հավի մակաբույծ:
Մուշթարի – հաճախորդ:
Մուսաֆիր – հյուր:
Մուսէնդէր – անկողինները դարսելու տեղ:
Մուսլիմանլուղ – մուսուլմանություն:
Մուսքա – թուղթուգիր:
Մուր – մուր:
Մուցիփօր – սկյուռ:
Մօդ – մոտ:
Մօդգինուշ –1.մոտենալ: 2. մտերմանալ:
Մօդէվանց – մոտիկից:
Մօդսիյուս – իմ կողմը, դեպի ինձ:
Մօդիք – 1.մոտիկ: 2. մերձավոր:
Մօզի – մոզի:
Մօլ – 1. կանաչ տերևներով ճյուղ, որով կերակրում են կենդանիներին: 2.մլակ:
Մօլա – գոլ:
Մօլա չախ, դյափօն հարսնիք (արդ.՝ **դիյափան հայսնիք**) – գոլ անձրև, արևոտ եղանակին բարակ անձրև:
Մօլանուշ – գոլանալ:

Մօլացէնուշ – գոլացնել:
Մօլէրուշ – մոռանալ, չհիշել:
Մօլէրզան – մոռացկոտ:
Մօլիյէցէնուշ – մոռացնել:
Մօլօդուշ – տերևակալել:
Մօլօշիք – իր անելիքը չիմացող՝ մոլորված մարդ:
Մօխիր, քյուլ – մոխիր:
Մօձիր – կրակից թռչող մոխիր:
Մօխրաման, **մօխրօմօն** – մոխիր լցնելու աման, տարա:
Մօմ – մոմ:
Մօմի, մէձ մօմ – մամիկ, տատիկ, մեծ մայր:
Մօնզաղ, մանզաղ – մանգաղ:
Մօն էգուշ – 1.փնտրել, որոնել: 2.զբոսնել:
Մօնթ – բաճկոն:
Մօնի, մանի – տե՛ս **մանի**:
Մօնի–մօնի, մանի–մանի – արագ–արագ:
Մօնչ – մանչ, արու զավակ, տղա երեխա:
Մօնութ, մանութ – մոնի, մանի ծառերի պուրակ:
Մօնուշ – մանել:
Մօն օնցած – սպասածից, պատկերացրածից, ինչ որ բանից, ինչ որ երևույթից մի բան էլ ավելի:
Մօշումա – մոմլաթ:
Մօջա – թուխս նստած հավ:
Մօր (արդ.՝ **մօյ**) – մորի:
Մօրբէթ – մորը օգնող երեխա կամ դեռահաս:
Մօրթի – մարդու մաշկ:
Մօրթուշ (արդ.՝ **մօյթուշ**), **գէդրուշ**, **գըդրուշ** – մորթել:
Մօրնէնէխ – մանանեխ, լատիներեն՝ mustard:
Մօրվի, մարվի, օզայի մար – խորթ մայր, ավելի մանրամասն տե՛ս **մարվի**:
Մօքուր (արդ.՝ **մօքույ**), **մօրքուր** – մորաքույր:

Մօքուրին (արդ.՝ **մօքույին**), **մօրքուրին, մօրքուօչ դադա, ախչիք, մօնչ** – մորաքրոջ երեխա, աղջիկ, տղա:

— Յ —

Յաար (յաաց) հէդ – իրար հետ, միասին:
Յաացմա – իրարից:
Յազիջի – գրագիր:
Յազմա – ծաղկավոր գլխաշոր:
Յաթաղ – ոչխարի հոտ:
Յալ – շանը կերակրելու ճաշ, լակ:
Յախհալաձ – պանրով ձվածեղ:
Յաղ – յուղ, ճարպ:
Յաղլիփօր – ճարպոտ փոր ունեցող, հաստափոր:
Յաղուդ, յայուդ, յայիք, անչախուլ, խէնօցի – խնոցի:
Յան էգուշ – 1.թիկնել: 2. հենվել:
Յաշիղ, յաշաղ – արկղ:
Յաստուդ, փարց, պարց – բարձ:
Յար, սէվդա – սիրած էակ՝ յար:
Յանգու – հրդեհ:
Յէ – կոչական ձայնարկություն, հարգալից դիմելաձև ավագ տարիքի տղամարդկանց և կանանց:
Յէ բաբա – հարգալից դիմելաձև հորը:
Յէ մա – հարգալից դիմելաձև մորը:
Յէգէն – զարմիկ:
Յէդ – հետ:
Յէդ աշուշ – հետ նայել:
Յէդ դէվուշ – հետ տալ, վերադարձնել:
Յէդ էնգուշ – հետ ընկնել:
Յէդքէշի – դրանից հետոն:
Յէթ թէվուշ, սիրդէ թարնուշ, փէսխուշ – հետ տալ՝ փսխել:
Յէթ թարնուշ – հետ դառնալ, վերադառնալ:

Յէթ թօղուշ – բաց թողնել, ազատ արձակել:
Յէթ ցըքուշ – հետաձգել:
Յէշիլ – կանաչ:
Յէս – ես:
Յէսիր – գերի:
Յէփ – երբ:
Յէփէլլած – եռացած:
Յէփէլլուշ – եփել:
Յէփ ու – երբ որ:
Յիքինջի, իյէքինջի – երրորդ:
Յիխմէ, իխմէ, յըղմի – բույսի անուն է՝ պտեր:
Յուլի – բրդյա հագուստ:
Յուղ, ջուխ – մոշ:
Յումրուղ, յումրուխ – բռունցք:
Յօղօն – վերմակ:

— Ն —

Նաբադի էլլուշ – վերանալ, անհետանալ, անհետ կորչել:
Նազիզնուշ – 1. քաղաքավարի դառնալ: 2. նրբանալ:
Նալ – պայտ:
Նալիա – տե՛ս **սարբէն**:
Նալին – փայտե ներբանով և երեսին կաշվե երիզով բոկոտիկ՝ նալիկ:
Նալլէթ – անեծք:
Նալուշ – պայտել:
Նաղ – նեղ:
Նաղէցէնուշ – նեղացնել, վիրավորել, դժգոհություն պատճառել:
Նաղցէնուշ – նեղացնել, լայնքը փոքրացնել, նեղ դարձնել:
Նաղուշ – 1.նեղել: 2. նեղվել:
Նամազ – նամազ:
Նայիսա – վերջապես:

Նաչէրուշ, նաչիրուշ –1.հոգնել: 2.հոգնելու պատճառով չցանկանալ, ալարել: 3.նեղվել: 4.ձանձրանալ:
Նաս – ներս, ներսը, մեջի կողմը, մեջը:
Նաս ցրքուշ – այս կողմ նետել:
Նար – նուռ:
Նափիր – գյուղատնտեսական աշխատանքի տեղամասը և նախատեսվող աշխատանքի չափաբաժինը:
Նաֆաս – շունչ:
Նէբէգչուշ – 1.փակցնել: 2.սոսնձել: 3.կպչել: 4.կառչել: 5.անհանգստացնել:
Նէգէրուշ – կպչել:
Նէրուշ – նետել:
Նէզըն, նէզէվօյի – կովի զուգավորվելու, հղիանալու ցանկություն ունենալը:
Նէթացուշ – թաթախել:
Նէթիյուշ – ներս մտցնել, ներս դնել:
Նէմաղուշ – անհանգստացնել:
Նէն – այն կողմ:
Նէն ցրքուշ – այն կողմ նետել:
Նէն օնցնուշ, նէն օնուշ – այն կողմ անցնել:
Նէն օնուշի հիվօնդութին – վարակիչ հիվանդություն:
Նէշօն – խալ:
Նէշօնլու, նըշանլու – նշանած:
Նէշօնի մադ – նշանի մատ, մատնեմատ:
Նէշօնլու (նըշօնլու) դէս (դէսնուշ) – Արդվինի նահանգի կրոնափոխ համշենցիների շրջանում դեռևս կենցաղավարում է նշանածին գաղտնի տեսնելու ավանդույթը: Նշանվելուց հետո, մինչև հարսանիքը մի քանի ամսից մինչև մեկ տարի և ավելի է անցնում, և փեսացուն աղջկա մոր, քույրերի, բարեկամների, հատկապես հորեղբոր կնոջ աջակցությամբ, նշանածի հայրական տան կամ աղջկա հորեղ-

